




ՊՐԻՆ. Ս. ՅԵՐԵՂԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՆԵՈԳՐԱՖԻԱ



491.99-72

Ա-16

ՊՐՈՖ. Ա. ԱՐՈՒՋԱՄՅԱՆ

ՍՅՈՒԿԱՄԵ Է 1961 թ.

~~13244~~ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱԼԵՈԳՐԱՖԻԱ

— 11 —

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՍԵՐՈՒՆԻ ՊՐԵՍՏԱՆԹՅՈՒՆ

ՆՐԵՎԱՆ



1961

A $\frac{\pi}{13220}$

Проф. А. Г. АВРАМЯН
Армянская палеография
(На армянском языке)
Ереван, 1948 г.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պալեոգրաֆիա բառը հունարեն բառ է: Նա հայերեն թարգմանվում է հնագրության ձևով՝ παλαιός հին, γράφω գրում: (Միջագրային գիտական գրականության մեջ նա սովորաբար չի թարգմանվում, ուստի և մենք նպատակահարմար համաբնօրինք գործածել չթարգմանված—պալեոգրաֆիա ձևով):

Առարկայի նպատակն է ուսումնասիրել գրության առաջացումը, տառերի ձևափոխությունը, գրության նյութը, գրության մեջ գործածվող գաղափարագրերը, ինչպես և ա՛յն ամենը, ինչ տեսհրաժեշտ է սկզբնաղբյուրները ճիշտ կարգալու և անօխով վերծանելու համար:

Պալեոգրաֆիայի դասընթացներ ունեն հին մատենագրություն ունեցող բոլոր ժողովուրդները՝ հույները, հրեաները, ասորիները և այլն: Եղած այս պալեոգրաֆիաներից իրենց գիտականությամբ առանձնապես աչքի են ընկնում սլավոնական պալեոգրաֆիայի դասընթացները, որոնք հրատարակված են մի շարք հեղինակների կողմից: (Ի դեպ, պալեոգրաֆիայով հետաքրքրվող աղբյուրագետը գրականության ընդարձակ մի ցանկ կարող է գտնել Ն. Ս. Չայեվի և Լ. Վ. Չերեպնինի «Русская палеография» խորագիրը կրող ուսերեն արժեքավոր աշխատության մեջ, որը լույս է տեսել 1947 թվին):

Պալեոգրաֆիայի դասընթացներից յուրաքանչյուրը, հասկանալի է, ուսումնասիրում է իր գրության հնագրությունը— հունականը՝ հունական, լատինականը՝ լատինական, սլավոնականը՝ սլավոնական և այլն: Այդ սկզբունքով էլ հայկական պալեոգրաֆիայի ներկա դասընթացը նպատակ է դնում ուսումնասիրել հին հայերեն գրությամբ մեզ հասած ձեռագիր, վիմագիր և հին տպագիր (կամ ինչպես հնում էր կոչվում՝ բառագիր) և այլ նյութերի վրա գրված բոլոր տեսակի տեքստերի անօխով կարգալու և ճիշտ վերծանելու արվեստը:

Հայկական պաշտոնաթիւայի դատընթացը, ինչպէս և բոլոր լեզուների պաշտոնաթիւաները, ինքնուրույն գիտական դիպցիւթիւններ չեն: Նրանք համարվում են պատմութիւն և դրականութիւն պատմութիւն օժանդակ առարկաներից մեկը միայն Քոտէութիւն, պաշտոնաթիւայի դերը սպասարկելու դեր է: Նրա նպատակն է օժանդակել ուսումնասիրողին աղբյուրների վերծանութիւն ժամանակ: Պատմաբանի կամ գրականագետի ձեռքում պաշտոնաթիւան յուրահատուկ բրիչ է՝ փորձելու դարերի թանձր խաւարով ծածկված հնութիւնները՝ նրանցից արժեքավորները լույս աշխարհ հանելու և հարազատ ձեռով գիտութիւնը ներկայացնելու համար:

Ինչպէս հայտնի է, անցյալից մեզ են հասել բազմաթիւ հայկական ձեռագրեր և վիմագրեր: Գիտութիւն համար առանձնապէս մեծ արժեք են ներկայացնում ձեռագրական հետեւյալ ժողովածուները. ՀՍՍՌ Մատենադարանի մոտ 10.000 հայկական ձեռագրերի ժողովածուն, որը խոշորագույն ժողովածուներից մեկն է աշխարհում, Վիննաիկի Միլիթարյան միաբանութիւն մոտ 5000 հայկական ձեռագրերի ժողովածուն, Նրուսաղեմի Հայոց Պատրիարքարանի ձեռագրաց ժողովածուն՝ մոտ 4000 ձեռագրերով, Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռագրաց ժողովածուն՝ մոտ հազար ընտիր ձեռագրերով, Վիննաի, Լոնդոնի բրիտանական թանգարանի, Փարիզի Ազգային մատենադարանի, Քեոլինի կայսերական կոչիոլ թանգարանի և հայկական ձեռագրական փոքրիկ այլ ժողովածուները, որոնք անգնահատելի նշույթներ են պարունակում մեր պատմութիւն և գրականութիւն պատմութիւն համար:

Գիտական մեծ արժեք են ներկայացնում նմանապէս հայկական հազարավոր վիմագիր արձանագրութիւնները, որոնք յրված են Հայաստանում և, ընդհանրապէս, ամբողջ Մերձասոր Արեւելքում: Չենք հաշիւում դեռ հարյուր հազարավոր վաղիւրագրերը, հնատիպ գրականութիւնը և այլ նշույթներ, որոնք պակաս արժեքավոր չեն, քան ձեռագրերը և վիմագրերը: Հայկական պաշտոնաթիւային անձանթ անձնավորութիւնը, հասկանալի է, որ չի կարող օգտվել նշված սկզբնաղբյուրներից, իսկ առանց սկզբնաղբյուրների օգտագործման՝ հին և միջնադարյան պատմութիւն և գրականութիւն պատմութիւն գծով գիտական լուրջ աշխատանք տկնալիք ինքնախաբեութիւն կլինի:

Ճիշտ է, հայկական պատմագրերի մեծ մասը հրատարակված է, որոշ մատենագրեր անգամ հրատարակված են մի քանի անգամ, սակայն նրանք հրատարակված են պատահական ձևագրերից և նրանց տեքստերը լիքն են աղճատումներով և աղավաղումներով: Աղավաղման մի փոքրիկ փաստ բերենք այստեղ: Մինչև 14—15-րդ դարերը, ինչպես պարզվում է ՀՍՍՌ Մատենադարանի ձեռագրերի ուսումնասիրությունից, «Աշխարհացոյց»-ների տեքստերը վերնագրեր չեն ունեցել: Այդ դարում է, որ գրիչները «Աշխարհացոյց»-ի տեքստը վերնագրում են «Աշխարհացոյց ստույգ» ձևով: Այս «Աշխարհացոյց»-ի վերնագրում կատարված առաջին աղավաղումն է: 16-րդ դարում կատարվել է երկրորդ աղավաղումը. գրիչներն անհրաժեշտ են համարում նշել «Աշխարհացոյց»-ի հեղինակը և ենթագրելով, որ դրա հեղինակը Մովսես խորենացին կարող է լինել, «Աշխարհացոյց»-ը վերնագրում են. «Աշխարհացոյց ստույգ Մովսիսի խորենացու»: Եվ, վերջապես, սրան հաջորդում է երրորդ աղավաղումը: 18-րդ դարում «Աշխարհացոյց»-ի վերնագրում, անուշադրություն հետևանքով, «ստույգ» բառի վերջին «դ» տառն ընկնում է և ստացվում է «Աշխարհացոյց ստույ Մովսիսի խորենացու»: Այսպիսով, «ստույգ» բառը «Աշխարհացոյց»-ից պոկվում ու խորենացու հետ է կապվում և մի տառի բաց թողման հետևանքով, ստույգ խորենացին դառնում է սոսո խորենացի, որը և հիմք է դառնում հվրոպական որոշ պատմաբանների մոտ՝ մի ամբողջ տեսություն հորինելու. որ իբր թե կա երկու խորենացի—մեկը ճիշտ խորենացին է, իսկ մյուսը՝ կեղծ: Բերվածը հաղավաղեալ մի օրինակ չէ: Հրատարակված տեքստերում հազարավոր նման աղավաղումների կարելի է հանդիպել: Իսկ այս աղավաղումներից հեշտ կարելի է խուսափել. եթե ուսումնասիրողը դիմի անմիջապես սկզբնաղբյուրներին, իսկ դրա համար անհրաժեշտ է, իհարկե, լավ զինված լինել պաշտօնագրագիտությամբ:

Հայկական պաշտօնագրագիտության դասընթացը կարևոր է սակայն ոչ միայն զանազան ժամանակներում գրված հայագիր տեքստերը կարդալու և ճիշտ վերծանելու համար, այլ և ձեռագրերի, վիճագրերի և դանաղան փաստաթղթերի վավերականությունը ստուգելու համար: Գրող կամ արտագրող գրիչները միշտ չէ, որ գրում են իրենց անունները և ժամանակը: Կամ պատահում է, որ գրում են այդ, սակայն քարը ջարդվում է, կամ ձեռագիրը քայքայման

ենթարկվելով ընկնում են թերթերը, հատկապես վերջին թերթերը, որ սովորաբար գրված է լինում գրչի հիշատակարանը: Եվ, վերջապես, պատահում է, որ գրության ժամանակը կեղծվում է: Բայց նման դեպքերում պաշտոնագրափան է, որ մեզ օգնության է հասնում, սովորեցնում է՝ ինչպես մտանալ ուսումնասիրվող տեքստին և ինչպես որոշել նրա ժամանակը և վավերականությունը:

Պալեոգրաֆիայի դասընթացի մեջ են մտնում և նրա բազմապատկեր մասն են կազմում հետևյալ փոքրիկ դասընթացները. նումֆոմատիկան (գրամատուցությունը), որն ուսումնասիրում է հնագույն գրամների և մեղալների վրա եղած գրությունները. սֆրագիստիկան, որն ուսումնասիրում է կնիքների վրա եղած գրությունները, էպիգրաֆիկան, որն ուսումնասիրում է վիմագիր արձանագրությունները, զիպոմատիկան, որն ուսումնասիրում է հնագույն հրովարտականների, կոնդակների և այլ վավերագրերի գրությունները: Ինկատի ունենալով, որ նշված դասընթացները սովետական մեր բարձրագույն ուսումնական հաստատություններում ինքնուրույն դասընթացներ են դառնել, դասախոսվում են առանձին, ուստի և մենք նրանք չենք մտցնում մեր ներկա դասընթացի մեջ:

Պալեոգրաֆիայի հետադոտական մեթոդը կոնկրետ է. նա իր բնահանրացումները անում է թվական ունեցող և ճշտված հաշարձանների հիման վրա, սլարզում է՝ թե այս կամ այն շրջանում կամ դարում գրված այս կամ այն տեքստն ինչ առանձնահատկություններ ունի և այդ փորձի հիման վրա որոշում անթվական ձեռագրերի ժամանակը և լուծում վիճելի հարցերը: Անհրաժեշտ է նշել, որ առանձին դարերում նկատելի է տատանների կհաադրության, մանրանկարչության և ուղղագրության դպալի տարբերություններ, որոնք և մեզ հենակներ են տալիս ամրանալու ժամանակին մեջ և դրա հիման վրա, մոտավոր ճշտությամբ, թվագրելու և վերծանելու անթվական և խառը տեքստեր ունեցող ձեռագրերը:

Մի քանի խոսք հայկական պալեոգրաֆիայի պատմության մասին:

Հայկական պալեոգրաֆիա կազմելու գործը, հին մշակույթ ունեցող ժողովուրդների պալեոգրաֆիաների համեմատությամբ, նախանձելի վիճակ չունի: Յովալի է ասել, որ հայկական

պալեոգրաֆիայի գիտականորեն մշակված ամբողջական դասընթաց մինչև այժմ գոյություն չունի, եթե շճաշվենք 1940 թվին Վ. Մ. Մուշումովի անվան Երևանի Պետական Համալսարանի Պատմության ֆակուլտետի ավարտական կուրսում մեր կարգացած դասընթացը, որը հրատարակվել է «Համառոտ ուրվագիծ հայկական պալեոգրաֆիայի» վերտառությամբ: Իրավացի է ակադ. Ն. Յ. Մառը, երբ «Христианский Восток»-ում (т. III, вып. I, стр. 57) տպված իր մի հոդվածում դիտողություն է անում այն մասին, որ «Հայկական պալեոգրաֆիայի մշակումը պահվում է ցածր աստիճանի վրա»:

Չնայած այն հանգամանքին, որ հայկական պալեոգրաֆիայի գիտական ամբողջական դասընթաց չի կազմվել, բայց նրա մի շարք գլուխները, առանձին-առանձին, հայագիտության մեջ բավականաչափ մշակվել են:

Հայկական պալեոգրաֆիայի որոշ հարցեր քերականագետների ուշադրության առարկան են հանդիսացել շատ հնում: Հայ գրչության արվեստին վերաբերող որոշ հարցեր մենք գտնում ենք դեռ ևս Մովսես Քերթովին (5-րդ դար) և Դավիթ Անհաղթին (6-րդ դար) վերագրված քերականությունների մեկնությունների մեջ: Նման հատվածներ մեզ հանդիպում են նաև Ստեփանոս Այոնեցու (8-րդ դար), Համամ Արևելցու (9-րդ դար), Հովհաննես Երզնկացու (14-րդ դար) և այլ հեղինակների քերականությունների մեջ: Այս քերականությունները հրատարակված են պրոֆ. Ն. Ադունցի կողմից նրա „Дионисий Фракийский и армянские толкователи“ աշխատության մեջ, СПб 1915 թ.):

Հայկական պալեոգրաֆիային վերաբերող ընդարձակ համալսմանը մենք գտնում ենք հայկական գրչության արվեստների աշխատությունների մեջ, որոնք սկսել են կազմվել 12—13-րդ դարերում Կիլիկիայում: Այսպիսի աշխատություններից անհրաժեշտ է նշել Արիստակես Գրչի աշխատությունը, որը վերնագրված է. «Վերլուծութիւնք բացեւեալէս բազմագան բայից և բառից, յոգնախումբ շարադրութեամբ արարեալ զսա Արիստակէս Գրչէ, ի խնորոյ բազմաց յարհեստ գրչութեան» (ՀՍՍՌ Մատեն., № 2371, թ. 77 ա—199 ա): Այդ աշխատությունը մեկնել է Գեփորք Սկևազին՝ Ստեփանոս Գոյնեբրցյանցի պատվերով: Աշխատությունը վերնագրված է. «նրա գրչութեան, զոր արարեալ է զսա յառաջագոյն Գեորգեայ վարդապետին ի խնորոյ ումեմն...»

(ՀՅՍՈ Մատեն., № 7117, թ. 177ա—190բ): Գեորգ Սկևա-
ցին Արիստակես Գրչի գրչության արվեստից օգտվելու և մեկնե-
լու փաստը նշում է իր աշխատության մեջ. «Անպարտապ ան-
ձամբ ձեռնարկեցի գրել զսա աչրս թշուառ և ծաղկաքաղ արա-
րեալ զմասն ինչ գրեկոցն յԱրիստակիսէ հետոյն Գրչէ՝ եղի աստ-
է ինչ զոր լուծեալ ի նմանէ, և է յեղեկոցս աստ տակաւին տա-
րակոսիս փակեալ. խոյ ի ծանօթ և յերկարեալ նորայն բանից՝
էր ինչ յնոց երկարութենէն զանց արարի, և էր զոր վասն հա-
տաստի գոչոյն՝ թողի» (թ. 177 ա):

Դժբախտաբար, և՛ Արիստակես Գրչի, և՛ Գեորգ Սկևացու
աշխատությունները դեռ չեն հրատարակված: Հայ գրչության ար-
վեստի մասին գրված այս աշխատությունները, մեծ մասամբ,
քնքաղանակաւ նյութեր են պարունակում, սակայն նրանց մեջ,
միջանկյալ ձևով, բերված են նաև պալեոգրաֆիային վերաբերող
նյութեր: Ի միջի այլոց, Արիստակես Գրչի և Գեորգ Սկևացու
աշխատությունները մեկնել է հայ մատենագրության աչքի ընկ-
նող դեմքերից մեկը՝ Գրիգոր Տաթևացին, որի աշխատությունը
վերնագրված է. «Գրիգորի Տաթևացու լուծումն դժուարիմաց բա-
նիցն ի գիրս գրչութեան Արիստակեսի և Գեորգայ Լամբրոնացու»
(ՀՅՍՈ Մատեն., № 1849 թ. 212ա—223 բ).*) Տաթևացու այս
աշխատությունը ևս հրատարակված չէ:

Հիմք կա ենթադրելու, որ հայկական գրչության որոշ
գաղտնիքներ գաղափարվել են միջնադարյան հայկական
բարձր կարգի գրչության դպրոցներում, հատկապես՝ Դլաձորում,
Հաղբատում և Սուրխաթում: Այդ երեւում է ՀՅՍՈ Մատենագրա-
նի մի ձեռագրից (№ 2371), որն ընդօրինակվել է Սուրխաթում
1357 թվին: Ձեռագրի գրիչը Արիստակեսի և Գեորգ Սկևացու վե-
րև հիշված գրչության արվեստին վերաբերող աշխատություննե-
րից հետո տեղավորել է մի հիշատակարան, որի մեջ ասված է
(բերում ենք թարգմանաբար). «Ինչպես որ անհնար է թուռնե-
րին լուծ լծվել և տկոս ձեղքել, իսկ եղներին՝ օդ բարձրանալ,
այնպես էլ առանց աշխատելու սրա վրա (այսինքն գրչության ար-
վեստի վրա—Ա. Ա.), ոչ ոք կարող է հասու լինել գրչության մեծ
արվեստին. և ով հանդուրի համարձակվել, նա չի կարող ուղիղ

*) Արիստակես Գրչի, Գեորգ Սկևացու և Գրիգոր Տաթևացու աշխա-
տությունների մի շարք ընդօրինակություններ կան. մենք նշում ենք հնա-
գույն ձեռագրերը միայն:

գրեւ, այլ կեղծանի արվեստը և կաղավադի գրածը: Նա նման կլինի անվարժ այն մտադործին, որ չգիտի զատել հոգերը իրարից և անհմտաբար այս անգամի միսը կարում է մյուս անդամի հետ, մշուր՝ մշուս»: Վերջում գրիչն ավելացնում է. «Թնչպես մարդարեւը խողի առաջ և ոսկյա մանյակը իշու պարանոցում, այնպեւ էլ այս արվեստը՝ անգէտ մարդու մոտ» (թ. 190 բ):

Գրչութեան արվեստը միջին դարերում դասավանդելու մասին է խոսում մի այլ վիպավիճակում ևս: 1330 թվին գրված մի հիշատակարանում պատմվրատուն հայտնում է, որ ինքը յոթը տարի Դյաձորի դպրոցում գրչութեան արվեստ է ուսումնասիրել. «Նա Ներսէս... որդի Վահրամայ, յաշխարհէն Տարօնու, դաւառէն Սանսնու, ի վանացն Ղազարու, ի գեղէն որ կոչի Կոռ, եղէ ցանկացող ուսման և ընթացայ յարեւելիս ի դաւառն Վայոժձոր, ի վանքն Գայլեձոր և հօթն ամ աշխատեցայ...» (Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 546):

Հայկական պաշտոնգրաֆիայի առանձին հարցեր և թեմաներ ժամանակակից գիտական պահանջների համաձայն, ինչպես առել ենք, մշակվել է նոր ժամանակներում: Պաշտոնգրաֆիկ այդ կարգի աշխատությունների մեծ մասը կապված են հայկական գրութեան առաջացման հարցի ուսումնասիրության հետ—Մաշտոցից առաջ եղե՞լ է հայոց գիր, թե ոչ, ի՞նչ այբուբենից է սկիզբ առնում հայկական ներկա այբուբենը:

Այս կարգի աշխատություններ շատ են: Նրանցից ամենից առաջ, անհրաժեշտ է նշել Թադևակ Հարությունյանի «Հայոց գիրը» աշխատությունը, որն արժանացել է Սահակ-Մեսրոպյան մրցանակաբաշխության և հրատարակվել է 1892 թվին:

Հայկական պաշտոնգրաֆիայի դասընթացի որոշ հարցեր գիտականորեն մշակել է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հակոբոս վ. Տաշյանը, Վիեննայի հայոց ձեռագրերի ցուցակը կազմող հեղինակը: Նրա աշխատությունը վերնագրված է. «Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ»:

Հետաքրքիր են այդ աշխատության գրելու շարժառիթները: Եվրոպացի մի գիտնական, Շուխարդ անունով, 1898 թվին գտնում է հունաւատ հայերեն մի պատառիկ և ցանկանալով հայ հնագիտության հիման վրա պարզել նրա ժամանակը, մի շարք հարցերով հայոց պաշտոնգրաֆիայի մասին, դիմում է Հ. Տաշյանին: Եվ առ այս կապակցությամբ, որպես Մխիթարյան միաբանության

մեծ հեղինակություն ունեցող մասնագետ, մշակում և իր ուսումնասիրության արդյունքները, նախ հրատարակում է «Հանդէս ամսօրեայ»-ում, ապա լույս ընծայում ատանձին գրքով: Նա իր աշխատության մեջ կանգ է առել հայկական դրերի զանազան տեսակներին, նրանց գործադրության ժամանակին, հայկական պալլադներին (կրկնադրերին), բառատրոհության, կետադրության փոփոխության և այլ խնդիրների վրա:

Հայկական պալեոգրաֆիայի համար արժեքավոր հյուսիս պարունակում բանասեր Գ. կաթող. Հովսեփյանի «Քշուրեան արվեստը հին հայոց մեջ» աշխատությունը, որը հրատարակված է «Շողակաթ» ժողովածուի մեջ և նվիրված է գրերի գյուտի 1500-ամյակին: Հետագայում այդ աշխատությունն արտատպվել է ատանձին գրքով*):

Հայկական պալեոգրաֆիայի մշակման ասպարիզում անդնահատելի աշխատանք է կատարել մեծանուն գիտնական Կ. Զ. Աճառյանը: Նա դիտական մեծ բարեխղճությամբ և մանրակրկիտ աշխատանքով, սառնասիրել է հայոց դրերը և հրատարակել այն «Հանդէս ամսօրեայ»-ում: Հետագայում այդ աշխատությունն արտատպվել է Վիեննայում ատանձին գրքով՝ «Հայոց գրեր» խորագրով: Ահադ. Աճառյանը, կարելի է ասել, սպառիչ ձևով բերել է այն բոլոր մատենագրական տեղեկությունները, որոնք ուղղակի կամ միջանկյալ ձևով հիշատակված են մեր մատենագրության մեջ և վերաբերում են հայկական դրի պատմությանը:

Զ. Աճառյանի այս աշխատությունը 1905 թվին արժանացել է Մետիսայում Լազարյան ճեմարանի Քանանյանց կողմից մրցանակաբաշխության:

Ահադ. Զ. Աճառյանն իր աշխատության մեջ կանգ է առել Հայաստանի նախաբնիկների (խեթերի և ուրարտացիների գրության, «Նշանագրերի», Դանիելյան դրերի, Մեսրոպյան դրերի և նրանց ծագման, Մեսրոպյան դրերի զարգացման, հայ ճեմագրերում հանդիպող ծածկագրերի և պալեոգրաֆիկ նշանակություն ունեցող բազմաթիվ այլ հարցերի վրա:

Վերջին ժամանակներս լույս տեսած աշխատություններից

*) Գ. կաթող. Հովսեփյանն իր նշված աշխատության մեջ բերել է հայկական վրձնագրերից կարևորագույն այն բոլոր նմուշները, որոնք բնորոշ են այն կամ այն ժամանակաշրջանին: Այդ աշխատության մեջ կտրեցի և գտնել հայկական դրերի գրեթե բոլոր տեսակները:


պալեոգրաֆիկ բովանդակություն ունի դոց. Կ. Ղաֆազարյանի աշխատությունը՝ «Հայկական գրի սկզբնական տեսակները» վերնագրով, որը հրատարակել է Հայկական ՄՍՌ Գիտությունների ակադեմիան։ Այս աշխատության մեջ արժեքավոր է առանձնապես կապերերին վերաբերող գլուխը։

Պալեոգրաֆիայի մեր ներկա դասընթացը, որը վերամշակված է մեր նախկին, 1940 թ. հրատարակված դասընթացի հիման վրա, իր մեջ ընդգրկում է հետևյալ թեմաները.

ա) նախամաշտոցյան հայ պալեոնուսիային առնչվածը, բ) Հայկական զրերի ստեղծումը և նրանց ուտաղձը, գ) Հայկական դրշության հնագույն նմուշները և հայկական գրության կարևորագույն ունիվերսալները, դ) Հայկական զրերի տեսակավորումը և նրանց զործածության ժամանակը, ե) Համառոտագրություններ, զ) Կետադրություն, է) Գաղափարագրեր, ը) Մածկագրություն, թ) Թվերի զործածությունը հայ մատենագրության մեջ, ժ) Հայկական տոմարը, ժա) Կապերեր, ժբ) Մանրանկարչություն, ժգ) Փոփոխություններ և աղավաղումներ հայկական ձեռագրերի նախնական տեքստերում, ժդ) Ձեռագրերի օրգնատուրայի լրացումը, ժե) Գրության նյութը և գրենական պիտույքները, ժզ) Միջնադարյան հայ գրչությունը։ Վերջում անհրաժեշտ ենք համարել տալ հայկական պալեոգրաֆիայի գոականությունը։

Որպես հայկական պալեոգրաֆիայի առաջին դասընթացի փորձ, աշխատությունը, բնական է, կարող է ունենալ որոշ թերություններ և պակասություններ։ Շատ շնորհակալ կլինեինք, եթե ձեռագրերի և վիճակագրերի միա աշխատող մեր մասնագետները հայտնեն մեզ, թե տեքստային ինչ բարդություններ են հանդիպում իրենց, որոնք տեղ չեն գտել պալեոգրաֆիայի ներկա դասընթացում, որպեսզի մենք մյուս հրատարակության ժամանակ հաշվի առնեինք։





ԴԱՌԻՆ ԱՌԱՋԻՆ

1. ՆԱԽԱՄԱՇՏՈՅՑԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՂՆՎԱԾԸ

Ե՛րբ է հայկական գրութեան սկզբնավորութիւնը: Այս հարցը հայկական պաշտօնգրաֆիայի առաջին և կարեւոր հարցերից մեկն է: Այստեղ խոսքը հայկական տառանիշերի մասին չէ, այլ հայկական գրութեան սկզբնավորութեան մասին՝ ընդհանրապէս: Պիտի ի նկատի ունենալ, որ հայերը կարող էին գրականութիւն ստեղծել նաև ալլ, ոչ հայկական տառանիշերով: Հայտնի է, որ միջին դարերում արևելյան ժողովուրդների մեծ մասը գործ էին ածում արաբական տառանիշեր, բայց ամեն մեկը գրում էր իր մայրենի լեզվով: Հայկական պաշտօնգրաֆիայի համար կարևորը տվալ խնդրում նախամաշտոցյան հայ գրականութեան առեղծվածն է: Մաշտոցից առաջ արդէ՞ր գոյութիւն է ունեցել հայկական գրականութիւն, թե ոչ:

Նախամաշտոցյան հայ գրականութեան, կամ ավելի ճիշտ, հեթանոսական հայ գրականութեան հարցը — հայ ժողովրդի պատմութեան և գրականութեան պատմութեան կարեւոր հարցերից մեկն է: Դեռ, ըստ էութեան, հայ հին գրավոր կուլտուրայի գոյութեան — չգոյութեան հարցն է: Զի կարելի համաձայնել այն ուսումնասիրողների հետ, որ իբր թե հեթանոսական Հայաստանում գոյութիւն է ունեցել զարգացած բանահյուսութիւն, իսկ բանահյուսութիւնը՝ դա գրականութիւն է: Այս տեսակետի հետ չի կարելի համաձայնել, որովհետև նախ՝ այն, ինչ գրի չի տնկւում,

նա գրականություն չէ, և ապա՝ այդպիսի բանահյուսություն իրենց գրականության ստեղծման նախօրյակին ունեցել են բոլոր հարևան ժողովուրդները և դա հայկական կուլտուրային հատուկ ինչ-որ առանձնահատուկ երևույթ չէ:

Հեթանոսական շրջանում հայկական գրականության գոյության օդաին արտահայտվել են մեր աչքի ընկնող հայագետները պրոֆ. Բ. Պատկանյան, ակադ. Ն. Յ. Մառ, ակադ. Ի. Օրբելի և ուրիշները՝ Այսպես, մեծանուն հայագետ Ն. Յ. Մառն իր «ԱԲՅ» աշխատության ներածության մեջ գրում է. «Ողջ Կովկասը, ներառյալ նաև Հայաստանը, կուլտուրական են եղել դեռևս ասորաբաբելական քաղաքակրթության էպոխայում: Հայաստանում մայրենի լեզվով գրականություն գոյություն ուներ մեր թվագրությունից դեռևս մի քանի դար առաջ»^{*)}:

Կանգ առնենք այն փաստերի վրա, որոնք հիմք են տվել հայագետներին նման վճռական պնդում տանելու նախամաշտակյան հայ գրականության մասին:

Հայերը հին պետականություն ունեցող ժողովուրդ են. Հայաստանի նախաբնիկները դեռևս Ուրարտուի շրջանում ունեցել են զարգացած պիւր և գրականություն, ուստի և չէր կարող Արտաշեսյան շրջանի զարգացած պետականություն ունեցող երկիրը շփոթանալ նրանց դարավոր տրագիկիան և կառավարվել առանց գրի ու գրականության, շունենար պետական գրագրություն, ֆինանսական հաշիվներ և այլն:

Եվ, իրոք, հույն մատենագրերը վկայում են, որ Արտաշեսյան շրջանում Հայաստանում գոյություն է ունեցել քաղաքականապի զարգացած գրականություն: Հայ թագավորներն իրենց արժանիքում պահել և հովանավորել են հույն պատմաբանների, փիլիսոփաների, հեկատորների և այլ գիտնականների (Ամփիկրատեսուր, Մետրոդորոսը և ուրիշները):

Ակադ. Հ. Մանանդյանը այս մասին գրում է. «Նոր հիմնած Տիգրանակերտ քաղաքը, ըստ երևույթին, կենտրոն էր դառնալու ո՛չ միայն միջազգային առևտրի, արհեստների ու արդյունադրծություն, այլ և հելլենիստական գիտության, արվեստի ու գրականության»^{**)}:

*) Н. Я. Марр, Апп, М-ва—Ленинград 1934 г., стр 5.

**) Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան 1944 թ., էջ 172:

Պլուտարքոսի տեղեկությունից հայտնի է, որ հայոց Արտա-
 վազդ թագավորը (55—34 թ. ն. մեր թվ.), Տիգրան II-ի որդին,
 ազերերգություններ, ճառեր և պատմական երկեր էր գրում, որոնցից
 մի քանիսը պահվել էին մինչև Պլուտարքոսի ժամանակ: (ὁ δ' Ἄρ-
 τασταδότης καὶ τραγῳδίας ἐποίησεν καὶ λόγους ἔγραψε καὶ ἱστορίας,
 ὧν ἔναι δι' αὐτῷ ζοντατα) («Արտավազդը գրում էր ողբերգություններ,
 ճառեր և պատմական երկեր, որոնց մի քանիսը պահվել են»^{*)}):

Եթե նրանք այդքան վարժ կարող էին դրել հունարեն, ասյո
 դժվար չէր լինի նույն հունարեն տառերով գրել նաև իրենց մայ-
 րենի լեզվով, հայերեն: Ծիշտ է, Արտաշեսյան հարստության հայ
 թագավորների դրամները հունարեն են կտրած, սակայն այլ կերպ
 էլ լինել չէր կարող, որովհետև դրամները գործածության մեջ էին
 դնում ոչ միայն Հայաստանում, այլ նրանից դուրս, հելլենական
 երկրներում:

Խորենացու մի վկայությունից երևում է, որ 2-րդ դարում
 Բարդաժան անունով քրիստոնեական մի քարոզիչ դալիս է Դա-
 րանադասց Անի ամրոցը, որը հնում հայ թագավորների թագավո-
 րանիստ կենտրոնն է եղել, անդի արխիվից մեհենական ու թա-
 դալորական մի պատմություն թարգմանում է ասորերեն և իր հե-
 տանում: Հետագայում այդ աշխատությունը թարգմանվում է հու-
 նարեն, որից և օգտվում է Խորենացին: Խորենացին այդ մասին
 գրում է. «Չրուցե մեզ զայս Բարդաժան, որ Նդեսիայ. քանզի նա
 յաւուրս Անտոնիոսի վերջնոյ երեւցաւ պատմագրող... եկն նա
 այսր, որպէսզի աշակերտել զոք կարասցէ ի խառն հեթանոսաց. և
 իբրեւ ոչ ընկալեալ եղև, հմուտ նա յամուրն յԱնի, և ընթերցեալ
 դմեհենական պատմութիւնն, յորում և զգործս թագաւորացն,
 յաւելլով իւր և որ ինչ առ իւրեան և փոխեաց զամենայն ի լեզու
 ասորի, որ և ապա անտի յեղաւ ի յոյն բառ: Յորում պատմէ ի մեհե-
 նից պաշտամանց՝ վերջին Տիգրանայ արքայի Հայոց... Յայսմ
 պատմութենէ առեալ մեր երկրորդեցար քեզ թագաւորութենէն Ար-
 տաւազդայ մինչև յարձանն խոսրովում»^{**)}: Եթե Բարդաժանի արա-
 քածը ասորերեն չէր և ոչ էլ հունարեն, ապա մնում է մեզ ենթա-
 դրել, որ նա տեղական լեզվով պիտի գրած լիներ:

*) Plut, Crassus, XIII, 1-5.

**) Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց, Տփղիս 1913 թ.,
 էջ 201—202.

Հայ հեթանոսական պանթեոնում հիշվում է Տիր անունով մի աստված, որը ըստ Ագաթանգեղոսի, արվեստի և դպրության աստվածն էր՝ «Դպիր Որմզդի»^{*)}։ Նրա մեհյանը քանվելիս է եղել Չվարթնոցի մոտերքում, որը կործանվեց Տրդատ երրորդի կողմից։ Մի ժողովուրդ, որ ստեղծել է դպրության աստված, նաև ունեւասած, ունեցել է և դպրություն։ Նախամաշտոցյան դրահանության ժխտողների այն պնդումները, թե այդ աստծու անունը փոխ է առնված պարսիկներից և դա հայկական չէ, հիմնավորված չէ։ Նախ՝ պիտի ապացուցել՝ թե ո՞վ ումից է փոխ առել և ապա՝ եթե տեղում հաստատվի փոխառությունը, ապա՝ անկասկած է, որ այդ աստծու անունը փոխ առնելու կարիքը Հայաստանում պահպանվել է։

Զորարդ դարից մեզ է հասել Ագաթանգեղոսի, Փավստոս Բյուզանդացու և այլ հեղինակների աշխատությունները, որոնք իրենց համարում են 4-րդ դարի հեղինակներ։ Ծիշոտ է, դրանց աշխատությունները զգալի փոփոխման և խմբադրման են ենթարկվել, բայց դա մեզ հիմք չի տալիս այդ մատենագրերին կեղծարարներ համարել և շարժել նրանց տեղից, ինչպես վարվում են ոմանք, մասնավորապես պարզված է, որ Փավստոսը և Ագաթանգեղոսը հույներենից չեն թարգմանվել։ Մնում է ենթադրել, որ նրանց նախնական բնագրերը գրված են եղել հայերեն։

Հունական մատենագրության մեջ հայտնի է Փիլիստրատոս անունով (3-րդ դար) մի հեղինակ, որը իր «Վարք Տիանա Ապոլոնի» աշխատության մեջ վկայում է, որ Տավրոսում մի հովազ եղածն էր, հովազի վզին ոսկե մանյակ, իսկ մանյակի վրա հայերեն գրերով գրված (« ἑπὶ γράπτει Ἀρμενίος ») «Արշակ թագավոր աստծուն Նյուսիս»^{**)}, այսինքն՝ Արշակ թագավորից նվեր Նյուսիսյի աստծուն։ Հավանական է, որ այս հովազը հայոց Արշակ թագավորի գաղտնանոցից փախած գազաններից է եղել։ Կոմենտարներն այստեղ ավելորդ են, որովհետև Փիլիստրատոս այս տեղեկության մեջ շատ պարզ ասված է, որ 3-րդ դարում բռնված հովազի վզի մանյակի վրա հայերեն էր գրված։ Բայց մի րոպե եթե մենք ենթադրենք, որ մանյակի վրա գրածը պահլավյարթներն է եղել և Փիլիստրատոսը շփոթել է հայերենի հետ և

*) Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց, Տիգրիս 1909 թ., էջ 404.

**) Այս մեղքերումը մենք վերցրել ենք Ի. Հարությունյանի «Հայոց դիրք» աշխատությունից, էջ 252.

կաթօնի, որ պահպաններն հայերեն է, ինչպես պնդում են նախա-
մաշտոցյան գրականության ժխտողներից ոմանք, ապա այն ղեկա-
քում այդ փաստն ավելի է հաստատում հայոց հին գրության դո-
կտրինան: Ուրեմն, 3-րդ դարում հայերենն այնքան պիտի տարած-
ված, հանրածանոթ եղած լիներ, որ պահավ-պարթևներենն էլ
շփոթեն հայերենի հետ:

4-րդ դարի մի հուշն հեղինակ, Հիպոլիտ անունով, իր աշխա-
տության մեջ բերում է իրեն հայտնի այն ժողովուրդների անուն-
ները, որոնք ունեն դպրություն: Դպրություն ունեցող ժողովուրդ-
ների այդ ցանկում նա հիշում է նաև հայերին: «Սրանցից (այ-
սինքն իր վերև թվարկված ժողովուրդներից — Ա. Ա.), որոնք դի-
տեն դպրություն, հաեկյաններն են՝ եբրայեցիք, լատինացիք, որով
և հռոմայեցիներն են վարում, սպանացիները, հույները, մարերը
և հայերը»): («Οἱ δὲ ἐπιστάμενοι αὐτῶν γράμματα εἰσιν: Ἰβηραὶ,
Λατίνοι οἷς χρῶνται οἱ Ῥωμαῖοι, Σπάνιοι, Ἑλλήνες, Μῆδοι, Ἀρμένιοι»):

Պիտի նաև ի նկատի ունենալ, որ 5-րդ դարից մեզ հասած
հայ գրականությունը սկսնակ շրջանի հատուկ գրականություն չէ:
Դրականության ոճը, տերմինների հարստությունը, քերականա-
կան մշակված ձևերը, միատեսակ լեզուն, բարդ թեմատիկան և
այլն, ցույց են տալիս, որ հայ գրականությունը եղել է և մշակ-
վել 5-րդ դարից առաջ: Եթե 5-րդ դարը լիներ մեր գրականության
սկիզբը, կնկատվեր տարբեր բարբառներ, թարգմանությունների
մեջ գործ կածերն մեծ չափով օտար բառեր և այլն:

Ինչո՞ւ, ասում են նախամաշտոցյան գրականությունը ժխտող-
ները, հնագույն այդ գրականությունից, եթե իրոք եղել է, ոչ մի
նմուշ մեզ չի հասել:

Պետք է ասել, որ նախամաշտոցյան հայ գրականության ժրի-
տողները շատ են խստապահանջ: Նրանք մոռանում են, որ
դարեր են անցել այդ ժամանակից: Ժողովուրդներ են կորել Հին
Արևելքում առանց իրենց ստեղծած զարգացած կուլտուրայից հետք
թողնելու: Քաղաքներ են կորել, որոնց հետք չենք կարողանում
գտնել: Ինչո՞ւ պիտի այդքան խստապահանջ լինել:

Պիտի ի նկատի ունենալ նաև, որ նախնական հույկապան
գրականությունը սպանիչ հարված հասցրեց բրիտանություններ:
Գաղտնիք չէ, որ քրիստոնեության տարածման գործում որոշ դեր

ունեցել է նաև սուրբ և հուրը: Տրդատը, ըստ պատմիչների հա-
զարդած տեղեկությունների, իր զորքի գլուխն անցած քանդում,
ավերում էր հեթանոսական մեհյանները և նրանց տեղը քրիստո-
նեական վանքեր ու եկեղեցիներ շինում: Աղաթանգեղոսը պատ-
մում է, որ՝ «Ինքն իսկ թաղաւորն խաղալը զնայր (Վաղարշապա-
տից) ամենայն զօրօք» մեհյանները քանդելու: Արտաշատի ճանա-
պարհի վրա նրանք, նախ՝ Տիր աստծու տաճարը «քակեալ աւերեալ
քանդեցին»: Արտաշատում «ամենայն շինուածք մեհենին ի հիմանց
որդեալ տապալեցան»: Թորգանում սպիտակափառ կոշիկով Վա-
հագնի տաճարը «կործանէին և զպատկերն նորին փշրէին»: Նրիզ
ավանի մեհյանում «փշրէին զոսկի պատկերն Անահատական կա-
նացի դիցն և ամենեկին տեղին քանդեալ վատնէին» և այլն^{*)}:

Իսկ հայ մատենագրերը լուծւում են, օրովհետև նրանք որպես
կրօնականներ, միտում ունեն հեթանոսական շրջանը ներկայաց-
նել որպես բարբարոսական շրջան և հայկական ողջ կուլտուրան
կապել միայն քրիստոնեության հետ:


Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Հայաստանում, 5-րդ
դարից շատ առաջ, գոյություն է ունեցել հայերեն գրականություն:
Այդ գրականությունը, գլխավորապես, մեհյաններում էր կենտրո-
նացված և այդ մեհյանների ավերակների տակ էլ թաղվեց:

Հարց է առաջանում, — ի՞նչ տեսակ գրեր էին հեթանոսական
հայ գրերը — սեպագրե՞ր, հիերոգլիֆնե՞ր, ներկա՝ գրերի այլ ձևեր,
թե՞ մեզ անծանոթ գրեր: Այս հարցին հայագիտության մեջ տար-
բեր պատասխաններ են տրվել: Բերենք այդ տեսակետներից կա-
րևորները:

Մ. Էմինը կարծում է, որ Մեսրոպից առաջ գործածության մեջ
է եղել հիերոգլիֆներով գրություն, որի նշանագրերից իբր թե մեզ
են հասել «Նշանագիրք իմաստնոցի» կոշիկով ցանկերի մեջ: Հայ-
կական ձեռագրերի մեջ, իրոք, պատահում են հապավումների, և
գաղափարագրերի խառն ցուցակներ, որոնք վերնագրված են
լինում «Նշանագրեր» կամ «Նշանագիրք իմաստնոց», Էմինի խոսքը
որանց է վերաբերում: «Նշանագիրք իմաստնոցի» վրա մենք կանգ
կառնենք առանձին գլխում, իսկ առայժմ՝ կատենք, որ այս տե-
սակետը միանգամայն խախտո հիմքեր ունի: Այդ անհերքելի
փաստերով մերժված է ակադ. Հ. Աճառյանի կողմից՝ իր «Հայոց
գրերը» աշխատության մեջ^{**)}:

^{*)} Աղաթանգեղոս, էջ 401—410:

^{**)} Հ. Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա 1928 թ., էջ 22—59:



Պրոֆ. Բ. Պատկանյանի կարծիքով, Մաշտոցից առաջ գործ են անելել Դանիելյան կողմից գրերը, որոնք, ինչպես հայտնի է, բերել տրվեցին Վառձապուհի կողմից և երկու տարի պարապեցին նրանցով: Նա այս մասին Մովսես Կաղանկատվացու ուսաներն թարգմանության, ծանոթության մեջ գրում է: «Ճիշտ է այն կարծիքը, որի համեմատ Մաշտոցը ո՛չ թե գտավ հայոց այբուբենը, այլ արդեն եղածը, բայց ընդհանուրից չօգտագործված Դանիելյան հայկական այբուբենը կատարելագործելը»^{*)}: Նույն կարծիքը ավելի որոշակի ձևով հայտնել են ակադ. Բրուսեն, Հյուբշմանը և ուրիշներ:


Պետք է ասել, որ այս տեսակետը ևս փաստերով չի հիմնավորված, որովհետև Դանիելյան գրերը թերի, պահպանվող գրքեր էին: Այդ պարզ երևում է մատենագրերի տեղեկություններից: Այսպես, Կորյունը Դանիելյան գրերի մասին նշում է, որ նրանք բաղված էին այլ այբուբենից և հարմարեցված՝ «յայտոց դպրութեանց քաղեալը և յանկուցեալը դիպեցան»^{**)}: Ի դեպ, այս նախադասության տալադիր տեքստում աղավաղված է՝ «յայտոց դպրութեանց քաղեալը և յարուցեալ դիպեցան» ձևով, որից և անհեթեթ այն միտքն էր ստացվում, որ իբր նրանք նախկին հայկական գրերն էին, թաղված էին գետնի տակ և Դանիելի կողմից հարսնյուն տրված:

Պրոֆ. Գ. Լեյոնյանը «Սովետական արվեստի» մեջ տեղավորել է մի հոդված՝ «Մի առեղծվածային փանդապատկեր» վերնագրով^{***)} և բերել է քանդակապատկերով մի հետաքրքիր նկար: Քանդակապատկերի վրա հետևյալն է երևում. մեջտեղում պատվանդան է, պատվանդանի վրա դրված զոհաբերված կզան զլուխ, որը լիզում է իր կաշին, գլխի կողքին դրված են երկու յուղակալներ: Պատվանդանի կողքերում սիմետրիկ ձևով երկրպագող թագավորի, թագուհու և երեխաների նկարներն են: Թագուհին և թագավորը ձեռքերում ունեն կապուկներ, որոնք նվիրաբերում են աստծուն:

*) Патканов, История Кавказов, Примечания, стр. 346.

**) Տե՛ս ՀՍՍՌ Մատենագրարանի նո. 3781 և 3797 ձառնութիւնների հիման վրա մեր հրատարակած Կորյունի տեքստը: Այստեղ «թագեալը» բառը ապլիս է «քաղեալը» ձևով: Ինչ վերաբերում է «յարուցեալ» բառին, ապա նա «յանկուցեալ» ձիւղ ձևով առաջարկել է ուղղել ն. Ակինյանը իր «Մաշտոց վարդապետ Հայեկացի» վերնագրով հոդվածում (տե՛ս «Հանդէս ամսօրեայ» 1935 թ., էջ 506—550), որից և մենք օգտվել ենք:

***) «Սովետական արվեստ», 1941 թ., էջ 69—71:



Փանդապատիկերի լուսանկարը, որը մեզ տրամադրել է
հանդուգյալ սլոֆ. Լևոնյանը:

Առջևում երկուական երեխաներ են, իսկ հետևում՝ մեկական:
Չորս փոքրիկ կճուճներ դրված են արկղաձև պատվանդանի վրա:

Այս նկարի ներքևում բերված են այնպիսի գրեր, որոնք շատ
նման են հայկական ներկա գրերին: Որոշ գրեր տառացի նման-
վում են նրանց, իսկ սրոշ գրեր՝ ձևափոխված են:

Պրոֆ. Գ. Լևոնյանը հրատարակելով այս տեքստը, երեք
նաթափոր եզրակացություններ է հանել.

ա) Կամ նախամաշտոցյան գրեր են սրանք, որովհետև մո-
րուքը, թագը, զգեստը, եղան զլսի այդպիսի պաշտամունքը—բո-
լորն էլ հին են (իսկ եղան մեզ մոտ պաշտվելը փաստ է—այդ են
վկայում Դիրաքությունը և Ղուշխում գտնված բրոնզյա եղան զլուխ-
ները), սակայն տարակուսելի է՝ ինչո՞ւ են դրերը ձախից աջ:

բ) Կամ ուշ շրջանում եղած հայ հեթանոսներն են պատրաս-
տել այդ քանդականկարը, միայն ինչպե՞ս համատեղել թագա-

վարի ներկայությունը այստեղ, որովհետև հայ հեթանոսական թագավորները ուշ չեն կարող լինել IV դարից:

դ) Կամ կեղծիք է, այդ դեպքում ի՞նչ տառեր են ապա դրանք:

Մեր կարծիքով, ամենից հավանականն այն է, որ այդ ժառկադիր է, կամ կեղծիք: Այդ պարզ երևում է տառերի ձևերից: Ըստ պալեոգրաֆիկ տվյալների, այդ դրությունը մի քանի հարյուր տարուց ավելի: Հին լինել չի կարող (դրության նորությունը երևում է բացահայտ Ա Մ Ն տառերից): Այդպիսի ուղղաձիգ գրել միջին դարում չէին գրում, իսկ այդ զաղառնիքի հետ երևի ժամանակի եղել կեղծողը, եթե, իրոք, կեղծիք է:

Մեզ ամենից հավանական է թվում այն տեսակետը, որ մայրենի լեզվով գրելիս հայերը գործ էին ածում հունարեն և ասորերեն տառերը:

Նախամաշտոցյան շրջանում Հայաստանում եղել է դպրոց և մատենադրություն, այդ անվիճելի է: Փալատոսը վկայում է, որ Ներսես Մեծը (353—373) դպրոցներ էր բացում Հայաստանում հունարեն և ասորերեն դպրության՝ «Կարդէր ի տեղիս տեղիս դպրոցս հունարէն և ասորերէն յամենայն դաւառս հայոց»^{*)}:

Խորենացու տեղեկությունից հայտնի է, որ Արշակի ձերբակալությունից հետո, երբ պարսից զորքը Մերոսման Արծրունու առաջնորդությամբ մտավ Հայաստան, Մերոսմանը հրամայեց վտանջ Հայաստանում եղած հունարեն ձեռագրերը, որոնք հայերին կապում են հույների հետ. «Եւ զորս միանդամ զիրս գրեմէր այրէր, և հրաման տայր մի ուսանել զդպրութիւն յունարէն, ույլ զպարսիկ, և մի որ իշխեցէ յոյն խօսել կամ թարգմանել, այսպիսի ինչ պատճառաւ, զի ամենեկին մի լիցի Հայոց ընդ հունաց ժառոթութիւն և հաղորդութիւն սիրոյ»^{**)}:

Եթե Հայաստանում կային դպրոցներ, կար մատենադրություն, թեկուզ և հունարեն և ասորերեն դպրությամբ, ապա ի՞նչն էր խանգարում, որ նույն տառանիշներով նրանք գրեին և մայրենի լեզվով:

Այս տեսակետից, ուշադրության արժանի է Երուսաղեմի Հայկական Ազգային Պատրիարքարանի Մատենադարանի № 1297 ձեռագիրը, որը պարունակում է հունատառ հայերեն մի ծածկա-

*) Փալատոս Բեռզանդացույ Պատմութիւն Հայոց, Վենետիկ 1632 էջ 77:

**) Խորենացի, էջ 301.

ՃԱՇՆՀԱՄԱՁԱՄԲԱՆԱՀՆՈՒԱԴԹԵԱ
 ՈՒԲԱՆՀԱՄԵՆԱՆՈՒԱԴԹՕՐԹԻՆԱԲԱԶԻՐ
 ՆԵՒԻԴԱԶԵ. ՈՐԲԵԱ ՄԻՆԵՇԱՆԵՆՈՐ
 ՄԻՆՈՂԱՇԵՆ. ԵՐԱՐՈՒՄԵՆԱՆՈՒՆԻ
 ԵՐԿԱՄՔԵ: ԵՆՐԻՊԻՆԵՇԵՇ -- ԱՇԽԱՄՔ
 աշուցին նկարագրեալ. այսպիսի ՃԱՐԵԳՈՐ
 ԴՐՈՐՇԻՐԱՎԱԳՐԻՆ. ԵՆՀՐՈՐՆՈՒՇԱԶԵԳ.
 ԻՐԻՊԻՆՈՐ: ՕՐԼԻՐԻՆՈՒՇԱԶԵԳ
 ՈՒՆԻՆԻ: ՕՐԻՆՈՒՇԱԶԵԳ
 ՇՆՈՒՇԱԶԵԳ: ԴՐԵԳԱՆՈՒՇԱԶԵԳ
 ԴՐԵ ԵՐՈՒՇԱԶԵԳ. ԴՐԵՆՈՒՇԱԶԵԳ
 ԴՐԵՆՈՒՇԱԶԵԳ:

Այս ծածկադիրը մենք հրատարակել ենք Վ. Մ. Մուստովի անվան
 երևանի պետական համալսարանի շէնք. աշխատութիւններով
 XXIII հատորում:

որի մեջ տարբեր նշանագրերով են նշանակված հայկական
 այն տառերը, որոնք չկան հունարենի մեջ: Արդյոք այդ տառերը
 նախկինում հունարենի հետ դործածվող տառերը չեն, որոնք
 պահպանել են մինչև 14-րդ դարը և հնագույն տրադիցիայի հիման
 վրա կրկնվել են ծածկադրուկյան մեջ: Այժմ վճռական ոչինչ առել
 հնարաւոր չէ: Այդ առթիւ վճռական խոսքը պատկանում է հնա-
 դիստրիկտներ, որը, կարծում ենք, նոր հայտնագործումներով
 կգա լուծելու Նախամաշտոցյան հայ գրի և գրականության ա-
 նդիմում:

ԳԼՈՒԽ ԵՔԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԵՐԻ ՍՏԵՂՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՏԱՂՁԸ

Հայկական ներկա գրերի պատմությունը սկսում է 5-րդ դարից և կապված է Մաշտոցի անվան հետ: Համառոտակի կանգ առնենք հայկական գրերի ստեղծման պատմության վրա:

Հայկական ներկա գրերի պատմության մասին մենք ունենք երեք կարևոր սկզբնաղբյուրներ՝ Կորյունի «Վարք Մաշտոցի», Մովսես Խորենացու «Պատմության Հայոց» և Ղազար Փարպեցու «Պատմություն հայոց»: Միջնադարյան հայ մատենագիրներ, հիմնականում, օգտվել են այս մատենագրերից և այս կամ այն տարբերակով կրկնում են նրանց:

Վերջին ժամանակները Մաշտոցի մասին հետաքրքրական մի նոր տեղեկություն հրապարակեց պրոֆ. Ն. Աղոնցը «Հանդես ամսօրեայ»-ում^{*)}: Աղոնցն այդ տեղեկությունը քաղել է Փսա պատրիարքի «Գրադարան» կոչվող աշխատությունից, ուր ամփոփված են մոտ 300 աշխատությունների համառոտ կոնսպեկտներ: Մաշտոցը հիշված է Թեոդոր Մոսսուսեստացու աշխատությունից վերցրած կոնսպեկտում: Թեոդորի աշխատությունը, ինչպես երևում է, ուղղված է եղել զրոգաշատականության դեմ և գրվել է Մաշտոցի համար: Այս մասին կոնսպեկտում ստված է Ա. «Προσφωγε δὲ αὐτοῦς πρὸς Μαστούριον ἑξ Ἀρμενίος ὁρμώμενον» («ուղղված են նրանք ծագումով հայ Մեսուրիին»)^{**) (Աղոնցի կար-}

^{*)} Ն. Աղոնց, Անձամոթ էջեր Մաշտոցի և նրա աշակերտների հյանքից ըստ ծառայողների (հանդես ամսօրեայ, 1925 թ., 19 193—192, 321—327, 435—441, 531—539),

^{**)} Իսախան, էջ 195:

ծիրով Մաքսութիւն անունը — Մաշտոցի անունն է, սակայն մեզ թվում է, որ Շ-ի աղալաղում է, դառնել է Մաքսութիւն, փոխարենն Մաքսութիւն):

Պետք է ասել, որ նշված բոլոր հեղինակներից հաշ զրերի պատմութեան համար ամենից ստուգախոսը Կորյունն է: Եվ դա հասկանալի է. Կորյունը Մաշտոցի աշակերտն է, լավատեղյակ իր ուսուցչի գործունեութեան հետ: (Կորյունն իր աշխատութեանը գրել է Հովսեփ Վալոցձորցու պատմերով Մաշտոցի մահվանից հետո, համաձայն է 443 թվին): Բայց պիտի ասել, որ Կորյունի տեքստում նկատելի է որոշ աղճատումներ և խմբագրական փոփոխութեաններ:

Կորյունի տեղեկութեանից երևում է, որ Մաշտոցը ծագումով գլաղացի է: Նա ծնվել է Տարոնի Հալեկաց գլաղում ոմն Վարդանի ընտանիքում. «Անն, զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, — գրում է Կորյունը, — որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշթոց անուն, ի Տարօնական դաւառէն, ի Հալեկաց գեղջէ, որդի առն երանելոյն Վարդան կոչեցելոյ»^{*)}): Հալաղեաններից ոմանք (Գաթրճյան, Էմին, Մ. Աբեղյան և ուրիշները) փորձում են Մաշտոցին աղնվականական ծագում վերագրել՝ սերելով նրան Մամիկոնյաններից, սակայն այդ ենթադրութեանը հնագույն աղբյուրներով չի հաստատուում:

Մաշտոցն իր դաստիարակութեանն ստացել է հունական գաղությամբ՝ «Ի մանկութենէ տիսն վարժեալ հելլենական գաղութեան...»^{**)}: Ակադ. Մանանդյանը ենթադրում է, որ նա եղել է գլաղական այն տղաներից, որոնք պարտադիր ձեռով, ինչպես այդ սովորութեան է եղել նաև Ռուսաստանում, վերցվում էին դպրոցացիներից գաղացիներում սովորելու համար: Ակադ. Հ. Մանանդյանի այս պնդումը ոչնչով հիմնավորված չէ: Խորենացին որպես Մաշտոցի ուսուցիչ հիշում է Ներսէս Մեծին՝ «Մնեալ և ոսեալ առ Մեծին Ներսիսի»^{***)}:

Հալեկցի երիտասարդը Առավանի հազարապետութեան տարիներին գալիս է Վաղարշապատ (Նոր քաղաք) և զբաղրի պաշտոնով աշխատում արքունիքում: Ըստ Ղազար Փարպեցու տեղեկութեան, Մաշտոցի գալը տեղի է ունեցել Խոսրով Գ-ի գահակալու-

*) Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան 1941 թ., էջ 36:

**) Նույնը, էջ 36:

***) Մովսէս Խորենացի, էջ 316:

թյան տարիներին^{*)} (հավանական է 387 թվականին) Կրճառի շորերով տարին (388—389): Գրադրի այն ժամանակվա պաշտոնը կապված էր նաև զինվորական ծառայության հետ, ուստի և տնօրինակ չէ Կորյունի ակնարկը՝ Մաշտոցի զինվորականության մոտ սիրելի լինելու մասին:

Գրադրի պաշտոնում եղած ժամանակ Մաշտոցը ուսումնասիրում է կրոնական գրականությունը և շուտով թողնում է իր պաշտոնը ու հոգևոր կոչում ընդունում: Նա միաբանում է Գողթանի վանքերից մեկում: (Ննթադրվում է, որ նա միաբանել է Երնջակ գավառի Մեսրոպավանք կամ Մարավանք գյուղում^{**) :}

Որպես քրիստոնեական քարոզիչ, նա ուղևորվում է Գողթանի գյուղերը և քարոզություն անում: Ի դեպ, Գողթանը Հայաստանի այն գավառներից մեկն էր, ուր հեթանոսությունն ամելի ամուր հիմքեր ուներ, քան Հայաստանի մյուս շրջաններում: Մաշտոցն այստեղ նկատում է այն բոլոր դժվարությունները, որի մեջ դառնում էին հայ համայնքները: Եկեղեցիներում եկեղեցական գրքերը կարգացվում էին հունարեն և ասորերեն լեզուներով: Մաշտոցը, որպես կրոնական, տեսնելով այս ամենը, ինչպես պատմում է Կորյունը, դառնացած ասում էր. «Տրամութիւն է ինձ և անպակաս ցաւք սրտի իմոյ, վասն եղբարց իմոց և ազգակաւնաց»^{***)}: Նա ըմբռնում էր այն պարզ ճշմարտությունը, որ հունական և ասորական աղղեցությունների դեմ, ինչպես և դրադաշտության դեմ կռվելու լավագույն զենքերից մեկը — այդ սեփական գիր ու գրականություն ստեղծելն է:

Գողթանի քարոզչությունից վերադառնալուց հետո, նա իր մտադրությունը հայտնում է ժամանակակից կաթողիկոսին, Սահակին, որը հավանություն է տալիս Մաշտոցի ձեռնարկությանը՝ հայկական գրեր ստեղծելու խնդրում: Նրանք նախ խորհրդակցում են և ապա գիտնում վռանդապուհ Բագավորին: Վերջինս հայտնում է, թե իրեն հայտնի է, որ Դանիել Ասորի եպիսկոպոսի մոտ կան արդեն պատրաստի հայկական գրեր: Որոշում են բերել տալ պատրաստի այդ գրերը:

*) Հազարայ Գարայեցույ, Պատմութիւն հայոց և թուրք տա վանան Մամիկոնեան, Տիգրիս 1964 թ.:

**) Մ. Աբեղյան, Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության «կիրքը» (Սովետական գրականություն, 1941, № 1, էջ 48).

***) Կորյուն, էջ 40:

Երեբը բերելու համար Վահրիճ անունով մեկին ուղարկում են Դաճիկի բարեկամ Աբելի մոտ, որը և գնում ու բերում է Դաճիկի մոտ եղած գրերը: Կորյունն այս մասին գրում է. «Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի աղիտականի՝ Դաճիկ անուն կոչեցելոյ, որոյ յանկած ուրեմն գտնալ նշանադիրն ալիաբետաց հայերէն լեզուի: Եւ իբրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն գտելոյն ի Դաճիկէ, յօժարեցին զարքայ՝ փութ առնել վասն պիտոյիցն այնոցիկ: Եւ նա առաքէր զոմն Վահրիճ անուն հրովարտաւօք առ այր մի երէց, որոյ անունն Դաճիկէ կոչէին, որ էր մերձատր Դաճիկի ասորոյ եպիսկոպոսի»^{*)}: Դաճիկը գտնվում էր, ըստ տեղեկությունների, Աղձնիքում:

Դաճիկյան գրերը բերելուց հետո, Մաշտոցը զարոյց է բաց անում, աշակերտներ հավաքում և սկսում այդ այբուբենով երկու տարի, իսկ հայագետներից ոմանց կարծիքով՝ երկու ամիս, պարապել նրանց հետ: Սակայն շուտով պարզվում է, որ Դաճիկյան այդ այբուբենը լրիվ չի արտահայտում հայոց լեզվի հնչական առանձնահատկությունները, նրանից որոշ տառեր են պակասում: Նրանք համոզվում են, որ «չեն բաւական նշանադրերքն ողջ ածել զսխրբայս զկապս հայերէն լեզուի»^{**)}:

Մաշտոցը Սահակի հանձնարարությամբ, իր հետ վերցնելով մի խումբ աշակերտներ, իջնում է Միջագետք: Նա լինում է Ամիդ և Եգեսիա քաղաքներում և ջերմ ընդունելություն գտնում այնտեղ: Մաշտոցն այստեղ իր հետ տարած աշակերտները բաժանում է երկու խմբի, մի մասին հանձնարարում է հունարեն սովորել, իսկ մյուսին՝ ասորերեն: Իսկ ինքը, հավանական է, Թեոդոր Մոպսուեստացու կամ նրա աշակերտների աջակցությամբ,^{***)} ուսումնասիրում է հայոց լեզվի հնչական առանձնահատկությունները և կարդում հայկական նոր այբուբենը՝ բաղկացած 36 տառից: Այնուհետև Մաշտոցը գնում է Սամոսատ քաղաքը (Նիրատի վրա) և Հոսոխանոս անունով մի վարպետ գեղադրի օգնությամբ ձևավորում հայկական գրերը: Ենթադրվում է, որ այս Հոսոխանոսը ոչ թե Թեոդոր Մոպսուեստացու աշակերտը լինի:

Մաշտոցն այստեղ, իր երկու աշակերտների՝ Հովսեփ Պաղ-

^{*)} Գորյուն, էջ 42—44:

^{**)} Նույնը, էջ 46:

^{***)} Տես Աղոնցի վերն հիշված հոդվածը «Հանգէս ամսօրեայ»-ում, էջ 439:

նացու և Հովհաննես Նիկիդիացու աշակցությամբ նորաստեղծ տառերով հայերեն թարգմանում է Սողոմոնի առակները և ուրախությամբ վերադառնում Հայաստան: Վաղարշապատում Մաշտոցին դիմավորում են քաղաքից դուրս, Ռահ գետի վրա և ընդունում մեծ հանդիսավորությամբ: Շուտով բաց են անում դպրոցներ և սկսում աշակերտներին դաստիարակել հայերեն նոր գրերով:

Հայկական գրերի ստեղծման թվականը վիճելի է: Պրոֆ. Ն. Ադոնցի կարծիքով, հայկական գրերը ստեղծվել են մոտավորապես 383—392 թվականներին, երբ Անտիոքում քահանայապետում էր Թեոդոր Մոպսուեստացին, որը և Ադոնցի կարծիքով, օգնել է նրան^{*)}: Ադոնցի առաջարկած թվականն ընդունելի չէ, որովհետև նախ՝ կոնկրետ մենք տեղեկություն չունենք Թեոդորի Մաշտոցին գրերի ստեղծման գործում օգնելու մասին և ապա՝ եթե ընդունենք որ Թեոդորը օգնել է, ապա ինչո՞ւ 392 թվականից հետո նա չէր կարող Նեկեսիա դալ և օգնել: Ադոնցի առաջարկած թվականը հիմնավորված չէ:

Ահադ. Հ. Մանանդյանը հիմնվելով Ղազար Փարպեցու տեղեկության վրա՝ Վառձապուհի թագավորության տարեթվի մասին (386 կամ 388 թվականները) և նրա վրա ավելացնելով Կորյունի հիշված լից տարիները (ըստ Կորյունի՝ գրերը ստեղծեցին Վառձապուհի վեցերորդ տարին), գրերի ստեղծման տարեթիվն է համարում 391—393 թվականները^{**)}: Մանանդյանի առաջարկած այս թվականը ևս չի կարելի ընդունել, որովհետև նա չի վերացնում գոյություն ունեցող հակասությունները, այլ, ընդհակառակը, ավելի է խճճում: Մանանդյանը Կորյունի վերջաբանում եղած տեղեկություններից վերցնում է այն, ինչ՝ համապատասխանում է իրեն կոնցեպցիային և թվականի հարցը չի լուծվում եղած բոլոր փաստերի բազմակողմանի վերլուծության հիման վրա:

Գ. Տ.-Մկրտչյանի կարծիքով, Դանիելյան գրերը Վաղարշապատ են բերվել 405 թվին, իսկ Մաշտոցի կատարելագործությունը տեղի պիտի ունեցած լինի 412—416 թվերին^{***)}: Գ. Տ.-Մկրտչյանի ժամանակագրական այս տվյալը հիմք ընդունելով,

^{*)} «Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 439.

^{**) Մ. А. Манандян, Месроп-Маштоц и борьба армянского народа за культурную самобытность, Ереван 1941 г., стр. 27.}

^{***)} Գ. Տ.-Մկրտչյան, Հայկական գրության 100 ամյակի ամբիվ (Արարատ, 1912 թ., էջ 449—511).

1912 թվին Օշականում և Էջմիածնում կազմակերպվել է հայկական զորքերի 1500-ամյակին նվիրված տոնախմբություն: Գ. Տ. Մկրտչյանի գլխավոր մոտեցումը ներկա գրության տարեթիվը որոշելու խնդրում ճիշտ է, բայց առաջարկած թվականը սխալ էրան տարախոսանքի մեջ է ձգել ժամանակագրական մի հակասություն, որը և շեղել է նրան իր վերջրած ճիշտ ուղուց: Այս հակասության վրա կխոսենք մենք մի քիչ հետո:

Չենք ուզում կանգ առնել այս խնդրում եղած բաղմամբիվ այլ տեսակետների վրա: Մեր կարծիքով, հայկական զորքերի ստեղծման ճիշտ թվականը 406 թվականն է: Այս թվականը հաստատվում է մատենագրական մի շարք տվյալների հիման վրա:

Կորյունի վերջաբանում ասված է, որ հայկական զորքը ստեղծվեցին Մաշտոցի մահվանից 35 տարի հետո. «Ի դպրութենէն Հայոց մինչև ցվախճանն սրբոյն՝ ամբ երեսուն և հինգ»^{*)}: Տոմարական հաշիվներով անվիճելի պարզված է, որ Մաշտոցը մահացել է 440 թվականի փետրվարի 17-ին, շաբաթ օրը: Եթե մենք 440-ից գուրս հանելու լինենք 35 տարիները, ապա զորքի ստեղծման թվականը կլինի 406 թվականը:

Տոմարական այս հաշիվը հաստատվում է մատենագրական մի այլ փաստով: Ըստ Կորյունի տեղեկության, հայկական զորքի գլուոր տեղի է ունեցել Հազկերտ առաջինի ութերորդ տարին: Հազկերտ առաջինը զահակալել է 399 թվին, դրա ութերորդ տարին համասար է դարձել 406 թվին:

406 թվի նկատմամբ սակայն մատնացույց է արվում երկու հակասություն: Ըստ Կորյունի տեղեկության, Մաշտոցը Միջագետք իջնելիս Եդեսիայում հանդիպում է Բաբելասին, իսկ Ամիրդում՝ Ակակիոսին, «Երթեալ (Մաշտոց) հասանէր ի կողմանս Արամի ի քաղաքս երկուս Ասորոց, որոնց առաջինն Եդեսիա կոչի, և երկրորդին Ամիրդ անուն. ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջնոյն Բաբելաս անուն և երկրորդին՝ Ակակիոս»^{**)}: Ակակիոսի Ամիրդում եպիսկոպոսական աթոռի վրա լինելու տարեթիվն էր համարվում 419 թվից հետո, իսկ Բաբելասինը՝ 412—435 թվերին: Ուրեմն, ըստ այս հաշիվների, զորքի ստեղծումը 412 թվից շուտ լինել չէր կարող:

*) Կորյուն, էջ 98:

**) Նույն տեղում:

վերջերս բանասեր Ն. Ալիքյանը «Հանդէս ամսօրեայ»-ում տեղափոխւած մի հոգւածում փորձում է այդ հակասությունը լուծել: Նա, գոյութիւն ունեցող ուսումնասիրութիւնների հիման վրայ, նախ՝ ցույց է տալիս, որ Ակակիոսն Ամիգում եպիսկոպոսական աթոռի վրա է եղել 400—409 թ. թ. և ապա՝ Բաբելաս անունը համարելով գրչական սխալ, առաջարկում է Բաբելասը ուղղել Պակիդա ձևով, իսկ Պակիդան Եղեսիայում, իրոք, եպիսկոպոս է եղել 398—409 թվերին^{*)}: Ալիքյանի առաջարկած գրչական ուղղումը, մեր կարծիքով, ստուգելի է:

Նախնական բնագրում, անհավանական չէ որ եղել է Բակիդաս, իսկ հետո նա աղավաղվել է Բաբիդաս: Այնպես որ՝ այն հակասութիւնը, որը մինչև այժմ մատնացույց էր արվում 406 թվականի նկատմամբ, ընկնում է:

Արեւելյան Հայաստանում նորաստեղծ գիրը գործածութեան մէջ զննուց հետո, անհրաժեշտ էր այս այբուբենը գործածութեան մէջ զննել նաև Արեւմտյան Հայաստանում: Այստեղ Բյուզանդական իշխանութիւնն արգելում է Մաշտոցին ձեռնարկումները և պահանջում է կայսեր թուլտւութիւնը: Մաշտոցը ստիպւած է լինում իր աշակերտներին թողնել Մելիտինիի Ակակիոս եպիսկոպոսի մոտ և զնալ Բյուզանդիոն՝ կայսեր թուլտւութիւնը ստանալու համար: Բյուզանդական Թեոդոս կայսրը (408—450) և պատրիարք Ատակիսը (405—425) ընդունում են Մաշտոցին և թույլ են տալիս նրան Արեւմտյան Հայաստանում դպրոցներ բաց անել ի հաշիվ պետական միջոցների: Թեոդոսի ընդառաջող այս վերաբերմունքը պիտի բացատրել ո՛չ թե նրա ինչ-որ հումանիստական իդեալներով, ինչպես փորձում են բացատրել Արեւմտյան հւլրոպական բնորոշական որոշ պատմաբաններ, այլ նրանով, որ Բյուզանդիայի քաղաքական կացութիւնը այդ ժամանակ շատ էր խճճված: Հոնորը արշավում էին հյուսիսից և նա այդ ծանր մոմէնտին ստիպւած էր ընդառաջել և սիրաշահել հայոց:

Մաշտոցի Արեւմտյան Հայաստանը զնալու այս փաստը պիտի տեղի ունեցած լինի 420—425 թվականներին, որովհետև Ակակիոսը Մելիտինիի եպիսկոպոս է կարգվել 419—420 թվականից հետո, իսկ ըստ Կորյունի տեղեկութեան, Մաշտոցը իր աշակերտները թու-

^{*)} Ն. Վ. Ալիքյան, Մաշտոց վարդապետ Հայեկացի («Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 512)։

զել է Ակակիոսի մօտ: Հայտնի է նաև, որ Ակակիոսը մահացել է 425 թվին, ուրեմն՝ Մաշտոցի Արևմտյան Հայաստան գնալը պիտի եղած լինի 420—425 թվերին:

Նշանադրերը Միջագետքից բերելուց հետո, Մաշտոցը և Սահակը դիմում են Վառձապուհին և դաստիարակության համար մանուկներ խնդրում. «Հայցէին ևս յարքայէն ճանկունս մատաղս»: Եվ երբ համոզվում են, որ նոր գրերով ազատ հնարավոր է սկսել ուսուցումը, Վառձապուհը հրամայում է աշակերտներ հավաքել և սկսել կրթության այդ գրքով՝ «Հրաման տալը Եփեսոսի ուրեք նովին (նշանագրովք) կրթել»^{*)}:

Վաղարշապատում ուսուցումը նոր գրերով կարգավորելուց հետո, Մաշտոցն իր մի քանի աշակերտները վերցրած անցնում է Գողթան, «յառաջին դաստակերտն իւր», և տեղի իշխան Շամբիթի աշակցությամբ հավաքում է՝ երեխաներին և դպրոցներ բաց անում: Նույն գործը կատարում է նաև Սյունիքում, Վասակ Սյունու օգնությամբ: Այնուհետև շրջում է Հայաստանի մյուս շրջաններում և նորաստեղծ գրին քաղաքացիություն տալիս:

Մաշտոցը միայն դպրոց բաց անելով չէ, որ զբաղվում է: Եւս Սահակ Պարթևի և իր մի շարք աշակերտների հետ ձեռնարկում է թարգմանական խոշոր աշխատանք: Նրանք թարգմանում էին ինչպես ասորերենից, այնպես և հունարենից: Ի դեպ, թարգմանիչների շարքումն էին նաև հայ մատենագրության երկու խոշոր դեմքերը՝ Նզնիկ Կողբացին և Կորյունը: Հետագայում հայ մատենագրությունը սկսեց զարգանալ և հարստանալ ինքնուրույն աշխատություններով, որի մասին խոսելը մեր նպատակից դուրս է:

Այժմ մի հարց. ո՞րն է ներկա գրի ստեղծման նշանակությունը: Այդ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է հիշել Հայաստանի քաղաքական ծանր վիճակը գրերի ստեղծման շրջանում: Ակադ. Հ. Մանանդյանը արդարացի ձևով այդ շրջանի մասին գրում է. «Հայ ժողովրդի պատմական կյանքի ամենածանր շրջաններից մեկը հանդիսացել է մեր էրայի շորթորդ դարի վերջը և հինգերորդ դարը»^{**)}:

384—387 թվերին Հայաստանը բաժանվեց մրցակից Սասանյան Պարսկաստանի և Արևելյան-Հռոմեական կայսրության միջև:

*) Կորյուն, էջ 60:

**) Դ. Ա. Манандян, Месроп-Маштоц, стр. 5.

Հայաստանը, կարելի է ասել, որ գտնվում էր քաղաքական հոգե-
վարքի մեջ: Նվաճող կողմերից ամեն մեկն աշխատում էր վերջ
դնել Հայաստանի ներքին ինքնուրույնությանը և ասիմիլիացիայի
ենթարկել հայ ժողովրդին:

Պարսկաստանի և Արևելյան-Հռոմեական կայսրության վարած
այս քաղաքականությունը պատահական բնույթ չունեի, այլ բխում
էր նրանց Հայաստանում ամրանալու դարավոր ձգտումից: Հա-
յաստանը գտնվելով Արևելքի և Արևմուտքի մրցակցության հան-
դույցում, նրա կարևորությունը գիտակցում էին և՛ սլաքական
թաղալուները և՛ Արևելյան-Հռոմեական կայսրությունը ու ամեն
կերպ աշխատում ամրանալ այնտեղ: Բացի այդ, մրցակից կող-
մերի ո՛չ մեկի համար ցանկալի չէր Հայաստանում ունենալ թշնա-
մաբար տրամադրված մի հատված, որը նեղ օրում կարող էր վը-
տանդավոր լինել իր համար: Ահա թե ինչու Հայաստանի բա-
ժանումից հետո Պարսկաստանը և Բյուզանդիան բացահայտ կամ
զաղտնի, բռնություն, թե խաղաղ ճանապարհով, բայց հաստատ
հեռեկողականությամբ, շարունակում են իրենց ասիմիլատորա-
կան քաղաքականությունը:

Հայաստանի բաժանումից հետո ժամանակավորապես դադա-
րեցին Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև սկսված
արյունոտ պատերազմները, որից, առաջին հերթին, ոտնակոխ էր
լինում, տրոփում Հայաստանը: Այժմ սակայն սկսվեց Հայաստա-
նի համար ավելի վտանգավոր մի դրություն:

Հայաստանի բաժանումից հետո, հայ ժողովրդին սպառնա-
ցող ճգնվելու վտանգն սկսեց ավելի ուժեղանալ: Պարսկաստան,
մի կողմից, իսկ Բյուզանդիան մյուս, բոլոր միջոցներով սկսեցին
ավտիվ աշխատանք՝ վերջ դնելու հայ ժողովրդի կուլտուրական
ինքնուրույնությանը:

Պարսկաստանը իր այդ քաղաքականությունը Հայաստանում
արդյունավորելու համար առանձնապես շեշտ էր դնում զրադաշ-
տականության վրա, աշխատում էր Հայաստանում ամրացնել զրա-
դաշտական կրոնը:

Մի այլ վտանգ հայ ժողովրդին սպառնում էր հա-
րավ-արևմուտքից և արևմուտքից: Չորրորդ դարում և հինգերորդ
դարի սկզբներում Հայաստանը ողողել էին հույն և ասորի քրիս-
տոնյա քարոզիչները, որոնք Հայաստան էին բերում ո՛չ միայն
քրիստոնեական դադաիւարներ, այլև իրենց մայրենի լեզուն:

իրենց կուլտուրան, իսկ դա պակաս վտանգ չէր ստեղծում տեղական կուլտուրայի համար: Թե որքա՛ն վտանգավոր էին օտարամետ աչդ լեզուները և կուլտուրան, կարելի է դատել այն փաստից, որ կրոնական դրքերն անգամ կարդացվում էին ասորերեն կամ հունարեն լեզվով: Հայկական նորաստեղծ գրովյունը մի գինք էր կռվելու պարսկական և բյուզանդական ասիմիլիտատորական քաղաքականության դեմ և ցեմենտող մի միջոց քաղաքականացնել ջլատված Հայաստանի համար:

Հայկական գրերի ստեղծման անհրաժեշտության հարցը, իհարկե, առանձին անձանց մտահղացման արդյունք չէ, ինչպես կարծում են որոշ հայագետներ, և ոչ էլ պայմանավորված է եղել միայն հայ ժողովրդի կուլտուրայի, հետևապես և նրա ներքին տեկախությանը սպառնացող վտանգի դեմ պայքարելու անհրաժեշտությամբ: Առանձին անձինք, հատկապես Մեսրոպ Մաշտոցը և նրա ձեռնարկությանը աջակցող Սահակ Պարթևը, Վռամշապուհը, իր աշակերտները, իրենց անձնական նախաձեռնությամբ, անշուշտ, խոշոր դեր ունեցել են: Գրախց սպառնացող վտանգն իր հերթին խթանել է գրերի ստեղծման արագացմանը: Սակայն հայկական գրեր ստեղծելու հարցը առաջադրեց ինքը կյանքը, իսկ Մաշտոցը և իր ընկերներն ու աշակերտները գործնականորեն իրագործեցին այն, նկնելով իհարկե, առաջին հերթին իրենց դասակարգային շահերից: Գրերի ստեղծումը պայմանավորված էր հասարակական-տնտեսական կյանքի օրինաչափ զարգացմամբ: Գրերի գյուտը, ինչպես նշում է էնգելսը, հանդես է գալիս բարբարոսության վերին աստիճանում. «Այս աստիճանը,— գրում է էնգելսը,— սկսվում է երկաթահանքը հալելով և տառերի գյուտի ու այս վերջինը դրական նշանագրումների համար գործածելու միջոցով անցնում է դեպի քաղաքակրթությունը»^{*)}:

Իհարկե, Հայաստանը V դ. առաջին քառորդում բարբարո-

^{*)} Ֆ. էնգելս, Ընտանեքի, մասնավոր սեփականության և տնտեսական ծագումը, Երևան 1940 թ., էջ 33:

սովորյալն աստիճանում չէր և ոչ էլ հայկական գրությունը նոր էր ստեղծվում. էնգելսի բնորոշումը լիովին համապատասխանում է մեզ մոտ ուրարտական գրին: Սակայն էնգելսի այդ ցուցամարանալի է տալիս հասկանալու նմանապես նոր գրի ստեղծման շարժառիթը և կապելու այն՝ հասարակական կյանքի զարգացման նոր էտապի հետ:

Հայկական գրության պատմության հետ կապված երկրորդ կարևոր հարցը, այդ հայկական գրության ատաղձի հարցն է, այսինքն այն այբուբենի, որի տառաձևերը և սխեման՝ օգտագործվել է: Այդ, մասամբ, և մեզ կօգնի որոշ պատկերացում ունենալ մեր և մեր հարևան ժողովուրդների գրության և գրականության միջև գոյություն ունեցող կուլտուրական կապերի մասին:

Հայագիտության մեջ այս հարցի մասին նույնպես տարածացություններ կան: Այսպես, օրինակ, Ղ. Աղաջանի կարծիքով հայկական այբուբենի 22 տառը ասորա-պարսկական ծագում ունեն, իսկ 7 տառ հեռագայում Մեսրոպն ավելացրեց: (Մյուս յոթ տառերի մասին ոչինչ չի ասում)*):

Մ. Չամչյանի կարծիքով բոլոր գրերը Մեսրոպն իրենից հանրեց: Նրա կարծիքով, մի մարդ, որ կարող էր աղվանների և վրացիների համար գիր ստեղծել, ինչո՞ւ չէր կարող հայկական այբուբենն ինքնուրույն ստեղծել**):

Հյուբշմանի կարծիքով, Դանիելից վերցրած տառերը, թվով 22 հատ, հունական էին, իսկ մյուս 17 գիրը ինքն ավելացրեց***):

Պրոֆեսոր Հ. Աճառյանի կարծիքով հայկական այբուբենի 20 տառերը հունարեն են, 4—6 հայկական, իսկ մնացածը՝ իրանական և ասորական****):

Զցանկանալով այստեղ կանգ առնել մյուս հայագետների տեսակետների վրա, մենք անհրաժեշտ ենք համարում բերել զքի ստեղծման մասին հավանական այն եզրակացությունները, որոնք, մեր կարծիքով բնորոշելի են:

*) «Մուրհո», 1890, էջ 587—588:

**) Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, 1-ին հատ., էջ 760—761:

***) Hubschman, Über Aussprache und Umschreibung des Armenischen, ZDMG 1876 p., էջ 63:

****) Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 271

1. Միանգամայն ճիշտ է հորենացու աչն տեղեկությունը, որ մեր այբուբենի հիմքը հանդիսացել է վստմշապուհի խորհրդով Դանիելից բերված տառերը, որոնք կարգված են եղել հունական գրերի ձևով:

Զորը (այսինքն վահրիճը Հարել քահանայից) առաւ, և երթնալ նոյմա հանդերձ քաջ հմտացեալ ի Դանիել, կարգեալ ըստ ձեռյ օրինակի յունականին զվաղնջուցն գրեալ շարագիր տառից՝ և կեալ ետուն ցմեծն Սահակ և Մեսրոպ» (Խոր., էջ 326):

2. Ճիշտ է նաև Կորյունի աչն տեղեկությունը, որ ասում է թե՛ «ի յայլոց զպրութեանց թաղեալք և յարուցեալ զիպեցեանք. միայն թե՛ այս նախադասությունն ինչպես ասացինք վերևում, ազատազված է և պիտի ուղղել «Յայլոց զպրութեանց քաղաքք և յանկեցեալք զիպեցեանք», այսինքն, այլ զպրությունից քաղված և հարմարեցված էին (Կորյունն այստեղ ի նկատի ունի հունարենից քաղված լինելու փաստը), (Կորյուն, էջ 46):

3. Դանիելի գրերը եղել է 24, որի մասին եղած տեղեկություններից ամենից ճիշտը պիտի համարել Դավիթ Անհաղթի քերականութեան մեջ բերված տեղեկությունը:

4. Դանիելը հիմք վերցնելով հունարեն այբուբենը, միանգամայն ձևափոխել է այն: Դանիելի գրերը կազմված են եղել ա, բ, գ, դ, ե, զ, է, թ, ի, լ, կ, մ, ն, շ, ո, պ, շ, ր, ս, տ, վ, փ, ք տառերից:

5. Մաշտոցն իր կողմից ավելացրել է 12 տառ, նրանք, որոնք առանձնահատուկ հնչյուններ են հայ լեզվի համար՝ ճ, ը, ժ, զ, հ, ծ, չ, ռ, ց, խ, վ, ձ: Մաշտոցն այս տառերը ձևել է Դանիելյան գրերի հիման վրա:

6. 36 տառերից կազմված այս այբուբենը ձևավորել է վերջնականապես Հռութանոսը: Այս մասին պատմահայրը գրում է հետևյալի. «(Մաշտոցը Մամոսատում եղած ժամանակ)՝ ետեղծ զնշանագիրս մեռ, հաջորդ Հռութանոսի կերպանեալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրոպայ, փոխադրելով զհայերէն արմավայն: Ըստ անսայթաքութեան սիւղաբայից Հելենացոց» (Խոր., էջ 327):

7. Ավելի ուշ, կիլիկյան շրջանում, հայկական այբուբենի վրա, լատինական ազդեցության տակ, ավելացավ երեք տառ՝ ես, օ, ֆ տառերը:

Հայկական այբուբենը՝ հունարենի վրա տնվիճելի ձևած լինելու փաստը ցույց տալու համար, անհրաժեշտ ենք համարում գագահեռ ձևով բերել հին հունական և հին հայկական գրերը:

- A U — Կարել է հունարենի վերից:
 B F — Կարել է հունարենի երկու կլոր դարձվածքները:
 T P — Բայ է արել հունարենի հաղիվ նկատելի կլորը:
 - P — Մաշտոցի ձևած տառն է «բ»-ի հիման վրա:
 E C — Ուղղածիդ ձև է ավել հունական էպսիլոնին:
 Z Q — Հունականի վերին կորույթունը միացրել է և կլոր ստեղծել:
 H E — Աջ ձողիկը կարել է ամբողջապես և ձախ ձողիկի վրան փոքրիկ հավելված ավելացրել:
 - C — Մաշտոցի տառն է. ձևել է «է»-ի վրա:
 O O — Հունական կլորը Բայ է արել:
 - O — Մաշտոցի տառն է. կարել է ձախ թելը:
 I I — Հունականի վրան ձախից փոքրիկ թև է միացրել:
 - I — Մաշտոցի տառն է, ձևված է «ի»-ի վրա:
 A L — Շուն է ավել հունարենի տառը:
 - L — Մաշտոցի զիրն է. ձևված է «լ»-ի հիման վրա:
 K S — Կարել է աջ ձողիկի ներքին մասը և ձախ կողմի վերև թեքված մասը:
 - S — Մաշտոցին է, ձևված է «կ»-ի հիման վրան վերևից աջ թեքվող ելուն ավելացնելով:
 Δ Δ — Հայկական «ճ»-ն ձևված է հունական Δ-ի հիման վրա, ավելացված է աջ թեքվող ելուն:
 - D — Մաշտոցին է, ձևված է «ճ»-ի հիման վրա, որը կլոր ձև տալով:

Ա	Մ	— Հունականի ձախակողմյան գծիկը կտրել և աջ ձողիկի վերևից է միացրել՝ ներքև թեքելով:
Ն	Ն	— Նստացրել է և հունականի ձախ կողմի ելունին կտուցի ձև տվել:
Շ	Շ	Հունական «Շ» երկհարկանի բարդութունը պարզեցրել է:
Օ	Ո	— կտրել է ներքևից:
-	Չ	— Մաշտոցինն է. ձևված է նախորդ «ո»-ի հիման վրա՝ ներքևից աջ թևին ավելացնելով թեք գիծ:
Պ	Պ	— Հունարենի հորիզոնական միացնող գծի աջ կողմից կեռ է ստեղծել և աջ ծայրը ջնջել:
Ս	Ջ	— Վերևի բացվածքը միացրել է և ներքևից փոքրիկ կեռ պոչիկ միացրել:
-	Ջ	— Մաշտոցինն է. «ջ»-ի ներքևի անկյուն տվող ծունկը երկարուն օղ է ստեղծել:
Ք	Ք	— Քիչ տարբերությամբ վերևի կտոր օղը բաց է արել:
Ռ	Ռ	— Մաշտոցինն է. կրկնակի «ր»-ներն իրար են միացված:
Շ	Ս	— Հունականը նստեցրել է:
Դ	Տ	— Հունական ձախ թևը կտրել և շուռ տված ներքևից է միացրել:
Վ	Յ	— Նստեցրել է երեսը դեպի ձախ:
-	Յ	— Մաշտոցինն է. վերևի կեռը փոքրացրել և օղ է դարձրել:
Ի	Ի	— Շատ չիլ փոփոխությամբ բաց է արված:
Լ	Ա	— Քիչ փոփոխությամբ բացված է եռանկյունին:
Փ	Փ	— Քիչ փոփոխությամբ՝ վերևի հորիզոնական փոքրիկ գծիկը ջնջել է:
Կ	Բ	— Վերևի դծիկի վրա փոքրիկ օղ է միացրել և հորիզոնական դիծը կանոնավորել:

Հին հունարեն և հին հայերեն տառերի համեմատու-

թյունից, աշափսով, տեսնում ենք, որ հայկական տառերը ձևավոր
են հունարենի հիման վրա: Այդ կատարվել է, ըստ մատենա-
գրերի տեղեկության, Դանիելի կողմից:

Ձևավոր տառերի որոշ փոփոխությունով ստեղծվել են այն
տառերը, որոնց հնչյունները հատուկ են հայերեն լեզվին: Այդ
աշխատանքը, ինչպես երևում է, կատարել է Մաշտոցը:

Տառերի վերջնական ձևավորումը, ըստ խորենացու տեղեկու-
թյան, կատարել է Հռուփանոսը Սամոսատում: Այնպես որ
հայկական մատենագրերի տեղեկությունները միանգամայն հա-
մապատասխանում են ճշմարտությանը:


Հարց է առաջանում. գրերի ստեղծմանը նման մեկնաբա-
նություն տալու դեպքում չի՞ նվաստանում արդյոք Մաշտոցի դերը
հայ ժողովրդի պատմության մեջ:—Ո՛չ: Մաշտոցի մեծությունը
կայացել է ո՛չ թե նրանում, որ նա տառեր է ձևել կամ հնչյու-
ններ է ստեղծել: Այդ տեխնիկական գործ է: Մաշտոցի մեծու-
թյունը կայանում է նրանում, որ նա ստեղծեց 1 սեփական, հա-
յագիր այբուբեն և կարողացավ հակադրվել պարսկական, հու-
նական և ասորական ազդեցությանը, որոնք 5-րդ դարում ռկսել էին
սպառնալ հայկական կուլտուրային:

ԱՅԼ ԼԵՋՈՒՆԵՐՈՎ ԵՎ ԳՐՈՒԹՅԱՄԲ ԳՐՎԱԾ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նախ քան հայկական գրույթյան կարևորագույն նմուշների մասին խոսելը, մի փոքր կանգ առնենք գրերի այն տեսակների վրա, որոնք հասել են մեզ Հայաստանի տերիտորիայի վրա այլ լեզուներով և գրույթամբ:

Հայաստանի հողի վրա դործածված հնագույն գիրը, որը հասել է մեզ, այդ, այսպես կոչված, «էծագրերն» են: Նա «էծագիր» է կոչվում այն պատճառով, որ ամենուրեք, ժայռերի վրա, բարանձավների պատերին և այլն, փորագրված է մեծ և փոքր այբերի ձևով: «էծագրերի» պատկերներ մեզ շատ են հանդիպում ատանձնապես Արագածի փեշերին և Սևանա լճի ափերին: «էծագրերը», ըստ երևույթին, դալիս են շատ հնից: Հայաստանի Զախարյանիկների մոտ, երբ իշխող զբաղմունքը անասնապահությունն էր և սրսորդությունը, տնային և վայրի այծերի հետ գործունեցող մարդը հարկավոր է համարել փորագրել այծի պատկերներ ժայռերի վրա: Բիշ հավանական է, որ «էծագրերը» սալոցական պատկերադրերի նման իմաստավորված լինեն: Մենք ստաբիլ բերում ենք «էծագրեր»-ի մի նմուշ՝ վերցնելով այն Մ. Ռաբխուլադյանի «Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները» խորագիրը կրող աշխատությունից^{*)}: «էծագրերի» այդ քնդորինակությունը, ըստ հրատարակչի տեղե-

^{*)} Մ. Ռաբխուլադյան, Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, Երևան 1936 թ., էջ 141:



Գծագրությունը վերցված է բնի. Բարխուդարյանի
վերն նշված աշխատությունից:

կուխյան, վերցված է Մարտունի շրջանի Գյուղալղարայի գեղավանդ
վրա գտնված ժայռի էմալիդ պատկերներից:


Հաջորդ վիճագիր արձանագրությունն իր հնությամբ, բացի
խեթական հիերոգլիֆներից և ուրարտական սեպագրերից,
որոնց վրա մենք չենք ուղում կանգ առնել, այդ ՀՍՍՌ Պատ-
մական Թանգարանում գտնվող արամեաառ արձանագրու-
թյուններն են: Նրանք հայտնաբերվել են Նոր-Բայազետի շրջա-
նում: Նրանցից մեկը հայտնաբերվել է 1906 թվին ազգագրագետ
Ե. Լալայանի կողմից, իսկ մյուսը՝ 1934 թ. Ս. Բարխուդարյանի
կողմից:

Այդ արձանագրությունների վերծանությամբ դրադվել է
էրմիտաժի ավագ գիտական աշխատող Ա. Բորխովը, որն իր
ուսումնասիրության արդյունքը հրատարակել է «Вестник древ-
ней истории» ամսագրի 1946 թ. № 2-ում՝ «Надписи Арташеса»
(Арташеса) царя Армении վերնագրով:

Նա իր հողվածում ցույց է տվել, որ արամեական այդ արձանագրությունը պատկանում է Արտաշեսյան հարստության հիմնադիր Արտաշեսին, որը 189 թվին իրեն անկախ Հայաստանից Մեծ Հայքում: Արձանագրության վրա պարզ կարդացվում է՝

'RTHŠSJ | MLK | BR | ZI | ZRJTR | RVNOKNHLT
Արտաշես թագավոր որդի Զարիադրի անցնող...

Բորիսովի կարծիքով վերջին բառը պահլավերեն է գրած:




Արտաշես 1-ի արամեական արձանագրություններ

Հայաստանի տերիտորիայի վրա գտնվել են հունարեն գրված մի շարք արձանագրություններ (Արմավիրում, Տիգրանակերտում, Բաշ-Ապարանում, Գառնիում և այլն): Դրանք գրված են սկսած 3-րդ դարից մեր թվականությունից առաջ մինչև մեր թվականության 4-րդ դարը: Նշված արձանագրություններից բացառիկ արժեք է ներկայացնում Գառնիի նորագույն արձանագրությունը, որը գտնվել է 1945 թվին: Այդ արձանագրության մասին մեզ տեղեկություն է պալլիս պատմահայր Մովսես Խաչենացին, որը, ինչպես երևում է, անձամբ տեսել և կարդացել է այդ արձանագրությունը: Նա պատմում է, որ հայոց Տրդատ

Թագավորը տաճար է կառուցել իր քրոջ, Խոսրովիդուխտի հի-
շատակին և այդ հիշատակը հավերժացնելու համար փորագրել
է լավել հունարեն գրերով արձանագրությունը։ Խոսրովիդու-
խտ անդհկության վրա հայազեններից ոմանք (Մարկիմարոս և
որիշներ) կանկաժանքով էին կայում։ Այժմ արգեն, արձա-
նագրության գլուխից հետո, ամբողջապես ցրվում է այդ կա-
նաժանքը։


Խորագրուտ հունարեն այս արձանագրությունից երևում է,
որ այդ արձանագրությունը փորագրել է «Արեղհափաչի Տրդատ
Մեծը, Մեծ Հայքի ղեսպոտ Թագավորը» Ἡλῖος Τριδότης [ὁ με-
γάλης Ἀρμενίας ἀνακτος ὡς δεσποτης] նա իր քրոջ
հիշատակի համար տաճար է կառուցել իր Թագավորության 41-րդ
տարին, այսինքն մեր թվագրության 76 կամ 77 թվականին։ Այդ
տաճարը նա նվիրել է քարայրին (հավանական է հետագայի Այ-
րիվանքին) և ընթերցողին խնդրում է աղոթել նահապաղի հիշա-
տակին։ Ցավալի է, սակայն, որ արձանագրության աջ կողմը



Պագարապատում գտնված լատիններեն արձանագրությունը։

վնասված է և մի քանի բառեր կարդացվում են ենթադրաբար։
Արձանագրությունը պարունակող այդ քարը տաճարի մոտից տար-
վել է Գառնիի գերեզմանատուն և այժմ գտնվում է այնտեղ։

Հայաստանի հողի վրա օտար գրութեամբ գտնված արձանագրութեաներից ուշագրութեան արժանի է Վաղարշապատում 1862 թվին գտնված լատիններեն արձանագրությունը, որն աչժմ գտնվում է ՀՍՍՌ Պատմական Թանգարանում: Արձանագրությունը ենթադրում են 2-րդ դարի լինի: Արձանագրության երկրորդ տողում մի բառ ջնջված է, որից ենթադրում են, որ այդ ջնջված անունը Կոմոդոս կայսեր անունը պետք է լինի, եթի վերաբերյալ 183 թվին հռոմեական սենատը որոշում է կաշայրել՝ նրա անունը ջնջել բոլոր արձանագրությունների վրայից որպես անարժան կայսեր: Ոմանք ենթադրում են, որ ջնջված անունը Armeniacus («հայկական») բառը պիտի լինի: Այդ կողմը կրել են Մարկ Ավրելիոսը և Լ. Վերոսը՝ Պրեսկոսի կողմից Արտաշատի վերցնելուց հետո: Ենթադրում են, որ հայ հայրենասերները չկարողանալով հաշտվել հռոմեական կայսեր «հայկական» մականունը գործածելու իրողության հետ, այն հրաժեշտ են համարել ջնջել այն քարի վրայից:



ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐՈՒՄԸ ՆԱՌԻՇՆԵՐԸ


Այժմ անցնենք հայկական գրերի հնագույն նմուշներին:

Հնագույն հեղինակների աշխատությունների մեծ մասը, որոնք թվում են հին հայկական հեղինակների աշխատություններ, իրենց ազատագրաֆներով (ինքնագրերով) չեն հասել մեզ: Նրանց աշխատություններն ընդօրինակվել են ուշ շրջանի արտագրողների: Փառափայլ, և, մեծ մասամբ, այդ ընդօրինակություններով էլ որ մենք ծանոթանում ենք հին հեղինակների աշխատություններին: Հետո Սյուսան, մեզ չեն հասել Խորենացու, Նղիշեի, Յգնիկի, Շիրակացու, Ղևոնդի, Սամվելի, և հին հայ մի շարք այլ մատենագրերի աշխատությունների ինքնագրերը: Ինքնագիր ունեցող հայ մատենագրերը մատենների վրա կարելի է համարել—Օրբելյան, Ստալի, Նշեցի, Գրիգոր Տաթևացի, Ամիրդովլաթ և մի քանի ուրիշներ: Քիչ են հասել մեզ նաև միմյալից արձանագրությունները: Ընդհանուր է, 5-րդ դարից հայտնի են մի շարք միմյալից արձանագրություններ թվականներով, սակայն պարզվում է, որ նրանց թվականը կեղծված է: Կանգ առնենք հայկական գրության մի քանի կարևոր նմուշների վրա:

Մեզ հասած հնագույն հայերեն գրությունը—5-րդ դարից էլ նա պահվել է միմյալից արձանագրության մեջ և գտնվում է Տեկդրի տաճարի արևմտյան դռան ձախատին (Տեկդրը գտնվում է Անիից ոչ շատ հեռու): Արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը. «... (Ե) պիսկոպոսի և Տալրոնի Տեկդրոյ վանապետից և Մանանայ հաղարապետի Ուրանայ հոռմի, որ և հին նարեկացու տեղից ի ձեռն Յոհանու Հայոց կաթողիկոսության և

Յոհաննես Արշարունիա(յ) յիւր բարեխառնութիւն և բոլոր ազգիս և ամուսնի և որդեկաց և սիրելեաց և Սահակ Կամսարական շինեաց ղ(այ)ս վկայարան սրբոյ Սարգսի» (Գ. Հովսեփյան. Գրքութեան արձեստը հին հայոց մեջ, էջ 5-6): Արձանագրութեան մեջ հիշված կաթողիկոսը—Հովհան Մանդակունին է, որը 5-րդ դարի անձնավորութիւն է (նա կաթողիկոս է եղել 478—490 թ. թ.): Արձանագրութեան 5-րդ դարի լինելը հաստատվում է մի այլ փաստով. արձանագրութեան մեջ հիշվում է Սահակ Կամսարականը որպէս շինող, իսկ սա նույնպէս 5-րդ դարի անձնավորութիւն է և հիշվում է Ղազար Փարպեցու մոտ: Մերան Վահանը պատգամավոր էր ուղարկել պարսից Միհր-Վշանասպի հետ բանակեցելու: Կասկածանքներ են եղել միայն բուն տաճարի նկատմամբ: Ենթադրվում է, որ Տեկորի ներկա շէնքը կառուցված է 7-րդ դարում, իսկ դրանից առաջ, նույն տեղում, եղել է Տեկորի նախկին տաճարը՝ կառուցված 5-րդ դարից, որի վիճագրերից է հանդիսանում մեր վերև հիշված արձանագրութեանը (Թ. Թորոմանյան, Հայկական ճարտարապետութիւն, էջ 218): Սակայն ակադ. Ն. Յ. Մառի կարծիքով այս արձանագրութեանը կարող է գրված լինել և ուշ շրջանում. (Н. Я. Марр, К да-тыровке ктиторской надписи Текорского храма, в кн. «Христ. Восток» т. III, к. 1, стр. 56—71).

Հայկական գրութեան հնագույն ունիկոմներից են ՀՄՍՄ Մա-տենադարանի № 1577 ձեռագրի մագաղաթյա պահպանակները: Ըստ ձեռագիրը կազմվել է 1283 թվին և այդ ժամանակ նշված պահպանակները որպէս հին, բայց այլ ձեռագրի մնացորդներ, գեղարդ և օգտագործել են որպէս կազմի ներսից պահպանող թերթիկներ: Այդ պահպանակի վրա եղած գրերի պալեոգրաֆիկ ուղղամասիւթիւնը մեզ բերում է այն համոզման, որ դրանք մեզ հասած և հայտնի հայկական գրութեան հնագույն նմուշներն են: Այս պահպանակների վրա մենք առաջին անգամ հանդիպում ենք հետաքրքիր նորութիւնների՝ «ը»-ի վերին գիծը հունականի նման կենտրոնացնելով է, «ը»-ի և «ի»-ի միջին գիծը ներքև է իջնում սկզբի նման սուր ծայրով, «ա»-ի աջ թեքվող ելունը ոչ թե ներքև է թեքվում, ինչպէս Լազարյան ավետարանում է, կամ մեզ հայտնի այլ հին տեքստերում, այլ հունականի նման բարձրանում է վերև, «թ»-ի հունականի նման ներքև իջնող թևը գրեթէ մոտենում է ձախ ձախիկին և այլն: Մենք ստորև տեղավորում ենք այդ պահպանակի



մի երեսի յուսանկարը՝ հնազանդութիւնն տալով հետազոտման
հայազնաներին ծանոթանալ նրա հետ:

6-րդ դարում գրված հայկական գրութիւնն արժեքալոր ունի-
կումներէց է համարվում պրոֆ. Կարիների եզրագոտում ձեռք բե-
րած պապիրուսը: Նա գրված է հայաստան հունարեն: Տեքստը,
դժբախտաբար, վնասված է և ամբողջութեամբ չի կարդացվում:
Հրատարակված է Տաշլանի կողմից՝ նրա «Ակնարկ մը հայ
հնագրութեան վրայ» աշխատութեան մէջ: Վերջերս տպւեց այդ
տեքստի նոր վերծանութիւնը:

5—6-րդ դարերէից մեզ հասած հայերէն արձանագրու-
թիւններէց մեծ արժեք է ներկայացնում Երուսաղեմի Զիթենյաց
լերան վրա, Ռուսաց եկեղեցի կառուցելու ժամանակ հիմք փորե-
լիս, գետնի տակ գտնված հայերէն մագալիկ արձանագրութիւնը:
Հայազնաներից ոմանք այդ արձանագրութեան ժամանակը բե-
րում են ուշ շրջանը—համարում են 7-րդ դարի գրութիւն: Արձա-
նագրութիւնը հիշատակ է ոմն Վաղեմի: Արձանագրութիւնն ունի
հետեւյալ բովանդակութիւնը. «Բարեխառս ունելով առ սաստուած
գաւորս էսայի և զերանելի հարսս եւ Վաղան արարի վասն թո-
ղովքեան մեղաց ղյիշատակարանս զայս» (Գ. Հովսեփյան, Գրու-
թեան արվեստը հին հայոց մէջ, էջ 3): Մենք Երուսաղեմում եղած
ժամանակ տեղեկացանք, որ այս նույն արձանագրութեան հնու-
թեամբ Երուսաղեմում գտնված է երկու այլ արձանագրութիւններ
ևս, որից մեկը նվիրված է պատերազմում ընկած անհիշատակ
նահատակներին: Արդյո՞ր այստեղ ակնարկված անհիշատակ
նահատակները 5-րդ դարի ժողովրդա-պաշտպանական պատե-
րազմում ընկածները չեն, և այս արձանագրութիւնները 5-րդ
դարից չեն. դժվար է հաստատապէս, առ այժմ, որիէ բան տեսլ.
այդ հարցը կարտ է հատուկ ուսումնասիրութեան:

7-րդ դարի սնվնաս մնացած արձանագրութիւններէց է Հոփի-
սիմեի տաճարի արեւմտեան պատի վրա փորագրված արձանագրու-
թիւնը, որի մէջ ասված է, թէ Կոմիտաս եկեղեցապան սրբոյ
Հովսեփիմի կողեցայ յաթոս սրբոյն Գրիգորի, շինեցի զտաճար
սրբոց վկայիցս Քրիստոսի: Արձանագրութիւնը շնայած թվական
չունի, բայց Սեբեոսի տեղեկութիւնից պարզվում է, որ նա կա-
ռուցվել է 617 թվականին: Սեբեոսն իր պատմութեան 35-րդ գլու-
խում հայտնում է, որ Հովսեփիմի նախկին շէնքը ցածրիկ և
մութ շէնք էր, ուստի և Կոմիտաս կաթողիկոսը պարսից եղբորով

Ապրիլեզ թագավորի 28-րդ տարին («յամբ, ի՛նք-երորդի թագաւորու-
թեանն Ապրուէզ Խոսրովու») քանդեց և նրա տեղ կառուցեց քա-
րաւառ ներկա գեղեցիկ շէնքը: Հայտնի է, որ Խոսրով Ապրիլեզը
դահալակել է սկսել 589 թվին, ուրեմն նրա 28-րդ տարին կլինի
617 թվականը: Սեբեոսի այս տեղեկութիւնը հաստատում են Նզ-
նիկ Երեցը և այլ մատենագրեր (տե՛ս Թորոմանյան, Հայկական
հարաւարապետութիւն, էջ 43—44):

7-րդ դարից մեզ հասել են հայկական գրութեան մի շարք
նմուշներ: Վիմագիր հին արձանագրութիւններից ամենահին թվա-
կան ունեցող արձանագրութիւնը — այդ Անիի միջնաբերդի՝ Կամ-
աթականների բաղիլիկ եկեղեցու վրա եղած վիմագիր արձանա-
գրութիւնն է: Արձանագրութեան մեջ ասված է. «Ես Աբրահամ վար-
դապետս շինեցի զեկեղեցիս զայս թուականութեան Հ. Ա. (622)»:
Ակադ. Ն. Յ. Մառը սկզբում կասկածել է այս արձանագրութեան
թվականի ճշտութեանը, բայց հետո մոտից ուսումնասիրելով արձա-
նագրութիւնը, գտել է, որ արձանագրութիւնը իրոք 622 թվականից է
(Н. Я. Марр, Новые археологические данные о постройках
типа Ереруйской базилики. *инст* ЗВО, XIX, отдельный от-
тиск, стр. 141):

7-րդ դարի լավագույն հայկական արձանագրութիւններից է
Թագավանի տաճարի արձանագրութիւնը, որը փորագրված է 639
թվին (Թագավանը գտնվում է Մրենից հարավ, Ախուրյանի ա-
փին): Այդ արձանագրութիւնը տեղավորված է տաճարի հարավա-
յին սլառի արեւելյան կեսի վրա: Արձանագրութիւնից երևում է,
որ տաճարի կառուցումը ձեռնարկվել է Հերակլի թագավորութեան
քսան և մեկերորդ տարում, Նզր կաթողիկոսի օրոք (630—641 թ.
թ.) և ավարտվել ութ տարուց հետո, Հերակլի 29-րդ տարում,
(639 թվին): Այս արձանագրութիւնը հրատարակվել է մի քանի
անգամ, սակայն լավագույն հրատարակութիւնը՝ դա ակադ. Հ.
Սրբելու հրատարակութիւնն է, որի վերջնաւած տեքստը մենք
բերում ենք ստորև. «Քսան եւ մի ամուշն աստուածապահ Նրակղի
թագաւորի հրոտից ամսոյն, որ ար երեսուն էր, ես տէր Նզրաս
Հայոց կաթողիկոսս և սուրբ վանաց երէց, հաճոյութն աստուծոյ
հիմն արկի սրբոյ եկեղեցւոյս եւ ի քսան եւ իններորդ ամի նոյն
Շրակղի թագաւորի, յամսեան նաւասարդի, որ ար քսան էր յա-
ւուրն ուրբաթ, եղև կաւաբումն նոյն գործոյս տեղոյս վշինակաւ
ամենայն իրաւք: Վարդապետութեամբ Իսրայէղի Գոռաղճեցւոյ»

(И. А. Орбели, Багавицкая надпись 639 г.; «Христ. Вост.» т. II, в. I, стр. 105—122).

Դրդ զարի արժեքավոր արձանագրություններից է հաջինի մատենի արձանագրության պատի բոլորածն երկաթագիր գրված զեղեցիկ արձանագրությունը, որը թողել է Ներսէս Կամսարականը 7-րդ դարի առաջին կեսում: Արձանագրության մեջ ասված է, զեղեցիկ զարի արժեքավոր պատրիկ Շիրակայ եւ Արշարունեաց տէր շինեցի զեկեղեցիս յանուն սրբոյ Աստուածածնին ի բարեխառութիւն ինձ եւ Շուշանայ ամուսնոյ իմոյ եւ Հրահատայ որդւոյ մերոյ: Համանական է, որ Արձանագրության մեջ հիշված Ներսէս Կամսարականը Անանիա Շիրակացու խնդրագրութեմ հիշված Ներսէս Կամսարականն է: (Այս արձանագրության մասին տես տեղ. Հ. Օրբելու հոդվածը՝ «Надпись о построении Талинской церкви» վերնագրով տեղավորված «Христианский Восток»-ում т. III, вып. III, էջ 300—306):

Նրա շարի հին եւ արժեքավոր է Մրենի տաճարի արձանագրությունը, որը փորագրված է Դավիթ Սահառունու կուրապալառության ժամանակ (639—640 թ. թ.): Արձանագրության բովանդակությունը հետևյալն է. «...Ամսույն քսան եւ իննեւորդի (կամ երեսնեւորդի) Հերակղի բարեխաղթող Թադատրի յիշխանութեան Դավիթ ամենագով պատրիկի կուրապալատի եւ սպարապետի հայոց եւ ասորոց եւ յնպիսիպոստոմեանն սրբաօրի տեառն Բեովիկոսի եւ ի տանուտերութեան Ներսէսի Շիրակայ եւ Արշարունեաց տեառն եւ տանուտերութեան Ներսէսի Շիրակայ եւ Արշարունեաց տեառն շինեցաւ սուրբ եկեղեցիս ի բարեխառութիւն Կամսարականաց եւ Մրենոյ եւ ամենայն երկրի: Այս արձանագրությունը եւ մանրամասն ուսումնասիրված է տեղ. Հ. Օրբելու հոդվածը (տես «Надпись 639—640 г. г. о построении Мренского собора», «Христ. Вост.» т. II, вып. I, стр. 132—138):

Մեզ հասած փմագիր արձանագրություններից բոլորածն զեղեցիկ երկաթագրով գրված արձանագրություն է հանդիսանում Գրիգոր Մամիկոնյանի արձանագրությունը, որը փորագրված է Արուճի եկեղեցու արևելյան պատի վրա: Նրա գրության մոտավոր թվականն է համարվում 670 թվը: Արձանագրության մեջ ասված է, զի եւ Բ. ամի Կոստանտինի մարերի ամսոյ որ աւ(ր) Ժ եւ Ն (15) հիմնարկեցաւ սուրբ կաթողիկէս ի ձեռն Գրիգորի Մամիկոնեանի հայոց իշխանի եւ Հեղինէի նորին ղուգակրցի ի բարեխառութիւն:

շինարարաց գրանց («Надпись 670 (?) г. о постройке Дручской церкви», տե՛ս «Христ. Восток», т. II, вып. I, стр. 138—142)։

Իր տեսակի մեջ հետաքրքիր է Արտավազդ Կամսարականի գերեզմանաքարը, որը գտնվում է Նախիջևան դյուղում, Տեկորից քչալանցան հեռու։ Արտավազդ Կամսարականը Ներսիս Կամսարականի թոռն է և վախճանվել է 8-րդ դարի առաջին քառորդում։ Գերեզմանաքարի վրա փորագրված է. «Աստուածահրաման (ն) լիքե։ Տրիւստոսակոշ հրաժարմամբ ի սմա է հանգուցեալ ընդ հարս իւր երանելի տէր։ Արտավազդ Կամ(ս)արական անպահիւղատ պատրիկ եւ իշխան հայոց, որդի Հրահատա պատրիկի Շիրակայ եւ Արշարունեացն տեառն եւ ամուսին Շուշանայ Մամիկոնենի»։ (И. А. Орбели, Нагробие Артавазда Камсаракана, „Христ. Восток“, т. III, вып. I, стр. 77—81)։

Ակադ. Սրբելին կանխածում է արձանագրության հարազատության վրա, բայց տառերի պալեոգրաֆիկ ձևերը հին են երևում, և անհավանական չէ, որ հարազատ լինի։

Հին գրչության ունեցող ձեռագրերից կարևոր ունիկում են հանդիսանում ՀՍՍՄ Մատենադարանի № 108 և 109 մաղաղաթյա պատասխինները։ Պալեոգրաֆիկ ուսումնասիրությունից երևում է, որ այդ պատասխիններն ունեն 7-րդ դարի հայկական մեզ հասած արձանագրությունների դրերից ավելի հին տեսակի գրեր։ Պատասխիններից առաջինի գրչությունը շատ արխայիկ է։

Հայերեն լեզվով մեզ հասած ամենահին ձեռագիրն աշխարհում, որը թվական ունի, և այդ թվականն անվիճելի է, այդ կաղաքյան կոշվող ամետարանն է, որը գրված է 887 թ. Աշոտ իշխանաց իշխանի ժամանակ։ Նա գտնվում է ՀՍՍՄ Մատենադարանում և գրանցված է № 102-ի տակ։ Ձեռագիրն ունի գրչի հետևյալ հիշատակարանը. «Գրեցաւ սուրբ և կենսաբեր աւետարանս այս 312 (336+551=887) թուականութեան հայոց ի հայրապետութեան (Գէ)որդայ հայոց կաթողիկոսի եւ յիշխանութեանն Աշոտի իշխանաց իշխանի եւ ի տէրութեանն Մմբատայ Բագրատունուոյ. եւ Սահակ Վանանդեցի որդի Վարդան Վանանդեցույ որում կրկին Մլխհ կոչի(ն)»։

Այս ամետարանն ամբողջությամբ լուսատիպ հրատարակված է։

Գրչության հնագույն և լավագույն էքսպոնատներից է 909 թվին Մլքե թագուհու պատվերով գրված ամետարանը, որը ման-

ՀԵՌԵՆՈՐԱԿԻԱՐԻ
ԴԱՅ . ԼԱԵՅՆՈ
ՍԱՅՍ . ՄԱՇՆԵ
ԼՐՅԷՈՐԻԻԱՐԻՈՅ
ԻՋԵՆՈՍԱՐԻԱՆ .
ԵՐԱՊԱՆՅԵՆՈՅ
K32

լատինալիզացիան մեծ արժեք է ներկայացնում: Նա ունի հետևյալ հիշատակարանը. «Ես Մլքե աղախին Քրիստոսի և հայոց թագաւոր... Թուականս, ետեւ զաւետարանս ի Վարագի սուրբ Աստուածածինս: զոր իմ ձեռամբս և ծահաւք եմ շինեալ յազնակովին ինձ և արքային իմոյ Գագկայ և զաւակաց իւրոց... ՅՄԱ թ. արաց ԻԲ...»: Ձեռագիրը գտնվում է Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանում:

10-րդ դարից մեզ հասել են մի շարք այլ ձեռագրեր, որոնք բայցին էլ կրոնական-կանոնական բովանդակություն ունեն և գրված են մագաղաթի վրա: Մեզ հասած ամենահին թղթի վրա գրված հայերեն ձեռագիրն աշխարհում, դա ՀՄՍՌ Մատենադարանի № 2673 ձեռագիրն է, որը պատմա-գիտական նյութերի ժողովածու է հանդիսանում: Հիշատակարանից երևում է, որ նա գրվել է 971 թվին Դավիթ գրչի կողմից, իր հոր, Ղուկասի պառվերով: Ձեռագիրը տասը տարի հետո նորոգվել է: Նորոգողը թաղել է հետևյալ հիշատակագրությունը. «Եւ է նորոգումն նորա ՆՆ (=981) Թուականութեանս հայոց»:

Գրչության հնության տեսակետից մեծ արժեք է ներկայացնում ՀՄՍՌ Մատենադարանի թիվ 963 մագաղաթյա ձեռագիրը: Ձեռագիրը պալիմեստ է (կրկնագիր): Պալիմեստ կոչվում են այն ձեռագրերը, որոնք մեկ անգամ գրվում են մագաղաթի վրա, իսկ հետագայում այդ գրված տեքստը ուրիշ մեկի կողմից լվացվում է և նորից գրվում: Հաճախ է պատահում, որ նման լվացված ձեռագրերում նախկին տեքստը նոր գրվածի տակից երևում է: Մեր նշված ձեռագիրը պատկանում է հենց այդ ձեռագրերի թվին: Ձեռագրի հիշատակարանից երևում է, որ Հովհաննես անունով մեկը, հավանական է 13-րդ դարում, լվացել է գրված հին տեքստը, որն, անկասկած, գրված է եղել 10-րդ դարից առաջ: Չլվացված մնացել են ձեռագրերի պահպանակները: Այս ձեռագրում մնացել է հին հայկական մանրանկարչության մի գեղեցիկ նմուշ՝ մուգ կապույտ ներկերով:

Հնագիտական մեծ արժեք է ներկայացնում ՀՄՍՌ Մատենադարանի «Փղոսկրե» կոչվող ավետարանը, որը գրված է 998 թվին: Հիշատակարանում կարդում ենք. «Եւ գրեցաւ յամի թուոյ հայազանց ՆԸ, եւ ըստ թուոյ հոռոմի Չեթ, յիսմայելական բռնակալութեանն 328»:

Սա ՀՄՍՌ Մատենադարանի հնագույն այն ձեռագրերից մեկն է, որը գեղեցիկ մանրանկարչություն է պարունակում: Նրա մեջ եղած նկարներն ու զարդագրությունները հայ

ժանրանկարչության գլուխ գործողներից են: Ձեռագրի հետքեր
ալիւլի հին է. նա համարվում է 5—6-րդ դարի դործ:

Անհրաժեշտ ենք համարում կանգ առնել նաև ՀՍՍՌ Մատենադարանի գիտական նշանակություն ունեցող մի քանի այլ ունիկոմների վրա:

№ 1890 (=1687).— Պարունակում է Նղիշեի «Պատմութիւն վարդանանց» աշխատության հնագույն ընդօրինակությունն աշխարհում: Նա ընդօրինակված է 1172 թվին Կոշա վանքում: Գրիչն է Դավիթ կրօնավորը: Գիրը հին բոլորագիր է:

№ 1568 (=1561).— Մեզ հասած Նարեկացու հնագույն լավագույն ընդօրինակությունն է: Ձեռագիրը գրված և զարդարված է 1173 թվին, հավանական է Սկևռայում, Գրիգոր զրչի կողմից: Պատվիրատուն է հայ մատենագրության մեջ աչքի ընկնող գեմքերից մեկը՝ Ներսես Լամբրոնացին:

№ 5610 (=930).— Գիտական նյութերի ժողովածու է. պարունակում է Անեցու ժամանակագրությունը՝ «Մամուլի քահանայի հաւաքմունք ի գրոց պատմագրաց» վերնագրով: Ձեռագիրը գրված է 1176 թվին Կամբջաձորում (հավանական է Անեցու կենդանության ժամանակ): Գրիչն է Քրիստափորը: Գրությունը մանր երկաթագիր է:

№ 1912 (=1753).— Ժողովածու է, պարունակում է վարդաբանական մի շարք աշխատություններ, որոնց թվում՝ Աղաթանգեղոսի պատմությունը, որ տվյալ հնդկական հնագույն ձեռագրերից է: Նա ընդօրինակված է 1220 թ.: Գրիչն է հանդիսացել Մխիթարը: Գիրը խոշոր բոլորագիր է:

№ 1328 (=1446).— Պատմա-գիտական նյութերի ժողովածու է: Պարունակում է Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տաթևոյ» աշխատությունը, որը «Պատմութիւն Տաթևոյ» մեր հրատարակության հիմքն է հանդիսացել: Ձեռագրերն ընդօրինակված են Կարբիում 1273 թվին Մկրտիչ զրչի կողմից:

№ 488 (=492).— Դատաստանագիրք է: Պարունակում է Մխիթար Գոշի դատաստանագիրքը, և թարգմանական այլ օրենսդրություններ: Սա դատաստանական բովանդակություն ունեցող ընդօրինակություններից է: Ձեռագիրը գրված է 1295 թվին: Գրիչն է Կիրակոսը: Գիրը բոլոր է:

№ 416 (=431).— Ձեռագիրը պարունակում է Մխիթար Հեռացու հանրածանոթ «Ջերմանց մխիթարութիւն» աշխատության

անիկում ընդօրինակությունը: Նա գրված է 1279 թվին Կոստան-
դինի կողմից: Պատվիրատուն է հանդիսանում Սիմեոն Լալի-
նյուպուր:

№ 1097 (=1111).— Պարունակում է եզնիկ Կողբացու «Եղծ
ողանդոց» աշխատությունը: Նա մեզ հասած Կողբացու հնագույն
ձեռագիրն է ողջ աշխարհում: Ձեռագիրը գրված է 1280 թվին:
Գրիչն է Լուսերը: Գրչության վայրը Գլաձորն է: (Այս ձեռագրի
մանրամասն նկարագրությունն ունեն Գ. Տ.-Մկրտչյանը և պրոֆ.
Հ. Անատյանը իրենց «Քննութիւն համեմատութեան եզնկայ նո-
րագիրս ձեռագրին» աշխատության մեջ, Վիեննա 1904 թ.): Գի-
տր՝ բոլոր է:

№ 1746 (=1885).— Պարունակում է փրկիսովայական և քե-
սականական աշխատություններ, որոնցից կարելի է առանձնապես
շեշել Դավթի «Սահմանք իմաստնասիրութեան», նույնի «Վերլու-
ծութիւն ներածութեան Պորփիրի», Արիստոտելի «Համառօտ սոփ-
րագրութիւնը», Դիոնիսիոս Թրակացու «Յաղագս քերականութեան»
և այլն: Ընդօրինակված է 1280 թվին: Գրիչն է Մխիթարը (հա-
վանական է Մխիթար Երզնկացին): Պատվիրատուն է Հովհաննես
Երզնկացին: Գիրը բոլոր է:

№ 1531 (=1682).— Պատմական նյութերի ժողովածու է:
Ընդօրինակված է երեք կաբեռը աշխատություն, որոնք տվյալ
Եզնիկանների հնագույն ընդօրինակություններն են՝ Սուրբատ Սքո-
լաստիկոսի Եկեղեցական պատմությունը (1 ա—204 բ), «Պատ-
մութիւն վարուց Սեդրեստրոսի» (205 ա—229 բ) և Մովսես Կա-
ղանկատվացու «Պատմութիւն Աղուանից» (23 ա—376 բ): Գրիչը
հայտնի չէ: Վայրը Հովհաննիսյանն է: Գրվել է 1289 թվին:

№ 1999 (=2019).— Տոմարական բովանդակություն ունի:
Պարունակում է Հովհաննես Կողեռնի, Հովհաննես Սարկավադի և
անանուն հեղինակների այլ տոմարներ: Ձեռագրերը գրված են
12-րդ դարում: Սա փաստորեն մեզ հասած հնագույն տոմարա-
կան բովանդակություն ունեցող ձեռագրերից է: Ուշ շրջանում
ձեռագրի վրա որոշ ավելացումներ է կատարված:

№ 715 (=612).— Գիտական նյութերի ժողովածու է: Պա-
րունակում է զանազան նյութեր, որոնց մեջ առանձնապես արժե-
քավոր է Դավթի Ալավկա որդու դատաստանագիրքը: Ձեռագիրը
գրված է երեք տարբեր գրիչների կողմից: Դավթի դատաստա-

նադրքի մասն ընդօրինակված է 18-րդ դարում: Գրիչն է Մարտիրոսը:

№ 3787 (=671).— Ճառերտիր է, ընդօրինակված 18-րդ դարում: Արժեքավոր է Կոբյունի «Վարք Մաշտոցի» աշխատության ընդարձակ տեքստը, որը տվյալ հեղինակի մեղ «Հատած հնագույն ընդօրինակությունն է: Գրված է 18-րդ դարում: Գիրք խոշոր բուրսագիր է: Գրիչն է Հովհաննեսը:


№ 627 (=666).— Ժողովածու է տարբեր բովանդակություն ունեցող նյութերի, որոնց մեջ առանձնապես արժեքավոր են լիլիստիայական բովանդակություն ունեցող նյութերը՝ «Լուծմունք Արթուրտեղի վասն աշխարհաց դրոցն», «Լուծմունք պոբիլուբի», «Լուծմունք ստորոգութեանցն», «Լուծմունք սահմանաց» և Մանիկյան Զենոնին վերագրվող «Յաղագս գիտութեան պիտանացու սեռից» ախատությունը (վերջինս դեռ չի հրատարակված): Նու ընդօրինակված է 1314 թվին: Գրիչն է Խաչիկը: Թերթ 286-ից հետո շարունակել է էբրիանոս անունով մեկը:

№ 1973 (=2024).— Տոմարական բովանդակություն ունի: Ամենահարուստ տոմարական տեքստեր պարունակող ձեռագրերից մեկն է: Այստեղ կան Հովհաննես Պոետիկոսի (Սարգիսվադի) չհրատարակված մի շարք տոմարական տեքստեր: Զեռագրերն ընդօրինակված են Հովհաննես և Գրիգորիս քահանաների ձեռքով 1342 թվերին նրանց կալում: Գիրք գեղեցիկ բուրսագիր է: Ունի շատ հարուստ դժագրություններ:

№ 2371 (=2374).— Քերականական բովանդակություն ունեցող հնագույն հայերեն ձեռագրերից մեկն է աշխարհում: Պարունակում է Մովսես Խորենացուն վերագրվող քերականության հատվածները, «Նշանադիր իմաստնոցի» ընդարձակ մի տեքստ, Գևորգի և Ստեփանոսի գրչության արվեստները և այլն: Զեռագիրն ընդօրինակված է 1357 թ. Սուրխաթում: Պատվիրատուն է Կարապետ քահանան:

№ 8871 (356).— Բժշկարան, որը պարունակում է Ամիր Բովլաթի «Ուսումն բժշկութեան» աշխատությունը: Արժեքավոր է այն տեսակետից, որ բժշկապետի ինքնագիրն է. նա գրված է Պոստամ 1459 թ.: Ինքը, հեղինակը խնդրում է «Յիշեցեք ի տեղ այս տուած զանպիտան և զանարժան գծոյս Ամիրաովլայ բժիշկի Ամասիում»:

№. 7117—Քերականական բովանդակություն ունի: Արժեքա-



վոր է ալն տեսակետից, որ նա պահում է միակ մեզ հասած աղ-
վանից այբուբենը, որը հրատարակվեց պրոֆ. Շանիձեի և զոյ-
Աբուլաձեի կողմից: Գրիչն է Հովհաննես Արճիշեցին: Գրչության
վայրն է Մեծոփա վանքը, իսկ ժամանակը 15-րդ դարն է:

№ 1770 (=1666).— Գիտա-պատմական նյութերի ժողովա-
ծու է: Պարունակված նյութերից բացառիկ արժեք է ներկայացնում
Շիրակացու թվարանության դասագրքը, առանձնապես նրա
գումարման, հանման, բաղմապատկության և բաժանման աղյու-
սակները, որոնք ամբողջական ձևով մեզ հասած հնագույն աղյու-
սակներն են մաթեմատիկայի պատմության մեջ: Ձեռագիրը գըր-
ված է 1589 թ. Աստվածատուր գրչի կողմից: Գրչությունը նոսր է:

№ 699 (=582).— Գիտական նյութերի ժողովածու է: Պարու-
նակված նյութերից առանձնապես արժեքավոր է Շիրակացու ինք-
նակենսագրությունը՝ «Անանիայի Շիրակացու... վասն որպի-
սութեան կենաց իւրոյ», որը Շիրակացու կենսագրությունն է:
Գրված է 16-րդ դարում: Գրիչը և գրչության վայրը հայտնի չէ:

№ 2180.— Գիտական նյութերի հարուստ ժողովածու է: Պա-
րունակված նյութերից արժեքավոր է Շիրակացու «Տիեզերագիտու-
թիւն և Տօմար» աշխատությունը, որը մեր հրատարակության
հիմքն է հանգիստացել: Ձեռագիրն ընդօրինակված է 1640 թվին:
Գրիչները հրեք են— Աբանասը, Սահակը և Վարդանը: Ձեռագրի
գրչությունը նոսր է:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Հայկական գրերը 5-րդ դարից մինչև մեր օրերն անփոփոխ չեն մնացել: Տասնևհինգ երկարածիզ դարերի ընթացքում նրանք ճնթարկվել են զգալի փոփոխությունների: Կարելի է ասել, որ չկա մի տառ, որ անփոփոխ մնացած լինի 5-րդ դարի համեմատությամբ: Ըստ որում, նրանք փոփոխության են ենթարկվել ոչ թե մեկ, այլ մի քանի անգամ: Տարբեր ժամանակներում կատարված այդ փոփոխություններն այժմ մեզ հնարավորություն են տալիս հայկական տառաձևերը բաժանել ըստ խմբերի և նշել նրանց ամեն մեկի գործածության մոտավոր ժամանակը:

Հայկական գրերի խմբավորման խնդրում աղբյուրագիտության մեջ գոյություն ունեն բազմաթիվ տեսակետներ: Կարելի է անդամ ասել, որ հայկական գրերով զբաղվող ամեն մի հեղինակ առաջադրել է գրերի իր սեփական խմբավորումը: Հայկական գրերի խմբավորման հարցում եղած կարծիքների այս բազմազանությունը, իհարկե, պատահական չէ. նա բխում է տառաձևերի նկատմամբ ունեցած սկզբունքային տարբեր մոտեցումներից: Այսպես օրինակ, աղբյուրագետներից ոմանք գրերի խմբավորման հիմքը տառերի ձևերն են ընդունում, ոմանք մեծությունը, ոմանք գծադրական բնորոշ հատկանիշները և այլն:

Հայկական գրերի խմբագրման առաջին փորձը կատարել է Ինճիճյանն իր «Հնախոսության» մեջ: Նշելով հայկական գրերի ձևափոխությունները 5-րդ դարից մինչև նոր ժամանակները, նա հայկական գրերը խմբավորում է հետևյալ տեսակների մեջ.

ա) Երկաթագիր—Մաշտոցի ձևավորած հնագույն գրերը:

բ) Միջակագիր— Երկաթագրի մանր տեսակը, որ առաջացավ 9-րդ դարում և երկաթագրի ու բուլղարագրի միջև գտնվող գիրն է:

գ) Բուլղարագիր—Առաջացավ 9-րդ դարի վերջին և 10-րդ դարի սկզբին: Սա այն գիրն է, որը և հայկական տպագրության մեջ մտավ:

դ) Նոսրգիր— Առաջացավ 14-րդ—15-րդ դարերում շատագրերի և պահանջով: Նա չորս տարբեր տեսակներ ունի:

ե) Գրամագիր— Երկաթագիրն է՝ տպված Ռուբինյանց գրամների վրա:

զ) Կանդակագիր— Կոնդակների համար գործածվող գրերը:

է) Փառագիր—Մաղկագիր, թռչնագրերը և մյուս զարդագրերը:

ը) Փակագիր— Կապգիրը, որն ասեղծվել է հապավման նպատակով:

թ) Վարագագիր—Մատանու, կնիքի վրա փորագրված գիրը, որի մասին հիշում է Փավստոսը:

ժ) Նշանագիր— Գաղափարագրերը, որը գործ էածվել հայ մատենագրության մեջ*):

Հայկական գրերի տեսակավորման հարցով զբաղվել է նաև Բարսեղյանցը: Նա իր ցուցակի մեջ նշում է հայկական յոթ տեսակ գրեր և տալիս նրանց գրչության հետևյալ ժամանակները:

- | | |
|--------------------------|---|
| 1. Մեսրոպյան երկաթագիր — | 5—8-րդ դար |
| 2. Միջակ գիր — | 8—10-րդ դար, |
| 3. Փոքր երկաթագիր — | 9—12-րդ դար, |
| 4. Բուլղարագիր — | 12—14-րդ դար (եկեղեցական ձևագրերը մինչև 13-րդ դ.) |
| 5. Նոսրգիր — | 13—18-րդ դար, |
| 6. Շղագիր — | 18—19-րդ դար, |
| 7. Նոսր շղագիր— | 18-ից մինչև մեր օրերը**) |

Հայկական գրերի տեսակավորման նոր փորձ է արել Հ. Տաշյանը իր «Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ» աշխատության մեջ, որը և անփոփոխ ընդունել է Կ. Աճառյանը իր «Հայ գրեր»-ում: Տաշյանը բացի գրերի հիմնական տեսակներից,

*) Թեոփիլյան, Հնախոսության, Գ. հատոր, էջ 77—78:

**) Տե՛ս Բարսեղյանցի ձևագրերի ցուցակը, էջ 88.

ընդունում է նաև անցման դրեր: Հայկական դրերը նա տեսադու-
լորում է հետևյալ յոթ խմբի մեջ.

1. Գլխագիր, երկաթագիր,
2. Միջին մեսրոպյան երկաթագիր,
3. Փոքր երկաթագիր,
4. Անցման գիր,
5. Բոլոր գիր,
6. Նոտրգիր,
7. Շղագիր:

Նրա կարծիքով երկաթագիրը տիրող է հանդիսացել 5-րդ
դարից մինչև 11-րդ դարը, բոլորապիսիքը սկսել է տիրող դառնալ
12-րդ դարից, իսկ նոտրը սկսվում է 13—14-րդ դարերից^{*)}:

Անհրաժեշտ է նշել, որ Հ. Տաշյանն առաջինն է, որ հակա-
ռակ նախորդ աղբյուրագետների սխալ կարծիքների, աշխատել է
ապացուցել, որ գրերի որոշ տեսակներ, մասնավորապես փոքր
երկաթագիրն ամենի հնից է դալիս, քան ենթադրվում է: Նրա կար-
ծիքով կրոնական գրականության մեջ գործ է ածվել միջին-մես-
րոպյան երկաթագիրը, իսկ պատմա-գիտական գրականության
մեջ՝ փոքր երկաթագիրը:

Գրերի գիտական տեսակավորման փորձ է արել նորեքս դոց.
Կ. Ղաֆադարյանն իր «Հայկական գրի սկզբնական տեսակները»
աշխատության մեջ: Տեսակավորման հիմքն ընդունելով գծադրա-
կան առանձնահատկությունները, նա ընդունում է հետևյալ հինգ
տեսակ գրերը.

1. Բոլորաձև երկաթագիր,
2. Ուղղագիծ երկաթագիր,
3. Բոլոր գիր,
4. Շղագիր,
5. Նոտր գիր:

Գրերի տեսակներից ոչ մեկն ընկ. Ղաֆադարյանը ժամանակի
մեջ չի սահմանադժում: Նա գտնում է, որ գրերի գրեթե բոլոր տե-
սակները (բացի շղագրից), ստեղծվել են Մեսրոպի ձևորով և գործ
են ածվել բոլոր ժամանակներում:

Դոց. Կ. Ղաֆադարյանի կատարած գրերի այս նոր տեսա-
կավորումը ընդունելի է: Իրապես, գծադրական առանձ-

*) Հ. Տաշյան, Ազնաբեկ մը հայ մեսրոպյան գիր, էջ 36—49:

հասակավորվածների հիման վրա կատարած տեսակավորումը, որն ընդունված է և այլ լեզվով գրված պալեոգրաֆիաների մեջ, ավելի գիտական է, քան ուրիշ որևէ հատկանիշ վերցնելը: Սակայն դժվար է համաձայնել այն տեսակետի հետ, որ հայկական գրերի բոլոր տեսակները 5-րդ դարում են ստեղծվել: Այդ փաստակոն տվյալներով չի հաստատվում: Գրերի որոշ տեսակները կարող են ավելի հինգ դար, քան ենթադրվում է, ինչպես իրավացի նկատել է դոց. Ղաֆադարյանը, բայց որ հայկական գրերը ևս հարևան մյուս ժողովուրդների գրերի նման ունեցել են իրենց պատգաճումն ու փոփոխությունը, դա կասկածից դուրս է:

Ընկ. Կ. Ղաֆադարյանի⁹ մոտ այս հարցի պնդման համար հիմք է ծառայել Կորյունի այն տեղեկությունը, որ Հռոմեանոսը «գնրբագոյնս, զկարճն և զերկայնն, զառանձինն ու զերկնատրն միանգամայն յօրինեալ և յանկուցեալ»: Ընկ. Ղաֆադարյանի կարծիքով «Կորյունի հիշյալ հինգ բառերը ցույց են տալիս ո՛չ թե միևնույն այբուբենի ներքին շարքերը (գրերի բարձրության առտիճանները), այլ այդ բառերից յուրաքանչյուրը գրության մի նոր տեսակի անունն է»¹⁰): Ըստ որում, նրա կարծիքով «երկնավորը» — փակագիրն է, «նրբագոյնը» — նոսրգիրն է, «կարճը» — ուղղագիծ երկաթագիրն է, «երկայնը» — բուրբառե երկաթագիրը:

Կորյունի տեղեկությունը մենք այլ ձևով ենք հասկանում: Մեր կարծիքով, այստեղ խոսվում է տառերի ո՛չ թե ներքին շարքի կամ գրչության տեսակների, այլ հնչական նշանակության մասին: Կորյունի այս տեղեկությունը հնշտ է վերծանել, եթե մենք դիմելու լինենք Դիոնիսիոս Թրակացու քերականությանը, ուր այդ նույն բառերը բերված են իրենց բացատրություններով:

«Երկայն» ասելով, ըստ այդ աղբյուրի, երկար հնչյոդ երկու տառերն են — «է» և «ա» («եւ ձայնաւորք են երկու՝ է և «Των δὲ φωνῶν τῶν μακρὰ μὲν ἔστι δύο ἢ καὶ ὅ»):

«Կարճ»-ը — կարճ հնչյոդ «ե», «ո», «ւ», ձայնավորներն են («եւ սուղք (կարճ) — ըստ Ստեփանոս Սյունեցու քերականության») և ներք՝ ե, ո, ւ, «Βραχέα δὲ, ἢ καὶ ὅ»):

«Երկնավոր» այն բառերն են, որոնք երկու տառի հնչյուն ունեն («եւ կրկնակը են ի սոցանէ ութ՝ է, ւ, հ, շ, չ, ա, ց. Ἔστι δὲ τῶν συμφώνων διπλάμεν, ἔστι τρία, ζ, ξ, φ»):

⁹) Գ. Ղաֆադարյանի Հայկական գրի օգնական տեսակները. էջ 33.

«Առանձինը»—ու կրկնաժող բաղաձայններն են:

Եւ, վերջապես, «նուրը»-ը հեակյալ տառերն են՝ «դ», «լ», «տ», «ք», «ն», «ծ», «շ», «մ» «ս») «ն» են սորա նուրը տառն» և թվում է վերև բերված տառերը)*:

Հայկական գրերը, մեր կարծիքով, պիտի բաժանեն: չորս հիմնական տեսակների՝ երկաթագիր, բոլորագիր, նոսր գիր, և շղապի: Երկաթագիրն, իր հերթին, պիտի բաժանել երեք խմբի՝ բոլորածե երկաթագիր, ուղղագիծ երկաթագիր և մասն երկաթագիր: Գոյություն ունի նաև անցման շրջանի երկու գրի տեսակ՝ երկաթագրից բոլորագրին անցնող և բոլորագրից նոսրագրին անցնող գրեր, որոնք առանձին խումբ են կազմում, ինչպես Ճիշտ նշել է քնն. Ղաֆաղարյանը:

Որոշել այս գրերից յուրաքանչյուր տեսակի գործադրման ճիշտ ժամանակը—գժվար է: Մեզ չեն հասել հնագույն տեքստերի մեծ մասը և մենք չգիտենք, օրինակ՝ թե ինչ տեսակ գրով էին գրվում պատմագիտական բովանդակություն ունեցող ձեռագրերը 5-րդ դարում: Մենք կարող ենք միայն մոտավորապես այն էլ քնդհանուր ձևով ասել, թե գրերի այս կամ այն տեսակը ո՞ր դարերումն էր գերիշխող հանդիսանում և ինչպիսի՝ բովանդակություն ունեցող ձեռագրերում: Փորձենք մոտավոր ձևով սահմանադրել նրանց ժամանակագրական շրջանակները:

ա) Երկաթագիր:

Մեզ հասած Հայկական գրության ամենահին տեսակը երկաթագիրն է: Ենթադրվում է, որ նա երկաթագիր է կոչվում այն պատճառով, որ գրվել է երկաթե ձողերով՝ սկզբում դուցե մոմի վրա: Կան նաև քանասերներ, որոնք երկաթագրի անունը բացատրում են ո՛չ թե երկաթե ձողերով գրելու, այլ երկաթի ժանգից (երկաթ-օքսիդից) թանաք գործածելու պատճառով:

Գրերի այդ տեսակի հիշատակումը «Երկաթագիր» անունով մեր մատենագրության մեջ այնքան էլ հին չէ: Ամենահին հեղինակը, որը գործ է ածել այդ տերմինը—Մխիթար Ապարանցին է:

Երկաթագրով են գրված մեզ հասած հին Հայկական գրեթե բոլոր ձեռագրերն ու վիմագիր արձանագրությունները: Կանոնադրան-կրոնական բովանդակություն ունեցող գրականությունը հին

* Н. Азоп, Двописный Фракийскій и Римскій это тоже самое, стр. 68.

ձեռագրերում գրված է բոլորագիր և ուղղագիծ երկաթագրերով, իսկ պատմա-գիտական և մեկնողական գրականությունը՝ մանր երկաթագրերով: Մանր երկաթագրերը, շատ հաճախական է, մեր գրականության մեջ սկսվել են գործածվել 5-րդ դարից: Համենայն դեպ, մեզ հայտնի բոլոր հին ձեռագրերում բոլորածե երկաթագրերի հետ միասին հանդիպում են մանր երկաթագրերը (հնագույն պատմագիտական, լազարյան ավետարանում և այլն):

ՄԵԿՈՒԻ ԱՐՅԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՐԵՐԸ

Ա Բ Գ Դ Ե Ջ Ը Ի Լ Խ Կ Զ Ղ

Մ Յ Ն Շ Ո Պ Ռ Ս Ւ Յ Ր Յ Ի

ՀՍՍՌ Մատենագրադան Թատարիկի ԳՐԵՐԸ

Ա Բ Գ Դ Ե Ջ Ը Ի Լ Խ

Կ Ն Ղ Մ Յ Ն Շ Ո Պ Ղ Ռ

Ս Վ Տ Ր Յ Ի Փ Բ

Իրար հետ հաճախոր հետևյալ շունեն բոլորագիր երկաթագիր և ուղղագիծ երկաթագիր տառերը: Առաջինը գործադրվել է հնագույն շրջանում, իսկ երկրորդը՝ մոտավորապես սկսած 9—10-րդ դարերից:

Մեզ հանդիպելու, երկաթագիր գրերը մյուս տեսակի գրերի համեմատությամբ ունեն հետևյալ առանձնահատկությունները.

ա) Երկաթագիրը մի քանի անգամ խոշոր է, քան հայկական դրոթյան մյուս տեղակները:

բ) Երկաթագրով գրված տեքստերի մեծ մասը բառանշապատ չդիտե՝ երեք, չորս, և երբեմն ավելի, բառեր դրվում են միացած. բառանշատումը կատարվում է գլխավորապես կետերից հետո:

գ) Երկաթագիր տեքստերը չունեն «և» տառը. նա գրվում է «և» ձևով (սովորաբար, հաջորդող բառին միացած), «ո» տառը — դրվում է «աւ» միացյալ, «և», «ֆ» տառերը չի գործածվում: Բոլորադիր և նոտր գրով գրված հնագույն սրոշ տեքստերում պահպանվում են երկաթագրի այս ձևերը:

դ) Երկաթագրի տեքստերի մեծ մասում «լ» տառը սրոշ բառերում փոխարինվում է «ղ»-ով (ալ=ալլ), Աղեքսանդրիա=Ալեքսանդրիա, այդպիսով=ալլակերպեալ և այլն:

Բոլորաձև երկաթագիրը ուղղագրի երկաթագրից տարբերվում է հետևյալ հատկանիշներով.

ա) Բոլորաձև երկաթագրով գրված տեքստը նոր տողից սկսելիս, սկզբի առաջին տառը, իր մեծության կիսի չափով, տեքստի առաջին դժից դուրս է գրվում:

բ) Բոլորաձև երկաթագիրն ունի կլոր ձև, տառասյուները միացնող գծերը կամարաձև են: Նրանք ուղղագրի երկաթագրերի նման քառակուսի ձևով չեն նստում տողի վրա:

գ) Բոլորաձև երկաթագիրը բացի միջակետից, չդիտե այլ կետ. ըստ սրում, միջակետն ունի երկարող քառակուսի ձև և գրվում է տողից վերև:

դ) Բոլորաձև երկաթագրի տեքստերում հասպտված են լինում միայն մի քանի անուններ:

ե) Բոլորաձև երկաթագիրը մյուս գրերից տարբերվում է հետևյալ տառաձևերով.

ա) «Թ»-ի երկրորդ դիժն իջնում է մինչև տողը

բ) «Ս»-ի առաջին գիժն ավելի երկար է և թեք

գ) «Վ»-ի առաջին գիժը հավասարվում է երկրորդին

դ) «Կ»-ի երկրորդ գիժը շատ կարճ է և թեք

ե) «Լ»-ն սկսվում է «ի» տառի վերին երկարությամբից և այլն:

Շատ ավելի հին ձևադրերում, օրինակ՝ ՀՄՄՄ Մատենադարանի հին գրչութունն ունեցող պատառիկում, ինչպես արդեն ասել ենք, տարբերվում են հետևյալ տառերը՝ Ա, Բ, Ն, և այլն:

Հայկական հնագույն գրչությունից Լաղարջան ավետարանում
նկատվում է ուղղագրական հետեյալ տարբեր ձևերը, որը բնորոշ
է հին հայկական տեքստերին ընդհանրապես:

ա) Ավելագրություն «յ» տառի՝ յայգեցան, դարձոյ, ծառայ,
հատոյ, գործեայ, կոչեայ, նմայ, սմայ և այլն:

բ) Ավելագրություն «վ» տառի՝ ովմն, ովմանք, սրով-
դոյթ, Պետրովս, քարովկութիւն, բարովք և այլն:

գ) Հապավումն «ը» տառի՝ յնթրիս, զնկեր, զնտրեայ, յնչից
և այլն:

դ) Հապավումն «յ» տառի՝ զգոշ, վկայց, հայհոութիւն, ուղե-
մեցա, հաճեցա, պիտո, զո, միո, արտաքո, յորդո, թղենս և այլն:

Բազմապատկան արձանագրութեան փոփոխություններ

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ի Ծ Կ Զ Դ

Ճ Մ Յ Ն Շ Ո Պ Ռ Ս Վ Յ Ր Յ Ի Բ

Երկարացված արձանագրութեան փոփոխություններ

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ի Ծ Կ Զ Դ

Ճ Մ Յ Ն Շ Ո Պ Ռ Ս Վ Յ Ր Յ Ի Բ

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ի Ծ Կ Զ Դ

ե) «ն» գրվում է «է»-ի փոխարեն՝ թե, եթե, և, եին, խնդոյին,
և այլն:

զ) «է» գրվում է փոխանակ «ն»-ի՝ արեդակն, փէսա, ցէրեկ,
էգաւ, էհաս, էթող, էհար, և այլն:

է) «կ»-ի փոխարեն գրվում է «գ»՝ անդեան, մանդունք, բաճ-
պողին, ցանդացան և այլն:

բ) «Այլ» գրվում է «աւ»-ի փոխարեն—ամօղթ, նոքովք, ար-
պատուք, համբրով, համբրովել և այլն:

Դժվար է որոշել երկաթագրի գործածության ժամանակը մեր
գրականության մեջ: Նա, պարզ է, որ սկսում է 5-րդ դարից, բայց
որտեղ է նրա վերջին սահմանը՝ այդ դժվար է հաստատապես
ասել: ՀԱՍՌ Մատենադարանում կրոնական-կանոնական բովան-
դակությանմբ գրչագրեր են մեզ հանդիպում մինչև 14-րդ դարից,
ևրդ գործածվող գրի հիմնական տեսակը բոլորագիրն էր հանդի-
սանում:

Ուղղագրի ԵՐԱԹԱԳԻՐ

Ա Բ Գ Դ Ե Ջ Ը Թ Ռ.

Ի Ի Լ Խ Ժ Կ Տ Ղ

Ճ Մ Յ Ն Շ Ո Ղ Պ Ջ

Դ Ս Վ Մ Ր Յ Ի Փ Բ

Երկաթագրի, ինչպես և մյուս գրերի ժամանակը որոշելիս,
հնարավոր է միայն մոտավորապես ասել, թե նրանցից ո՞րը ինչ
ժամանակ է գերիշխող գրության տեսակը հանդիսացել: Եթե այդ
տեսանկյունով մենք մոտենալու լինենք երկաթագրի գործածության
ժամանակի որոշմանը, ապա կարելի է ասել, որ բոլորածե երկա-
թագիրը կանոնական-կրոնական գրականության մեջ հայկական
գրի հիմնական տեսակն է հանդիսացել 5-րդ դարից մինչև 16-րդ
դարը: Ուղղագրի երկաթագիրը սկսում է 10-րդ դարից և տևում է
մինչև 12-րդ դարը: Մանր երկաթագիրը, զլխավորապես պատմա-
գիտական բովանդակություն ունեցող ձեռագրերում և ավետարան-
ների համարարքառներում, գործածական է եղել հնագույն շրջա-
նից մինչև 12-րդ դարը:

Ընդհանրապես, բոլորձև երկաթադրի գործածությունը կապվում է հայ ժողովրդի պատմության վաղ ֆեոդալական հարաբերությունների շրջանի հետ, իսկ ֆեոդալական հարաբերությունների վարդապետն շրջանում, նա սկսում է իր տեղը զիջել ուղղաձիգ երկաթագրին, իսկ ավելի ուշ, ֆեոդալական հարաբերությունների ավելի բարձր զարգացման շրջանում, XII դարից՝ բուլբուլագրին:

Պետք է ասել, որ երկաթագիրն իր դժագրական առանձնահատկություններով շատ է մոտենում ուղղագրի՝ երկաթագրին և փաստորեն նրա փոքրացրած տեսակն է: Այդ տառերը որոշ բանասերների մոտ տեղամ կոչվում են միջին մխարայան գրեր: Անհրաժեշտ է նշել, որ այդ գրով են գրված մեզ հասած պատմագիտական բովանդակություն ունեցող գրեթե բոլոր հնագույն տեքստերը—Յգլիի ամենահին ձևագիրը, Ագաթանգեղոսի պատմության հնագույն ընդօրինակության հատվածը (9—10-րդ դար), Խորենացու պատմության երկրորդ գլխի գլխացանկը (10-րդ դար), Եղիշեի պատմության պատառիկը (10-րդ դար), և ուրիշներ: Այդ նույն տառերով է գրված, ինչպես ասել ենք արդեն, կրոնական-կանոնական գրականության որոշ տեքստեր և հատկապես ավետարանների համարարքառներ: Այս տառերի գործածությունը, անկասկած, հնից է գալիս: 5-րդ դարի հայկական հարուստ գրականությունը, մեր կարծիքով, խոշոր երկաթագրերով բավարարվել չէր կարող և նա օլիտի գործածում լինել նաև գրերի այս տեսակը, որը նպատակահարմար էր արտագրելու և տեղ տնտեսելու տեսակետից: Այդ բանը, ի դեպ, մենք տեսնում ենք նաև ասորական մատենագրության մեջ: Նրանց մոտ ևս հնուց կղել է երկու տեսակ գիր—խորանգելիս և հակոբիի:

11—13-րդ դարերում մեզ հանդիպում են մանր երկաթագրերից բոլորագրին անցնող գրի որոշ տեսակները: Այդ գրերի մի շարք տառեր արդեն նոր ձև են առնում: «Ա»-ն սկսում է գործածվել «ա» ձևով, «Յ»՝ «յ», «Մ»՝ «մ» ձևով, «Պ»-ն «պ» ձևով և այլն: Առաջանում է մեծատառի և փոքրատառի տարբերությունը:

Անցման շրջանի հետաքրքիր գրություն ունի ակադ. ն. Յ. Մառի ուսումնասիրած Պիշպեի գերեզմանատանը գտնվող մի տապանաքարի հայկական արաձանագրությունը, որը նա հրատարակել է (Записки Восточн. ѣмп. русскаго археологич. обще-

ства», VIII, стр. 344—349, «Нагробный камень из семирекий» վերաբերով): Այստեղ գլխագիր «Ա» տառը սկսել է փոխվել երեք Հյուսիս գծեցող «ա»-ի, բայց դեռ ամբողջական չի ձևավորվել և չի հորացրել երկաթագրի որոշ ձևերը:

Բ) ԲՈՒՈՐԱԳԻՐ

Բուրազիրը հայ մատենագրության գործածության մեջ իշխող գիր է սկսել դառնալ Կիլիկյան հայկական ֆեոդալական թագավորության շրջանում: Նույն ժամանակ էլ նա գործածության մեջ է մտել Արևելյան Հայաստանում:

Մեր խոսքն, իհարկե, մասնաշաղկապ գործածության մասին է. այսպես, այս գրի հին տեսակները մենք ունենք դեռ առաս-
թորդ զարից: Նրա հին օրինակը Պողոսի թղթերի մեկնությունն է 999 թվից (նմանահանությունը հրատարակված է Ալիշանի «Այ-բարատ»-ում, էջ 498): Այնուհետև, այս գրի հին օրինակներից է ՉՍՄԻ Մատենադարանի № 229 ձեռագիր ավետարանը 1033 թվից և այլ ձեռագրեր:

Բուրազիրն, անկասկած, առաջացել է մանր երկաթագրից: Հնագույն շրջանում, ինչպես ասել ենք, բուրաձև երկաթագրի հետ միասին գործ էածվել մանր երկաթագիրը. ահա հենց այս գրից, արագ գրելու նպատակով, ձևափոխվել և կազմվել է բուրա-
զիրը:

Մեղ հայտնի չէ նրա կոչումը՝ ինչո՞ւ է «բուրազիր» կոչվում: Նաչելով կոչումին, թվում է, գրի այս տեսակն իրոք կլոր պլաի լինելը, բայց, իրապես, նա բուրավին էլ կլոր չէ, այլ անկյու-
նավոր և հավասար նստում է տողի վրա: Գուցե նա այդ անունը ժամանակ է նախկին բուրձև երկաթագրից, որից նա առա-
ջացել է: Համենայն դեպս, այժմ նրա անվան մասին որոշակի
մենք ոչինչ ասել չենք կարող:

Բուրազիրը մի քանի անգամ ավելի փոքր է, քան բուրձև երկաթագիրը, և ի տարբերություն նրա, նախկինին նման ո՛չ թե նկարվում է, այլ գրվում: Գրչի մեկ կամ երկու խաղումով ավարտվում է ավյալ գիրը: Արագության հետևանքով գրերը փոքր ինչ թեք ձև են բնորոշում: Հեշտ գրելու հետևանքով որոշ գրեր պարզեցվում են և միանգամայն այլ ձև բնորոշում, քան այդ նախկինում է (տես այս մասին բերված գրերի նմանա-

հանությունները)։ Գրեթե բոլորովին փոխվում են՝ ա, գ, թ, զ, ճ, մ, յ, շ, չ, պ, ջ, ո, տ, ց, լ, ի, ք, տառերը։ Այս գրության ժամանակ հայկական այբուբենի վրա ավերանում են «և», «օ» և «ֆ» տառերը, որոնք առաջ չկային։ Սակայն միշտ չէ, որ գործ են ածվում նրանք։ Հատկապես հին տեքստերում, որոնք ընդօրինակվում են, գրիչները հետևում են հին տրագիցիային — «և»-ը գրում են անշատ «ևս» ձևով, «օ»-ն գրում են «ու» ձևով, իսկ «ֆ»-ը տեղ գործ են ածում «փ»-ն։

Օրինակ՝ «Ֆրանկ» գրելու փոխարեն գրում են «փրանկ», «Յօրիկ» գրելու փոխարեն գրում են «Մարիկ» և այլն։

Բոլորագիրը գեղարվեստական կատարելության է հասնում առանձնապես Չրիմի գրչության դպրոցներում (Կաֆա, Սուրխաթի և այլն)։ Նրեման բոլորագրով գրված այնքան գեղեցիկ և համաչափ տեքստեր են պատահում, որ ամենեկին չի կարելի տարբերել նրանք տպագրից։ Գեղեցիկ և համաչափ ձևագրեր են հանդիպում նաև Ելիլիկիայի գրչության դպրոցից։ Հայտնի են առանձին գեղագիր գրիչներ, որոնց մասին մեծ գովեստով են խոսում նրանց աշակերտները կամ լծակից ընկերները։

Բոլորագիր տեքստերում գրեթե միշտ կատարվում է բառանշատում։ Պատահում է, որ «և»-ը շարունակում են միացնել նախորդ բառի հետ։ Բոլորագիր տեքստերում սկսում են գործ ածել բազմաթիվ կետադրական նշաններ, նշում կարճ և երկար վանկի նշանները, տողադարձի նշաններ դնում և այլն։ Այս մասին մենք մանրամասն կանգ կառնենք կետադրության մասին խոսելիս։

Բոլորագրի տեքստում սկսում է առաջանալ մեծատառի և փոքրատառի տարբերությունը։ Մեծատառով կամ գլխատառով սկսում են գրել տեքստի սկզբի տառերը, առանձին հատվածների սկզբնատառերը և այլն։ Ուշադրության արժանի է, որ այս ժամանակ ևս հատուկ անունները տեքստերում գրվում են փոքրատառով։ Վեղահագրերը ընդգծելու համար գրում են կարմիր մեկանով կամ դարդանկարում են։

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Գրիգոր Տաթև վացին Գեորգ Սկեռացու գրչության արվեստի իր մեկնության մեջ երեք տեսակ գլխագիր է նշում՝ «ծաղկի», «երկաթի» և հոսարակի։ «Երեք են գլխագիրը՝ Նախ՝ ծաղկի, երկրորդ՝ երկաթի, երրորդ՝ հոսարակի գլխի» (ՀՄՍՍՄ Մատեն., ձեռ. № 3587, էջ 238)։

Մեզ է հասել կիլիկյան շրջանից մի հետաքրքիր տեղեկություն, որը ցույց է տալիս այդ ժամանակվա ղեղադրության բարձր արվեստը: Այդ տեղեկությունը բերում է Ալիշանն իր «Սխուռանի» մեջ: Տարսոնցի մի հայ օրիորդ, Ալիծ անունով, որը հմուտ է եղել հայկական դրշության մեջ, ղեղեցիկ ձևով գրում է հայերեն մի այբուբեն և հայտարարում, որ ով կարողանա իր նման ղեղեցիկ գրել, նա արժանի կլինի իր ամուսինը լինել: Երկու երիտասարդ գրում և բերում են, բայց նա չի հավանում, հայտարարելով՝

«Ծայրըն ձային, ծակըն ծային,

Զի նրմաներ գիրն Ալիծին»:

(Այսինքն՝ «ձ» տառի ծայրը և «ծ» տառի բոլորող կապը չի նմանվում Ալիծի գրին: Ալիծը նորից հայտարարում է, որ ով կարողանա բերել այնպիսի գիր, որ նմանություն լինի՝

«Ծայրըն ձային, ծակըն ծային,

Նա կուլինի փեսայ Ալիծին»:

Ենթահալի մի երիտասարդի հաջողվում է բավարարել օրիորդ Ալիծի պահանջը: Ալիծը նայում է երիտասարդի գրին և հավանում, հայտարարելով՝

«Ծայրըն ձային, ծակըն ծային

Կու նմանի գիրն Ալիծին»:

Բոլորագիրն իշխող գրի տեսակ է մնում մինչև 16-րդ դարը և իր տեղը սկսում է զիջել նոտր գրին, չնայած 16—18-րդ դարերում քիչ չէ բոլորագրի ձևադրերի թիվը:

Գ. ՆՈՏՐԳԻՐ

Նոտր բառի ծագումը մեզ հայտնի է: Նա առնված է լատինական նոտր բառից և նշանակում է նոտարների, ալտերների՝ ղափրների, գրագիրների գիր: Ըստ երեույթին՝ գրի այս տեսակը գործ էր ածվում գլխավորապես առօրյա դրադրության մեջ: Նա բոլորագրից ավելի արագ գրվող գրի տեսակ էր:

Նոտրգիրը իշխող գրի տեսակ է հանդիսացել, գլխավորապես 16—18-րդ դարերում: Նոտրգրի հնագույն նմուշը հայ մատենագրության մեջ հայտնի է 13-րդ դարից: Նոտրգիրը, անկասկած, առաջացել է բոլորագրից:

Երևա օրէկորն արկէս զէս յա
կանա զընկաւ Տըն ճընակ Բ
Բս:

Յաշտարհա աշխենն ճիւղ
աւն զիս. հաճաւ կարաւ աւն
զիս բանիս. Տիճ զան մարդիս
հախաւեն զիս. աւնի աւեն
Իմ ճընակ:

Զճաւնի աւնիս աւնիս օրաց.
յանկարճաւի եղև կարաճ. ճընար
բընաւիս աւն ճընակ. ներս օր
էլա փայլ իրիմաց:

Բբար աւնիս զգաւիս Բբարաց.
էրէն երևա ճընակ հարաց.
փայլ օրիցաւ ներս ճընակ:

Նոսրգիր մի էջ տապարանից:

Նոսրգիրն բոլորագրի համեմատութեամբ, ամէլի մանր է: Նա
ևս փոքր ինչ թեր է: Բոլորագրի նման, աչս զրով գրված տեքստերում
ևս, գործ են ամփում գլխագրեր: Բառանշատում լրիվ կատարվում

է: Գրի այս տեսակի ժամանակ զրեթն միշտ գործ են անում «ն», «ո» և «թ» տառերը:

Նոսրգրի տեքստերում շատ անորոշ ձևով են գրվում որոշ տառեր: Այս գրի տեքստերում հաճախ կարելի է մի տառը շփոթել մյուս տառի հետ: Այսպէս, դժվար է տարբերել «ա» և «ո» տառերը, «ա» և «ո» տառերը, «գ» և «դ» տառերը և այլն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԱՆ ԱՂԵՆԵՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ք- ք- փ- փ- ք- ք- 2- Է- Է- Է-

ձ- ի- Լ- ի- ժ- Կ- Կ- 2- Վ-

Ճ- մ- Յ- Զ- Ը- Ը- Ղ- Գ- Զ-

Դ- Դ- Զ- Դ- Դ- Դ- Դ- Դ-

Նոսր գրի տեքստերում, համեմատաբար, շատ են հատկապես Որոշ տեքստերում զրեթն բոլոր ձայնավոր տառերը հատկապես են: Շատ են նմանապես դադարաբերներ:

18-րդ դարի նոսրգրերին փոխարինելու եկավ շղագիրը, որը շղագիր է կոչվում այն պատճառով, որովհետև գրվում է շեղ ձևով: Ենթադրվում է, որ այս տեսակի վրա կանգ չենք առնի, որովհետև նա գործ է անվել վերջին դարերում, և, հավատացած ենք, որ նրա հետ ծանոթ են բոլորը: Որոշ մարդիկ այժմ գրում են շղագիր տառերով:



ՀԱՄԱՐՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղ տնտեսելու և կարճ տարածության վրա շատ բաներ գրելու համար, ինչպես բոլոր ժողովուրդների մատենագրության, ունեցնող և հայ մատենագրության մեջ, սովորություն է եղել համառոտել բաները, հապավել նրանք: Սակայն հապավումը հին հայկական մատենագրության մեջ ունեցել է միանգամայն այլ նշանակություն, քան այդ միջնադարյան մատենագրության մեջ է: Ակզորեական շրջանում համառոտված բաները հապավում չեն հանդիսացել մեր ներկա հասկացողությամբ, այլ պատվազրության: Ձեռագրի գրող կամ բնագործականող գրիչը չի ցանկացել լրիվ ձևով գրել տեքստական կոշիկող որոշ բաներ, ուստի և բերել է նրանք հապավված ձևով: Այդ պատճառով էլ բառի վրա դրված կրճատման նշանը կոշիկում է ո՛չ թե հապավման, այլ պատվի նշան:

Հապավման գործածության նպատակը հայ մատենագրության մեջ միանգամայն փոխվում է սկսած 11—12-րդ դարերից: Այս ժամանակից հապավումն իրապես հապավվում է իսկական լիարժեք և նրա նպատակն այլևս պատվազրությունը չէ, այլ տեղ տնտեսելը:

Հապավումը մեծ չափերի է հասնում առանձնապես 16—17-րդ դարերում: Այս շրջանում գրված ձեռագրերում հապավված են փնտման անխափր գրեթե բոլոր բաները:

Հապավման համար, վերևից, սովորաբար, գրվում է հապավման նշան, որը տարբեր է լինում տարբեր ժամանակներում: Հին

*) Տպագրական հնարավորություններից ելնելով, մենք հապավմանների քիմիական օրինակների վրայի պատվի նշանը բաց ենք թողել:

Յեռապրեքում նա ունենում է — ձևը, իսկ ուշ շրջանում — կամ¹¹ ձևը: Այդ նշանները միշտ դրվում են հապավված բառերի վրա:

Հապավումների զանազան տեսակները կան: Ամենից շատ հապավվում են «թիւն» վերջավորութեամբ բառերը: Նրանք հապավվում են երեք տարբեր կրճատումով: Օրինակ՝ վերցնենք «պատմութիւն» բառը: Նա կարող է հապավվել հետևյալ ձևով—«պատմութի», «պատմուի», «պատմի»: Առաջին դեպքում կրճատվում է երկու տառ, երկրորդ դեպքում՝ երեք, իսկ երրորդ դեպքում՝ չորս: Բերենք մի քանի օրինակներ.

Դիտութիւն—գիտութի, գիտուի, գիտւի,

Միջնորդութիւն—միջնորդութի, միջնորդուի, միջնորդւի,

Բնութիւն—բնութի, բնուի, բնւի,

Նմանութիւն—նմանութի, նմանուի, նմանւի:

Եթե «թիւն» վերջավորութիւն ունեցող բառերը հապավված վիճակում բառավերջում ունեն «ն» տառը, այդ դեպքում քառը վերձանելիս պիտի գրել ոչ թե մեկ, այլ երկու «ն»: Այսպէս, եթե «թիւն»-ով վերջացող բառը բառավերջում «ն» շուրի, մեկ «ն» է գրվում, իսկ եթե ունի՝ երկու: Բերենք օրինակներ.

Նրաժշտութիւն—երաժշտութիւնն, նախադասութիւն—նախադասութիւնն, գրչութիւն—գրչութիւնն, միաբանութիւն—միաբանութիւնն:

Նույն օրենքով հապավվում են և «թիւն» վերջավորութիւն ունեցող բառերը.

քաջութեան—քաջութե, քաջուե, քաջւե,

քաջութեանն—քաջութեան, քաջուեն, քաջւեն,

քաջութեամբ—քաջութեբ, քաջուեբ, քաջւեբ,

ուրախութեան—ուրախութե, ուրախուե, ուրախւե,

ուրախութեանն—ուրախութեան, ուրախուեն, ուրախւեն,

ուրախութեամբ—ուրախութեբ, ուրախուեբ, ուրախւեբ, և այլն:

Դրեթե միշտ հապավվում են «եալ» վերջավորութիւն ունեցող բառերի վերջավորութիւնները.

տեսեալ—տեսել, բերեալ—բերել, գրեալ—գրել, տարեալ—տարել, գնեալ—գնել, թուեալ—թուել և այլն:

Անհամեմատ դժվար վերձանելի են այն հապավումները, որոնք հապավվում են մի տառով: Զիշտ է, նրանք թվով քիչ են,

քայց ամենից շատ նրանք են շփոթության պատճառ դառնում։
Թվենք նրանց կարեւորները.

ը—ընդ

սլ—սլէս

գ—որգոն

կ—կամ

ը—որպէս

ք—քան

ը—որպէս

շ—շաբաթ

Բարդաղման դեպքում նշված տառերը պահում են իրենց
հապավումը վիճակը. օրինակ՝

ըռնայն—ընդունայն, բամեն—բնդամեն, ըդէմ—ընդդէմ,
ըէր—ընդէր, ըունելութիւն—ընդունելութիւն, ըարձակ—ընդար-
ձակ, ըզրկել—ընդզրկել, ըինքեան—ընդինքեան, ըհանութ—ընդ-
հանութ և այլն։

ալսալ—ալսալէս, որալ—որալէս, իսկալ—իսկալէս, սլ սլ—
սլէս սլէս, հոյնալ—նոյնալէս, ընդհանրալ—ընդհանրալէս և այլն։
որք—որքան, ալսք—ալսքան, քղի—քանզի, քքալ—քառքալ,
նոյնք—նոյնքան և այլն։

շ տառը, որ հապավումն է հանդիսանում շաբաթ բառի, եր-
բեք առանձին չի գրւում, այլ բարդացված վիճակով.

բշի—երկուշաբթի, գշի—երեքշաբթի, դշի—չորեքշաբթի, եշի—
հինգշաբթի (շաբաթի մյուս օրերի անունները հապավում են
այլ ձևով—կրկի—կիրակի, ութթ—ուրբաթ, շքթ—շաբաթ)։

Տաղարաններում, դանձարաններում և շարահանոցներում
պատահում են հապավումների ձայնի ութը եղանակները.

աձ—առաջին ձայն, ալ—առաջին կողմ,

բձ—երկրորդ ձայն, բլ—երկրորդ կողմ,

գձ—երրորդ ձայն, գլ—երրորդ կողմ,

դձ—չորրորդ ձայն, դլ—չորրորդ կողմ։

Տեքստերում, համեմատաբար, շատ են պատահում մեզ եր-
կու տառով կառարկած հապավումներ, որոնցից կարեւորները
հետեւյալն են.

թլ—թուական, թվ—թվական, սթ—սուրբ,

լղ—լաղապա, վս—վսան, ուլ—որպէս,

վր—վերայ, քճ—քահանայ, նխ—նախ,

խձ—խոճայ, հց—հարց, պխ—պատասխան,

սս—սապէս, ոսլ—որպէս, ամ—ամենայն,

մդ—մարդ, քզ—քլուխ,

ած—աստուած, ալ—աստուծոյ, ալ—աստծալ,

տը—տէր, տն—տեան, տէ—տէնունէ և այլն:

Ի նրանուններն զգալի մասը հապավւոյնսն են նրկու տառով.

ոմ—օմա, դմ—դմա, նմ—նմա,

սք—սքա, դք—դքա, նք—նքա,

սք—սքա, դք—դքա, նք—նքա,

սք—սքա, դք—դքա, նք—նքա:

Համարական թվականներն հաճախ հապավւոյնսն են հետև-

ովայնները.
երկդ—երկրորդ, երդ—երրորդ, չորդ—չորրորդ,
Հինգրդ—հինգերորդ, վեցդ—վեցերորդ, եւթնրդ—եւթներորդ, և
այլն:

Հապավւոյններն մեջ բաղմամբիվ են երեք և ավել տառերից
կազմվող հապավւոյնները: Բերենք մի քանի բնորոշ օրինակներ.

բզկ—բազուկ, ամի—ամենայնի, դրձլ—դարձնալ,

հնալ—հանապազ, յոշ—յառաջ, պրն—պարոն,

տրմբ—տերաժ, յրժմ—յորժամ, վսկ—վասն ալսորիկ,

կապ—կալիսկոպոս, նրաձայն—նորաձայն, ճշմրտ—ճշմարիտ,

ահնուի—արինուլին (օրհնուլին), քզի—քանզի,

տնդ—տեսանդ, քղք—քաղաք, ժմկ—ժամանակ,

փիկ—փոխանակ, կթկս—կաթողիկոս, մննդ—մանաւանդ,

պտճա—պատճառ

յատն—յաւիտեան

բնւի—բնութիւն

պտկր—պատկեր

մակցի—մակացութիւն

շրժի—շարժութիւն

ժղվ—ժողով

նշնւր—նշանաւոր

հարկ—հասարակ

շրնկ—շարունակ

դրի—դրութիւն

յտկի—յատկութիւն

արդլ—արարեալ

բաղմի—բաղմութիւն

անդ—անեալ

դժս—գործս

պարզմ—պատերազմ

զզն—զազան

կնգնւ—կանգնեցաւ

առլւ—առաւելու

չփլ—չափեալ

արարյ—արտաքոյ

ցւցնէ—ցուցանէ

հտժ—հատաժ

սկս—սակս

վղվղկի—վաղվաղակի

արրժ—արարաժ

շրշնք—շարշարանք

քննի—քննութիւն

իւց—իւրեանց

խարլ—խաւարեալ

կճցւ—կաճեցաւ

Թգր—թագաւոր
 մղց—մեղաց
 մհւն—մահւան
 յրի—խարութիւն
 բար—լուսաւոր
 խնդր—խնդութեամբ
 կարծ—կատարած
 բժնմն—բաժանեմն
 հպւ—հեքսիւ
 ճշտ—ճշմարիտ
 արշւն—արարչութեան

յոշ—յառաջ
 հշշ—հինգշաբթի
 ահլ—օրհնեալ
 դղրէ—ղաղարէ
 շւղ—շաւիղ
 կրատ—կորուստ
 պկս—պակաս
 բլր—բոլոր
 հսլ—հասեալ
 աղղկց—աղաղակեաց

վարչ—վասնորոյ, նհշ—նահանջ, նհպ—նահիպ,
 դր—գինւոր, վրդ—վարդապետ, բրր—բարեբար,
 բղմ—բաղում, ժմկ—ժամանակ, կմւ—կամու,
 յրժմ—յորժամ, շրշր—շարաշար,
 ասցւ—ասացաւ և այլն:

Հապավումների ժամանակ, սովորաբար, բնկնում է «ոս-ի»
 առաջին «ո» տառը: Բերենք մի քանի օրինակ.

գլխուի—գլխութիւն, մքր—մաքուր, ցւլ—ցուցեալ և այլն:

Տեքստերում հապավում են ոչ միայն հասարակ... անունները,
 այլ և հատուկ անունները: Բերենք կարեւորներից մի քանիսը.

Եգս—Եգիպտոս, Սհկ—Սահակ, Յս—Յիսուս,
 Յի—Յիսուսի, Յէ—Յիսուսէ, Մվս—Մովսէս,
 Սրգս—Սարգիս, Վրդ—Վարդան, Քս—Քրիստոս,
 Քի—Քրիստոսի, Շպհ—Շապուհ, Իէդ—Իսրայէլ,
 Եղմ—Երուսաղէմ, Դւթ—Դաւիթ, Յհս—Յովհաննէս,
 Կրկ—Կիրակոս, Գրգր—Գրիգոր, Հրկլ—Հերակլ,
 Դգիկ—Դադիկ, Թրս—Թորոս, Լն—Լեւոն և այլն:

Նշանագիր իմաստնոցում պատահում են հապավւած հատուկ
 անուններ, որոնք, սովորաբար, կազմւած են լինում մի առաջից
 միայն: Վերցնում են անվան առաջին տառը և միան զերեքի նման
 բայց փոքրիկ կտր դնում:

Բերենք մի քանի բնորոշ օրինակներ.

Գ—Գէորգ
 Զ—Զաքարիա
 Է—Էմանուէլ
 Թ—Թէոփրոս
 Կ—Կոնստանդնուպօլիս

Ս—Սիմիւս
 Յ—Յովհաննէս
 Պ—Պետրոս
 Տ—Տրդատ
 Ղ—Ղուկաս և ալլն:

Բացի իւրաձ հապաղման տեսակներէից, կան և հապա-
 գումներ զազափարագրերով, որոնցից կարեւորները մենք անհրա-
 ժեշտ ենք համարում բերել ստորև.

օհ—Ահարոն
 ղի—աղանի
 ղթ—աղօթք
 ալմ—Ամբակում
 աև—ամենեքեան
 մթ—ամօթ
 ն'—այնուհետև
 սփ—այսչափ
 սրկ—այսորիկ
 յր—այսօր
 դմ—անդամ
 դբէ—Անդրէ
 նթի—անօթի
 սց—ասաց
 ածծ—աստուածածին
 րրհ—արհամարհալ
 բզկ—բազում
 բխմ—բարեխնամ
 բի—բարի
 բռ—բարբառ
 բուլ—բարբառել
 կնդկալ—կենդանակերպ
 բր—բարեբաթ
 բն—բարեբանալ
 բձ—բարձր
 դր—Բարսեղ
 բբջլ—բորբոքել
 բլ—բարաստան

դա—Գալուստ
 զն—զարուն
 դբ—Գաբրիէլ
 դդթ—դալթակզել
 զռ—զաւառ
 դ—զեղեցիկ
 դշ—գիշեր
 դլա—Գողգոթա
 դ—դատաստան
 դօ—դահեկան
 դր—դատաւոր
 դմ—դրամ
 դր—նդիաղար
 դւր—գինւոր
 դկ—զոր օրինակ
 դձ—զուարճ
 րթ—ընթերցում
 թւ—թև
 թւր—թևաւոր
 ժր—ժառանգաւոր
 ժկլ—ժուժկալ
 բւ—իբրև
 իրց—իւրեանց
 լշ—լանջ
 լր—լուսաւոր
 խն—խնդրում
 խ—խոստովան
 ծյ—ծառայ

կդ—կարդ
իկէ—կիրակէ
հկռ—հակառակ
հձկ—համարձակ
հճր—հանճար
Հս—հաւասար
հմ—հրամայել
կ—կեկ
հր—հոգնաւոր
հգ—հառադայթ
հկ—հնճողակ
հ—հշմարիտ
մհպր—մահապարտ
մկ—մտնաւանդ
Մսէ—Մանասէ
մր—մեղաւոր
եսբ—Մեսրոպբ
յդն—Յորդանան
Հօ—Յոռաւորանոս

նկտ—նահատակ
շհ—շնորհ
դց—որդոց
ւյ—ութեանց
ւխր—ուխտաւոր
րխ—ուրախ
շր—շարշար
շխմ—շարախօս
շիր—շարիւտոր
ճռ—պատճառ
ջրղ—ջրհղեղ
սմտ—սանդարամետ
հն—վախճան
ստ—վերուտ
Վս—Վրթանէս
տպ—տաղնապ
պտ—պարարտ
փտ—փայտ
քծ—քարկոծ
րկ—օրինակ

ԳԼՈՒԽ ՅՈԹՆԵՐՈՐ

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական մատենագրության մեջ կետագրությունը առաջին անգամ հանդիպում է հղի: Կարելի է ասել, որ չորսականյուր ժամանակաշրջան ունեցել է իր կետագրությունը:

Հնագույն շրջանի ձեռագրերում և վիմագիր արձանագրությունների մեջ, սովորաբար, դործ է անվել միայն երեք կետադրական նշան—Հապավման նշանը, միջակետը և մեջբերումնեի նշանը:

Միջակետը հին տեքստերում՝ ռմի քառակուսու ձև (") և դրվում է ոչ թե սովորականի նման տողի վրա, այլ՝ տողից վերև: Նա ունի և՛ միջակետի, և՛ վերջակետի նշանակություն (հին տեքստերում մեր ներկա վերջակետը գեղ չի գործածվում):

Հապավման նշանը ունի և ձևը և դրվում է միայն տարանական կոշվոց բառերի վրա: Այս մասին մենք խոսել ենք արդեն վերևում:

Մեջբերման նշանը՝ S ձևով, դրվում է մեջ բերվող հատվածի բոլոր տողերի առջևում:

Դրությունը միանգամայն փոխվում է 11—12-րդ դարերում: Մեկսօժ այդ ժամանակից հայկական տեքստերում սկսում են մտադր դործել բազմաթիվ կետեր և նշաններ, որոնցից կարևորները հետևյալներն են.

հատերազան	երկար
հերքական	սուղ
շեշտ	ենթամնա
բութ	ապաթարց
թավ	ստորաա
սոսկ	հարցական նշան

Կետադրական նշանները, համեմատաբար, ավելի շատ են շարահնոցներում, դանձարաններում, հատկապես՝ խաղաղքերում: Տասնչափ նոր նշանների կարելի է հանդիպել այնտեղ: Այդ նշաններից մի ցանկ անհրաժեշտ ենք համարում բերել ստորև, որը, կարծում ենք, կարող է օգտակար լինել նաև երաժշտությանը քրաղվող մեր մասնագետների համար: (Նշանադրերը մենք վերցրել ենք ՀՍՍՌ Մատենադարանի № 7040 ձեռագրից):

շեշտ	վերնախաղ
զարկ	ներքնախաղ
դիր	դում
լերկ	խոսրովային
խոնճ	քարքաշ
քաշ	փաթուփ
թուր	թաշ
սուր	ծնկիկ
բեր	դլոր
ծոցբեր	բարձր
բենկորճա	վերքաշ
ձայնկորճա	մի մնաւոր
որճա	փուշ
խաղ	թավ

(ՀՍՍՌ Մատենադարան № 7040, ր. 97ա):

Բերված նշանները, փաստորեն, կետադրության նշաններ չեն, այլ երաժշտական յուրահատուկ նոտաներ: Երաժշտության պատմությանը դրադվող մեր գիտական աշխատողներից ոմանք ուսումնասիրում են այդ նշանները և եթե հնարավոր լինի նրանց եղանակները վերծանել, այն ժամանակ մենք ո՛չ միայն կկարողանանք կարգալ նշանադրված միջնադարյան հայկական դանձերը և տաղերը, այլ և երգել այն եղանակներով, ինչ եղանակով

Եւ զի հապարակեալ զիսկս զի
պատճառս հարկի իւր հապարակի զիսկս
անուն իւր հարկի :

Եւ զի հապարակի իւր հապարակ
զիսկս զի ան հապարակ զիսկս զի
անուն իւր հարկի :

Եւ զի հապարակեալ զիսկս զի
պատճառս հարկի անուն իւր հարկի
անուն իւր հարկի :

Եւ զի հապարակեալ զիսկս զի
պատճառս հարկի անուն իւր հարկի
անուն իւր հարկի :

Եւ զի հապարակեալ զիսկս զի
պատճառս հարկի անուն իւր հարկի
անուն իւր հարկի :

Եւ զիսկս զի ան հապարակ զիսկս զի

երգել են նրանք: Ի դեպ, սրանց վերձանությամբ երկար զբաղվել է Կոմիտասը և ըստ տեղեկությունների, զրախան արդյունքների է հասել:

Այժմ մի քանի խոսք կետադրության առանձին նշանների գործածության մասին:

Այստեղ, ամենից առաջ, ուշադրության արժանի է կարճ և երկար վանկերի նշանագրումը, որն այժմ դործածությունից դուրս է հանված: Հայկական բառերը միջին դարերի հայկական ձեռագրերում, հունարեն գրության նման, շեշտադրված են կարճ կամ երկար նշաններով:

Վանկի երկարացման և կարճացման համար միջնադարյան հայկական ձեռագրերում գործ են ածվել երկու նշաններ՝ շեշտոտը և պարոչի: Առաջինը համապատասխանում է հունական ափսոսին (accutus), իսկ երկրորդը՝ ցիրկումֆլեքսին (circumflexus), ըստ որում, հունարենի նման նրանք բաժանվել են տեսակների և ունեցել են իրենց անունները: Շեշտոտի տեսակներն են՝ ա) յանդաշեշտ (oxytonon), երբ շեշտը բառի վերջին վանկի վրա է (Սմբատ, Սահակ և այլն), բ) յարաշեշտ (paroxytonon), երբ շեշտը նախավերջին վանկի վրա է (Պետրոս, Յակոբ և այլն), և գ) նախաշեշտ (paroxytonon), երբ շեշտը երրորդ վանկի վրա է վերջից (Դիլիկոն, Սիմեոն և այլն): Պարոչի տեսակներն են՝ «յանդապարոչի» (երբ վերջին վանկն է շեշտվում) և «նախապարոչի» (երբ նախավերջին վանկն է շեշտվում):

Չեռագիր և հնաառիպ տեքստերում բառերի վրա հաճախ կարելի է հանդիպել զանազան տեսակ նշանների, որոնց մի քանիսի հետ անհրաժեշտ է անպայման ծանոթ լինել:

«Ա»-ի վրա թավ է դրվում «վ» կարգալու համար՝ յողում^Ած — յողված^Ա, տուեալ^Ա — տվյալ^Ա, անուանեալ^Ա, — անվանյալ^Ա և այլն:

«Ա»-ի վրա թավ է դրվում «ա» և ոչ «օ» կարգալու համար. դաւառ^Ա, աւար^Ա, աւատ^Ա, դրաւ^Ա, աւարտեցաւ^Ա և այլն: Որոշ տեքստերում թավի նշանը փոքր ինչ տարբեր է լինում. աւար^Է, լաւ^Է, աւտրբ^Է և այլն:

«Ի»-ի վրա թավ է դրվում «ի» և ոչ «յո» (յօ) կարգա-

լու համար—բանիւ, գործիւ, խղճիւ և այլն:

«Ա»-ի վրա լինի կոշիկով նշանն է գրվում «օ» կարգալու համար—մար, [∞]դգան, [∞]առաւատ, [∞]արիւնակ և այլն:

«Դ»-ի վրա ապաթարց է գրվում «ը» կարգալու համար—արդ, Հերակղ, ալգակերպեալ, Աքիղէս, Հեղինացի և այլն:

«Ու»-ի վրա կըտր կոշիկով նշանն է գրվում ոչ թե սովորական «ու», այլ «ով» կարգալու, համար. մերու, ձերու, լալու, և այլն: (Այս նշանագիրը քիչ է գործածվում):

«Ի»-ից՝ առաջ ապաթարց է գրվում նախորդ բառից անջատելու համար, 'ի նոսա, 'ի մեղ, 'ի մէնջ և այլն:

«Մի'»-ի վրա շեշտ է գրվում է թվական «մի»-ից տարբերելու համար— չորժամ դաշ օտարական մի' մի' թողոյր փողոցն»:

«Ո՛» ձայնարկութեան վրա շեշտ է գրվում «ով» կարգալու նպատակով—«ո՛ դու եղբայր», «ո՛ մարդ բանական» և այլն:

Բառի վերջի ձայնավորի վրա ապաթարց է գրվում «յ»-ի փոխարեն՝ երբ «յ»-ին չի գրվում. «վասն տակո՛», երթ բացօթեա՛ տեղ մի», «կիրակօրեա՛ ժամանակ» և այլն:

Ա-ի փոխարեն գործ էածվում նրա մի ճյուղը միայն—«գնոց» «աւոց» և այլն: Այդ հաճախ է պատահում առանձնապես տաղերում:

Զ-ից հետո ապաթարց է գրվում, երբ զի-ից հետո սկսվում է մի բառ, որը սկսում է «ի»-ով. «ըլմաստոնոց», «զինա», «զիմանալի բանք» և այլն:

Հաճախ բառի վերջից «է»-ն չի գրվում և ապաթարց է գրվում, երբ հաջորդ բառը ձայնավորով է սկսում. «եթ՝ ասէ», «եթ՝ ամենայն մարդ» և այլն:

Տաղերում հաճախ «ե»-ի՝ փոխարեն գործ էածվում է միայն՝ «մարդ և անասուն», «ծագիկ և վարդ» և այլն:

Հապավման համար գործ են ածվում հետևյալ նշանները.

—
ար==տէր

—
սբ==սուրբ

—
զրց==զօրաց

—
շբթ==շաբաթ

Ընդգծման համար կարճիւր մեղանով սովորաբար գրւում է հետեւյալ նշաններից մեկն ու մեկը.

~~~~~

~~~~~

uu uu uu uu uu uu

uu uu uu uu uu uu uu uu

oo oo oo oo oo oo oo oo

Վերջակետի համար գործ են ածվել հետեւյալ ձևի նշանները:

: :- :. :. :. :v :u :w :ww

Մոռացված կամ տեքստում սխալ գրված բառերը լուսանցքում գրելիս առջևում գրվում են այս նշանները:

o . s 6

Նրանք գրվում են ինչպես լուսանցքում բերված բառի առջևում, այնպես և տեքստում համապատասխան տեղում:

Բարդ բառերի տակից գրվում է ստորագաւ, օրինակ՝ մակի-
դիր, համանուն, արտդիւտ, երկրաշարիք, կառավարել, քահանայա-
պետ և այլն:

Նոր գլուխ սկսելիս լուսանցքում գրվում են հետեւյալ նշաններ-

III E + 4

բով (Այս նշանները գործ է ածվում նաև հնատիպ գրականու-
թյան մեջ):

Տողադարձի ժամանակ ո՛չ թե ստորադաս է դրվում, ինչպես ..
այժմ, այլ կլոր՝ լըր՝ ի՛նն, ի՛ նը՝ մին, ըզ՝ լըման և այլն:

Մատանայի, աղանդավորի և շատածու անունների պատվի
նշանը դրվում է հաճախ ո՛չ թե վերից, այլ ներքևից, օրինակ՝
ստանայ, ած (չատտուած) և այլն:

— Հաջորդ էջի սկսվող բառից մի քանի տառ կամ ամբողջ
բառը հաճախ դրվում է նախորդ էջի ներքևում:

Տ Այս նշանը դրվում է ուրիշ տեքստերից արտագրված քաղ-
վածքների տողերի սկզբում:

✓ նշանը, ինչպես արդեն ասել ենք վերևում, դրվում է հու-
նաբենի ազգեցությունամբ կարճ վանկերի վրա. «որպես ասեն»,
«չորժամ եկն» և այլն:

— դրվում է երկար վանկերի վրա— «ո՛ մա՛յր» և այլն:

Հարցական նշանը դրվում է սովորական ձևով— «ո՞րպես,
հի՞բար, ո՞րդոն, հի՞զան, օ՞րբար» և այլն:



ԳԼՈՒԽ ԱԽՓԱՐԱՐԻ

ԳԱՂԱՓԱՐԱԳՐԵՐ

Մաղադարիի դժվար ձեռք բերելու հանգամանքը վաղուց է ստիպել մատրիկանց գրչության մեջ հաճախ կրկնվող բառերը փոխարինել սլաշմանական կարճ նշաններով, որոնք գրականության մեջ հայտնի են դաղափարագիր անունով (индеография): Այդ տերմինը միջազգային գրականության մեջ գործ էածվում «հիբրոլիֆ» ձևով: Գաղափարագրեր են մեղ հանդիպում բոլոր ժողովուրդների լեզուներով գրված հնագույն ձեռագրերում, որոնց թվում և հայկականում:

Միջին դարերում հայկական ձեռագրերում գործածված գաղափարագրերը հայաբովել են առանձին ցուցակների մեջ, որոնք հաճախ են պատահում մեղ քերականական բովանդակություն ունեցող ձեռագրերի ժողովածուներում: Նրանք, սովորաբար, վերնագրված են լինում՝ «Նշանագիրք իմաստնոց», «Բացատրութիւն առաջնոց գրոց» «Մեկնութիւն նշանագրաց», «Նշանագիրք հայոց և մեկնութիւն նոցին», «Նշանագիրք» և այլն: Այդ ժողովածուներից լավագույնը ընդօրինակված է ՀՄՍՌ Մատենադարանի № 2371 ձեռագրում, որն ունի 14-րդ դարի գրչություն և գրված է Կաֆայում: Այստեղ «Նշանագիր իմաստնոց»-ը շարադրված է որպես Արիստակես Գրչի և Գևորգ Սկևռացու գրչության արվեստի շարունակության հատված: Կաֆայի ընդօրինակություն ունեցող «Նշանագիր իմաստնոց»-ի այս ժողովածուն պարունակում է 312 նշանագիր:

Գաղափարագրերի մի շարք ցուցակներ են հրատարակվել: Առաջին հրատարակիչներից մեկն է հանդիսացել Մ. Էմինը, որը «Նշանագիր իմաստնոցը» հրատարակել է իր «Об армянском алфавите» աշխատության մեջ: Սա տեղավորված է որպես շոր-

բորդ համկելած Խորենացու 1858 թվի ուսերեն թարգմանության: Հետագայում նա թարգմանվել է հայերեն և ֆրանսերեն: Էմինը հրատարակել է 54 հիերոգլիֆ նշաններ: Այնուհետև ցուցակներ են հրատարակել Գ. Վ. Սրվանձախանը՝ «Թորոս Աղբար»-ում, Պալյանը՝ «Նշանագիրք հայոց» վերնագրով աշխատության մեջ, Ի. Վ. Սրբաբանը՝ «Հանդէս ամսօրեայ»-ում (1902 թ., էջ 201—202), Ֆրեսերիք Մուրաարը՝ «Հանդէս ամսօրեայ»-ում (1903 թ. համարներում) և ամենից կատարյալը՝ մեծանուն գիտնական ախպ. Հ. Աճառյանը՝ իր «Հայոց գրերը» աշխատության մեջ: Հարգելի ախպրեմիկոսի երկու ցուցակները պարունակում են 510 նշանագրեր:

«Նշանագիր իմաստնոց»-ի հրատարակող հեղինակներից Էմինն այն տեսակետն է հայտնել, որ իբր այս «նշանագրերը» այն պատկերագրերն են (հիերոգլիֆները), որոնք գործ են ածվել Հայաստանում բեկեռագրերից հետո: Նրա կարծիքով, դոյութուն են ունեցել պատկերագրերի բնվարձակ ցուցակներ, որի պատճառից է այս մեղ հասած ցանկը: Այս մասին մենք խոսել ենք առջևում և չենք ուզում կրկնել:

Նվել են նաև կարծիքներ, որ «Նշանագիր իմաստնոց»-ը հին Հայաստանում գործ է ածվել որպես սղագրութուն: Որպես փաստ մատնացույց են ահում Ագաթանգեղոսի այն ավանդութունը, որ իբր Լուսավորչի կախված վիճակում տանջվելու ժամանակ ազոթելիս նրա խոսքերը գրում էին «առենակալ դպիրքն նշանագրաց» (Ագաթանգեղոս, 1909 թ., էջ 99): Այս պնդող գիտնականների կարծիքով, նշանագրաց դպիրները — գրանք սղագրողներն էին: Սակայն նորադույն ուսումնասիրությունները պարզել են, որ այդ տեսակետները անհիմն են: Այդ պարզ երևում է «Նշանագիր իմաստնոց»-ի ուշագիր քննությունից:

Ամենից առաջ, «Նշանագիր իմաստնոց»-ի նշանագրերի մի զգալի մասը համառոտագրություն են տվյալ բառի առաջին տառի.

—	ը—ընդ
դ—դեղեցոկ	դ—դարաւոր
հ—հիվանդ	հ—հշմարիտ և ալն:

2) Որոշ դեպքերում վերցրել են բառի առաջին տառը և վե-

բնում ավելացնել օ նշանը (այս մասին խոսել ենք հապավում-
ների հապակցութեամբ:

3) Վերցրել են նաև բառի առաջին և վերջին տառերը և հա-
մաստատգրել՝

բո—բարբառ	դթ—Դաւիթ
դո—Դաւոսա	բի—բարի
զկ—զոբ արինակ	զլ—Դանիէլ
կզ—կարզ	

և այլն:

4) Կան նշանադրեր, ուր առաջին տառի հետ վերցրել են ո՛չ
մե վերջին, այլ միջին տառերից մեկը.

թզ—Թադաւոր	տտ—տրամեաց
զշ—զիշեր	զւր—զինւոր

և այլն:

5) Կան դեպքեր, երբ հապավւած տառերը փոխում են իրենց
տեղը՝

դդ—Գեղեցիկ փոխանակ դդ

նբ—Բենիամին (փոխանակ բն), և այլն:

6) Բազմաթիւ են այնպիսի դեպքեր, երբ ո՛չ մե առաջին
կամ վերջին տառերով են հապավում, այլ վերցնում են բառի
միջից մէկ կամ երկու տառ: Օրինակ՝

դթ—աղօթք	նց—խրեանց
զզ—անզունդ	ջ—սղջակէջ
ստ—վերտատ	պտ—տարապարտ

և այլն

7) «Նշանադիր իմաստնոց»-ում բուն գաղափարագրերը շատ
քիչ մասն են կազմում: «Նշանադրեր»-ի մի մասը ճիշտ համապա-
տասխանում է այն նկարին, որի համար բերված է եղել նա: Այս
դեպքում պարզ ձևով նկարում են այն իրը, որի սիմվոլն են
նրանք: Այդպիսի բառերից են:*)

աթու	կշեռք
աստղ	աստիճան
լուսին	լյառն

*) Նշանադրերի նկարները տես հաջորդ ցանկում:

պտուղ	մատանի
թռչուն	տապանակ
եղջյուր	լեզու
վիշապ	խաչ
սեղան	գալտղան
նշխար	ճակատ
շուշան	ճանապարհ
պատվանդան	մարդ
սիրտ	կնոք
եթաժշտութիւն	տկանջ
աշտարակ	թաղաւոր

և այլն:

Կան նշանագրեր, որոնք իմաստով են դադարաբազրւած: Ահա պիտի դադարաբազրերից են (նկարները տե՛ս հաջորդ ցանկում):

միջնորդ—մի կեռը՝ մի կողմը աջ թեքւած, մյուսը՝ ձախ,
աղբյուր—մի կետից սկսող և հոսող,
փոս—ներքևի խոր կետ ընկած տարածութեամբ,
եկեղեցի—վերևում վիմաքարով,
տես—ձեռք՝ ցուցամատը պարզած,
փառասեր—խրար վրա դրւած ուռեցնող կլորներ,
ծով—կլոր տարածութիւն՝ ծովի անհունութիւնը պատկերող,
սպասավոր—շերտի,
սահման—չորս դիկներ՝ չորս ուղղութեամբ,
սեր—ֆալլուս,
հափշտակիչ—բաց արած բերան,
հեթանոս—աղոթարան տաճարի ձևով՝ հակառակ թեքւած,
կռապաշտ—կրակատուն,
կեղծավոր—լեզու, որ երկու մասի է բաժանւած,
գարուն—թռչող թռչուններ իրար վրա,
բուրաստան—մոտիկ նկարւած երեք ծաղիկներ,
արվեստ—ծաղիկ՝ կողքերը որոշ ձև տւած,
ահալոր—նետ, որ ահ է պատճառում,
արծաթասեր—բաց արած բերան դեպի աջ,
գինի—տիկ,

առաւելոտ—լուսինը և արեգակը իրար մոտիկ,
 ապստամբ—երկու մարդիկ պոչերով,
 ազեղնաւոր—նետ ու ազեղ

և այլն:

Ստկայն նշված դադաւարագրերից մեծ մասը մեր հին և միջ-
 նադարյան մատենագրութեան մեջ, լինի ձեռագրերում, թե վի-
 մագրերում, գրեթե չեն գործածւում: Ձեռագրերում գործածակա-
 են և լավ պիտի ճանաչել հետևյալ դադաւարագրերը.

✱	աստղ
Σ	լուսնթաղ
⌒	երևակ
☾	լուսին
☼	փայլածու
☾	լուսաբեր
☼	արեգակն
☼	հրատ
⌒	աշխարհ
♂	երկիր
♀	երկինք

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ թված դադաւարներէ
 հոլովման ժամանակ ընդունված վերջավորութիւնները և նախդիր-
 ները գրվում են: Այսպես օրինակ՝

յճէ	— յարեգակէ
—	— աստեղք
☼	— երկնից
☼	— լուսնէ
☼	— դաշխարհս
♂	— երկրի
☼	— աշխարհագրութիւն
☼	— երկնակամար

Պատահում են դեպքեր, երբ դադաւարագրերը բարդվում են
 այլ բառի հետ, այսպես օրինակ՝

«Նշանագիր իմաստնույ»-ի մեջ կան մի շարք տյնպիսի գաղափարադրեր ևս, որոնք չեն կապվում ո՛չ իմաստի և ո՛չ էլ պատկերի հետ և որոնք, հավանական է, այլ ժողովուրդների պաշտօնագրաֆիայից են առնված: Այդպիսի գաղափարադրերից կարելի է չեքեք մի քանի օրինակ.

Յ	— ալսինքն
Ե	— որպէս
Յ	— ո՞րպէս
Զ	— ըստ
Յ	— ալսպէս (կամ սապէս)
Յ	— ամենայն
Զ	— ընդ

Ձեռագրերից օգտվողներին դյուրություն տալու նպատակով, անհրաժեշտ ենք համարում բերել նշանագրերի ամբողջական ցանկը՝ վերցնելով այն ՀՍՍՌ Մատենադարանի № 2371 (թ. 73 ա—75 բ) և 715 (թ. 146 ա—148 ա) ձեռագրերից, որը մինչև այժմ չի օգտագործված: Տեղ տեղ մենք օգտվել ենք ալադ. Հ. Աճառյանի հրատարակած ցուցակից: Տեխնիկական դժվարությունների պատճառով ցուցակից դուրս ենք բերել հապավումները և տեղափոխել հապավումներ զլուխը:

Ս	Աբրահամ	Ս	Անապատ	Ս	Անտիոք
Ս	Ազգ	Ս	Անառակ	Ս	Անցաւոր
Ս	Ազգական	Ս	Անասուն	Ս	Աշակերտ
Ս	Աթոռ	Ս	Անարատ	Ս	Աշխարհ
Ս	Ականջ	Ս	Անարգ	Ս	Աշուն
Ս	Աղ	Ս	Անդաստան	Ս	Աշտանակ
Ս	Ահաւասիկ	Ս	Անդոն	Ս	Աշտարակ
Ս	Աղանդ	Ս	Անդունդ	Ս	Ապստամբ
Ս	Աղբիւր	Ս	Անեղջ	Ս	Առաքատ
Ս	Ամառն	Ս	Անզգամ	Ս	Առաջք
Ս	Ամբարիշտ	Ս	Անթառամ	Ս	Առաջնորդ
Ս	Ամենայն	Ս	Անիրաւ	Ս	Առաւել քան
Ս	Ամենեցուն	Ս	Անձն	Ս	Առաւտ
Ս	Ամսեան	Ս	Անճար	Ս	Առաքել
Ս	Այնչափ	Ս	Անմահ	Ս	Առիւծ
Ս	Այնորիկ	Ս	Անողորմ	Ս	Առողջ
Ս	Այսպէս	Ս	Անպարծ	Ս	Առու
Ս	Անակ	Ս	Անսպառ	Ս	Ասպարէզ
Ս	Անապական	Ս	Անվախճան	Ս	Աստիճան

Ա	Ապարիզ	Բ	Բենիամին	Գ	Դրամ
Ֆ	Աստղ	Ը	Բերան	Ձ	Դրախտ
Զ	Արարած	Թ	Բիզանդիոն	Ճ	Դրունք
Շ	Արդար	Ծ	Բուրդն	Ժ	Եզնկիա
Տ	Արեւելք	Կ	Գուազան	Լ	Եկեղեցի
Վ	Արեւմուտք	Դ	Գերեզման	Խ	Եղեցի
Պ	Արծաթասեր	Վ	Գթած	Ծ	Եղբայր
Ջ	Արճիճ	Ծ	Գինի	Շ	Եղջիւր
Ե	Արուեստ	Պ	Գործք	Ն	Եռայի
Բ	Արտեան	Թ	Գլուխ	Տ	Երածիշտ
Փ	Արքայութիւն	Ծ	Գոռան	Ծ	Երեմիա
Գ	Աւետարան	Ղ	Դանիէլ	Ս	Երեւոյ
Դ	Բարեկութիւն	Է	Դատաստան	Ը	Երկիւմն
Ջ	Բազում	Դ	Դատաւոր	Գ	Երկիր
Ը	Բաժան	Ձ	Դատաւան	Կ	Երկիւղած
Շ	Բանական	Ղ	Դաւիթ	Ն	Երկպառակ
ՅՅ	Բանաստիճ	Դ	Դժոխք	Ն	Երկուորեակ
Զ	Բարեպաշտ	Թ	Դժոխք (ալլ)	Ծ	Եփրեմ
Բ	Բաւական	Ժ	Դոռոն	Պ	Զատակ

Յ	Զմեղի	Հ	Իշխան	Ն	Նսրան
Զ	Զողիակոս	Ի	Իսկ	Ն	Նսրնո-րդ
Յ	Զուարակ	Ե	Ի սկզբանի	Կ	Մաշիկ
Յ	Զօրարարիկ	Յ	Լարարանշիր	Ճ	Մանօթ
Է	Զօրաւոր	Յ	Լեւոն	Յ	Մառայայ
Զ	Զօրութիւն	Օ	Լեզու	Կ	Մառայ
Է	Զուրկ	Ե	Լուաւ	Գ	Կաթողիկոս
Ս	Ընդհանոր	Զ	Լուսաբեր	Ե	Կաթողիկէ
Է	Ընկալ	Յ	Լուսին	Ն	Կատարած
Է	Ընախր	Օ	Լրումն	Թ	Կեղծաւոր
Է	Թաղաւոր	Օ	Լրումն լուսնի	Ծ	Կենդանի
Ս	Թարգման	Ի	Նաշ	Ճ	Կշիռք
Ն	Թշնամի	Թ	Ննամի	Ճ	Կոսպաշտ
Ն	Թռչուն	Կ	Ննամ	Հ	Հալաւ
Ժ	Ժամանակ	Խ	Ննամ	Ճ	Հազորդ
Զ	Ժառանգ	Ո	Ննգրուած	Յ	Համասփիւռ
Ժ	Ժողովուրդ	Օ	Նոնարճ	Է	Համբարձ
Է	Իմաստուն	Կ	Նուտովան	Կ	Համբեր
Է	Իմաստաւթիւն	Կ	Ներ	Կ	Համեմատ
		Դ	Նորամանկ		

Հ	Հայհոյել	Հ	Հնադանդ	Ե	Մարմին
Հ°	Հայր	Է	Հրամայել	Ծ	Մեղքահեղին
Հ	Հայրապետ	Ը	Հոգի	Զ	Մեղր
Հ	Հանգ	Փ	Հրատ	Շ	Մեռնալ
Հ	Հանգիստ	Ս	Հրեշտակ	Շ°	Մերձաւոր
Հ	Հանդարտ	Ջ	Չե	Պ	Միմիանց
Դ	Հանդերձ	Ջ	Չիթենի	Կ	Մինչե
Դ	Հասարակ	Ջ	Չմեռ	Կ	Միջնորդ
Դ	Հարաւ	Դ	Ղամբար	Ն	Միմանգամ
Դ	Հարուստ	Կ	Ղեկ	Ի	Մովսէս
Ե	Հաւատար	Լ	Ճար	Ն	Մօտաւոր
Ե	Հաւատ	=	Ճակատ	Ն	Յակար
Ե	Հեթանոս	Ձ	Ճանապարհ	Ն	Յանդիման
Զ	Հեշտասէր	Ր	Մատանի	Ն	Յայնժամ
Զ	Հեռուոր	Ր	Մատթէոս	Ն	Յանդիման
Զ	Հերմոն	Փ	Մարգարէ	Ն	Յառաջ
Հ	Հիւանդ	Ր	Մարդ	Ս	Յառաջագոյն
Յ	Հիւանդ	Ր	Մարդասէր	Զ	Յարմար
Կ	Հմուտ	Ր	Մարիամ	Ս	Յաւիտեան

Ճ	Յարիշտակել	I	Ոխտկալ	Փ	Պատրաստ
յօԿ	Յետ աշտորիկ	Զ	Ողորմած	Փթ	Պարարտ
յԼ	Յիշատակ	Ե	Ողորմեա	Պ	Պարզե
յԿ	Յխուս	Ջ	Ողջակէզ	Ը	Պարկեշտ
յԶ	Յովնան	Չ	Ողջոյն	Թ	Պարունակ
Ն	Յովսէփ	Ծ	Ոսկի	Ծ	Պղերգ
յԺ	Յորժամ	Կ	Որդի	Կ	Պոռնիկ
յԳ	Յուդայ	Ն	Որպէս	Է	Պսակ
յԴ	Յունանի	Շ	Որոգայթ	ԸԸ	Պտուղ
Թ	Յոմար	Կո	Որովայն	Դ	Պօղոս
Ս	Յօնք	Դ	Որպէս	Թ	Ջնջել
ՅԵ	Նաբուքոդոնոսսոր	Ը	Պայծառ	Զ	Ջութ
Ե	Նաթան	Ղ	Պանդուխտ	Ջ	Սահակ
յԿ	Նախտնձ	Գ	Պատարագ	յ	Սահման
ՆԸ	Նահապետ	Զ	Պատգամ	Լ	Սաղմոս
յԹ	Նշանագիր իմաստնոց	ԸԿ	Պատերազմ	Բ	Սամուէլ
Կ	Շունչ	Լ	Պատմութեան	Թ	Սանդուխթ
Ս	Շուշան	Ճ	Պատշաճ	յԼ	Սատանայ
Ք	Ոխ	Ծ	Պատուական	Կ	Սարգիս

Դ	Սարկավագ	Ջ	Վիշապ	Ջ	Փենհեղ
Ջ	Սառուղ	Ջ	Տաճար	Ջ	Փիլիպպոս
Դ	Սեղան	ԱԿ	Տառարակ	Ջ	Փոխ
ԿԲ	Սերովբե	Ե	Տես	Ջ	Փոխանակ
ԿԲ	Սէր	ԱԿ	Տրամեաց	Ջ	Քաղաք
Օ	Սիրտ	Ջ	Տնանկ	Ջ	Քաղցր
Կ	Սկիզբն	Ջ	Տրտունջ	Ջ	Քաջալերա
Փ	Սնդիկ	Վ	Յանկ	Ջ	Քարոզ
Ջ	Սուղամոն	Վ	Յանկութիւն	Ջ	Քերովբե
Ա	Սոյնպէս	Յ	Յաստամն	Ջ	Քոյր
Ս	Սպասաւոր	Ջ	Յնծա	Ջ	Օգնական
Ճ	Ստեղծ	Ջ	Յորեան	Ջ	Օձ
Ջ	Ստեղծանոս	Ջ	Յուլ (ղող)	Ջ	Օրհնել
Կ	Վասնզի	Ջ	Փայլակն	Ջ	Օրհնութիւն
Ե	Վարագոյր	Ջ	Փառասէր		
Ջ	Վարդան	Փ	Փառասոր		
Կ	Վարդապետ	Փ	Փառք		
Ջ	Վերակացու	Ջ	Փարաւոն		
Փ	Վերին Երուսաղէմ	Փ	Փարթամ		

ԳԼԵԽ ԻՆՆԵՐՈՐԻ

ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեզ հասած հայկական գրությունների մեջ ծածկագրերն ամենից շատ հանդիպում են ձևագրերում և արխիվային վավերագրերում: Ձևագրերում եղած ծածկագրերը, մեծ մասամբ, մեկնություններ են—բանալիներ՝ այս կամ այն ծածկագրության տեքստը կարդալու համար, իսկ արխիվում եղածները—ծածկագիր տեքստեր: Հնում սովորություն է եղել ծածկագիր գրել նամակները և գրությունները, որոնց, դժբախտաբար, քիչ մասն է մեզ հասել: Մեզ հասած ծածկագիր նամակները և գրությունները 18—19-րդ դարերից են և պահվում են, գլխավորապես, արխիվներում:

Ծածկագրերի շարքին են դասվում ո՛չ միայն այն տեքստերը, որոնք գրվել են տարբեր նշանագրերով, այլև նրանք, որոնք սովորական հայերեն տառերով և բառերով որևէ ծածուկ խմատ են հայտնում: Ծածկագրության այս վերջին տեսակն ամենից շատ դժոճ են ածել հայկական գրիչները: Ձևագրերն ընդօրինակող գրիչներն իրենց հիշատակարաններում հաճախ ծածկագիր են հայտնում իրենց անունը կամ գրչության թվականը: Բերենք մի քանի օրինակ:

ՀՄՍՌ Պետ. Մատենադարանի թիվ 4163 ձևագրի գրիչն իր անունը հայտնում է հետևյալ ստանալիոր հիշատակարանում՝

«Ես անախտան գծող սորին,

Որ վեց տառիւ անունս կոչին՝

Գիմն տուալին ու բէն վերջին,

Որ համարով վերաբերին՝

Տաս հազար բոլորովին,

Եւ վեց հարիւր քսան և վեցին,

Որք միտս ունի՝ նա հաւանին,

Եւ որք շունին՝ նա շւարին»:

Գրչի անունը Գրիգոր է. «Գ»-ն բառի առջևում է, «ր»-ն վերջում, և անվան տառերն ըստ իրենց թվագումար նշանակութիւն հալասար է տասը հազար վեց հարյուր քսան և վեցի:

ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի մի այլ ձեռագրում (թիվ 373) բնդօրինակով գրելը ծածկագրով է հայտնում իր ձեռագրերի գրչութեան թվականը.

«Յինէն ընծայ այս քեզ եղբայր,

Մերոյ նախնեացս վեպ և ճառ,

Մարտիրոսէ յոգնաթշուառ,

Շրջաբերեալ թիւս է ծիծառ» (թերթ 373):

Այս կարգի թվականները գտնելու համար մենք պիտի թվականի համար բառի տառերի թվական գումարը կատարենք: Վերև հիշված Ծիծառ թվականը, ըստ այդ հաշվի, հալասար է 1672-ի (Ծ (50) + ի (20) + Ծ (50) + Ա (1) + Ռ (1000)) ավելացրած հայկական թվականը 551, հալասար է 1627-ի, ուրեմն՝ այդ ձեռագիրը գրվել է 1672 թվին:

Արիստակես Սեբաստացին իր բնդօրինակված ձեռագրի գրչութեան թվականը տալիս է հետևյալ ծածկագիր հիշատակաբանում. «...գաղափարեցի (ձեռագիրս) ի թուականութեան հաջող մեծաց երկ քառասնից տասանց, և եռակի քսանից, նիզակ թուով յաւելից»: Ձեռագիրը, ըստ այդ հիշատակարանի ծածկագրութեան, բնդօրինակված է 1411 թվին (երկ քառասնից տասանց (2 բազմապատկած 40-ով) բազմապատկած 10-ով + եռակի քսանից (3 բազմապատկած 20-ով) + նիզակ թուով յաւելից (այսինքն 1 թվի ավելացրած), գումարած հայկական թվականը (551), հալասար է 1412 թ.):

ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի թիվ 1864 ձեռագրի հիշատակագիրը իր գրած ձեռագրի թվականն է համարում «Յանէ զի եկալ», այսինքն՝ 3(300)+Ա(1)+Ն(400) + Է(7)+Զ(6) [+ Ի(20) + Ե(5)+Կ(60) + Ա(1)+3(300)+551, հալասար է 1651-ի:

Բժշկապետ Ամիրզովլաթը իր ծննդյան թվականն է համարում «Էմնայ» թվականը:

«Ես բժիշկ Ամիրզովլաթս հայրս Նդիայ,

Որ ծնեալ եմ ի քաղաքն Ամասիայ,

Հայոց թուականին Լմնալ...»:

(«Անդիտաց տմպէտ»-ի հիշատակարանից):

«Մեծ» թվականը վերածնվում է՝ $L(30) + U(200) +$
 $V(400) + W(1) + 3(300) +$ հաշվական թվականը (551), հավասար է
 1482 թվին):

17-րդ դարից հայ գրիչներից նազարեթ անունով մեկին իր
տառանաչորի գրչություն թվականի մասին հայտնում է, թե՛ «եղէ
Յակոբն»-ն է՝

«Եւ թուականս ետի տուի,

Թիւն ծածկելի դրոշմ ամփոփի,

Այս թուականն չեա գիրն հուալ,

Եւ թուականն էդէ Յակոբ»:

Այս թվականը վերծանվում է՝ 6 (5) + 7 (96) + 8 (7) + 3(360) + 5(1) + 4(60) + 9(600) + 2(2) + հայկական թվականը 554, համասար է 1616 թվին:

Ձեռագրերի հիշատակարաններում պատահում են նաև ծածկագիր թվականների ավելի պարզ տեսակներ: Այսպես՝ ՀՍՍԻ Պետ., Մատենագրարանի թիվ 3024 ձեռագրի հիշատակարանում առկա է. «Գրեցաւ ի թիւն՝ ՆՆՃԾԾԾԺԵՆԵԳԳ»: Եթե մենք նշված տառերի թվական գումարը տալու լինենք, կստացվի 1687—(Ն) 400 + Ն(400) + Ճ(100) + Ճ(100) + Ծ(50) + Ծ(50) + Ժ(10) + Ժ(10) + Ե(5) + Ե(5) + Գ(3) + Գ(3) + հայկական թվականը (551), հավասար է 1687-ի:

Անհամեմատ դժվար է կարգաւ ալլ նշանագրերով, ինչպէս
և հայերեն նշանագրերով, բայց հնչական ալլ նշանակութեամբ
գրված ծածկագրութիւնը: Նրանց կարգաւու համար անսպաժան
պիտի ունենալ բանալի (ծածկագրերի մեկնութիւնները): Ծած-
կագրութեան ալս տեսակները բաւականաչափ դանազան են:
Նրանց տեսակների քանակը, բոտ մեր նախնական հաստմնասի-
րութեան, 40-ից անցնում է: Ծածկագրութեան ալս տեսակների
մեծ մասի մեկնութիւնները գտնվում են հայերեն ձեռագրերում:
Պարզվում է, որ ծածկագրութիւնը, մյուս դասարանական տոար-
կաների հետ միասին, դասավանդվել է հին հայկական դպրոց-
ներում: ՀՄՍՌ Պետ. Մատենադարանի թիւ 1863 ձեռագրում, որն
ընդօրինակված է 1585 թ. եվդոկիայում, Անդրիաս զրչի կողմից
տեղափոխված է մի ալրբենարան «Կիրք տղայ կառաջնելու է»
վերնագրով: Այս ալրբենարանից երևում է, որ աշակերտը տառերն

ու թվերը սովորելուց հետո պարտավոր էր սովորել նաև ծածկագրությունը: Ծածկագրերի մասին ընդհանուր դադարի արդյունքում համար մենք անհրաժեշտ ենք համարում կանգ առնել նրանց մի քանիսի վրա:

1. Ծրջագիր: Սովորական հայերեն գրեր են, միայն գրվում են շուռ տված ձևով: Պահում են իրենց սովորական հնչյունն անշահակությունը: Ի միջի ալլոց, այս ծածկագրերով հայտնաբերված է նաև վիմագիր արձանագրություն: Այդ արձանագրությունը գտնված է Սևանի մեջ և հրատարակել է Գ. Տ. Մկրտչյանը «Շողակաթ»-ում (էջ 137—141):

Ծրջագիր ծածկագրով գրված տեքստը կարդալու համար անհրաժեշտ է նա պահել հայելու առջև, որը շուռ է տալիս հակառակ, այսինքն՝ ուղիղ ձևի: Կարելի է նաև զժազդել թափանցիկ թղթի վրա և կարդալ շուռ տված կողմից:

Քերտմ ենք այստեղ Անդրյաս եվդոկեյու 1585 թ. կաղմած շրջագիր ալբուբենը:

Ե Պ Ե Դ Բ Դ Բ Դ Բ
Ը Ը Ը Ը Ը Ը Ը
Ա Ե Գ Խ Կ Դ Ե Ը
Ք Ե Գ Խ Կ Դ Ե Ը

(ՀՄՍՍ Մատեն. հա. 1869, թ. 395-ը)

2: Ազվանից գիր: Դարձյալ հայկական նշանագրեր են՝ գծադրական զգալի փոփոխություններով: Որոշ տառեր այժման են ձևավորված, որ դժվար է առաջին պահին ճանաչել: Այդ է պատճառը, որ եղել են անգամ հայագետներ, որոնք հենվելով այս ծածկագրերի ունեցած սովորական վերնագրերի վրա (որոնք ունենում են, սովորաբար, «Աղուանից գիրն է» վերնագիրը), կարծել են՝ թե իրոք նա մեր հարևան աղվանից ալբուբենն է: Սակայն պրոֆ. Հ. Աճառյանի և այլ բանասերների կողմից վերջնականա-

Այնս պարզված է, որ դա ո'չ թե աղվանից գիրն է, այլ հայկական ծածկագիր է:

Շփոթությունն առաջացել է վերնադիրք, նախնական վերնադիրք, ըստ ախտ. Աճառյանի, եղել է «Ազունագիր» (ծածկագիր իմաստով, ինչպես որ ծածուկ խոսելու լեզուն սովորաբար ճնճղովի լեզու է ասելով), իսկ հետադայում այդ վերնադիրքը ազատվող էլ է «Անուանից գիր» ձևով:

Ծածկագրի այս տեսակը չպիտի շփոթել ՀՍՍՌ Մատենադարանի № 7117 ձեռագրում եղած «Աղուանից գրի» հետ, որը հրատարակել են պրոֆ. Ծանիձեն և դոցեսնտ Ի. Աբուլաձեն իրենց «Новооткрытый албанский алфавит» վերնագրով աշխատություն մեջ: Վերջինս ծածկագիր չէ և, շատ հավանական է, որ «Աղվանից գիրը» լինի:

«Ազլանից» կոչված ծածկազրի մի քանի բնագործակալներն է մեկ հայտանի, որից մեկը, ՀՍՍՌ Մատենադարանի № 2013 գրք-չապրից (Երկր 2ա) բերում ենք ստորև: Գրչագիրը 18-րդ դարից է և բնագործակալած է Կարապետ գրչի կողմից:

«Աղվանից» ծածկագիրը, ինչպես տեսնում ենք, ձևված է հաջկական հոտը գրի վրա և 17-րդ դարից ավելի հին լինել չի կարող: Այս ծածկագրում հոտորգիւր տառերը ձևափոխված են, քեփված են կամ շուտ տված:

Ջրէն անուանից անբու բէնն

၈: ၃: ၄: ၅: ၆: ၇: ၈: ၉: ၁၀: ၁၁: ၁၂: ၁၃: ၁၄: ၁၅: ၁၆: ၁၇: ၁၈: ၁၉: ၂၀: ၂၁: ၂၂: ၂၃: ၂၄: ၂၅: ၂၆: ၂၇: ၂၈: ၂၉: ၃၀: ၃၁: ၃၂: ၃၃: ၃၄: ၃၅: ၃၆: ၃၇: ၃၈: ၃၉: ၄၀: ၄၁: ၄၂: ၄၃: ၄၄: ၄၅: ၄၆: ၄၇: ၄၈: ၄၉: ၅၀: ၅၁: ၅၂: ၅၃: ၅၄: ၅၅: ၅၆: ၅၇: ၅၈: ၅၉: ၆၀: ၆၁: ၆၂: ၆၃: ၆၄: ၆၅: ၆၆: ၆၇: ၆၈: ၆၉: ၇၀: ၇၁: ၇၂: ၇၃: ၇၄: ၇၅: ၇၆: ၇၇: ၇၈: ၇၉: ၈၀: ၈၁: ၈၂: ၈၃: ၈၄: ၈၅: ၈၆: ၈၇: ၈၈: ၈၉: ၉၀: ၉၁: ၉၂: ၉၃: ၉၄: ၉၅: ၉၆: ၉၇: ၉၈: ၉၉: ၁၀၀:

2 5: 6: 7: 8: 9: 10: 11: 12: 13: 14: 15: 16: 17: 18: 19: 20:

0+ : ▽ : ♣ : ♠ : ♧ : ♡ : ♤ : ♢ : ♣ : ♠ : ♧ : ♡ : ♤ : ♢

(2000 Sample N3124)

3. Գծաձոր կետագիր: Միջին դարերում այս ամենազոր, ծածկյան ծածկազորության տեսակն է հանդիսացել հայկական բյուզանդական մեջ: Սրան բանասերներից ոմանք անվանում են նաև «Մյունազիր»: Այս ծածկազորով զորված տասնյակ տեքստեր են մեզ հայտնի ՀՅՄԻ Մատենադարանում:

Այս ծածկագրի կազմելու սկզբունքը շատ պարզ է: Վերցվում է ուղղագրության գծեր և նրանց մոտ դրված կետիկներով որոշվում է համապատասխան տառանիշները: «Ա»-ից մինչև «Ծ»-ն գրվում է մեկ գծով, «Ժ»-ից մինչև «Ճ»-ն՝ երկու գծով, «Շ»-ից մինչև «Թ»-ն երեք գծով, իսկ «Ռ»-ից հետո՝ չորս գծով: Համարական կարգով գծիկների մոտ ափեւանում են կետեր: Անգրգաս եվդոկեցու բնագործ-նակած ձեռագրում բերված են «գծավոր կետագիր» կաշվող ծածկագրի հետևյալ ալբուրենը (տես ՀՍՍՌ Մատեն. № 1869, ք. 392 ա):

ա = գիծ 1 կետ

բ = գիծ 2 կետ

գ = գիծ 3 կետ

դ = գիծ 4 կետ

ե = գիծ 5 կետ

զ = գիծ 6 կետ

է = գիծ 7 կետ

ը = գիծ 8 կետ

թ = գիծ 9 կետ

ժ = 2 գիծ 1 կետ

ի = 2 գիծ 2 կետ

լ = 2 գիծ 3 կետ

խ = 2 գիծ 4 կետ

ծ = 2 գիծ 5 կետ

կ = 2 գիծ 6 կետ

հ = 2 գիծ 7 կետ

ձ = 2 գիծ 8 կետ

ղ = 2 գիծ 9 կետ

ճ = 3 գիծ 1 կետ

մ = 3 գիծ 2 կետ

յ = 3 գիծ 3 կետ

ն = 3 գիծ 4 կետ

շ = 3 գիծ 5 կետ

ո = 3 գիծ 6 կետ

չ = 3 գիծ 7 կետ

պ = 3 գիծ 8 կետ

ք = 3 գիծ 9 կետ

ռ = 4 գիծ 1 կետ

ս = 4 գիծ 2 կետ

վ = 4 գիծ 3 կետ

տ = 4 գիծ 4 կետ

ր = 4 գիծ 5 կետ

ց = 4 գիծ 6 կետ

ւ = 4 գիծ 7 կետ

փ = 4 գիծ 8 կետ

ք = 4 գիծ 9 կետ

Գծավոր ձեռագիր ծածկագրերով գրված բազմաթիվ օրինակներ կարելի է բերել մեր ձեռագրերից: Այսպես, ՀՍՍՌ Մատեն. № 2001 ձեռագրում, որը բնագործնակված է 14-րդ դարում Թովմա կրոնավորի կողմից, ծածկագրված է «Գրիգորի» անունը: ՀՍՍՌ Մատեն. № 1849 ձեռագրում, որն բնագործնակված է 1440 թ. Ներսես արեղալի կողմից, ծածկագրված է «Յովնէփ» անունը, Տառնորդու մի ձեռագրում ծածկագրված է «Գրիգոր վարդապետ որդի Տառալ», (տես Ալիշան, «Այրարատ», 167) և այլն:

Իմիջիայլոց, այդ ծածկագրերի վերծանությունը շատ հաճախ կարելու են ձեռագրի գրիչը կամ պատվիրատուն ճանաչելու տեսու-

կեալից: Այսպէս, այս ծածկագրով գրված մի հիշատակարան, որը նախկին Լազարյան ճեմարանին պատկանող ձեռագրերից է և հրատարակել է ակադ. Ն. Յ. Մառը «Հանդէս ամսօրեայ»-ում, հիշվում է ձեռագրի տերը:

Այս ծածկագրի ներքևում ավելացված է՝


«Եթէ դպիր ես նայ կարդայ,
Զէ՛ նա վզիդ տուր և հաղայ,
Մի մեղադրիր ինձ ի կամայ,
Բանս արեւտիս է, միտ արայ»:

(Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1892 թ., էջ 52):

Ծածկագրութիւնը վերծանվում է. «Յիշատակ է քարոզչիրքս Սրապիոն վարդապետին»:

Այս ծածկագրութիւնն ունի մի շարք տարբերակներ, որոնցից մեկը, ՀՍՍՌ Մատենադարանի № 487 ձեռագրում, հորիզոնական դժիկներ են և սեպագրի ձև են առնում: Այս ծածկագիրը պարունակող ձեռագիրն բնագործնակվել է Կարմիր կոշիկով վանքում 1618 թվին Վարդան գրչի կողմից:

4. Գավազանագիր: Այս ծածկագրերը շատ քիչ են տարբերվում գծավոր կետագրերից: Տարբերութիւնը գժիկների մեջ է. այստեղ գժերի փոխարեն գրվում են դանաղան տեսակի գավազանաձև ջպիկներ, որի համար և կոչվում է գավազանագիր: «Ա»-ից մինչև «Ժ»-ն գործ է ածվում մի կետ, «Ժ»-ից մինչև «Ճ»-ն՝ երկու կետ, «Ճ»-ից — «Ռ»-ն՝ երեք կետ, «Ռ»-ից հետո շորս կետ: Այս ծածկագրի տարբերներ գրվում է հետևյալ ձևով:



Գավազանագիր տարբերներ:

Այս ծածկադրով մի ձեռագրում ծածկադրված է Խաչատուր անունը, որն ուսումնասիրել և հրատարակել է տեղագ. Մանր Հանդէս ամսօրեայ»-ում (1892 թ., № 3, էջ 82):

5. Եղբայրագիր:— Ծածկագրի այս տեսակը Եղբայրագիր է կոչվում այն պատճառով, որովհետև հայկական այբուբենի սովորական տառերը փոխարինում են իրար: Որոշ բանասերներ ծածկագրի այս տեսակին անվանում են նաև «Փոխարինագիր»՝ փոխարինող իմաստով:

Եղբայրագրի երեք տեսակներն են մեզ հայտնի՝ ա) երբ հայկական այբուբենի հաջորդ տառը փոխարինում է նախորդին, բ) երբ հայկական այբուբենը երկու մասի է բաժանվում— «ա»-ից մինչև «դ» և «ձ»-ից մինչև «ք» ու երկրորդ շարքը ըստ այբուբենական կարգի դրվում է և փոխարինում իրար և գ) երբ հայկական այբուբենը բաժանվում է չորս մասի— «ա»-ից՝ «վ», «ժ»-ից՝ «զ», «ձ»-ից՝ «ջ», «ռ»-ից՝ «ք» ու երկրորդը առաջինի տակն է դրվում, չորրորդը՝ երրորդի:

Անդրյաս Եվդոկեցու ձեռագրում բերված է այս խմբի ծածկագրի հետևյալ բանալին.

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
ճ	մ	յ	ն	շ	ո	չ	ղ	շ
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	դ
ռ	ս	վ	տ	բ	ց	ւ	փ	ք

(Նո. 1869, թ. 392ա):

Ներքևում արված է հետևյալ ծանոթագրությունը. «Աղյուսակս այսպէս իմացիր, այլ որ պիտնայ՝ «ձէ» գրէ, «ձէ» որ պիտնայ, «այլ» գրէ, «ժէ» որ պիտնայն՝ «բուայ» գրէ, «բուայ» որ պիտնայ «ժէ» գրէ, և այլն ի կարդին դնայ»:

Առաջին խմբի ծածկագրի որոշ օրինակներ բերել է Արքիմանձույանը «Մանանայ»-ում (էջ 311): «Ոսկի» բառը ծածկադրված է «շվհլ» ձևով, «դանակ» բառը՝ «երշբհ» ձևով և այլն:

6. Գումարագիր: Այս ծածկագիրը կոչվում է նաև «թվագիր» այն պատճառով, որովհետև տառերը նշանակվում են տառերի թվական արժեքի գումարով կամ բաղձմապատկումով: Այսպէս, «ռ»

նշանակում են «յ» կամ «դ» ձևով «ծ» նշանակում են «ե» ձևով և այլն:

Այս խմբի ծածկագրված տեքստից առանձնապես արժեքավոր է եռաշատուր Կաֆայեցու տարեգրության մեջ բերված ծածկագրությունը, որ անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել.

զլ. ի. ա. էճ. ա. սս. յյ.
վծվծ. սծսծ. է. սծսծ. է. վվ. ոս.
սս. է. եռ. թռ. ժժ. ժեժե. ժժ. նն. յյ. ոս.
կթղղա. լլ. ժժ. եռ. ա. լլ. յյ. ոս.
ռշռշ. ա. եռ. ըը. ա. մմ. մմ. ժժ. լլ. յյ.
խեխե. յյ. ոս. ոս. ժժ. ճճ. է. յյ. մմ.

Ծածկագրի վերևում ասված է. «Այս է փակագիր, իմաստուն լմանայ, անխմաստն դարմանայ»: Այստեղ ծածկագրված է հետևյալ տեքստը. «Ջեռաշատուր էրէցս, տէր Փիլոսոս կաթողիկոս, Կիրակոս, Վարդան, Նիկողոս, Սիմէոն»:

Այս ծածկագրի ընթերցման բանալին հետևյալն է.

ա—ա	չ—էն
դ—բբ	պ—նն
է—է	ս—ռռ
ի—ժժ	վ—ռշռշ
լա—իի	ա—ոս
կ—լլ	ր—սծսծ
դ—խե խե	ր—եռ
ժ—նն	ց—վվ
ն—մմ	ւ—վծ վծ
ո—յյ	փ—քք

Անգրյաւ նվդոկեցին տալիս է այս խմբի ծածկագրի մի փոքր տարբերվող բանալի, որը դարձյալ անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ.

ա.	բ.	գ.	դ.	ե.
ա՛.	աա.	աբ.	բբ.	բգ.
գ.	ե.	ը.	ր.	
գգ.	գգա	գգ.	գգա.	
ժ.	ի.	լ.	խ.	
եե.	ժժ.	ժժժ.	իի.	
ծ.	կ.	հ.	ձ.	
իիժ.	Ա.	Աժ.	խխ.	
դ.	ն.	ժ.	յ.	
խխժ.	ծծ.	ճճ.	ճճճ.	
դ.	շ.	ն.	չ.	
ժժ.	ժժճ.	յյ.	յյճ.	
պ.	ջ.	ռ.	ւ.	
յյժ.	ննճ.	շշ.	առ.	
վ.	տ.	ր.	գ.	
առ.	առ.	առռ.	վվ.	
ւ.	փ.	ֆ.	փ.	
վվռ.	առռ.	առռռ.	բբ.	

(ՀՍՍՌ Մատենադարան № 1869, Թ. 392 ր)

Վերև հիշված ծածկագրերի շորս խմբի պատկանող մի փոքրիկ տեքստ է պահել ՀՍՍՌ Մատեն. № 1849 ձեռագիրը (գրված 1440 թ. ներսևս գրչի կողմից), որը մենք անհրաժեշտ ենք համարում աշտակց բերել:

Զգրչափալը աղեկ տես, շորս աղղ է:

Թէ դպիր ես նա կարդայ,

Թէ չէ՝ ծկականըտ տուր և խաղայ,

Զեղկելի գրողս լիշեա, զձեզ աղաչես յարակայ:

(թ. 136 ր)

Առաջին երկուսը գումարագիր է, տարբեր խմբագրություններ, երբորդը փոխարինագիր է, իսկ շորորդը՝ գծաւոր կետագիր: Չորս ծածկագրությունն էլ վերծանվում է «Յովսէփ»:

7. Ներսիսյան ծածկագրեր: Վավերագրերում եղած հայկական ծածկագրերից կարևոր է «Ներսիսյան» կոչված ծածկագիրը,

որով գրված նամակներ կան: Այս ծածկագրերը գործ է ածել Ներսես Աշտարակեցին (տե՛ս «Արարատ», 1888 թ., էջ 35—49): Մածկագրերը վերծանել է Գ. Տեր-Մկրտչյանը: Մածկագրի բանալին նետակն է:

F - ա	Ն - ծ	Զ - չ	Ը - ո
Չ - բ	Ք - Ի	Ր - ծ	Շ - ս
Կ - գ	Ց - Լ	Ղ - յ	Չ - Վ
Ն - դ	Խ - Խ	Ը - Ն	Խ - տ
Ր - Ե	Դ - ծ	Կ - շ	Ղ - ր
Կ - զ	Լ - Կ	Դ - ո	Ն - ց
Ց - Է	Ի - շ	Վ - շ	Ղ - Լ
Խ - Ը	Դ - չ	Ց - ս	Կ - փ
Վ - ր	Ք - շ	Ը - շ	Կ - ք
Փ - Լ	Օ - օ	Օ - ֆ	

8. Մածկագիր քվակաճներ: Մածկագրության այս տեսակի բանալին պահված է Անդրյաս գրչի վերև հիշատակված դասագրքում: Սա գործ է ածվել միայն թվականների համար: Իր բովանդակությամբ ծածկագրության այս տեսակը շատ պարզ է:

Մեկից մինչև ինը գրվում է հայկական այբուբենի տառերով իրենց սովորական թվական նշանակությամբ, տասից մինչև հարյուրը գրվում է «ա»-ից—«ժ» տառերով՝ մի դերո ավելացրած, հարյուրից—հազարը՝ նույն տառերը երկու գերոյով, և վերջապես, հազարից—ութ հազարը՝ դարձյալ նույն տառերը երեք գերոյով։

Սրանցով, իհարկե, չեն վերջանում հայկական մատենագրության մեջ գործածված ծածկագրության տեսակները։ Արխիվում կան և այլ անձնագիրությունների կաղմած մի շարք ծածկագիր նամակները, որոնց հետ ծանոթանալ ցանցակողը պիտի համապատասխան բանալիով վերծանի նրանք։

Մենք կանգ չառանք նաև հայկական բժշկարանում գործածված ծածկագրերի վրա։ Հնում առանձին դեղերի փեցկալները հաճախ գրում էին ծածկագիր, որպեսզի հասկանալի չլինի ամեն մի սովորական բնիկացույց։ Նման ձևով ծածկագիր տեքստեր են պատահում արքիմիական բովանդակություն ունեցող ձեռագրերում։

Մեր ձեռագրերում պատահում են նաև վանկային ծածկագրություն։ Այս կարգի ծածկագրերը կաղմվում են վանկերից, որոնց միայն առաջին տառն ունի նշանակություն, իսկ մյուսները միայն կցորդ տառեր են և գրվում են ծածկագիր դարձնելու նպատակով։ Վանկերը բաղկացած են լինում միշտ երկու կամ երեք տառերից, որոնց վերջինը միշտ «տ» է։ Շարադրության մեջ վանկերը գրվում են իրար միացած ձևով։ Վանկերի մեջ «ո» շաղկապը գրվում է առանց կցորդ տառերի։ Այս շարքի ծածկագրերից բերենք մի քանի օրինակ.

«Խառատեմադատաւրառիսուկատէտաւտ»։ Այս մի բառ է, բայց եթե մենք ծածկագիր այս տառերի շարքը վանկանշատում կատարելու լինենք, այն ժամանակ կկարդացվի հետևյալը. իտ բառ ետ բառ գառ առ բառ իտ ու կառ էտ սառ»։ Ստացվում է 12 վանկ և «ո» տառը, որ շաղկապված է։ Վանկերն, ինչպես տեսնում ենք, բաղկացած են երկուական տառերից, իսկ բաղաձայնով—երեք տառ։ Եթե մենք վերև բերված տառաշարքից վերջիններ առաջին տառերը, իսկ մյուսները դեն ձգենք՝ կստացվի հետևյալ բառը. «ՅԵՆԲ գառի ու կէս»։

Այս ծածկագրով գրված մեզ բառեր են հանդիպում Մխիթար Անեցու թվարանական խնդիրների պատասխաններում։ Բերենք նրա երկու խնդիրների պատասխանները։

Թվարանության խնեերորդ խնդիրը, ուր ասված է. «Մարդ մի

տղային երես 8 (100) սպիտակ թե «8 (100) հաւ դնէ»: Նա գնեաց
զղաղն հինգ սպիտակ, զտանուհան՝ մէկ սպիտակ, զճնճղովին՝
քան և մէկ սպիտակ: Տես թէ քանի՝ եղև զաղն, և զհան, և
զճնճղովին: Այդ հարցումն ունի հետեյալ պատասխանը.

«Պատասխատնաւոն՝ ԺԹ, հատատւաւոն՝ Ա., նատնատնաւ
դատնատնաւաւոնաւոն՝ Չ», որը պիտի կարդալ՝ զատ առ զատ
նաւոն՝ Ե՝ ԺԹ հատ առ առ ն Ա. նատ նատ նատ զատ ու առ
կատ նատ ն Չ, այսինքն «ղաղն՝ 19, հան՝ 1, ճնճղովին՝ 80»:

Վնդրագրի տատեօրդ խնդիրը, ուր ասված է. «Երամ մի հաւ
կու գնային: Հաւ մի ի դէմ ելաւ և ասաց. «Բարի եկիք հարիւր
հաւ»: Ասասցին՝ «Մէք չեմք հարիւր, մէք, և հանչանք մի քան
դմեզ, ու մեր կէսս, ու կիսու կէսն ու զուք՝ հարիւր եմք: Տես թէ
քանի են եղեք»:

Այս խնդիրն ունի հետեյալ պատասխանը. «Ետրապատոտ
տոտնատովաւոնոցատ» «Ետ բատ սուտ ու տու նատ ու վատ
եւ ցատ—«Երսուն ու վեց»:

Չեռագրերում մեկ մեկ պատահում են և ծածկադիր-գրչա-
խողեր: Գրիչները աղյուսակների մեջ զանազան ձևով տեղափո-
րում են իրենց անունները: Նման գրչախաղերից բերենք մի օրի-
նակ՝ փերցնելով այն ՀՅԱՌ՝ Մատեն. N 1242 ձեռագրից:

ա ե շ ի Տ Ն ի Ր ի Ն յ ի շ ե ա
 ա ե շ ի Տ Ն ի Ր Դ Ր ի Ն յ ի շ ե ա
 ե շ ի յ Ն ի Ր Դ Ս Դ Ր ի Ն յ ի շ ե
 շ ի Տ Ն ի Ր Դ Ս Ե Ս Դ Ր ի Ն Տ ի շ
 ի յ Ն ի Ր Դ Ս Ե Ս Ե Ս Դ Ր ի Ն յ ի
 յ Ն ի Ր Դ Ս Ե Ս Ը Ս Ե Ս Դ Ր ի Ն յ
 Ն ի Ր Դ Ս Ե Ս Ը Ե ը Ս Ե Ս Դ Ր ի Ն
 ի Ր Դ Ս Ե Ս Ը Ե Ե Ե ը Ս Ե Ս Դ Ր ի
 ի Ր Դ Ս Ե Ս Ը Ե Ե Ե ը Ս Ե Ս Դ Ր ի
 Ն ի Ր Դ Ս Ե Ս Ը Ե ը Ս Ե Ս Դ Ր ի Ն
 յ Ն ի Ր Դ Ս Ե Ս Ը Ս Ե Ս Դ Ր ի Ն յ
 ի յ Ն ի Ր Դ Ս Ե Ս Ե Ս Դ Ր ի Ն Տ ի
 շ ի յ Ն ի Ր Դ Ս Ե Ս Դ Ր ի Ն յ ի շ
 ե շ ի Տ Ն ի Ր Դ Ս Դ Ր ի Ն Տ ի շ ե
 ա ե շ ի յ Ն ի Ր Դ Ր ի Ն յ ի շ ա
 ա ե շ ի Տ Ն ի Ր ի Ն յ ի շ ա

Կենտրոնից դեպի բոլոր կողմերը կարդացվում է «Ներսէս
 արիւն յիշեա» (ՀՍՍՌ Մատեն. № 1242 (1268), Թ. 130ա,
 XV—XVI դ. գրչությամբ):

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՐՈՐԴ

ԹՎԱՆՇԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական գրության մեջ ներկայումս գործ ածվող թվանշանները արաբական են և շատ ժամանակ չէ, որ նրանք մոտոք են գործել հայ մատենագրության մեջ: Նրանց հնությունը 17—18-րդ դարերից դենը չի անցնում: 17-րդ դարում և նրանից առաջ, հայ մատենագրության մեջ թվանշանները գործ են ածվել հայկական տառանշաններով, ինչպես իր ժամանակին, հունական, ռուսական և այլ ժողովուրդների տառանիշներն են իրենց մատենագրության մեջ թվանիշ գործածվել:

Համարական կարգով հայկական այբուբենը բաժանվում է չորս մասի—«ա»-ից մինչև «ծ» տառը համարվում է միավոր, «ժ»-ից մինչև «ճ»-ն՝ տասնավոր, «ճ»-ից մինչև «ռ»-ն՝ հարյուրավոր և «ռ»-ից մինչև «ք»-ն ներառյալ՝ հազարավոր: Հայկական այբուբենի տառերը գործ են ածվում թվական հետևյալ նշանակությամբ.

ա—1	ժ—10	ճ—100	ռ—1000
բ—2	ի—20	մ—200	ւ—2000
գ—3	լ—30	յ—300	վ—3000
դ—4	խ—40	ն—400	տ—4000
ե—5	ծ—50	շ—500	ր—5000
զ—6	կ—60	ո—600	ց—6000
է—7	հ—70	չ—700	ւ—7000
բ—8	ձ—80	պ—800	փ—8000
թ—9	ղ—90	զ—900	ք—9000

Հայկական թվանշաններն ունեն արաբական թվանշանների հաջորդականությունը. աջ կողմում միավոր թիվն է գրվում, իսկ

ներանկց դեպի ձեռն, ըստ հաջորդականութեան, գալիս են՝ տասնամար, հարյուրամար, հազարամար և մյուս թվերը: Բերենք մի քանի թվաբանական խնդիրներ՝ վերցնելով ձեռագրերից.

«Մարդ մին մեռաւ .լ. ոչխար ունէր .ժ. .դ. դասներ ու .ժ. մինբեր, ու .ժ. .բ. բեր: Այնմ մարդուն .դ. որդի կայր: Ամէն մէկին .ժ. ոչխար է ու .ի. դասն: Հանց պիտի բաժանել, որ երեքերէն ու յերկուսերէն ու .ա. բերէն .դ. որդոցն լինի և դասն ի մօրէն ոչ բաժանի:

Լուծումն:

Երկու .դ. բեր,, վեց .բ. բեր, երկու մինբեր:

Չորս .դ. բեր, երկու .բ. բեր, չորս .ա. բեր:

Երկու .բ. բեր, չորս .ա. բեր, չորս .դ. բեր»:

(ՀՍՍԹ Մատեն. N 573, թ. 267 ա):

«Ա. Հարց: Մի մարդ ունէր .ը. լիտր ձէթ: Բ. մարդ եկին զայն դնել: Մին մարդն ունէր .դ. լտրանոց աման, մինն ունէր .և. լտրանոց աման: Արդ՝ .ը. լիտր ձէթն այդ շափովդ կէս արա, որ ամենուն լինի .դ. լիտրն:

Լուծումն: Նախ՝ .դ. լտրանոցն լնում և թափեմ ի մէջ .և. լտրանոցին. դարձեալ ևս լնում .դ. լտրանոց: Որ .բ. լիտրն գնայ՝ մնալ .ա. լիտր ի մէջ .դ. լտրանոցին: Այն .և. լտրանոցումն կայ .դ. լիտր, և զայն թափեմ իւր առաջի ամանն: Եւ զայն .ա. լիտրն՝ որ .դ. լտրանոցումն է, թափեմ ի մէջ .և. լտրանոցին: Դարձեալ լնում .դ. լտրանոցն և թափեմ ի մէջ .և. լտրանոցէն .ի. վերայ .ա. լտրին, որ լինի .դ. լիտր, և մնալ տեղն .դ. լիտրն:

Գ. Հարց: Երեսուն ձի՝ .թ. ցցէ կապեա՝, որ՝ տեղի պահաս չգալ:

Լուծումն: Ամէն ցցէ կապեմ .թ. ձի, որ լինի .իւ. ձի, և մնալ .դ. ձի. ամէն .ա. ձիու գլուխն առնեմ .դ. պախուց. ամէն .դ. պախուց՝ ամեն .ա. պախուց կապեմ .ա. ցից, որ լինի միաշափ»:

(Զաքարիա Սարկիսյանի խնդիրներէց):

«Կայր .խ. պնակ, ամէն պնակ .խ. դմակ, ամէն դմակ .խ. դանակ, ամէն դանակ .խ. բեռն: Տես թէ քանի՞ է ամէն:

Կայր գալայ .յ., ամէն գալայ՝ .յ. ձի, ձիանն ու ազին, ականջն, ոտուին ու նալերն, տես քանի՞ են ամէնն» (ՀՍՍԹ Մատեն. N 1770, թ. 159 ա):

Ի տարբերութիւն արաբականի, հայկական գրութեան մեջ դերոյի համար առանձին նշան չի եղել, ուստի և թվերի միջև և

վերջում եղող դերոն հասկացվել է բնական ձևով նախորդ տառի
թվական նշանակության հետ միասին: Այսպես, 1080 թվանշանը
գրվում է ՌԶ. տառերով, 8002-ը՝ ՓԲ., 1608-ը՝ ՌՈԸ., 1002-ը՝
ՌԲ., 8200-ը՝ ՓՄ. և այլն:

Ի դեպ, միավորը թիվը հայկական մատենագրության մեջ
գրվում է մի քանի ձևով— «մէ», «մէն», «եղ» և «մու»:

Թվական նշանակությամբ դործ ածված տառերը սովորական
տառերից տարբերելու համար, ձևագրերում, ինչպես և վիճական
արձանագրությունների մեջ, սկզբից և վերջից միջակետերի և
վերջակետերի մեջ են առնվում: Բացի այս, թվական նշանակու-
թյամբ դործ ածված տառերի վրա գրվում են պատվի նշաններ:
Օրինակ՝ «Յամի :ՌՅԶԹ: արեդ ամսոյ :ԻԲ: լուսինն խաարեցաւ»,
«Ի Խուականին հալոց :ՌՅԶԹ: Էղև մահտարածամ», «Արշակ
խազատրեալ :ԽԲ: ամ և .է. ամիս» և այլն: Թվանշանների առջե-
վում և վերջում գրվող կետերը լինում են միջակետեր կամ վեր-
ջակետեր: Կարող է պատահել առջևում վերջակետ լինի, իսկ
վերջում միջակետ և հակառակը:

Թվականի վրա գրվող պատվի նշանը տարբեր ձևով է լի-
նում: Մեծ մասամբ, ամբողջ թիվը առնվում է մի ամբողջական
պատվի տակ, բայց երբեմն միավորը, տասնավորը և մյուսներն
առանձին առանձին պատվիների տակ են առնվում: Բերենք նման
մի քանի օրինակ՝ 5450—Ր. Ն. Մ. 219—Մ. ԹԺ. 4119—ՏԶ.
ԹԺ. և այլն:

Առանձին կետերի մեջ են առնվում կրկնվող թվականները:
Օրինակ՝ «ՆՐԹ .Կ.Կ.» (այսինքն՝ դուրս արի վաթսուն վաթսուն),
«սովորէին: ԻՆ. ԻԶ: աշակերտք» (սովորում էին 25—26 աշակերտ-
ներ), «Կանգնեալ էին .է. է» (յոթ էին կանգնած) և այլն:

Տասնութերորդ դարի որոշ վավերագրերում պատահում է, որ
հայկական տառերի կողքին, զուգընթացաբար, գործածության
մեջ է գրվում զերոն: Գրում են հայկական տասնավոր, հարյու-
րավոր և բարձր թվերը և կողքին զերո գնում: Օրինակ՝ Ռ00
(600), Տ000 (4000), Մ00 (200) և այլն: Այս ձևով է, օրինակ,
գրված հայ առևտրական եղիաս Մուշեղի հաշվմատյաններում
(18-րդ դարի առաջին կես): 17—18-րդ դարերում գրված նոտըր-
գիր ձևագրերում ևս նման փաստեր մեզ հանդիպում են: Այս-
պես, Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրության մեջ 1080-ը
գրվել է Ռ0Զ0 ձևով, 1025-ը՝ Ռ0ԻՆ ձևով և այլն:

Հազարալորներից բարձր թվերը հաշվել են բյուրերով: Բյուր է համարվել տասը հազարը (ռուսական ТЫСЯ, հունական χίλια), Հաշվումները հեշտացնելու համար բյուրի համար գործ են ածել √ նշանը: Դա հնարավորություն է ստեղծել առանց դժվարության միլիոնների, տասնյակ միլիոնների հաշիվներ տալ (Բյուրի (չորս զերոյի) այդ նշանը բաղմաթիվ տեղերում գործածված ենք տեսնում 7-րդ դարի մաթեմատիկոս (համարող) Անանիա Շիրակացու մոտ, նրա թվաբանության դասագրքում: Բյուրի այդ նշանը հանդիպում է նույնպես Հովհաննես Սարկավադի, Երզնկացու և այլ հեղինակների աշխատություններում: Հայկական այբուբենն ունի թվական հատկալ նշանակությունը.

Ա՝ - 10,000	Ժ՝ - 100,000	Ճ՝ - 15Ի	Ն՝ - 105Ի Ξ
Բ՝ - 20,000	Ի՝ - 200,000	Ը՝ - 25	Վ՝ - 205
Գ՝ - 30,000	Լ՝ - 300,000	Ժ՝ - 35	Վ՝ - 305
Դ՝ - 40,000	Խ՝ - 400,000	Ն՝ - 45	Ա՝ - 405
Ե՝ - 50,000	Ծ՝ - 500,000	Ղ՝ - 55	Բ՝ - 505
Զ՝ - 60,000	Կ՝ - 600,000	Ռ՝ - 65	Գ՝ - 605
Է՝ - 70,000	Հ՝ - 700,000	Շ՝ - 75	Լ՝ - 705
Ը՝ - 80,000	Յ՝ - 800,000	Ա՝ - 85	Ժ՝ - 805
Թ՝ - 90,000	Ղ՝ - 900,000	Գ՝ - 95	Բ՝ - 905

Այդ նշանը հայկական տառի վրա դնելին, նրա թվական նշանակութիւնը չորս դերուով մեծանում է: Այդ հաշվով, հայկական աշխուրհի տառերը ստանում են թվական նոր նշանակութիւն:

Օրինակ՝ 6,874, 528 թվանշանը հայկական տառանշաններով գրվել է ՈՁԷ. ՏՇԻԸ., 80024-ը Ը. ԻԴ, 1,001,000-ը .Ռ. Ռ. և ալին:

Հայկական որոշ ձեռագրերում, հատկապես նոսր գրչութեան ունեցող ձեռագրերում, պատահում են, երբ խախտվում է թվական գործածելու ներկա կանոնները: Այսպես, երբեմն հազարավոր կամ հարյուրավոր թվերի համար գործածվում են ո՛չ թե տվյալ թվանշանների համապատասխան տառանիշը, այլ թվական մի ամբողջ կամբինացիա: Օրինակ՝ 25,000 գրվում է ոչ թե սովորականի նման .Բ.Շ., այլ :ԻԵՌ: Կամ 92,400՝ ոչ թե Թ ՍԵ, այլ :ԴԷՌԵ: և ալին:

ՀՍՍՌ Մատենադարանի նո. 1869 ձեռագրում Անդրյաս Եվդուկեցին իր այբբենարանի հաշիվվածում նշում է հայկական թվանշանները գործածելու հետևյալ կանոնը.

«Պատուով այբն (Ա) մեկ է, բենն (Բ)՝ երկուք է, գիմն (Գ)՝ երեք է, դան (Դ)՝ չորս է, եչն (Ե) հինկ է, դան(Զ)՝ վեց է,էն (Է)՝ հաւթն է, բթն (Ը)՝ ութն է, թան (Թ)՝ ինն է, ժէն (Ժ)՝ տասն է, ինին (Ի)՝ քսան է, լինն (Լ)՝ երեսուն է, խէն (Խ)՝ քառասուն է, ծան (Ս)՝ յիսուն է, կենն (Կ)՝ վաթսուն է, հան (Հ)՝ եօթնասուն է, ձան (Ձ)՝ ութսուն է, դան (Ղ)՝ քնքսուն է, ճէն (Ճ)՝ հարիւր է, մենն (Մ)՝ երկուհարիւր է, յին (Յ)՝ երեքհարիւր է, նուն (Ն)՝ չորս հարիւր է, շան (Շ)՝ հինկհարիւր է, ոն (Ո)՝ վեցհարիւր է, շան (Չ)՝ հաւթն հարիւր է, պէն (Պ)՝ ութնհարիւր է, ջէն (Ջ)՝ ինն հարիւր է, քան (Ռ)՝ հազար է, սեն (Ս)՝ երկու հազար է, վեն (Վ)՝ իրեք հազար է, տուն (Տ)՝ չորս հազար է, բրէն (Բ)՝ հինկ հազար է, ցան (Յ)՝ վեց հազար է, վինն (Ի)՝ հաւթն հազար է, փիւրն (Փ)՝ ութնհազար է, քէն (Ք)՝ իննհազար է, ժէն և բոան (ԺԲ)՝ տասնհազար է, ինին և բոան (ԻԲ)՝ քսանհազար է, լին և բոան (ԼԲ)՝ երեսուն հազար է, խէն և բոան (ԽԲ)՝ քառասուն հազար է, ծան և բոան (ՍԲ)՝ յիսուն հազար է, կենն և բոան (ԿԲ)՝ վաթսուն հազար է, հան և բոան (ՀԲ)՝ հաւթնասուն հազար է, ձան և բոան (ՁԲ)՝ ութսուն հազար է, դան և բոան (ՂԲ)՝ քնքսուն հազար է, ճէն և բոան (ՃԲ)՝ հարիւր հազար է: (Թերթ 390բ—391ա):

Կան գեպքեր, երբ «Ժ»-ից հետո եղած տառերը դառնում են ոչ թե տասնավորների, այլ մնում են միավոր թվանշանում: Այդ գեպքում «Ժ»-ն հավասար է ո՛չ թե 20-ի, այլ 11-ի, «Լ»-ն՝ ո՛չ թե 30-ի, այլ 12-ի, «Խ»-ն՝ ոչ թե 40-ի, այլ 13-ի, «Ծ»-ն հավասար է 14-ի, «Կ»-ն՝ 16-ի, «Հ»-ն՝ 17-ի, «Ձ»-ն՝ 18-ի, «Ղ»-ն՝ 19-ի և այլն: Այսպիսի օրինակ ունենք Մլքե թագուհու ձեռագրում:

Համարական թվականները կազմվում են սովորական պատվազրված թվանշանների վրա «բորդ» կամ հապավված՝ «բրդ» վերջավորության ավելացումով: Օրինակ՝ Ա.բրդ, Բ.բրդ, Գ.բրդ, Դ.բրդ, Ե.բրդ, Զ.բրդ, Է.բրդ, Ը.բրդ, Թ.բրդ և այլն:

Համարական և ոչ համարական թվերում, 11-ից մինչև 19-ը, հակառակ գոյություն ունեցող օրենքի, միավորները տասնավորներից առաջ են գրվում: Աժ.ան (11), Բժ.ան (12), Գժ.ան (13), Դժ.ան (14), Եժ.ան (15), Զժ.ան (16), Էժ.ան (17), Ըժ.ան (18), Թժ.ան (19): Այդ սկզբունքով՝ Բժ.աներրդ, Գժ.աներրդ, Դժ.աներրդ, Եժ.աներրդ, Զժ.աներրդ, Էժ.աներրդ, Ըժ.աներրդ, Թժ.աներրդ: Այս բացառությունը բոլոր ձեռագրերը չեն պահում: Կան տեքստեր, ուր նախ տասնավորն է գրվում, ապա միավորը:

Հայկական գրչագրում մեկ հանդիպում են նաև մի համարիչ ունեցող պարզ կոտորակների գործածություն: Նման կոտորակներ մեկ հանդիպում են Շիրակացու թվաբանության խնդրագրքում և Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի մեջ: Կոտորակի նշանակությամբ գործածված թվանշանի վրա գրվում է թավի մի նշան (շատ նման բյուրի նշանին, միայն այն տարբերությամբ, որ այդ նշանը գրվում է ոչ թե տասի հետևից, այլ առջևից: Շիրակացու թվաբանության խնդրագիրը 22-րդ խնդրի պատասխանը — $7\frac{3}{11}$ գրվել է հետևյալ ձևով՝ $7^{\wedge} \frac{3^{\wedge}}{11^{\wedge}}$ է, $^{\wedge} 6$, $^{\wedge} 6$, $^{\wedge} 6$ Է, այսինքն՝ 7 գումարած կես, գումարած մեկ հինգերորդ, գումարած մեկ քսաներորդ, գումարած մեկ քառասուն չորսերորդ, հավասար է 7 ամբողջ երեք տասնեմեկերորդի:

Կա մի ուրիշը, $9\frac{1}{11}$ գրվել է $9^{\wedge} \frac{1^{\wedge}}{11^{\wedge}}$ Թ, ԺԱ:

Կեսի համար գործ է ածվել լատինական C տառի նման մի նշան: «Աշխարհացոյց»-ի տեքստում հանդիպում ենք այսպիսի մի հատվածի. «Յոռն... ծայրն ի ներքոյ դայ ի օվկիանոս առաւել

բան դալլ երկիր մասունս երրիս և Շ, որ լինի ասպարէզք հազար եւթն հարիւր և յիսուն»: $3C=3$ և կեսի, այդ հաշվով՝ $5C=5$ և կեսի, $7C=7$ և կեսի և այլն:

ՀՅՍԲ. Մատեն. N 1973 ձեռագրում բնագործակիւմ է մի աղյուսակ (Շ)-ի գործածութեամբ կեսի նշանակութեամբ:

«Ժ (Բ) Ե	10:2=5-ի	ԺԴ (Բ) Է	14:2=7-ի
ԺԱ (Բ) ԵԸ	11:1=5½-ի	ԺԵ (Բ) ԷԸ	15:2=7½-ի
ԺԲ (Բ) Զ	12:2=6-ի	(Բ. 108Բ):	
ԺԳ (Բ) ԶԸ	13:2=6½-ի		

Գումարման, հանման, բազմապատկութեան և բաժանման նշանները գործողութիւնների ժամանակ հայկական մատենագրութեան մեջ չեն գործածուում: Շիրակացու թվաբանութեան դասադրքից բերենք շորս գործողութիւններից մեկական օրինակ:

Գումարումը, կամ ինչպես հնում կոչել է՝ «ընդունելութիւնը» («ընդունել») է կոչվել մի թիւը մյուսի վրա ընդունելու, գումարելու իմաստով:

Գումարումը կատարվել է հետևյալ ձևով.

Ա Ա Բ	1+1=2	Բ Բ Դ	2+2=4
Ա Բ Գ	1+2=3	Բ Գ Ե	2+3=5
Ա Գ Դ	1+3=4	Բ Դ Զ	2+4=6
Ա Դ Ե	1+4=5	Բ Ե Է	2+5=7
Ա Ե Զ	1+5=6	Բ Զ Ը	2+6=8
Ա Զ Է	1+6=7	Բ Է Թ	2+7=9
Ա Է Ը	1+7=8	Բ Ը Ժ	2+8=10
Ա Ը Թ	1+8=9	Բ Ժ ԺԱ	2+8=10
Ա Թ Ժ	1+9=10	Բ Ժ ԺԲ	2+10=12

Հանումը, կամ ինչպես հնում կոչվել է՝ «բացատրութիւնը» կամ «բացերթութիւնը», կատարվել է հետևյալ ձևով.

Ա Բ Ա	1-ը հանած	2-ից=1-ի	ման
Ա Բ Գ	1-ը հանած	3-ից=2-ի	մն
Ա Գ Դ	1-ը հանած	4-ից=3-ի	ն Ե
Ա Ե Զ	1-ը հանած	5-ից=4-ի	
Ա Զ Է	1-ը հանած	6-ից=5-ի	
Ա Է Ը	1-ը հանած	7-ից=6-ի	
Ա Ը Թ	1-ը հանած	8-ից=7-ի	
Ա Թ Ժ	1-ը հանած	9-ից=8-ի	
Ա Ժ Ժ	1-ը հանած	10-ից=9-ի:	

Բաղմապատկութիւնը կատարվել է հետևյալ ձևով:

ԱԲԲ	$1 \times 2 = 2$ -ի	ԺԲԻ	$10 \times 2 = 20$ -ի
ԲԲԴ	$2 \times 2 = 4$ -ի	ԻԲԽ	$20 \times 2 = 40$ -ի
ԳԲԶ	$3 \times 2 = 6$ -ի	ԼԲԳ	$30 \times 2 = 60$ -ի
ԴԲԸ	$4 \times 2 = 8$ -ի	ԽԲԶ	$40 \times 2 = 80$ -ի
ԵԲԹ	$5 \times 2 = 10$ -ի	ԾԲՃ	$50 \times 2 = 100$ -ի
ԶԲԺԲ	$6 \times 2 = 12$ -ի	ԿԲՃԻ	$60 \times 2 = 120$ -ի
ԷԲԺԴ	$7 \times 2 = 14$ -ի	ՀԲՃԽ	$70 \times 2 = 140$ -ի
ԸԲԺԶ	$8 \times 2 = 16$ -ի	ՁԲՃԿ	$80 \times 2 = 160$ -ի
ԹԲԺԸ	$9 \times 2 = 18$ -ի	ՂԲՃԶ	$90 \times 2 = 180$ -ի

Հաշվական ձեռագրերում պատահում են և բաղմապատկութիւն աղյուսակներ, որոնցից մեկը անհրաժեշտ ենք համարում բերել Շիրակացու Մատենագրութիւնից:

ա	բ	դ	դ	ե	դ	է	բ	թ
բ	դ	դ	բ	ժ	ժբ	ժդ	ժդ	ժբ
դ	դ	թ	ժբ	ժե	ժբ	խա	խդ	խէ
դ	բ	ժբ	ժդ	խ	խդ	խբ	լբ	լդ
ե	ժ	ժե	խ	խե	լ	լե	լս	լսե
դ	ժբ	ժբ	խդ	լ	լդ	լսբ	լսբ	ձդ
է	ժդ	խա	խբ	լե	լսբ	լսթ	ձդ	լդ
բ	ժդ	խդ	լբ	լս	լսբ	ձդ	լդ	հբ
թ	ժբ	խէ	լդ	լսե	ձդ	լդ	հբ	ձա

Բաժանումը կատարվել է հետևյալ ձևով.

- Ա. 3 3 մեկը վեց հազարի մեջ պարունակում է 6000 անգամ.
 Ա. 3 3 մեկը վեց հազարի մեջ պարունակում է 6000 անգամ.
 Բ. Վ. 3 2-ը՝ 3000 անգամ պարունակում է 6000-ի մեջ:
 Գ. Ս. 3 3-ը՝ 2000 անգամ պարունակում է 6000-ի մեջ.
 Ե. Բ. Ս. 3 5-ը՝ 1200 անգամ պարունակում է 6000-ի մեջ.
 Զ. Բ. 3 6-ը՝ 1000 անգամ պարունակում է 6000-ի մեջ.
 Է. Պ. Մ. 3 7-ը՝ 857 անգամ (կլոր թիվով) պարունակում է 6000-ի մեջ.

Ը ԶԹ Յ 8-ը՝ 750 անգամ պարունակում է 6000-ի մեջ.
 Թ՝ ՈԿԵ Յ 9-ը՝ 665 անգամ (կլոր) պարունակում է 6000-ի մեջ:
 Հայկական թվահաշիվը բյուրով չի վերջացել: Գոյություն է ունեցել բյուրից շատ ավելի բարձր թվահաշիվ և նրան համապատասխան տերմիններ: Տասը հազար բյուրը կոչվել է զունդ, տասը հազար գունդը՝ ավագ զունդ, տասը հազար ավագ գունդը՝ արֆա զունդ և տասը հազար արքա գունդը՝ կայսր զունդ: Այդ թվանշանները մեր ներկա հաշվով կարելի է արտահայտել հետևյալ ձևով.

10,000—բյուր,

100,000,000—գունդ,

1,000,000,000,000—ավագ գունդ,

10,000,000,000,000,000—արքա գունդ,

100,000,000,000,000,000,000—կայսր գունդ:

Հայ մատենագրության մեջ պահվել է մի հետաքրքիր բանաստեղծություն, որ նվիրված է թվերի վերև բերված հաշվին: Մարտիրոս Ադիմեյին վեճ է ունեցել Պետրոս Աղուլիսեցու հետ թվերի մեծության մասին և այդ կապակցությամբ գրել է մի բանաստեղծություն, որը և մենք անհրաժեշտ ենք համարում բերել ստորև.

«Ժամատալի յուշիմ եղբայր, զգրեալս բնկալ խոհեմաբար:
 Անցեալ աւուրք բան վիճաբար, զոր տնարկաւ քննողաբար:
 Զբյուրն որ ասաք, տասն հազար է ստուգիւ՝ ծերունեաց շար:
 Քառորդ կրկնեալ նույնքան հազար, նա բաւորի մին գունտ ճարտար:

Նույնագունակ իսկ և յարմար, ըզգունտն աւագ տեսցուք ի շար:

Զի սա ունի զերկրորդըն դար, երկոտասան կետից համար:
 Իսկ գունտն արքայ զիմեաց ի սար, որոյ շաւղի ինքն է գծուար:

Դայ հաւանդակ յերրորդըն դար, վեշտասան կետ սորայն ի շար:

Յեւ աշոորիկ զոր եղաբար, կայսրն խմբիւք բազմահամար:
 Հզօրօք՝ զիմեալ ելնէ ի ծայր, քսանահամար կետն որ ի շար:
 Ներհանք ոգին մինչև ցայս վայր, թիւ համարոյ դասիլ ի շար:
 Քան դայսն աւելն է բռնաբար, առ որս հասումն առնն գծուար»:

(ՀՍՍՌ Մատեն. № 1495, թ. 132ա):

Նույն ձևադրում ուշ շրջանի մեկնիչներից մեկն անհրաժեշտ է համարել ավելի կոնկրետ նշել թվերից յուրաքանչյուրի մեծությունը. «Ծանիք, ով սիրեցեալք մեր ի տէր,—գրում է մեկնիչը,— զի ԺԹ-ն մեկ բյուր է, և տասն հազար բիւրն մեկ դունտ է. և տասն հազար դունտն մեկ անագ դունտ է: Նւ տասն հազար արգարյ գունտն մեկ կայսր դունտ է: Ամենայն համարողութիւն մինչև քայս վայր երթայ: Ո՛վ ուսումնասէր եղբայր, թէ կամենաս յայս նրբահայեաց և խորիմաստ արհեստիս ձեռն արկանել, որ է մայր ամենայն թուոյ, մի ամաչիր, դնա՛ր մօտ վարդապետաց և ուսիր» (թ. 138 ա):

Հնատիպ գրականության մեջ մեկ մեկ պատահում են և հոմեական թվականներ: Հռոմում, Վենետիկում, Վիեննայում և, ընդհանրապէս, Արեւմտյան Եվրոպայի հայկական դպրութեան հրատարակված գրքերի հրատարակության թվականները նշված են լինում հռոմեական թվանշաններով: Հռոմեական թվականները գրվում են հետևյալ նշանադրերով.

I—1	X—10	C—100
II—2	XX—20	CC—200
III—3	XXX—30	CCC—300
IV—4	XL—40	CD—400
V—5	L—50	D—500
VI—6	LX—60	DC—600
VII—7	LXX—70	DCC—700
VIII—8	LXXX—80	DCCC—800
IX—9	XC—90	CM—900
		M—1000

ԳԼՈՒԽ ՏԵՑԵՄԵՆԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՄԱՐ

Հայկական տոմարական տարին ունեցել է 13 ամիս՝ տասն և երկուսը 30 օրով, իսկ մեկը, վերջին ամիսը, 5 օրով: Ամբողջ տարին ունեցել է 365 օր: Հայկական ամիսները շարաւարժած են եղել հետեւյալ հերթականութեամբ.

Նաւասարդ	— 30	օր
Հոռի	— 30	»
Սահմի	— 30	»
Տրե	— 30	»
Քաղոց	— 30	»
Արաց	— 30	»
Մեհեկի	— 30	»
Արեգի	— 30	»
Ահկի	— 30	»
Մարերի	— 30	»
Մարգաց	— 30	»
Հրոտից	— 30	»
Աւելեաց	— 5	»

Բերված 365 օրերից բաղկացած հայկական տարին որոշ սխալ պարունակում է իր մեջ, որովհետեւ աստղաբաշխական տարվա տեւողութիւնն է մոտաւորապէս 365 և մեկ քառորդ, ուստի և չորս տարին մեկ օրով հայկական ամանորը (նոր տարին) ուռաջ է բերկնում: 1460 օրերի ընթացքում այդ ավելացումները գումարելով հասնում է մեկ տարվա, որը լրանալուց հետո, մեկ տարի թվականի վրայից սովորաբար դեն էին նետում, այսինքն՝ տվյալ թվականը կրկնում էին:

Տոները ճիշտ հաշվելու համար Հայաստանում վաղուց կազմվել

էր հայկական և հոռմեական ամիսների ղուգահեռ դասավորութեան աղյուսակ, որը պարունակում էր 532 տարիների թվահաշիվը և այդ պատճառով էլ նա կոչվում էր ՇԼԲ:

Հայկական ՇԼԲ աղյուսակի սկիզբը դրվել է 552 թվին, իսկ բրանից առաջ Հայաստանում առաջնորդվում էին Անգրյաս Բյուզանդացու կազմած երկուհարյուրամյա աղյուսակով: Այդ աղյուսակը կատարելագործել է 7-րդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացին՝ Անաստաս կաթողիկոսի հանձնարարությամբ: Այս մասին վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին: «Իսկ Անաստասայ հայրապետին, — գրում է նա, — հոգացեալ վասն հայկական տօմարի, զի թերևս անշարժ զնա ըստ այլոց ազգաց մարթացէ յօրինել, զի միշտ անշարժ լինիցին տօնք տարեկանաց կամ յնշարժութիւն յնշարժ ժամանակաց: Վասն որոյ առ ինքն զԱնանիա Անեցի կոչեալ՝ որ բանիբուն այնմ արոյեստի էր հմուտ և հրամալ: նմա զստեղծագործել զխնդրելին իւր: Իսկ նորա ջանի վերայ եղեալ և ըստ բոլոր ազգաց պայմանի անշուշտ յօրինեալ զկարգ հայկական տօմարի»^{*)}:

Շիրակացու կազմած ՇԼԲ աղյուսակը վերջացել է 1084 թվին: Նոր աղյուսակը կազմել է Հովհաննես Սարկովադը: Նա կատարել է հետևյալ բարեփոխությունը. 1) Ավելաց ամսի վրա նա չորս տարին մեկ օրով ավելացրել է, ուրիշ խոսքով, նա մտցրել է հոռմեականի նման նահանջ տարվա դադարաբր ան տարբերությամբ, որ հոռմեական տօմարում փետրվարի վրա է ավելանում, իսկ այստեղ՝ ավելաց ամսի վրա: 2) Հայկական նոր տարվա սկիզբը, որ նախատարդի մեկն էր, Հովհաննեսը ամրացրել է օգոստոսի տասն և մեկին և այդ հետևողականությամբ կազմել համապատասխան տախտակ: 3) Կուտակված նահանջների սխալը վերացնելու համար՝ նա 1084 թվականը կրկնել է և իր բարեփոխած տարվա ամիսը փետրվարի 29-ից հասցրել մինչև օգոստոսի 11-ը, ույլ խոսքով ասած, դուրս է նետել մոտ 1 և կես տարի ավելացած ժամանակը:

Այս բարեփոխությունը որոշ չափով բարդություն է ստեղծել հայկական թվականի և մեր ներկա դործածած թվականի հարաբերության խնդրում: Երբ տեքստերում տրվում է հայկական թվականներ, ներկա մեր թվականի վերածելու համար, եթե 1804 թվից

^{*)} Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Տիֆլիս 1912 թ., էջ 92:

Հետո տեղի ունեցող դեպք է, պիտի ավելացնել 551, իսկ եթե առանց է՝ 552: Ի դեպ, այդ հաշվով է կազմված Սամվել Անեցու ժամանակագրությունը:

Սարկավադի և հոռմեական ամիսների հարաբերական տախտակը հետևյալ ձևով է կազմված.

Նվազող	Հոռ	Մյուս	Դմ	Բակմ	Բովա
օգոստոս	սեպտեմ.	հոկտեմ.	նոյեմբեր	դեկտեմ.	հունվար
1—11	1—10	1—10	1—9	1—9	1—8
2—12	2—11	2—11	2—10	2—10	2—9
3—13	3—12	3—12	3—11	3—11	3—10
4—14	4—13	4—13	4—12	4—12	4—11
5—15	5—14	5—14	5—13	5—13	5—12
6—16	6—15	6—15	6—14	6—14	6—13
7—17	7—16	7—16	7—15	7—15	7—14
8—18	8—17	8—17	8—16	8—16	8—15
9—19	9—18	9—18	9—17	9—17	9—16
10—20	10—19	10—19	10—18	10—18	10—17
11—21	11—20	11—20	11—19	11—19	11—18
12—22	12—21	12—21	12—20	12—20	12—19
13—23	13—22	13—22	13—21	13—21	13—20
14—24	14—23	14—23	14—22	14—22	14—21
15—25	15—24	15—24	15—23	15—23	15—22
16—26	16—25	16—25	16—24	16—24	16—23
17—27	17—26	17—26	17—25	17—25	17—24
18—28	18—27	18—27	18—26	18—26	18—25
19—29	19—28	19—28	19—27	19—27	19—26
20—30	20—29	20—29	20—28	20—28	20—27
21—31	21—30	21—30	21—29	21—29	21—28
	22—31	22—31	22—30	22—30	22—29
սեպտեմ.	հոկտեմ.	նոյեմբեր	դեկտեմ.	23—31	23—30
22—1	22—1			հունվար	24—31
23—2	23—2	23—1	21—1		
24—3	24—3	24—2	24—2	24—1	փետրվար
25—4	25—4	25—3	25—3	25—2	25—1
26—5	26—5	26—4	26—4	26—3	26—2
27—6	27—6	27—5	27—5	27—4	27—3
28—7	28—7	28—6	28—6	28—5	28—4
29—8	29—8	29—7	29—7	29—6	29—5
30—9	30—9	30—8	30—8	30—7	30—6

Վերջին	Վերջին	Վերջին	Վերջին	Նախնի	Նախնի	Նախնի
Վերջին	Վերջին	Վերջին	Վերջին	Նախնի	Նախնի	Նախնի
1—7	1—9	1—8	1—8	1—7	1—7	1—6
2—8	2—10	2—9	2—9	2—8	2—8	2—7
3—9	3—11	3—10	3—10	3—9	3—9	3—8
4—10	4—12	4—11	4—11	4—10	4—10	4—9
5—11	5—13	5—12	5—12	5—11	5—11	5—10
6—12	6—14	6—13	6—13	6—12	6—12	
7—13	7—15	7—14	7—14	7—13	7—13	
8—14	8—16	8—15	8—15	8—14	8—14	
9—15	9—17	9—16	9—16	9—15	9—15	
10—16	10—18	10—17	10—17	10—16	10—16	
11—17	11—19	11—18	11—18	11—17	11—17	
12—18	12—20	12—19	12—19	12—18	12—18	
13—19	13—21	13—20	13—20	13—19	13—19	
14—20	14—22	14—21	14—21	14—20	14—20	
15—21	15—23	15—22	15—22	15—21	15—21	
16—22	16—24	16—23	16—23	16—22	16—22	
17—23	17—25	17—24	17—24	17—23	17—23	
18—24	18—26	18—25	18—25	18—24	18—24	
19—25	19—27	19—26	19—26	19—25	19—25	
20—26	20—28	20—27	20—27	20—26	20—26	
21—27	21—29	21—28	21—28	21—27	21—27	
22—28	22—30	22—29	22—29	22—28	22—28	
մարտ	23—31	23—30	23—30	23—29	23—29	
23—1	ապրիլ	մայիս	24—31	24—30	24—30	
24—2	24—1	24—1	հունիս	հուլիս	25—31	
25—3	25—2	25—2	25—1	25—1	օգոստոս	
26—4	26—3	26—3	26—2	26—2	26—1	
27—5	27—4	27—4	27—3	27—3	27—2	
28—6	28—5	28—5	28—4	28—4	28—3	
29—7	29—6	29—6	29—5	29—5	29—4	
30—8	30—7	30—7	30—6	30—6	30—5	

Հայկական տոմարական գրականությունից երևում է, որ հայոց ամսի յուրաքանչյուր օրն ունեցել է իր առանձին անունը: Օրերի անունների այդ ցանկն անհրաժեշտ ենք համարում բերել ստորև.

- | | |
|-------------|---------------|
| 1. Երեզ | 16. Մանի |
| 2. Հրանդ | 17. Ասակ |
| 3. Արամ | 18. Մասիս |
| 4. Մարգար | 19. Անահիտ |
| 5. Ահրանք | 20. Արաղած |
| 6. Մազզեկ | 21. Գրգուռ |
| 7. Ասողիկ | 22. Կորդոիք |
| 8. Միհր | 23. Ծմակ |
| 9. Զոպարեր | 24. Լուանակ |
| 10. Մուրց | 25. Սփուռ |
| 11. Երիզկան | 26. Նալատ |
| 12. Անի | 27. Վահագն |
| 13. Պարխար | 28. Աէին |
| 14. Զանատ | 29. Վարազ |
| 15. Արամազդ | 30. Գիշերալար |

Հայկական տոմարի մեջ անուններ են ունեցել նաև օրվա 24 ժամերը:

Յերեկվա ժամեր

1. Այգն
2. Ծայգն
3. Զօրացեալն
4. Ճառագայթեալն
5. Շառափղեալն
6. Երկրատեսն
7. Շանթեալն
8. Հրակաթն
9. Հուրթափեալն
10. Թաղանթեալն
11. Առաարն
12. Արփողն

Գիշերվա ժամեր

1. Խաարականն
2. Աղջամուղն
3. Մթացեալն
4. Շաղաւտն
5. Կամաւտն
6. Բաւականն
7. Հաւթափեալն
8. Գիզակն
9. Լուսաճեմն
10. Առաւտն
11. Լուսափայլն
12. Փայլածուն

1615 թվականին վերջացավ Երկրորդ, «Սարկալազգիր» կամ «Բեքը» կոչվող թվականը: Զուղայեցի մեկը, Ազարիա անունով, կաղմեց մի նոր ՇԼԲ-ի աղյուսակ և որոշ փոփոխություններ մտցրեց հայկական տոմարի մեջ: Նա փոխեց հայկական ամիսներին անունները՝ հայկական ամանորը օգոստոսի 11-ից տեղափոխելով մարտի 22-ը:

Ազարիա Զուղայեցու տոմարը լայն ընդունելություն չգտավ հայ մատենագրության մեջ: Նրա տոմարը գործածվեց միայն Պարսկաստանի և Հնդկաստանի հայկական գաղութներում:

Բերում ենք Ազարիայի ամիսների անունները՝ հայկականի հետ զուգահեռ դասավորված.

Շամս	1=մարտի 22	Հունվար	1=արամ 16
Ադամ	1=ապրիլի 20	Փետրվար	1=ուլդան 18
Շաբաթ	1=մայիսի 20	Մարտ	1=նիրհան 23
Նախայ	1=հունիսի 19	Ապրիլ	1=շամս 12
Ղամար	1=հուլիսի 19	Մայիս	1=ադամ 12
Նադար	1=օգոստոսի 18	Հունիս	1=շրաթ 13
Քիրայ	1=սեպտեմբերի 17	Հուլիս	1=նախայ 13
Դամայ	1=հոկտեմբերի 17	Օգոստոս	1=ղամար 14
Համիրայ	1=նոյեմբերի 16	Սեպտեմբեր	1=նադար 15
Արամ	1=դեկտեմբերի 16	Հոկտեմբեր	1=թիրայ 15
Ուլդան	1=հունվարի 15	Նոյեմբեր	1=դամայ 16
Նիրհան	1=փետրվարի 15	Դեկտեմբեր	1=համիրայ 16
Աւելայ	1=փետրվարի 15		

Ազարիա Զուղայեցին բացի վերև բերված ամիսների անունները՝ կազմել է հայկական ամսանունների նոր ցանկ.

- | | |
|--------------|--------------------|
| 1. Յողաբեր | 8. Տերևաթափ |
| 2. Ծաղկավետ | 9. Զյունարբեր |
| 3. Գետահոս | 10. Սառուցեալ |
| 4. Պտղաբեր | 11. Հողմաշունչ |
| 5. Առտահունձ | 12. Զինհայ |
| 6. Գոհովին | 13. Մանեկալ |
| 7. Պտղակիթ | (ՀՍՍՌ Մատեն. № 72) |

Հայ մատենագրության մեջ բացի հայկական թվականից պատահում է արաբական, հունական, հռոմեական և հեջրի կոչվող թվականները:

1. Արաբական թվականը բավական խառն է, որովհետև տարբեր թվեր գոյություն ունի նրա համար: Այսպես, Անդրյասի հաշվով, հայկական թվականի վրա պիտի գումարել 6155, Կալսեբաց կոչվող պատմության հաշվով՝ 5761, Շիրակացու հաշվով՝ 5198, Ներայական հաշվով՝ 6289 և այլն:

Բերենք մի օրինակ: Մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Յամի 3. երորդի Շ. երորդի առաջնորդի արարածոց աշ-

խարհի և ի Ռ.որդի Է.Կրորդի կենտրոնին մերոյ զաւատեանն և ըստ
կոտորովայնն մերոյ Հայկազայ Ծ.Կրորդի Ի.Կրորդի Հինգերորդի,
ի թագաւորութեանն Դուկի... Ես Գրիգոր որդի Գրիգորի Պա-
շաունայ ուղարմութեամբ աստուծոյ արժանացայ աթոռոյ իմոյ
սուրբ Գրիգորի»: Ուրեմն, 6501 թվականը համապատասխանում
է մեր ներկա թվականության 1007-ին և ըստ հայոց թվականի՝
525-ին: Արարչական և հայոց թվականի տարբերությունը 5976 է,
իսկ հայոց թվականը գտնելու համար պիտի ավելացնել 552:

Հռոմեականը թվականը գտնելու համար ավելացվում է 248
թիվ: Սերեոսն ունի տեղեկություն. «Յամի ԺԳ... թագաւորէ
Դիակղեախանոս երեք ընկերաւքն թագաւորութեանն հռոմայեցոց»
(Սերեոս, Ս. Մալխասյանցի հրատարակություն, էջ 132): Հռո-
մեական 13 թվականը հավասար է մեր ներկա թվականի 261-ին
($13 + 248 = 261$): (Հռոմեական թվականի առաջին տարին Հռոմի
շինության երկրորդ հազարամյակի առաջին տարուց է հաշվվում):
Կամ մի ալլ օրինակ՝ «Երդ Երզոցի» մեկնության մի ձեռագիր ունի
այսպիսի մի հիշատակարան. «Ի ՆԻԲ (422) թուականութեան հայոց
և ի ՉԻԵ (725) Հռոմի թուականութեանն զրեցաւ... Պետրոսէ
անարժան զրչէ»:

Վրաց քրոնիկոն կոչվող թվականը գտնելու համար անհրաժեշտ
է ավելացնել 780 թիվ: Այսպես, օրինակ, «Համառտտ վրաց պատ-
մություն» մեջ կարդում ենք. «Քրոնիկոնի երեք հարյուր քառասուն
երեքին նույն (Դավիթ) շինողն Անի քաղաքը խլեց Արփասւանից և
կոտորեց նրանց» (տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկի «Վրաց աղբյուրները
Հայաստանի և հայերի մասին», հատոր Բ, Երևան 1946 թ., էջ 37):
Վրաց քրոնիկոնի 343-ը հավասար է $343 + 780 = 1123$ թվին: Կամ
մի ուրիշ օրինակ՝ «(Գեորգը) զրավեց Անին... քրոնիկոնի երեք
հարյուր ութսունին, ձերբակալեց Սալղուսին...» (նույնը, էջ 49):
Այդ տեղի է ունեցել 1160 թվին ($380 + 780 = 1160$ թ.):

Արաբական թվականը գտնելու համար պիտի վերցնել հեջրայի
թվականը և բաժանել 33-ի (որովհետեւ 33 տարվա ընթացքում
մոտավորապես մի տարով առաջ է ընկնում լուսնական նրանց
տարին), ապա ստացած արտադրյալը հանել հեջրայի տրված
թվականից՝ նահանջի տարիները գուրս գալու համար, և հետո՝

մնացածին գումարել 622 թվականը, որը ըստ ավանդության,
Մուհամեդի ծննդյան թվականն է: Այսպես, հեջրայի 1201 թվա-
կանը դառնելու համար պիտի անել հետևյալ հաշիվները.

1) $1201:33=36+1$ մնացորդը^{*})= 37 , 2) $1201-37=1164$,
3) $1164+622=1786$: Կամ մի այլ օրինակ՝ հեջրայի 752 թվա-
կանը դառնելու համար պիտի վարվել հետևյալ կերպ. 1) $752:33=$
 $22+1$ (մնացորդը)= 23 , 2) $752-23=729$, 3) $729+622=1351$ թ.:



*) Բաժանման ժամանակ մնացորդը սովորաբար մեկ տարով ավելաց-
նում ենք:

ՉԼՈՒՆ ՏԱՍԵՐԼՈՒԵՐՈՐԴ

Կ Ա Պ Գ Ր Ե Ր

Գրության այս տեսակը կապղիր է կոչվում այն պատճառով, որ մի տառ կցվում, կապվում է մեկ կամ մի քանի այլ տառերի հետ։ Ռուսական մատենագրության մեջ նա կոչվում է ВЯЗЬ։ Նրա նշանակող տեղ տնտեսելն է՝ նեղ տարածության վրա, որքան կարելի է, շատ դրեր տեղավորելը։ Տողի վերջերում հատկապես, երբ նախատեսված տեքստը անհրաժեշտ է լինում տեղավորել տվյալ տողում, իսկ տեքստն այլևի ընդարձակ է քան տարածությունը, անհրաժեշտ է լինում կապղրերին դնել։

Հայկական գրության մեջ կապղրերն ամենից շատ դործ է անվել միմադրության մեջ։ Մատենագրության մեջ, համեմատաբար, նրանք քիչ են պատահում։ Քիչ են նաև միջնագրյան վաղերադրերում։

Կապղրերը մեր գրությանը դրեթե հավասար հնություն ունեն։ Կապղրերի երեք օրինակ մենք ունենք զեռ ևս Հոսիսիմեհի տաճարի 618 թ. արձանագրության մեջ, երկու օրինակ՝ Բաղավանի 639 թ. արձանագրության մեջ, չորս օրինակ Մաստարայի 640 թվի արձանագրության մեջ և այլն։ 9—10-րդ և ավելի ուշ դարերի արձանագրությունների մեջ նրանց թիվը դնալով մեծանում է։ Օրինակ՝ Մարմաշենի 1029 թվի արձանագրության մեջ մենք հանդիպում ենք տասից ավելի կապղրերի։ XV—XVI դարերի արձանագրությունների մեջ նրանք ավելի շատ են։

Հայկական ձեռագրերում կապղրերը, ինչպես ասացինք, շատ քիչ են մեղ հանդիպում։ 9—10-րդ դարի ձեռագրերում նրանք սովորաբար հանդիպում են տողի վերջում։ Երբ անհրաժեշտ է լինում տվյալ տառն անպայման տեղավորել բառավերջում, այն

Ժամանակ վերելից, աջից, շատ փոքր մեծությամբ, կցում են նախավերջին տառին:

13—14-րդ դարերի ձեռագրերում մեզ հանդիպում են միայն մի քանի հաճախ գործածվող կապերը և այն էլ հատկապես հետ այնքան խառնված, որ կարելի է նրանց հապավում-կապ-երը անոմանել: Դրանք հետևյալներն են.

Տ	-	Տն	յ	-	յո
վ	-	վս	լ	-	լս
վ	-	վր	յ	-	այ

և այլն:

Այս կապերի մի մասը մտել է «Նշանագիր իմաստ-նոց»-ների մեջ:

Կապերության մեջ հայկական տառերը հավասար ախտիւթությամբ չեն գործածվում: Որոշ տառեր, օրինակ՝ Ա, Մ, Ո, Ռ, Ս, Տ, Դ ավելի շատ են օգտագործվում, քան մյուսները: Կապերների հիմնական տառերին սրպես օժանդակ տառեր հաճախ գործ են անվում՝ Դ, Ե, Բ, Ի, Խ, Ղ, Ն, Պ, Ի, Փ, Ք տառերը: Կապերների մեջ շատ քիչ կարելի է հանդիպել՝ Զ, Ը, Ժ, Լ, Մ, Չ, Ծ, Յ, Ծ, Զ, Զ և Վ տառերին:

Կապերների զանազան տեսակներ կան: Ամենից շատ կապերվում են իրար հետ երկու տառեր: Այստեղ, սովորաբար, իրար մոտեցող տառերի ուղղահայաց երկու գծիկները միացվում են իրար.

Ա	-	սա	Խ	-	Ի	Ն	-	ն
Ա	-	սթ	Ռ	-	որ	Ն	-	նի
Ա	-	սի	Ա	-	ար	Ը	-	բա
Ա	-	սի	Ո	-	տա	Ա	-	ագ
Զ	-	գե	Ո	-	տ	Ե	-	իս

Կա կապղերի մի տեսակը, երբ երկճյուղ տառի երկու դժիկներն ց մեկին կցվում է որևէ մի այլ տառ: Նման խմբի կապղերի մեծ մասը միացվում է «Ա» կամ «Ս» տառերին:

Ա - աւ

Ա - աւ

Ա - աւ

Ա - աւ

ՀԱ - հա

ՊԱ - պա

Յ - յա

Ա - ալ և այլն:

Մի տառ մյուսի հետ կարող է կապագրվել ոչ թե ուղղահայաց ձուլվելով, այլ կցվելով հիմնական տառի ձողիկին:

Հաճախ կապգրվում են ո՛չ թե երկու, այլ երեք և ավելի տառեր: Այդ առանձնապես շատ է հանդիպում մեղ կնիքների վրա: Բերենք այդ խմբի կապղերից մի քանի օրինակ.

Պ - դագ

Ն - անէ

Ճ - ժամ

ԵՖ - անխափան

ԵՖ - խափ

ՊԱ - պար

և այլն:

Պիտի ի նկատի ունենալ, որ ընթերցանության դեպքում, ոչ բոլոր դեպքերում կապղերի կցված տառերը պիտի կարդալ ըստ հաջորդականության: Որոշ կապղերում այդ օրենքը խախտվում է: Այսպես օրինակ՝

Ա - «միր»
և ոչ «րմե»,

Կ - «ակ» և
ոչ «կա»,

Ա - «ար»
և ոչ
«րա»,

Ն - «սն» և
ոչ «նս»,

Ա - «ես» և
ոչ «սե»:

Ուշադրության արժան են առանձնապես «ու» և «և» տառերի կապգրությունը: Առաջինը թողնում է ներկա դիտողի «մ»-ի ձևը, իսկ երկրորդը՝ «Ա»-ի. աջ ելուստը ուղղահայաց չէ, այլ շեղ ձև է առնում:

ՀՍՍՌ Մատենադարանի № 2961 ձեռագրում, որը գրված է 13-րդ դարում Մխիթար վարդապետի կողմից, նրա մի փոքրիկ հիշատակության մեջ՝ «Մխիթար մեղապարտի դիրս աչս» (թ. 239 ա) կապգրված են հետևյալ տառերը՝

Ֆ - ֆա	Պ - պար
Բ - բա	Տ - տա
Ա - աք	ԳՐՍ - գրես
Ը - յե	ՀՍ - աչս
Պ - դա	

Կան աչնալիսի կապգրված տառեր, որ մի կապգիրը մեկ կամ երկու բառ է պարունակում: Այսպես, ՀՍՍՌ Մատենադարանի № 2001 ձեռագրում (թ. 203) կապգրված է «Թումաս արեղան» մի կապգրով: Ղարաբաղի մելիքների Պետրոս առաջինին ուղարկած նամակների մեջ եղած կնիքներում մելիքների անունների մեծ մասը կապգրված է մի քանի կապգրերով:

Անհրաժեշտ ենք համարում բերել կապգրերի ցանկերը, որոնք հրատարակել է դոց. Կ. Ղաֆադարյանն իր «Հայկական գրի սկզբնական տեսակները» աշխատության մեջ՝ զաստվորելով այն բնույթի աչքբեհական կարգի: Այդ ցանկից որոշ կապգրեր, որոնք կապգրության մեջ շատ դորժածական չեն, մենք զուրա ենք հանել:

Ա - ար	Ն - ան	Է - բարե	Ե - ես
Ա - ազ	Ն - անն	Վ - գա	Ե - ես
Ա - ագր	Ն - առ	Վ - գագ	Ե - եր
Ա - առ	Ն - առա	Վ - գե	Ե - եւան
Ա - աի	Ա - աւ	Գ - գե	Զ - զի
Ա - աիս	Ա - աւ	Դ - դե	Է - եի
Ա - աի	Ա - աւ	Ս - զս	Ը - ըս
Ա - առ	Ա - ար	Պ - գոր	Թ - թե
Ա - աճ	Ա - ար	Փ - գր	Թ - թե
Ա - աճաւ	Ա - արգ	Ս - դա	Թ - թե
Ա - աճք	Ա - արդ	Ն - դե	Թ - թե
Ա - աճն	Ա - արի	Ն - դե	Թ - թե
Ա - աճն	Ա - աւ	Ա - դաի	Թ - թե
Ա - աճս	Ա - ար	Ա - դաճ	Թ - թե
Ա - աւ	Ա - ար	Դ - դո	Թ - թե
Ա - աւ	Ա - աի	Ե - եւ	Թ - թե
Ա - աւի	Ա - աք	Ն - դի	Թ - թե
Ա - աւիս	Ա - աք	Ե - եի	Թ - թե

ՊԵ - պե	ԷԷ - սիւնէ	ՍԱ - տն	Ե - ն
ՊԻ - պի	ՍԽ - սիւ	ՍԱ - տար	Դ - տ
ՊԼ - պլ	ՍԿ - սկ	Ե - տե	Փ - փ
ՊՃ - պոճ	Ս - սն	Բ - տի	Փ - փա
ՊՊ - պո	Ո - տո	Ե - տիւս	Փ - փար
ՊԱ - պար	Մ - մ	Տ - տն	Ն - ռն
ՊԱ - ա	Վ - վա	Ո - տո	Յ - ցի
ՍԱ - սա	Վ - վար	Ե - տս	Յ - ցու
ՍԻ - սի	Վ - վ	Վ - տվ	
Ս - սի	Վ - վն	Յ - ց	



ԳԼՈՒԽ ՏՈՍԵՐԳՐԵՐՈՐԷ

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Հայկական մանրանկարչությունը պաշտոնաֆիալի մեր ներկա դասընթացում հետաքրքրում է մեզ միայն այն շախմատ, ինչ շախմատի նա օգնում է պարզելու ձեռագրի գրչության վայրը, գրելու ժամանակը և որոշ դեպքում նաև՝ հեղինակը: Հայկական մանրանկարչության յուրաքանչյուր դպրոց, ինչպես հայտնի է, ունի իր որոշ առանձնահատկությունները, որի հիման վրա կարելի է ասել, թե այս ձեռագիրն այսինչ դպրոցի գործն է, նկարված է այսինչ վայրում, այսինչ ժամանակ: Այդ առանձնահատկություններն էլ հենց օգնում են մեզ ձեռագրերի ճիշտ բնութագրման գործում: Այդ օգնությունը մեծ է հատկապես հայկական դարդանկարված այն ձեռագրերի համար, որոնք չունեն հիշատակարաններ:

Մանրանկարչությունը, պետք է խոստովանել, հայկական արվեստի պատմության ամենաշմշակված բնագավառներից մեկն է: Ո՛չ միայն մենք մինչև այժմ չունենք առանձին նկարիչների գործերի գիտական խորն ուսումնասիրությունը, այլև չի ճշտված թե Հայաստանում ինչ դպրոցներ են գոյություն ունեցել: Խոսվել է մեզ մոտ միայն Խիզանի դպրոցի մասին և մասամբ՝ Կիլիկիայի, համարելով վերջինս «արքունական-աղաղեմիական», որն արժատրենն սխալ է և շփոթվում է արքունիքի պատվիրատու Թագավորը կամ այլ ֆեոդալը՝ աշխատանքն ամիջապես կատարող-ստեղծագործող հասարակ նկարչի հետ*): Մեզ մոտ, փաստորեն,

*) Հայկական մանրանկարչությանը նվիրված ամբողջական և լուրջ աշխատանք է հանդիսանում 1939 թ. Լենինգրադում հրատարակված Սվիրինի «Миниатюра древней Армении» աշխատությունը:


մինչև այժմ ստմերի տակ են մնացել մանրանկարչական օրիգինալ ու բարձր արժեքներ տվող մի շարք դպրոցներ (Սյունյաց, Հաղբատի և ուրիշներ)։ Հավակնություն չունենալով մեր ներկա գաղութացում մշակել մանրանկարչության դպրոցների հարցն քնդհանրապես, որովհետև դա մասնագիտական այլ հարց է և հայկական մանրանկարչությամբ զբաղվող մասնագետները ոչ տիկի զբաղվին զրանով, սակայն այնքան, որքան ձեռագրի քննության համար անհրաժեշտ է նախնական ծանոթություն տալ հայկական մանրանկարչության մի քանի կարևոր դպրոցների մասին, այդ չափով անհրաժեշտ ենք համարում կանգ առնել նրաջ վրա։

Մեզ հասած հնագույն հայկական մանրանկարչության նմուշները—X—XI դարերից են և համընկնում են ֆեոդալական հարաբերությունների զարգացման և խորացման շրջանի հետ։ Կասկած չկան չի կարող, որ հայկական մանրանկարչության սկիզբը X դարից չէ։ X—XI դարերի մանրանկարչության նմուշները զարգացման բարձր շրջանի գործեր են և հիմք են տալիս ենթադրելու, որ մանրանկարչության այդ զարգացմանը նախորդել է նախապատրաստման մի երկար շրջան։

X—XI դարի մեզ հասած մանրանկարչական նմուշները մի ուղղության, մի դպրոցի գործեր չեն։ Մեր կարծիքով, նրանք պիտի բաժանել երկու խմբի։ Առաջին խմբի մեջ են մտնում ՀՍՍՌ Մատեն. կրկնագիր մաշտոցը և № 725 ձեռագիրը, իսկ երկրորդ՝ Մլքեի ավետարանը, փղոսկրյա ավետարանը և ՀՍՍՌ Մատեն. №. 208 ձեռագիրը։

ՀՍՍՌ Մատենադարանի կրկնագիր մաշտոցը պահել է միայն մի խորան։ Ձեռագիրը լրացվել է 13-րդ դարում ոմն Հովհաննեսի կողմից և հետո գրվել Մաշտոցի տեքստը։ Ձեռագրի նախնական տեքստը զբված է եղել, մեր կարծիքով, 10-րդ դարից սուաջ։ Այդ նույն ժամանակին է վերաբերում նաև մանրանկարչական մեծ արժեք ունեցող խորանը։ Այդ նույն խորանի նկարչության զարդոցին են պատկանում նաև մեր Մատենադարանի թիվ 725 ձեռագրի զարդանկարները, որոնք նկարված են 1071 թվին։


Ի տարբերություն մյուս ժամանակներում գրված ձեռագրերի, մանրանկարչական այս դպրոցին հատուկ է կապույտ և կանաչ գույների գործածության գերակշռությունը, իրար հետևող մի շարք կիսախորանների նկարումը, խաչի, ինչպես և քրիստոնեա-



Փղոսկրյա ավետարանի խորաններից մեկը:

Կան այլ զարդագրությունների բացարձակ բացակայությունը, խորանների միջև առանձին շրջանակներում գիշատիչ կենդանիների (առյուծ, բազե, արծիվ, և այլն) նկարումը, Վարդերի փունջերով խորանների զարդարումը և այլն:

Երկրորդ խմբի մանրանկարչության նմուշներից են, ինչպես ասացինք, ՀՍՍՌ Մատենադարանի «Փղոսկրի» կոչվող ավետարանի (998 թվից), Վենետիկ Մխիթարյանների Մատենադարանի «Մէքե թագուհու» ավետարանի (903 թվից) և Բանդարանի № 208



Մլրեի տվետարանի խորաններից մեկը:

ձեռագրի մանրանկարչությունը: Այս ձեռագրերի մանրանկարչությունը, կրկնագրի մաշտոցի համեմատությամբ, միանգամայն այլ դպրոցի պատկանող գործեր են: Այստեղ արդեն որոշ ազդեցություն ունի բյուզանդական մանրանկարչությունը: Այս դպրոցի մանրանկարչությանը հատուկ է նկարների շքեղություն, մանրանկարչական մանրամասնություններ, պայծառ գույներով սյունազարդ խորանների նկարում, տիպերի ճիշտ արտահայտում, հագուստների ծալքերի վարպետ պատկերում և այլն:

Հնագույն մանրանկարչության մեջ, պետք է ասել, որ գերիշխում է ճարտարապետական ձևերի ուժեղ ազդեցությունը: Ճարտարապետության մեջ գործածվող սյուները, կամարները, դարհանկարները և այլն, գրեթե անփոփոխ նկարվում է ձեռագրերում: Եվ դարձանալի չէ, որ նրանք կոչվում են «խորան»-ներ: (Հնում «խորան» է կոչվել շենքը՝ մատուռը, տունը և տաճարը):


Հայկական մանրանկարչությունը մեծ չափով զարգանում և ծաղկում է Կիլիկյան դպրոցում: Այստեղ արդեն հանդես են գալիս մի շարք տաղանդավոր նկարիչներ (Թորոս Ռուսլին, Սարգիս Պիծակ և ուրիշներ), որոնք խոշոր գործ են կատարել հայկական մանրանկարչության զարգացման գործում: Կարևոր է նշել, որ այս դպրոցի ստեղծագործության լավագույն մի շարք նմուշներ հասել են մեզ և այժմ մենք հնարավորություն ունենք տալ կոնկրետ այդ դպրոցի մանրանկարչության համապատասխան արժեքավորումը:

Կիլիկյան դպրոցի մանրանկարչությանը, ինչպես ասել ենք արդեն, սխալ է «արքունական-ակադեմիական» համարելը: Այդ դպրոց մանրանկարչություն ստեղծողը ո՛չ թե արքունիքում նշանավոր ազնվականներն են եղել, այլ ցածր խավի «սեպագործ» նկարիչները, որոնք աշխատել են առաջինների պատվերով:

Կիլիկյան դպրոցի մանրանկարչությանը, ամենից առաջ, հատուկ է նկարչական բարդ կոմպոզիցիա: Նկարում են օրինակ՝ ո՛չ միայն մարդկանց իրենց գրասեղանի առաջ, ինչպես սովորաբար նկարված են լինում հայկական մի շարք այլ դպրոցների ձեռագրերում, այլև տալիս են այդ մարդու հետո շրջապատը—վանքեր, պալատներ և այլն: Կիլիկյան մանրանկարչության մեջ մեծ չափով դբրծ են ածում ոսկի: Նրբեմն ամբողջ նկարի շրջանակի ազատ եղած ֆոնը ծածկում են ոսկով: Մարդկանց դեմքերին տալիս են նրանց հոգեկան ապրումները: Ահա ձեզ մի գրիչ, որը ձեռքը ճակատին դրած տխուր նայում է. տխրությունը նրա դեմքին տեսնվում է: Լուսանյազարդությունների մեջ սկսում են գործածել թռչնազրեր, ծաղկազրեր, զազանազրեր և այլն:

Կիլիկյան շրջանի մանրանկարչական ունիկումները բազմաթիվ են: Բացառիկ արժեք ունեն 1173 Նարեկը, Հեթումի «Ճաշոցը» և այլն: Միայն Սարգիս Պիծակի մանրանկարած ձեռագրերից մեզ են հասել հինգը, որոնք գրված են 1320—1352 թվերի ընթացքում: Չենք խոսում այլ ունիկումների մասին: Կիլիկյան


Историческое изображение жизни и смерти Иисуса Христа



մանրանկարչության մեջ, պետք է ասել, որ նկատելի է ռեալիզմի սրտը հետքեր:

Այս դպրոցը հայկական մանրանկարչության մեջ իր դար-դացման բարձր աստիճանին է հասնում 12—14-րդ դարերում:

Կիլիկյան հայկական մանրանկարչության դպրոցը մասամբ իր անկումն է ապրել XIV դ.: Նա սկսում է թեքվել դեպի գրա-ֆիկաչյան և միստիկաչյան:



Մի էջ Խրդանի մանրանկարչությունից:

Հայկական մանրանկարչական կարևոր դպոցներից է Սյուն-յաց դպրոցը, (Գլաձոր, Թանահատ, Գնդեան, Տաթև և այլն): Մանրանկարչական այս դպրոցը զարգանում է հատկապես 13—15-րդ դարերում: Նրա բնորոշ հատկանիշներից է՝ խառցած, հաստ շտրիխներով նկարչությունը: Մի քանի գծերով հաջողվում է նրանց, օրինակ, տալ արեզարդ ծերունու դիմագիծը: Նրեր-չորս



Մերուն Մազկողի ավտոգրաֆ. Նկարը

գծով շատ հաջող ձևով արվում է գլխարկը և այլն: Խորանների վերևից դարդարում են թռչուններով—աքաղաղներ, կաթալներ, սիրամարգներ և այլն:

Հայկական մանրանկարչության լավագույն և օրիգինալ դպրոցներից է Խիզանը: Գույների մեջ գերակշռում է բաց կարմիր գույն—

նը: Կատարվում են շատ բարդ կոմպոզիցիաներ: Մարդկանց և կենդանիներին նվարում են ո՛չ թե սառած դրոշյամբ, այլ որոշ գործողության մեջ: Ահա ձեզ երկու աքաղաղ խորանի վրա պատրաստվում են կռվելու, մի այլ տեղ արագիլը կանգնած է մի ոտքի վրա՝ բերանում բռնած օձ, եղջերուն նկատել է մարդուն և փախչում է, հովիվը սրինգը բերանում նվագում է և այլն: Խիզանի դպրոցի մանրանկարչության մեջ հաջող ձևով նկարված են մարդկանց ողջ խմբեր՝ դարձյալ որոշ գործողության մեջ: Զարգանկարներում շատ են գործադրվում կծիկի նման իրար փաթաթված զարդարանքներ: Գերակշռում է նաև տերևաձև զարդարանքը: Այս դպրոցի ծաղկման շրջանը 14-րդ դարն է:

Նվ, վերջապես, մի քանի խոսք Զուղայի մասին: Այս դպրոցը սկզբում զարգանում է Հին Զուղայում, Նախիջևանում, իսկ Շահ Աբբասի գաղթեցումից հետո շարունակում է իր զարգացումը Պարսկաստանում և Հնդկաստանում: Հետագայում Զուղայի օրինակով ձևազրեր են սկսվում գրվել ու նկարվել նաև Պոլսում և այլ վայրերում: Զուղայի դպրոցի մանրանկարչությանը հատուկ է նկարչության անշափ շքեղությունը՝ ոսկով և վառվուռն այլ գույներով: Նկարներ ու զարդագրություններ կարելի է հանդիպել ձևազրի գրեթե ամեն մի էջի վրա: Կարևոր է շեշտել այն հանգամանքը, որ այս դպրոցի, ինչպես և հայկական մյուս բոլոր դպրոցների ամենադրական կողմն առն է, որ նրանք թեկուզ հազար, երկու հազար նկար նկարելիս լինեն, միևնույն ձևազրում երբե՛ք չեն կրկնում մյուս էջում նկարածը: Զուղայի դպրոցը ունի սակայն մի թերություն, — նրա մեջ քիչ է օրիգինալությունը: Այս մանրանկարչության հիմքը հանդիսանում է Կիլիկյան և խիզանի մանրանկարչությունը: Օգտվել են նաև եվրոպական մանրանկարչությունից: Այս դպրոցի ծաղկման շրջանն է 16—17-րդ դարերը:

Սրանով չի վերջանում հայկական մանրանկարչության դպրոցների թվարկումը: Մանրանկարչական բարձր արժեքի ձևազրեր են հասել մեզ Բաղեշից, Սանահինից, Կաֆայից և հայկական գրչության այլ կենտրոններից: Սակայն այս ձևազրերը, ինչպես առել ենք, կարոտ են մասնագիտական լուրջ ուսումնասիրության:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

Հայկական ձեռագրերում կատարված փոփոխությունների և աղավաղումների երեք հիմնական տեսակների կարելի է նշել՝ ընդմիջարկություններ (ինտերպոլացիա), հապալումներ և դրշական սխալներ: Նախնական տեքստերի մեծ մասի աղավաղման պատճառը, ինչպես պարզվում է, ընդօրինակող դրշի անուշադրության և կամ թե՛ ուշ շրջանում նպատակադրված ձեռք կատարված խմբագրության հետևանքով է:

ա) Ընդմիջարկություն. — Ընդմիջարկություն կամ ինտերպոլացիա են կոչվում նախնական տեքստում ընդօրինակող դրշիների կատարած այն լրացումները կամ մեկնությունները, որոնք արտագրվում են նախնական տեքստի հետ և ներկայացվում որպես նրա օրգանական մասը: Միջին դարերում հաճախ է պատահում, երբ որեւէ մեկին անհրաժեշտ է համարել իր ունեցած ձեռագրում նախկին աշխարհագրական անունները մեկնել իր ժամանակի դորժածական անուններով և կամ թե՛ նախկին հատվածի այս կամ այն մասը թերի համարելով՝ կատարում է իր կարծիքով անհրաժեշտ լրացումներ և շտկումներ, որի հետևանքով ընդօրինակությունը հեռանում է իր նախկին բնագրից:

Ընդմիջարկությունները ամենից շատ են հանդիպում մեզ պատմագիտական գրականության մեջ: Նրանք, համեմատաբար, քիչ են կրոնական-կանոնական տեքստերում: Վերջինիս մեջ փոփոխություններ կամ լրացումներ կատարվելը համարվել է անթույլատրելի մի գործ:

Կրօնական-կանոնական տեքստերը հանձնարարվել է անաշված մարդկանց արտագրելու: 1243 թ. Սաի ժողովի կանոնների մեջ հատուկ կետ է մտցված. «ՁՍուրբ գիրս եկեղեցւոյ գրել արուեստաւորաց, և ուղղափառաց և գիտնոց» (էջ 175):

Ընդմիջարկութիւններով ամենից շատ ազատագրված տեքստեր՝ տարեգրութիւններն են և աշխարհագրութիւնները: Պարզվում է, օրինակ՝ որ Սամվել Անեցու անունով հրատարակված ժամանակագրութեան տեքստի ավելի քան կես մասն իրենը, հեղինակինը չէ, այլ ուշ շրջանի գրիչների կողմից ավելացված դործ է: Այդ պարզ երևում է իրեն՝ Անեցու կենդանութեան ժամանակ (1176 թ.) ընդօրինակված ժամանակագրութեան, որը, բարեբախտաբար, պահպանվել է ՀՍՍՌ Մատենադարանում: Այդ ձեռագրի հրատարակած տեքստի հետ կատարած համեմատութեան հիման վրա, այժմ հնարավոր է նշել այն բոլոր հատվածները, որոնք ուշ շրջանում են ավելացված: Ըստ որում, պարզվում է, որ այդ ավելացումները ո՛չ թե մի, այլ մի շարք գրիչների գործեր են:

Ուշ միջնադարյան հայ մատենագրերի տեքստերում եղած ընդմիջարկութիւնները, համեմատաբար, հեշտ է ճանաչել, որովհետեւ նրանք մեզ հասել են հնագույն ընդօրինակութիւններով կամ ինքնագրերով, բայց դժվար է հին հայկական մատենագրերի աշխատութիւններում եղած ընդմիջարկութիւնները ճանաչելու հարցը, որովհետեւ նրանք մեզ հասել են ուշ շրջանի արտագրութիւններով: Նրբեմն նման ընդմիջարկութիւններ վճռական նշանակութիւն ունեն տվյալ տեքստի հեղինակը պարզելու խնդրում: Որպես օրինակ կարելի է բերել այստեղ Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի տեքստը: Ուշ շրջանի ընդօրինակողներն այդ տեքստում ավելացրել են մի շարք աշխարհագրական նոր անուններ («Ղրիմ», «Յօզո ռուսաց», «Շիրան» և այլն), որոնք թշուրձաբար կռվան են դարձել որոշ անուշադիր բանասերների մոտ Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի ժամանակը որոշելու խնդրում: Տեքստի վերլուծման հիման վրա, անպաժան, հնարավոր է պարզել նրա գրվելու ժամանակը, բայց վերլուծումը գիտական և հիմնավոր կարող է լինել այն դեպքում միայն, երբ նախքան տեքստի վերլուծումը փորձ կարվի ազատել տեքստն ընդմիջարկութիւններից:

բ) Հապավում.—Հին հայկական ձեռագրերում բազմաթիվ են նույնպես այս կամ այն հին մատենագրերից առանձին հատված-

ներքին հապալման դեպքերը Դրա պատճառը հիմնականում երկուս
 է. մեկ, որ նյութի պակասությունը հնարավորություն չի տալիս
 ընդօրինակել տվյալ մատենագրի ողջ աշխատությունը և ընդօրինակող
 գրիչը նպատակահարմար է համարում, իր կարծիքով, ավելորդ,
 երկրորդական արժեք ունեցող մասերը կրճատել, իսկ
 մյուսը՝ երբ տվյալ աշխատության առանձին հատվածները, երբեմն
 անգամ գլուխները, խորթ են համարվում տվյալ ժամանակաշրջանի
 իրավական նորմաներին և պահանջվում նրանց համար խորթ
 համարված մասերը դուրս հանել: Առաջին դեպքի համար
 կաջելի է մատնացույց անել Սոկրատի պատմությունը և «Աշխարհացույց»-ը,
 որոնք մեզ հասել են երկու խմբագրություններով — համառոտ և
 ընդարձակ, իսկ երկրորդ դեպքի համար՝ Շիրազացու «Տիեզերագիտություն»
 տեքստը: Վերջինից, ինչպես պարզվում է մեր Մատենադարանի մի
 ձեռագրում պահված «Տիեզերագիտության» նախնական տեքստի
 ընդօրինակությունից, կրճատվել է մոտ 23 տեղում: Կրճատված են
 գլխավորապես այն տեղերը, որոնք համարվել են հակաքրիստոնեական:
 Կարելի է բերել մի օրինակ՝ «Արդ ահա հասար ի կէտն ոչ
 դուզնաքեալ, այլ ի մեծն և յահագին երկինն վերին,
 որում հոչնք եթեր կարդացին, և քաղ-դեանցիք հուր
 թաղկեալ ասացին, որում և բազումք եկեղեցւոյ հաւանեցան:
 Թէպէտ և շարաց փիլիսոփայիցն ոչ թուեցաւ հաճոյ,
 բայց մեզ տելորդ է զնոցոցն ճառել, լքեալ թողցուք
 զխոստեալսն...»: Անանիայի Շիրակունտոյ Մնացորդք բանից՝
 հրատ. Պատկանյանի «Յաղագս երկնի» գլխում): ՀՍՍՌ Մատեն.-
 ր ընդարձակ և լավագույն ընդօրինակությունն ունի. «Արդ՝
 ահա հասար ի կէտն ոչ դուզնաքեա, այլ ի մեծ յահագին
 երկինն վերին, որում յոչնք եթերն կարդացին և հելեանցիք
 հուր թաղկալ ասացին, դուրս և բազումք եկեղեցւոյ հաւանեցան:
 Թէպէտ և շարաց փիլիսոփայից ոչ թուեցաւ հաճոյ [բանգի
 կէսքն ի նոցանէ՝ երկինս բազում և աշխարհս անհամարս
 ասացին, և կէսք ի նոցանէ՝ ի մի տարր երկնի
 զերկինս ամենայն ձուլեալ ասացին. և զնիւթոյն
 ասացին՝ եթէ է այլ իմն բնութիւն պարզ, աւտար
 ի շորից բնութեանց, զի ոչ հուր է և ոչ աւր, ոչ հող և
 ոչ ջուր, այլ այլ իմն է. անհն լուսաւոր և խիստ որպէս զբնութիւն
 պաղպաղակի և կամ որպէս զվանակնէ ասին՝
 եթէ ի ջրոց ոչ պաղեալ խստանան՝ մեծաւ հաստատուն
 կցուածով առնու գալ ի կերպարանս ականջ
 պատուականաց և ասեն՝ եթէ վանակն պայծառ
 լուսաւորութեան

աւերոյ և ջրոյ, յորոց առնուն նորա զարինակն նիւթոյ հաստա-
տութեանն: Բայց ինձ արդարեւ ծաղու և եպրանաց արժանի
թուին, որք զանձին առ իմաստունս ունէին և յիմարեցան: Երբ
զերկիր անսկիզբն և անկատար ասացին, որպէս ոք զի տեսանիցի
գիր բոլորակ դրոշմեալ յումէ և իցէ. և վասն զի ոչ էր ինքն ի
տեղն, յորժամ հանաւ դիրն բոլորակ. և շերտի թէ անսկիզբն է:
Բայց պարտ է նկատել մտաւք եթէ որ հհան զնա. անդրէն արար
նման սկիզբն է նույն բովանդակեաց գնա կատարմամբ: Եւ արդ՝
աւելորդ է մեզ վասն նոցա երկարաբանել, լքեալ թողեցուք
զխոստեալսն...» (ՆՍՍՌ Մատենադարանի թիւ 2189 ձեռագիր,
թերթ 481 բ):

Քառակուսի յիակագծի մեջ առնված ամբողջ հատվածը, ինչպէս
տեսնում ենք, Շիրակացու տեքստից կրճատվել է: Այն ժամանակ,
եբբ քրիստոնեական եկեղեցին Հայաստանում եւ Ետեղծում է իր
անշարժ կրօնական դոգմաները, անհրաժեշտ է համարում ժա-
մանակակից տեսանկյունով վերանայել հրապարակի վրա եղած
ամեն տեսակ գրականությունը: Որոշ աշխատություններ նա
անհրաժեշտ է համարում ամբողջապես դուրս հանել, որոշ աշ-
խատություններից նա կրճատում է և որոշ աշխատություններ
հիմնովին լամբագրման ենթարկում: Շիրակացու աշխատություն-
ները եւ ենթարկվել են նման վերանայման:

Անհրաժեշտ է նշել, որ մեզ հասել են հակաքրիստոնեական
համարված որոշ գրականության ցուցակներ: Այդպես՝ մեր
Մատենադարանի թիւ 1869 ձեռագրում, որն ընդօրինակված է
Անգրյաւ գրչի կողմից 1585 թվականին, բերված է հետևյալ ցու-
ցակը.

«Այս են անուանք ԺԶ. սուտ գրոցն, որ եկեալ (են) ի Հեր-
ձուածուդ ասորոց և ոչ ի յուղղափառ ասորոց. իմանայք՝ որ է այս.
Աղամայ կտակն, Ծիռն արհնութեան, Փիփիեանն, Գորտոսակն,
Կիրակոսակն, Ղոսիմուն, Պետրոսի տեսիլն, Դիաթեկն, Աստուա-
ճածնին պատմութիւն, Սեբեռան (ընդգծումը մերն է—Ա. Ա.):
Փիւրհոնացիքն, Մանկութիւն տեսուն, Լուսավորչին տեսիլքն,
զԱգաթանգեղի մատեանսն, Գրիգորի և Բարսեղի հարցմունքն,
զՄանեայ մեկնութիւն(ն) աւետարանի: Եւ որ հաւատալ նոցայ,
նղովի»:

զ) Գրչական աղավաղումներ. — Այս տիպի աղավաղումների
պատճառը դիտարկողապէս ընդօրինակվող տեքստի վրա ընթերց-

ման պատճառով է: Հին հայկական տեքստերը, ինչպես ասել ենք
օրերեն, բառանշատում շունեն, և բացի այդ, պատահում է, որ
ձեռագիրը ջրի մեջ ընկնելով, կամ արևի տակ երկար մնալով
դժվար ընթեռնելի են դառնում: Նման տեքստերն ընդօրինակող
գրիչը, պարզ է, որ պիտի թույլ տա, և թույլ է տալիս գրչական
որոշ սխալներ: Տեքստերում եղած նման սխալներին վերջ տալու
համար րնդունված է կազմել մատենադրերի գիտական, համե-
մատական տեքստը՝ տեքստից ներքև բերելով այն բոլոր տար-
բերակները, որոնք նկատվում են ձեռագրերում: Աղավաղումների
այս տեսակն ավելի լավ պատկերացնելու համար անհրաժեշտ
ենք համարում բերել մի քանի օրինակներ.

«...ոմանք ասացին զզմանէ
(ւայսինքն՝ «յաղագոս կաթին
ծորոյ»—Ա. Ա.) թէ Հանապարհ
է հին, արեգական հետ...»:

(Պատկ. հրատ., էջ 48):
«...ասեմք թէ ամենայն զգա-
լովթիւնքս վերինք և ներքինք
ունին խառնուած միարանու-
թեան առ իրեարս»:

(Պատկ. հրատ., էջ 48):

Եստ էն շփոթվում և աղավաղվում հետևյալ տառերը.

Երկարագիր

Բոլորգիր

Նոտրգիր

Տ—Մ

զ—զ

ս—ս

Գ—Գ

ի—բ

ք—ք

Յ—Յ

ւո—ա

ջ—ջ

Ի—Ի

սց—ալ

ղ—ղ

Չ—Չ

ե—ե

ծ—յ

Է—Ե

սո—աւ

ա—աւ

Ձ—Ձ

վ—դ

մի—գի

Ծ—Ժ

ո—ո

իս—իւ

Ո—Ռ

Գ—Դ

դ—շ

Ք—Բ

ա—ա

շ—լ

կ—հ

ե—ե


ժ—ծ

ս—ս

Ընդօրինակող գրիչները սխալ են կարգում իրենց արտագրած
այս կամ այն տեքստը, նրանց կատարած սխալը մտնում է ձե-

ապրիլի մեջ և նրա օրգանական մասը դառնալու բաղաքացիություն
ձեռք բերում: Գրիչների բաց թողած ահա այս սխալները շատ
հաճախ հիմք են դառնում որոշ ուսումնասիրողների մոտ՝ սխալ
ֆերակացություններ հանելու: Գրչական այս աղավաղումներից
աղատվելու համար հայկական մատենագրերից մի քանիսը հրա-
տարակվել են ձեռագրական համեմատություններով (Ազաթան-
դեղոս, Խորենացի, Ղազար Փարպեցի, Հովհան Մամիկոնյան և
այլն): Սակայն սա դեռ հայկական աղբյուրների գիտական հրա-
տարակության սկիզբն է միայն: Գեո մեր մյուս աղբյուրները
սպասում են հերթի: Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրու-
թյամբ զբաղվող մասնագետների համար անհրաժեշտություն է
օգտագործել սկզբնաղբյուրները:

Բացի նշված աղավաղումներից, պատահում են ձեռագրերում
թերթեր հետառաջությունից կամ պակասած թերթերի հետևանքով
առաջացած աղավաղումներ: Նախնական ձեռագրում թերթերը
խառնվում են, կամ թերթերից ընկնում են, իսկ ընդօրինակող
գրիչն անուշադրությամբ ձեռագրում եղած թերթերի հետևողա-
կանությունը արտագրում է, չի նշում պակաս թերթերը, որի
պատճառով հետագայում տեքստը աղճատման է ենթարկվում:
Ուսումնասիրելիս՝ անհրաժեշտ է սկզբնաղբյուրների ամբողջու-
կանություն վրա լուրջ ուշադրություն դարձնել:



ԶԵՌԱԳՐԵՐԻ ՍԻԳՆԱՏՈՒՐԱՅԻ ԼՐԱՑՈՒՄԸ

Ձեռագրերի ուսումնասիրությամբ զբաղվող յուրաքանչյուր մասնագետ պարտավոր է տալ իր օգտագործած ձեռագրի նկարագրությունը կամ, ինչպես ընդունված է առհը, լրացնել ձեռագրի սիգնատուրան: Ձեռագրերի սիգնատուրան լրացվում է հրկու ձևով—համառոտ և ընդարձակ:

Ձեռագրերի համառոտ նկարագրության ժամանակ նշվում է՝ ձեռագրի համարը, բովանդակությունը, գրիչը, գրչության վայրը, թվականը և դրությունը:

Ձեռագրի ընդարձակ նկարագրության ժամանակ ձեռագրից օգտվողը պարտավոր է պատասխանել հետևյալ հարցերին.

1. Ձեռագրի համարը.— ՀՄՍՌ Մատենադարանի ձեռագիրն ուսումնասիրելիս նշվում է ո՛չ միայն ձեռագրի ներկա, նոր համարը, այլ և հինը, եթե, իհարկե, այդպիսի համար ձեռագիրն տառջներում ունեցել է: Օրինակ՝ Կարինյան, Գևորգյան, Սևանի, Լաղարյան և այլն: Այդ արվում է այն պատճառով, որպեսզի հետագայի հետազոտ ուսումնասիրողի գործը: Կարող է պատահել, որ այդ նույն ձեռագիրն այլ համարի տակ օգտագործվել է մի ուրիշի կողմից:

2. Վերնագիրը.— Գրվում է ձեռագրում եղած ամյալ աշխատության վերնագիրը: Եթե ձեռագրի մեջ մտնում են մի քանի նյութեր, այն դեպքում ձեռագիրը համարվում է ժողովածու և արվում է նրա մեջ եղած նյութերի բովանդակությունը (օրինակ՝ 1-ա—13-ա— Ժամանակագրություն Սամուէլի Անեցույ, 12-բ—27-ա Պատմություն Կիրակոսի Գանձակեցույ, 24-բ—72-ա-Արիստակի Պերի արմենիսս և այլն):

3. Թերթերը.— Ձեռագրերը համարակալվում են թվորաբար ոչ թե էջերով, այլ թերթերով: Նկարագրության ժամանակ պիտի տալ

թեթեւեղութիւնը ընդհանուր քանակը: Որեւէ կապակցութեամբ թերթերի ընդհանուր առանձին երեսը ցույց տալու դեպքում առաջին երեսի համար գրվում է «ա» (կամ լատինական a), իսկ մյուս երեսի համար—«բ» (կամ լատինական b) տառերը: Այսպէս՝ 64 ա (64-րդ թերթի առաջին երեսը), 64բ (64-րդ թերթի շուտ ամած երեսը):

4. Գրակները.— Հնում ձեռագրերը գրվել են ոչ թե կաղամբած գրքերով, այլ պրակներով, որ հետո միացվել և կաղամբվել են՝ հաշվելով տվյալ կաղմի մեջ եղած պրակների քանակը: Անհրաժեշտ է նշել ահա այդ պրակների քանակը:

5. Մեծութիւնը.— Նշվում է ձեագրի լայնութիւնը, երկարութիւնը և հաստութիւնը սանտիմետրերով:

6. Նյութը.— Հայկական ձեռագրերի նյութը հիմնականում թուղթն է կամ մազաղաթը, որը և նշվում է: Ըստ որում, նշվում է նրանց գույնը. օրինակ՝ դեղին գույնի մազաղաթ, կապտադուր թուղթ և այլն:

7. Կաղմը.— Նշվում է կաղմը ինչ նյութից լինելը—կաշեպատ տախտակ է, կարտոն է, հասարակ հաստ թուղթ է և այլն: Եթե կաղմին փակցված է լինում կտոր՝ նշվում է նաև այդ մասին: Ի դեպ, այդ կտորները արդյունագործութեան պատմութեան համար արժեքավոր են, որովհետև նրանք գործված են հնում և անվնաս պահպանվել են կաղմի վրա:

8. Պահպանակ.— Պահպանակ կոչվում են ձեագրի տեքստի այն թերթերը, որոնք գրվում են կաղմի մեջ՝ ձեագրի տեքստը պաշտպանելու համար: Ձեռագրերի մեծ մասի մեջ որպէս պահպանակ գործ են ածված հին ձեռագրերի պատառիկներ: Եթե պահպանակի վրա կան գրեր, պիտի աշխատել պարզել նրանց բովանդակութիւնը և նշել սիգնատուրայում:

9. Ձեռագրի վիճակը.— Պիտի նշել, թե ձեռագիրը բավարար վիճակում է, վնասված է, քայքայված է: Եթե վնասված է՝ պիտի նշել վնասվածքի շտիր և այն մասին, թե ձեռագրի որ մասումն է վնասվածքը:

10. Գրութիւնը.— Կարճ նշվում է ձեռագրի էջի վրա ընդօրինակած տեքստը—միասլուն է, երկսլուն է, թե եռասլուն է: Վերջինս հազվադեպ է հայկական ձեռագրերում:

11. Դատարկ թղթեր.— Եթե կան ձեռագրերում դատարկ թղթեր՝ նշվում են նրանց համարները:

12. Տաղերը.— Քանի տող է զտնվում ձեռագրի մի էջում:

եթե էջերում նկատվում են տողերի քանակի տարբերություններ, վերցվում է նրանց միջին թիվը:

13. Գծումներ. — Եթե գծումը ճնշումով է՝ նշվում է այդ մասին քարտում:

14. Բառանշատում. — Նշվում է ձեռագրերի տեքստում բառանշատման կատարված լինել-չլինելը: Պիտի կարճ պատասխանել՝ «այո» կամ «ոչ»:

15. Գիրք. — Ձեռագիրն ինչ գրով է գրված — բուլղաներ կրկնապատկեր է, ուղղագիր կրկնապատկեր է, բուլղաներ է, թե նույն է:

16. Զարգացում. — Այստեղ անհրաժեշտ է տալ ծանոթություն ձեռագրի մանրանկարչական արժեքի մասին — ի՞նչ գույների թանաքով են գրված վերնագրերը և ինչպիսի՞ գարգաթներով (թռչնագրեր, ծաղկագրեր, կենդանագրեր և այլն), կա՞ն արդյոք խորաններ և կիսախորաններ և ի՞նչ մանրանկարչական արժեք են ներկայացնում նրանք, ի՞նչ շկուլպյի գործ են և այլն:

17. Գրիչը. — Ո՞վ է գրել տվյալ ձեռագիրը: Եթե ձեռագրի գրիչները մի քանի հոգի են, պիտի հիշել բոլորի անունները: Եթե ձեռագիրը ինքնագիր է (ավտոգրաֆ), այսինքն գրված է աշխատություն հեղինակի կողմից, նշվում է այդ մասին:

18. Պատվիրատուն. — Ձեռագրերի մեծ մասը գրված է որևէ պատվիրատուի կողմից, որն առաջին հերթին, իր բնականաբան է և բարեկամներով հիշված է լինում հիշատակարանում: Միզնատուրա լրացնողը պարտավոր է պարզել պատվիրատուի անունը և նշել այդ մասին սիզնատուրայում:

19. Ծաղկող. — Խոսքը ձեռագրի նկարչի մասին է: Երբեմն ձեռագրի գրիչը հանդիսանում է նաև ծաղկողը, որի մասին պիտի հիշել: Պատահում են դեպքեր, երբ ձեռագիրը գրելուց մի քանի դար հետո են տալիս ձեռագիրը ծաղկելու (զարդանկարչելու), ուստի և անհրաժեշտ է նշել ձեռագրի ծաղկելու ժամանակը:

20. Կազմող. — Եթե հիշատակարանից հնարավոր է պարզել պարզել ձեռագրի կազմելու ժամանակը, պիտի նշել այդ մասին:


21. Նորոգող. — Ձեռագրի նորոգողները սովորաբար թողնում են իրենց հիշատակությունները, որոնցից պիտի պարզել և նշել նորոգողի անունը և ժամանակը:

22. Ժամանակը.— Նշվում է այն ժամանակը, որը տալիս է ձեռագրի բնագործինակող գրիչը: Փակագծում պետք է տալ նաև մեք ներկա թվականը: Եթե ձեռագիրը գրվել է մի քանի տարվա ընթացքում, պիտի նշել այդ տեղում: Եթե ձեռագիրը շունի հիշատակարանն է կամ հիշատակարանում նշված չէ թվականը, ապա պակասագրության հիման վրա պետք է որոշել բոլոր դարերի և լրացնել սխեմատիկայում:

23. Տեղը.— Գրություն վայրը նշելիս պիտի հիշել, թե որ քաղաքում, կամ գյուղում է գրվել (պակագծում՝ բնագրված է նշել՝ տեղալ վայրի որ շրջանում գտնվելը):

24. Հիշատակարան և հիշատակագրություն.— Նշվում է ձեռագրի այն էջերի համարը, ուր գտնվում է գրչի հիշատակարանը կամ ուշ շրջանում ձեռագրի էջերի վրա արված հիշատակագրությունը: Զեռագրի ավելի բնագրածակ բնութագրման ժամանակ արագրում են նաև հիշատակարանները և հիշատակագրությունները:

25. Ծանոթություններ և տեղեկություններ.— Այստեղ գլխավորապես տրվում է տվյալ ձեռագրի համառոտ պատմությունը—մինչև Մատենադարանի ձեռագրերի ժողովածուի մեջ մտնելը ինչ մարդկանց մոտ է գտնվել, ո՞ր ժամանակներում, բանասիրության մեջ հայտնի է այդ ձեռագիրը թե՛ ոչ, և եթե հայտնի է՝ ի՞նչ չափով, ի՞նչ կապակցությամբ և այլն:



ԳՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԸ

Հնագույն նյութը, որի վրա մարդիկ բացի քարից և կավից գրել են սկսել, պապիրուսն է հանդիսացել: Նա գործածության մեջ է մտել մոտավորապես չորս հազար տարի մեր էրայից առաջ: Պապիրուսի գործածության կլասիկ հայրենիքը եգիպտոսն է հանդիսացել:

Պապիրուսը հայ գրչության մեջ մասսայաբար գործածության մեջ չի դրվել: Մեզ միայն մի պատառիկ է հասել, որը դանդաժ է եգիպտոսում, այն էլ տեքստը հայատառ հունարեն է (այս պատառիկի մասին, որը հրատարակել է Կարիերը, մենք խոսել ենք երրորդ գլխում):

Պապիրուսին գրեթե հավասար հնություն ունի մագաղաթը (պերգամենտը): Մագաղաթի նախնական հայրենիքը—Փոքր Ասիայի Պերգամ քաղաքն է հանդիսացել: Ըստ հունական մի ավանդության, Պերգամի եվմենիոս 2-րդ թագավորը իբր թե ցանկացել է այնպիսի մի գրադարան կազմել, որն ավելի հարուստ լինի, քան Ալեքսանդրիայի գրադարանն է: Ալեքսանդրիայի Պտղոմեոս թագավորն իր տեղը նրան չզիջելու համար, արգելել է պապիրուսի արտահանությունը եգիպտոսից: Պերգամի թագավորին դժվարություններից դուրս է հանել մի քերական, Կրատես անունով, որը և հնարել է մագաղաթի գործածությունը: Պերգամում հայտնաբերված գյուտը շուտով տարածվել է ամենուրեք և Պերգամ քաղաքի անունով կոչվել է պերգամենտ:

Հնում մագաղաթ պատրաստել են տնային և վայրի զանազան կենդանիների մորթիներից—այծի, ոչխարի, հորթի, նապաստակի, ավանակի և այլն: Հայտնի է նաև մի ձեռագիր, որը ներկայումս

ըրիւտնական թանգարանի սեփականութիւնն է, որի մագաղաթը պատրաստուած է մարդու մաշկից:

Հայ գրչագրութեան մեջ գործածված նյութը, հատկապէս հնագույն շրջանում, մագաղաթն է հանդիսացել: Նա կոչվել է նաև «քարտես» (հունական *χαρτης*): Հնագույն շրջանից մեզ հասած հայկական ձեռագրերի նյութը մագաղաթն է: Ավելի ուշ, 11—12-րդ դարերում, թուրքը դուրս է մղել ասպարեղից մագաղաթին: Բայց այդ ժամանակից հետո ևս, կրոնական-կանոնական բովանդակությամբ ձեռագրերում, հաճախ գործ էածվում մագաղաթը:

Հայաստանում մագաղաթը չի ներմուծվել, այլ պատրաստվել է տեղում: Այդ մասին հայ մատենագրութեան մեջ բազմաթիւ տեղեկութիւններ կան: Բերենք նրանցից երկուք միայն: Հովհաննէս Ռոտնեցին 1374 թվին արտագրած իր ձեռագրի ստանալիւր հիշատակարանում հայտնում է, որ ինքն է անձամբ իր ձեռքով պատրաստել իր ձեռագրի մագաղաթը.

«Ի թիւ հայոց հարիւր ութից,

նւ երկուսսանայ սկըսեալ երից,

Յանկայայ ալսմ տառից...

Ես Յովհաննէս աշխարհաւ Սիսակէից,

Գաւառաւ Որոտնէից,

Ձագաղարս ձեռամբ իմոյ բազկից

Շինեցի նիւր պիտոյից» (ընդգծումը մերն է):

Նույն Ռոտնեցու մի այլ ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ նրա գրած ձեռագրի թուրքը Հակոբոս անունով մեկն է կոչել, որի համար Ռոտնեցին խնդրում է հիշել նրան.

«Եւ Հակոբոս սպասաւոր բանի,

Աշխատողիս, թղթոյս կոկողի:

Յիշել ի տէր տունէք արժանի»:

Ձեռագրեր կան սակայն, որոնց մագաղաթը դնվել է: Այսպէս, 1428 թվին ընդօրինակված մի ձեռագիրը գրիչ իր շախմատ հիշատակարանում գանգատուիւմ 1 մագաղաթի թանկ գնելու համար՝

«Նիւթ է մեկան զլթորիս...

Գոյն սպիտակ քարտեղիս,

Թանկ գնեցի ևս գերիս»*):

*) ՀՅՍՌ Մատեն., № 5568.

ՀՍՍՌ Մատենադարանի ձեռագրերում հաճախ կարելի է հանդիպել մագաղաթ պատրաստելու ռեցեպտների, որոնք գործնական խորհուրդներ են պարունակում: Այսպես, ՀՍՍՌ Մատենադարանի № 1849 ձեռագրում մագաղաթ պատրաստելու համար հետևյալ խորհուրդն է տրվում (բերում ենք թարգմանաբար).
 Վերցրու ուլի, վալրի կամ տնային ուշխարի, ձիու քուռակի, նապաստակի, ալժլամի և հորթի մաքրին, կիրը լավ մաշիր և ջուր լցրու վրան: Եթե մագաղաթը հաստ է՝ խառնվածքը խիտ արտ, իսկ եթե բարակ՝ ջրալի: Երբ նա հասնի (այսինքն՝ աշ առնի—Ա. Ա.)՝ մագր. քերիք վրայից, մաքուր լվա, նոր կիր լցրու վրան: Հարստանալիս աչնքան տրորիր, որ բարակի: Այնուհետև վերցրու և լվա, պարանոլ շորս կողմից ձգված կապիր: Վերցրու քերիքը և մսի կողմը քերիր այնքան, մինչև որ միսն ամբողջապես մաքրվի ու լավ երես դառնա: Ապա մազի կողմը շորացած վիճակում քերիր: Վերցրու մագաղաթին քսելու համար ձվի սպիտակուցը՝ և սպիտակ կտավատ, խառնիր իրար և թող երեք օր մնա, մինչև որ կտավատը մեղրի նման ծոր տա, ապա քսիր մագաղաթին և քերիչով քերիր*):

Ամենանրբագույն մագաղաթները, ինչպես երևում է ռեցեպտներից, պատրաստվել է գառան մորթուց. լավ է ստացվում մանավանդ՝ երբ գառը ծնվում է սառկած վիճակում:

Թղթի գործածությունը հայ գրչության մեջ նույնպես հին է: ՀՍՍՌ Մատենադարանի սեփականությունն է հանդիսանում մեզ հասած աշխարհի Թղթյա հնագույն ձեռագրերից մեկը, որը գրված է 971 թվին (այս մասին խոսվել է առջևում): Հավանական է, որ այս թուղթը տեղում չի պատրաստվել, այլ՝ ներմուծվել է: Թուղթը հնում պատրաստել են Չինաստանում, այնտեղից 8-րդ դարում մուտք է գործել Միջին Ասիա, իսկ 12-րդ դարի սկզբներում արաբների միջոցով մուտք է գործել նաև եվրոպա: Սկսած 11—12-րդ դարերից հին հայկական ձեռագիր գրեթե բոլոր ժողովածուները գրված են թղթի վրա: Ըստ որում, թղթի զանազան տեսակներ են եղել—հաստ և բարակ: Նրանք մեզ մոտ գործ են ածվել տարբեր ժամանակներում:

* ՀՍՍՌ Մատեն., № 1849, թ. 156բ. (Իսկ ռեցեպտը հրատարակել է գրոց Ա. Ն. Հարությունյանը իր «Ներկերը և թանաքները հին հայկական ձեռագրերում» աշխատության մեջ, Երևան 1941 թ., էջ 23):

Թղթի դործածությունը Հայաստանում մասսայականացնելու է հետո, ըստ երևույթին, սկսել են թուղթը տեղում պատրաստել: Ձեռագրի հիշատակարանում գրիչները երբեմն խնդրում են հիշել իրենց գրած ձեռագրի թուղթը կամ մագաղաթը կոկոզներին: ՇՍՍԻ Մատեն. նո. 1230 ձեռագրի գրիչը խնդրում է հիշել Քյւմ-գորի քրոջ որդուն, Բարսեղին, որն օգնել է իրեն՝ «կոկեղով դնիւթ գրոցս»^{*}:

ՀՍՍԻ Մատեն. № 5648 ձեռագրի գրիչը, Մկրտիչը խնդրում է հիշել իր աշակերտին, Գնդիկին՝ մագաղաթ կոկեղու համար. «Յիշեցեք զաշակերտն իմ զԳնդիկ, որ զքարտեղս կոկեաց»^{**}):

Թուլմա Մեծոփեցին իր 1410 թ. գրած ձեռագրում խնդրում է հիշել իր եղբորը, Հովհաննես քահանային, «որ բազում աշխատութեամբ, երթեկելութեամբ եզիտ զթուղթս այսմ աստուածային սոփերի և քրտնաջան աշխատութեամբ կոկեաց զսա»^{***}:

Հիշատակարաններից հայտնի է նաև, որ Հայաստանում թուղթ է ստացվել Թավրիզից: Այսպես, Աբրահամ անունով մեկի հիշատակարանում կարդում ենք.

«Տէր Խաչատուր հոգով բարի,

Յիշիա յաղօթս ով երիցանի,

Եւ զԱբրահամ մեղօք ի լի,

Յիշեա ի տէր ով սիրելի,

Զի զխորանս ծաղկելի,

Մեղ մի դնեք, թուղթս էր Թավրեծի»:

Թուղթը կամ մագաղաթը ձեռագրի համար պատրաստելու է հետո, գրիչներն իրենց ցանկացած ծավալով պրակներ էին կտրում, հավաքարում և տողատում: Երբեմն տողատման աշխատանքը կատարել է ոչ թե գրիչը, այլ ուրիշ մեկը: Հակոբ գրիչը 1368 թվին գրած իր հիշատակարանում խնդրում է հիշել իր աշակերտներին՝ «զԿարապետ կրօնաւոր՝ ի տիս մանկութեան, և զԵղբայր սորին զՄկրտիչ դպիր, որ են աշակերտք մեր, զի բազում աշխատութեամբ ջանացին բնդ մեզ, զի զամէն զթուղթս քաղցր գրոցս սորա կոկեցին և տողեցին...»^{****}: Գոյություն է ունեցել


^{*}) ՀՍՍԻ Մատեն. № 1200, թ. 501ր:

^{**}) Նույնը, № 5648, թ. 237ր:

^{***}) Նույնը, № 2134, թ. 388ր:

^{****}) Նույնը, № 5707, թ. 415ր:

քառակուսի ձևով պատրաստված մի շրջանակ, տողերի համապատասխան, հավասար հեռավորության վրա ձգված լարերով, որը և գրել են էջերի վրա, երկու կողմից կետերով նշաններ արել և ապա քանոնով սուր գործիքի միջոցով գծել տողերը: Որոշ ձևագրերի վրա այժմ էլ կարելի է տեսնել զծումների հետքերը: Ռուս պալեոգրաֆիստ Կարսկու կարծիքով այդ գործիքը ունեցել է հետևյալ ձևը*:



Հավանական է, մեզ մոտ ևս գործ է ածվել նման մի գործիք: ՀՍՍՌ Մատենադարանի № 1973 թվի ձեռագրի տոմարական շրջանակների զծումներին նայելով, հաստատապես կարելի է տեսնել, որ հայկական գրչության մեջ գործ է ածվել քանոն և կարկին: Կարկինի ասեղի ծայրի թողած հետքը ձեռագրի վրա շատ պարզ երևում է:

Հնում հայկական ձեռագրերը գրելիս գործ են ածել երկաթի ձողիկների գրիչ, որի պատճառով էլ, ոմանց կարծիքով, հին հայկական գրերը կոչվել են երկաթագրեր: Հայ մանրանկարչության մեջ հաճախ կարելի է հանդիպել ավետարանիչների նկարին, երկաթյա ձողիկ-գրիչը ձեռքում գրելիս: Ուշ շրջանում երկաթի ձողիկին փոխարինել է եղեգնի կամ փետուրի գրիչը (հունարեն գա կոչվել է *καλαμος*)^{*}։ Այս գրիչներով, ինչպես երևում է, շատ քիչ չէր կարելի և նրանք պիտի շատ շուտ նորոգվեին: ՀՍՍՌ Մատեն. № 1328 ձեռագրի գրիչը իր տողատակ հիշատակագրության մեջ, հավանական է ջղայնացած միջակում, արձանագրել է. «Կա՛յ քեզ սուտանուն Զաքարիա, գրիչն մեկ անգամ կտրեցի, Ժ (10) թուղթ գրեցի»^{**}: Ուրեմն, կտրած մի գրչով կարելի էր մինչև տասը թերթ գրել:

*) Карский, Славинская Кириловская палеография, Ленинград 1928 г., стр. 128.

**) ՀՍՍՌ Մատեն. № 1328, Թ 41 ր:

Հայկական ձեռագրերում գործ են ածվել, գլխավորապես, երկու տեսակ թանաք—բունական և երկաթի: Նրանք երկար դարերի ընթացքում պահել են իրենց գույները: Արևը, շուրք, խոնավությունը, օդի փոփոխությունը գրեթե չեն ազդել նրանց վրա և շատ քիչ կարելի է հանդիպել այնպիսի ձեռագրերի, որոնք գունաթափ եղած լինեն: Եվ դորմանալի չէ, որ հայկական ձեռագրերում գործ ածված սև և դեղնավոր թանաքները, մանրանկարչության մեջ գործ ածված վառ ներկերը, խառնված ոսկու հետ, հիացմունքի առարկա է դարձել Արևելագիտության մեջ: Թանաքը հայ մատենագրության մեջ կոչվել է մեկան, (հունական $\mu\epsilon\lambda\alpha\nu$).

Թանաքը, և մյուս ներկերը պատրաստվել են տեղում: Այլ մասին ձեռագրերում բաղմամբով հիշատակություններ կան: Ձեռագրերում մեզ հանդիպում են նաև ռեցեպտներ թանաք պատրաստելու համար: Դժբախտաբար, ոչ բոլոր ռեցեպտներն այժմ կարելի է վերծանել: Նրեմն ռեցեպտում հիշվում են այնպիսի նյութի անուն, որի ինչ լինելը մեզ պարզ չէ:

Ձեռագրերում գործ ածված թանաքների բաղադրության ուսումնասիրությամբ սովետական մեր գիտնականներից զբաղվում է դոց. Աշխեն Հարությունյանը, շնորհալի մի քիմիկոս, որին հաջողվել է արդեն գտնել որոշ գույների պատրաստման դադանիքը: ՀՍՍՌ Մատենագրարանի ձեռագրերում եղած թանաքի և ներկերի ռեցեպտների մի մասը նա հրատարակել է հայերեն թարգմանությամբ, որը մենք հիշեցինք քիչ առաջ: Բերենք սև թանաք պատրաստելու մի ռեցեպտ՝ վերցնելով ընկ. Հարությունյանի նշված աշխատությունից. «Վերցրու կանաչ գիտոր, կորատի և լցրու մի խեցե ամանի մեջ, քիչ ձեթ ալվելացրու, դիր կրակի վրա և եփիր այնպես, որ չալրվի, փայտով խառնիր մինչև սևանա, վերցրու և լցրու մի թասի մեջ, իր չափով նուա՛ն կեղև լցրու, լավ եփիր, արջասպ լցրու վրան (թող) պարզի և գրիր»): Նշված աշխատության մեջ բերված են նաև այլ գույնի թանաքներ և ներկեր պատրաստելու եղանակը և հետաքրքրվողը կարող է ծանոթանալ նրա հետ:

Ձեռագիրը, ինչպես ասել ենք, գրվելուց հետո, մանրանկարվում էր: Ոչ բոլոր դեպքում ձեռագրի գրիչը նաև մանրանկարիչն էր հանդիսանում: Հաճախ գրում էր մեկը, մանրանկարում մի

*) Ա. Հարությունյան, Թանաքներ և ներկեր, էջ 19.

ուրիշը: Այդպիսի գեղեցիկ գրիչը պարտավոր էր հիշել մանրանկարողի անունը: Մանրանկարողը հայ մատենագրության մեջ կոչվում էր ծաղկող: Բայց ոչ բոլոր գեղեցիկը հաշտվում էր «ծաղկել» ձևագիրը: ՀՍՍՄ Մատենագրահանում կան մի շարք ձևագրեր, որոնց մեջ խորանների, լուսանցադարձությունների և վարդազրերի տեղը բաց է թողված և հետագայում չի հաշտվել լրացնել: Մինչ նրանք փնտրել, գտել են ծաղկողին, աշխարհաստան մի իրադարձություն խառնել է նրանց բոլոր հաշիվները և ձևագիրը մնացել է չծաղկած:

Ձևագրի նյութը պրակ պրակ գրել—պատրաստելուց հետո, գրիչը հանձնում էր կազմողին: Կազմարարը մեծ մասամբ ինքը, գրիչը չէր հանդիսանում: Կային այդ գործի լավ վարպետները, որոնց մասին և հիշում են գրիչներն իրենց հիշատակարաններում: Պատահում է, որ կազմարարները ևս թողնում են իրենց հիշատակագրությունները: Դրա օրինակը տալիս է մեզ ՀՍՍՄ Մատեն. 1388 թվին ընդօրինակված մի ձևագիր, որ կազմարարը գրում է. «Արդ 2 և 1 է թուին (1388)... ևս սուտանուն Թումայ քահանայ, որ զանուն ունիմ և գործք ոչ, ծառայ ծառայեցիդ աստուծոյ, կազմեցի գիրքս բազում աշխատությամբ, քանզի հնացեալ էր կազմը»):

Կազմարարները կազմի նյութը, սովորաբար, գործ են ածել ամուր տախտակ և նրա երեսը ձիգ կ'աշվով պատել: Ձևագրերը դրսից գեղեցկացնելու համար կաշու վրա ճնշումով դարդարում էին երկաթի գեղեցիկ դրոշմվածքներով: Այդ շատ գեղեցիկ արվեստ է, սակայն, դժբախտաբար, չի ուսումնասիրված ոչ ոքի կողմից:

Հայագիտության համար մեծ արժեք են ներկայացնում կազմի ներսից փակցված կտորները: Միջին դարերում գործվող և գործածվող կտորի մասին մենք շատ աղետ պատկերացում ունենք, բրդնեղեն կտորեղենը հողի մեջ շատ շուտ փտում է, և շատ բան մեզ հայտնի չէ, բայց ահա ձևագրի կազմին փակցրած կտորները մեզ հասել է և մենք հնարավորություն ունենք մոտավոր պատկերացում կազմել այն ժամանակ գործ ածվող կտորի, նրա արվեստի և տեխնիկայի մասին:

Ձևագիրը գրել, վերջացնելուց հետո, հաճախ անհրաժեշտ է

*) ՀՍՍՄ Մատեն. № 4657,

լինում արտագրած ընդօրինակովյունը նորից համեմատել բնագրի հետ և շտկել բաց թողնված սխալները: Այդ աշխատանքը կազմում էր «դորդում»: ՀՍՍՌ Մատեն. № 1447 Թ. ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Ողորմեսցի Քրիստոս աստուած կուսակրօն քահանային Գրիգորին և Սերովբին, որք ըղորդելն աշխատեցան»^{*}:

Ձեռագրի պատրաստումն, այսպիսով, յուրատեսակ կոչկեղծվ աշխատանքի արդյունք էր—մեկը դրում էր, երկրորդը՝ համեմատում էր, երրորդը՝ ծաղկում էր, չորրորդը՝ կազմում էր և այլն: Ուշագրություն արժանի է նաև այն, որ կատարված այս բոլոր աշխատանքը, ինչքան էլ փոքր չլինի, նշվում է ձեռագրերի հիշատակարաններում: Դրա լավագույն ասպարույցը մեզ տալիս է 4673 ձեռագիրը: Հեթում անունով մեկի աղջկից կազմի շապկացու կտորը տալու համար հիշվել է հիշատակարանում. «Տէր աստուած ողորմի հանգուցեալ ծառային Քրիստոսի Հեթումի, որ իւր դուտորն էրէտ զշապկացու կտան»: Նույն տեղում հիշվում է Աֆինդ անունով մի երկաթագործ, ձեռագրի փակերը և կոճակները պատրաստելու համար. «Սոյնպէս (յիշեցեք) զԱֆինդ երկաթագործս, որ աշխատեցաւ ի փակ և կոճակ գրոցս» և այլն:

Պարզ է, որ այսպիսի աշխատանքն ի մի գործ, չէր կարող տեղան և մատչելի լինել բոլորի համար: Ձեռագրերն անցյալում շատ թանկ են արժեցել, նրանք մատչելի չեն եղել բոլորի համար: Ձեռագրի արժողության վրա մենք կանգ կառնենք հաջորդ գլխում. բայց ձեռագրի՝ զնի մասին մոտավոր պատկերացում տալու համար այստեղ կբերենք հետևյալ փաստը: Միջին մեծությոն ունեցող մի ձեռագիր, որը գրվել է 1688 թվին և այնքան էլ չքեղ ծաղկազարդված չէ, վաճառվել է երկու եզան, երկու ձիու և մի կովի:

Նյութի թանկությունը հաճախ ստիպում է գրիչներին լվանալ հին մագաղաթյա ձեռագրերը և նրանց վրա նորից գրել: Կրկնագիր այդ ձեռագրերը գիտության մեջ, ինչպես ասել ենք, կոչվում են պալլիմախտներ (παλλίμαχτος):

^{*} ՀՍՍՌ Մատեն. № 1447 (1415), Թ. 368բ—369ա.

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԳՐԶՈՒԹՅՈՒՆԸ

Մենք այժմ «գրիչ» ասելով հասկանում ենք ծայրը կան դըր-
շաղկապը ծայրի հետ միասին, իսկ հնում այդ բառը ուներ միան-
դամայն այլ իմաստ. — «գրիչ» ասելով հասկանում էին ոչ թե գրե-
լու անշունչ դործիքը, այլ այն անձնավորությունը, որ գրում
կամ ընդօրինակում է ձեռագիրը:

Անցյալում, տպագրության բացակայության պայմաններում,
գրիչները շնորհակալ դործ են կատարել ինչպես անցյալի մա-
սենագրությունն արտագրելու, այնպես և եղածը ստեղծագործա-
կան նոր արժեքներով լրացնելու և հարստացնելու ուղղությամբ:
Համարձակ կարելի է ասել, որ եթե մենք շունենայինք կիլիկյան
գրչության դպրոցները 12—13-րդ դարերում, Սյունյաց գրչության
դպրոցները 14—15-րդ դարերում և միջնադարյան մեր մյուս գրչու-
թյան դպրոցները, ապա մեր հին մատենագրությունը կորած
կղիճներ այնպես, ինչպես անհետ կորել է մեր հարևան աղվանա-
կան ժողովրդի ողջ գրականությունը:

Հայ մատենագրության առաջադեմ գրիչները սակայն կա-
տարել են արժեքավոր մի այլ գործ — նրանք իրենց ընդօրինակած
ձեռագրում գրել են և թողել իրենց հիշատակարաններն ու հիշա-
տակագրությունները, որոնք մեծ արժեք են ներկայացնում գի-
տության համար:

Ձեռագրի արտագրությունից հետո, կամ երբեմն գլուխների
վերջում գրչի կողմից ավելացված այն մասերը, որոնք վերաբե-
րում են գրչության ժամանակին, իրեն անձնավորությանը և այլն,
կոչվում են հիշատակարան, իսկ հետագայում ձեռագրի բաց տե-
ղեքում արված ավելացումները՝ հիշատակագրություն:

Գրիշնները իրենց հիշատակարաններում և հիշատակագրություններում, սովորաբար, հաղորդում են հետաքրքրական տեղեկություններ արտազրույցան հանգամանքների, ժամանակի, դրության վայրի, պատվիրատուի, ժամանակակից քաղաքական դեպքերի և բազմաթիվ այլ խնդիրների մասին, որոնք արժեքավոր են պատմության և գրականության, պատմության համար:

Հիշատակարանները իրենց ժամանակաշրջանը հիշատարտա-ցողով հայելիներ են: Ով ուզում է մոտից ուսումնասիրել դրվատարած էպոխան, պիտի թերթի ձեռագրերի հիշատակարանները:

Յավալի է ասել, որ հիշատակարանների և հիշատակագրությունների պատմական այս կարևոր սկզբնաղբյուրների վրա հարկ եղած ուշադրությունը չի դարձվում: Նրանցից քչերն են հրատարակված, և հրատարակվածները պահանջվող չափով դեռ չեն օգտագործվում պատմական և բանասիրական ուսումնասիրությունների մեջ: Հիշատակարանների փոքրիկ ժողովածու հրատարակել է միայն Փիրդալեմյանը իր «Նոտաք հայոց»-ում: Մյուս հրատարակված հիշատակարանները տեղավորված են ղլխավորապես ձեռագրաց ցուցակներում (Հ. Տաշյանի, Բ. Սարգսյանի, Ն. Յ. Մառի, Ն. Լալայանի, Թովյանի, Քոնիքերի և մյուսների ցուցակներում) և կազմված համեմատական տեքստերի առաջարաններում: Տասնեակ հազարավոր հիշատակարաններ դեռ սպասում են հրատարակության:

Հայկական ձեռագրերը գրվել և ընդօրինակվել են աշխարհի գրեթե բոլոր կողմերում: Չկա մի երկիր, ուր հայկական գաղութ գոյություն ունեցած լինի և այնտեղ գրված ու այդ օջախից մեզ ձեռագիր հասած չլինի: Հայկական ձեռագրեր են գրվել հեռավոր Հնդկաստանում, Չինաստանում, եգիպտոսում և այլ վայրերում: Դեռ մենք չենք հաշվում մայր երկրում գոյություն ունեցող հազարավոր մեծ ու փոքր գրչության օջախները: Թվարկել նրանք բոլորն այստեղ, իհարկե, իմաստ չունի: Բայց կարևորագույններից մի քանիսի անունը կարելի է այստեղ հիշել:

X—XVII դարերի ընթացքում գրչության կարևոր օջախները հետեյալներն են հանդիսացել. Վանդոյի գաղոցը Բագրատունյաց և Կամսարականների ժամանակ, Տաթևի գաղոցը (սկսած X դարից), Անիի գաղոցը (XII—XIII դ. դ.), Վանականի գաղոցը (XII դ.), Հաղբատ-Սանահինի գաղոցը (XII—XIII դ. դ.), Հոռմկլայի, Սկևռա, Դրաղարկի գաղոցները Կիլիկիայում (XII—XIII դ. դ.):

Գլաձորի և Մեծագիւղ գաղտցները (XIV—XV դ. դ.), Արզնիկայի, Վանի և Կարինի գաղտցները (XIII—XVII դ. դ.), Կաֆայի գաղտցները (XIV—XVII դ. դ.), Բաղեշի, Զաւղայի, Էջմիածնի և Պոլսի գաղտցները (XVII դ.):

Այս գաղտցներից մի քանիսը աշխարհի բարձր գաղտցներ են համարւել, որ կոչւիլ են համալսարաններ և համեմատուիլ նույնիսկ Աթենքի հետ: Առաջին, Գլաձորի մասին մի գրիչ Գլաձորը համարում է երկրորդ Աթենքը.

«...նկեալ յայս դաստի,
Որոյ անուն վայ Զոր կոչի,
Հաւ ի շիրիմն Սինեցի,
Ի յԱղբբջ վանս մենաստանի,
Յերկրորդ Աթէն պանծալի,
Առ սոս հար մեր Եսայի,
Եւ բաբունեաց վարժապետի» (Հովսեփյանի «Պոռչյանք»,
III հատոր, էջ 159):

Համալսարան շախտի հասկանալ ներկա իմաստով: Գլաձորը, ինչպես և մյուս նման գաղտցները միջնադարյան սովորական գաղտցներ էին հանդիսանում, սովորական գաղտցներից քիչ բարձր և ոչ ազնիւ:

Հիշատակարանների ուսումնասիրությունից, ամենից առաջ, պարզվում է, որ գրիչների մեծ մասը հասարակ, պրոֆեսիոնալ գրչութեամբ զբաղվող մարդիկ են հանդիսացել: Գրչությունը նրանց մասնագիտութիւնը, նրանց պրոֆեսիան է հանդիսացել: Այդ պրոֆեսիայով նրանք հաճախ աշխատել են իրենց ողջ կյանքի ընթացքում: ՀՍՍՌ Մատենադարանում կան բազմաթիւ ձեռագրեր, որոնց գրիչները գրչութեան արվեստի մեջ զառամած ձերտիչներ են:

Յափախ է ստել, որ մենք մինչև այժմ չունենք այդ սե մշակիչների ստեղծագործութիւնների ուսումնասիրութիւնը և պատմութիւնը:

ՀՍՍՌ Մատենադարանի № 4107 ձեռագրի հիշատակարանից երևում է, որ ձեռագրի գրիչը քառասուն և երկու տարի անընդհատ գրչութեամբ է զբաղվել: Նա իր վերջին ձեռագիրը գրելիս ձեռքերը զոդացել են, գրելու մասը չորացած է եղել, աչքի լույսը պակասած, բայց գրիչը համառութեամբ շարունակել է իր գրչութեան արվեստը: «Բայց գիտեմք,—ասում է գրիչն իր հիշատակարան-

Նույն,—որ գիրդ բազում պակասութիւնսն կայ և անթիւ, թէպէտ որ շատ կայ, մեր կարն աշղշափ էր, ձեռս կու գողայր և տշքս բնաւ չէր տեսնուլ, գրչի մատն շորադած էր, միջին մատամբս ծրեցար... ո՞հ դարդ իմ, հիմայ քառասուն և երկու տարի է, որ մեր բանս այս էր, ապա այսօր նման անդէպ չէր եղեալ, խիստ կու ամաշեմ ի ձեզնէ, թողութիւն արարէք» (Յերթ 503):

Քսան և երկուերորդ տետրակից հետո գրիչը դնում է իր 42 տարեկա աշխատանքի վերջակետը. նա մահանում է և նրա աշխատանքը շարունակում է իր աշակերտը, Հունար գրիչը, որը թողել է իր փոքրիկ հիշատակարանը՝ իր ուսուցչի թողած վտանակների և նրա մահվան մասին:

Հովհաննէս գրիչն իր 1458 թվին գրած հիշատակարանում հայտնում է, որ ինքը ծերացել է, հիվանդ է, աչքերը վատ են տեսնում և գրեց դառը սրտով և հեծեծանքով. «...աչքս ի լուսոյ էր պակասեալ և կարողութիւնս ի զօրութենէ խափանեալ...»: Հիշատակարանի վերջում նա խնդրում է շմեղագրել իրեն տառերէ խոշորութեան և սխալների համար, որովհետեւ իր կարողութիւնն աշղշափ էր. «Անմեղադիր լերուք խոշորութեան և սխալանց գրիս, զի կարն մեր այս էր» (ՀՍՍԹ Մատենադարան, № 5331):

Մխիթար Անեցու 1338 թվին գրած չափածո մի գեղեցիկ հիշատակարանից երևում է, որ նա ձեռագիրը գրել է ծեր հասակում, գողացող ձեռքերով: Եվ նրան, որպէս ծերունի մարդու, ջղաջնացրել է ամեն ինչ—հիվանդութիւնը, թանաքի թանձրանալը, ճանձերի գրչի վրա նստելը և այլն:

Հիշատակարանում նա գրում է.

«Մեծ վտանգի կամ յայս նեղուս,
Զի խիստ յաղթեց ցան մարմնոյս,
Եւ ի ձեռացս գողալուս՝

Այլ չեմ կարիլ տալ շատ գրոյս:

Եւ տռեալ ի յայս շողուս,

Ու թանաքիս թանձրանալոյս,

Եւ մանաւանդ ի յայս քնուս,

Զօր հասարակ մրափելուս:

Եւ չանիծեալ այս ճանձերուս,

Ի սնավաստկան կենդանուս,

Որ միշտ նստին ի վերայ գրչուս,

Ծրծեն զթանաքս գրերուս:

Կեղնէ իմ սիրտս այս ոչնչուս,

Չգիտեմ՝ թէ ի՞նչ անեմ հզովժնուս»:

Հիշատակարանի վերջում Անեցին դիմում է իր աշխարհին, նրանցից լույս խնդրում, որպեսզի կարողանա գրեթէ շար տալ և «գրչության նաւը» ծովափ հասցնի, ավարտի ձեռագրի ընդօրինակութիւնը:

«Այլ երբ կու տաս իմ աչքս լուս,

Որ ես ալ շար տամ գրերուս:

Նղբա՛յր, մեղ մի դրեք գերուս,

Այս տառապեալ ողորմելուս,

Ինչ հնացաւ տարիք մարմնուս,

Պէտքէս ցաւեր յայտնի ծերուս:

Օ՛րս թէ լիներ ճար այս նաւուս,

Որ հասնէր յեզր ի ծովուս,

Որ տեսանեմ զվերջք գրուս...»:

(ՀՍՍՌ Մատեն., № 442):

Գրիչները հաճախ ընդօրինակել են ձեռագրերն առանց նախօրոք խմանալու՝ թէ ո՞վ է հանդիսանալու գրվող ձեռագրի պատգմիրատուն, գնողը: Այդպիսի դեպքում նրանք՝ վերջին հիշատակարանում պատմիրատուի անվան տեղը բաց են թողնում, որպեսզի ձեռագիրը գնողի անունը հետագայում այնտեղ գրեն: ՀՍՍՌ Մատենադարանում մի շարք ձեռագրեր կան պատմիրատուի անունը բաց թողած հիշատակարաններով:

Գրիչների մեծ մասը հասակավոր, տարիքն առած մարդիկ են եղել: Մեկ-մեկ պատահում են և երիտասարդ, պատանի գրիչներ: Այսպես, օրինակ, Թոխաթում գրված գեղեցիկ գրչութուն ունեցող մի ձեռագրի գրիչը 12 տարեկան պատանի է. «...Դեռ ես ժԲ (12) ամաց գտլով... գրեալ եղև սա ի քաղաքն Թոխաթ», — գրում է իր հիշատակարանում պատանին (ՀՍՍՌ Մատենադարան, № 843):

Պատահում են քիչ թվով նաև կին գրիչներ-գրչուհիներ: ՀՍՍՌ Մատենադարանի ձեռագրերից մեկ հայտնի են մի քանի գրչուհիների անուններ — Հեղինէ, Մարգարիտ, Նզիսաբեթ, Բրաբիոն, Մարիամ և ուրիշներ:

Գրիչների մեծ մասը, հատկապես նրանք, ովքեր գրական «սև աշխատանք» կատարող պրոֆեսիոնալ գրիչներ են, աշխատել են չլուսխան շատ խեղճ և զուրկ պայմաններում:

1303 թվին գրած մի ձեռագրի գրիչ հայտնում է, որ նա ձե-

ռազիրը գրել է ազգատ ու չքավոր սեղանով. «Գրեցի դստ ազգատ
ևւ չքատոր սեղանով» (ՀՍՍՌ Մատեն., № 5566, թերթ 35 ր):

Գրիչներն իրենց հիշատակարաններում շատ են գանդատվում
հատկապես բնակարանային վատ պայմանների, ճրագ-լույսի պա-
կասություն. ձմեռը վատելու փայտ չունենալու և այլ գովանա-
թյունների մասին:

Թորոս գրիչն իր պատմերատուի, Հեթում թագավորին ուղղած
հիշատակարանում, գրում է. «Եւ ես գիտեմ, այս չէ թագաւո-
րական իրք, այլ ոսկէդիր պիտէր եւ ճարտար գրչի. եւ ես շատ
պապճառ ունէի, որ խափաներ զիս յայս ձեռնարկութիւնսն՝ տկա-
րութիւն եւ մոլթն խրճիթիս, եւ հոգմ պախարու փոշեխառն փշելով
քնդ պատուհանս, եւ պաղն օդոյս...» (ՀՍՍՌ Մատեն., № 2544):

Սեֆիլ Օհանը 1663 թ. գրած իր մի ոտանավորի հիշատակա-
րանում գանդատվում է ճրագի մթության և թղթի վատորակության
համար.

«Հազար հարիւր երկու թղթն,
Գանգատ ունեմ ճրագի մթին,
Այլ եւ յետոյ այս խամ թղթին,
Որ չի երթար հետ իմ սրտին...
Աշուերս է բաց, լուսոյ պակաս,
Գրիչը չերթար հետ շար տողին,
Որն է կաղ եւ որն է կոր,

Թանաք աղդի ի մէջ թղթին» (ՀՍՍՌ Մատենադարան,
№ 5623, թ. 224 ր):

Ծերունի մի այլ գրիչ գանդատվում է, որ աչքերը վատ են
տեսնում, նեղվում է ծխից, բքից և կաթիլքից, ստիպված է խնքը
վառել թոնիրը և այդ պայմաններում գրել ձեռագիրը: Նա գրում է.

«Գրեալ եղև վերացեալ մարմնով, կուրացեալ աչքով ի ծխէն.
Ի բքէն, ի կաթիլէն. ջոշ մարդ եմ, գթոնիրն եմ վառեր, երեք շա-
հու զփայտն գներ. կարս մեր այս էր» (Լալայանի ցուցակ, էջ 748):

Մխիթար գրիչը գանդատվում է, որ գրելու թուղթը կոկ չէ,
պարզկա օրեր են, չարգախը բարձր է և կրակ չունի.

«Տե՛ս թէ քանի աշխատեցայ,
Ես Մխիթար գրիչ սորա,
Թուղթս անկոկ ու գրիչ չկայ,
Աւարքս ցուրտ ու պարզիկայ,
Չարգախս բարձր եւ կրակ չկայ...»:

(Ալիշան, «Հայապատում», էջ 520):

Հիշատակարաններում մեծ տեղ է տրված ժամանակակից քաղաքական անց ու դարձերին: Շատ գրիչներ ձեռագիրը գրել են փախուստի, դադիմականության պայմաններում: Չնայած է գրիչը իր ձեռագիրը գրելը, բայց հանկարծ հարձակվում է իշխամին և նա ստիպված է լինում մայր ձեռագիրը և նրանից արտագրվող նոր ձեռագրի մագաղաթը՝ շալակած, թանաքամանք իր գոտուն կապած, տեղից տեղ փախչել և փախստականության պայմաններում ավարտել ձեռագիրը: ՀՍՍՌ Մատենադարանի № 5707 ձեռագրի գրիչը պատմում է, որ իշխամին հարձակվել է Տաթևի վանքի վրա, իրենք փախել են և ինքը ձեռագիրը փախուստի ժամանակ է գրել. «Եւ ևս ծանրաբեան մարմնով, զթուղթ և զօրինակ, չրիչ և զթանաք ի յուս իմ բարձեալ ի հետ դնայի, կարգայի. և որչափ ժամանէի... մատենան գրէի բազում շարչարանօք... զի ուր սկսաւ, անդ ոչ էառ դիտարումն» (թ. 415 ք):

Մաթևոս գրիչը 1469 թվին ընդօրինակած իր ձեռագրի հիշատակարանում պատմում է, որ իր ձեռագրի գրելը դեռ նոր սկսած իրենց վրա հարձակվեց Հասան Ալին, և նա ստիպված եղավ տեղացիների հետ տեղից տեղ փախչել և ձեռագիրն ավարտել օտարության մեջ: «Եւ մեր առեալ զգիրքս փախեաք տեղէ ի տեղ եւ յամենայն ժամ փախուսաւ ևս սասանումն դայր ևս հասաներ...» (ՀՍՍՌ Մատեն., № 3989):

1428 թվին ընդօրինակված մի ձեռագրի գրիչ պատմում է, որ ձեռագիրը գրել է փախստական վիճակում, դռնե դուռ ընկած ժամանակ. «Այս երեք ամ է,—գրում է գրիչը,— որ (Սքանդարը) յամեն տարի դայ. ևս աւար ևս գերի արար զաշխարհն մեր՝ զՎան ևս զՌատան: Եւ ապա առեալ զամուրն Վան: Եւ մեր փախստական եղաք ամենեքեան առհասարակ... ի յօտար աշխարհ՝ շրջեցաք է գոնէ դուռ...» (ՀՍՍՌ Մատեն., № 5568):

Հովհաննես Երզնկացին իր 1313 թ. գրած մի հիշատակարանում հաշտւում է, որ քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով իր ձեռագիրը ստիպված է եղել գրել երեք տարբեր տեղերում՝ «Մասն ինչ ի վանս Ստաթէի. մասն ինչ ի վանս Հերմոնի ևս մասն ինչ ի վանս Եղուարգու» (ՀՍՍՌ Մատեն., № 1198):

1369 թ. գրած մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Ի թուականութեանս հայոց Պժ. (1369) յովիսի տասն սկսեալ ևս սեպտեմբերի 1 (30) աւարտեալ եղև... Յանարինաց բանութենէն

ժողովարանը ներկայումս կայարքի և զամեն ողջ փախուստի և հալածանքի մեջ էր...» (ՀՍՍՌ Մատեն., № 5883):

2. Տաշյանի ցուցակում հրատարակված մի հիշատակարանում կրկնվում ենք. «Չունեաք խաղաղութիւն՝ կէս մի յայն քաղաքս որպէս թէ, եւ կէս մի յայն քաղաքս որպէս թէ, եւ այսպէս շրջադաշնով տարաբոլեացար» (2. Տաշյանի ցուցակ, էջ 718):

Գրեշները վերլուծուածով են խոսում իրենց ժամանակի ծանր հարկապահանջութեան մասին, որի ընթացքում տեղացիները համարաւ հարկադրված են լինում վաճառքի հանել իրենց երեխաները: Պատկերաւ օրինակ, 1301 թ. գրած մի հիշատակագիր պատմում է, որ ծանր հարկերի պատճառով տեղացի հայերը ստիպված են եղել վաճառքի հանել իրենց տղաներն ու աղջիկները: «...դադէտ եւ դորդ տարակուսանաց ո՛ւ պատմեացէ. զի խիտ եւ յանհարկին հարկապահանջութենէ ծախեալ լինին ուստերը եւ դստերը աշխարհիս մէք. եւ բազում գեղք տեր եւ անհանգիստ...» (ՀՍՍՌ Մատեն., № 380, թ. 311բ):

1775 թ. քնդօրինակված մի ձեռագրի հիշատակագրանից իմաստով ենք, որ ձեռագրի տերը հարկադրված է եղել վաճառել ձեռագիրը և այդ դրամով ազատել գերութունից եղբորը, աղջկան և հարսին, (տե՛ս ՀՍՍՌ Մատեն., № 1881):

Վարդան գրիչն իր 1583 թ. գրած հիշատակարանում հարկապահանջութեան ծանրանալու մասին հետևյալն է գրում. «Եւ արդ գրեցաւ սուրբ տառարանս ձեռամբ անիմաստ գրչի, մեղավոր վարդանի՝ ի դառն եւ ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ յանօրինաց, զի եւս քան զեւս սաստկացաւ բռնութիւնը եւ ներկայիս ի վերայ աղբիս հայոց վասն ծովացեալ մեղաց մերոց» (ՀՍՍՌ Մատեն., № 6003, թերթ 226 ա):

1464 թվին գրված մի հիշատակարանի՝ գրիչը դանդաղում է, որ լսիլ տարի է ինչ ժողովուրդը տառապում է ծանր հարկապահանջութեան: Նա գրում է («նանն») է (7) տարի դաշխարս տաճուն եւ երերուն պահեաց՝ ի հարկապահանջութեան, ի տառապանս եւ ի շարշարանս... հայրք դորդիս ուրանային...» (ՀՍՍՌ Մատեն., № 3769):

Գրեշները վրա ծանր տալովորութուն է թողել ժամանակի հարստահարութիւնը և աւան-թաւանը: Նրանք իրենց հիշատակարաններում նման փաստերը զայրուցթով են արձանագրում:

1589 թ. գրած մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք.

«...ի մէջ դառնութեան գրեցի զսա՝ դառն եւ զժուար տանջանք...
բազում վշտոք հասայ ի վերջ գրիս» (ՀՍՍՌ Մատեն., № 1869):

1498 թ. գրված մի ձեռագրի հիշատակագիր հայտնում է, որ սուլթանն ավերածություն է կատարել իրենց շրջանում և երկր տարվա հարկը մի տարում վերցրել. «Սուլթանն,—գրում է գրի-
շը,— էած ավեր աշխարհիս. զերեք տարուան մալն երեք ամսումն
էառ»: Վերջում գրիչն անիծում է սուլթանին. «Աստուած զիւր-
ումբն կարճ անէ» (ՀՍՍՌ Մատեն., № 3699):

Մուրադ գրիչն իր 1684 թ. գրած հիշատակարանում խնդրում
է անմեղադիր լինել գրչության վատություն համար, որովհետև՝

«Հեծելաջարժ եղև մեր աշխարհիս,

Սիրաս պաղ էր հետ տոմարիս» (ՀՍՍՌ Մատեն., № 146):

Իսրայել գրիչն իր հիշատակարանում պատմում է թշնամու-
րանությունները տեղացիների նկատմամբ և վկայում. «...Գերեյի՞ն,
Քալանեյի՞ն... հայր զորդի կանչէր, իսկ մայր զդուտորն. վա՛յ և
եղո՛ւ վ ազգիս հայոց: Ի թիւս հայոց ՌԻԹ (1580), երանի մեռելի՞ն:
վայ կենդանոյն» (ՀՍՍՌ Մատեն., № 4173, թերթ 95ա):

Գրիչների վրա ծանր տպավորություն է թողել հաճախակի
կրկնվող համաճարակները—«մահտարածամ»-ները և, բնականաբա-
րաբար, բնական պատահարները:

1549 թ. գրած մի հիշատակարանում համաճարակի մասին
հետևյալն է արձանագրված. «Ի թուականիս հայոց, որ էր ԶԳԸ
(1548) ամի, որում եղև մահտարածամ աշխարհիս հայոց. և
շատ տուն աւիրեցաւ, և շատ ապրանք անտէր մնաց. զհեռոյ
ուշխար մնաց, շատ գութան խափանաւ. քանի՞ հայր առանց որդի
մնացին, և մայր առանց դստեր և եղբայր մնաց: Հենց որ կալոյ
ժամանակն եղև, տղայ չկայր որ զկամս քշէր» (ՀՍՍՌ Մատեն.,
№ 554):

Ներկարար Եսային իր 1718 թ. գրած հիշատակարանում
«մահտարածամ»-ի վնասները հետևյալ ձևով է նկարագրում.
«ՔՁՀԷ (1728) եղև խիստ մահտարածամ, որ մինչև վեց ամիս
ոչ զաղարեցաւ. շատ հայրք անորդի մնացին, և շատ մայրք ան-
դստոր մնացին, և շատ գրունք փակեցան» (ՀՍՍՌ Մատեն.,
№ 6433, թ. 217):

Մահտարածամից պակաս մնաս չի պատճառել երկրաշարժը,
որի առանձին դեպքերի հիշատակությանը հանդիպում ենք հիշա-
տակարաններում: Ղուլօղլի Երզնկացին երկրաշարժի ժամանակ

Թաղել է մայրն ու տղան և իր խեղճութունը ողբում է հեռեկալ քառյակում.

«Ծո՛ղուդդի Երզնկացի,
Քեզ ի եղեր խել մի դիան,
Դու ես եղեր խեղճ ու դերի,
Հողն ես դրել մայրն ու տղան»:

Հիշատակարանում գրիչները հաճախ դանդաղվում են բնական ալլ պատահարների համար—մորելիս, սովի, մկան հասցրած վնասների և այլն:

Այսպես, օրինակ, ՀՍՍՌ Մատեն. № 2444 ձեռագրի ոտանավոր հիշատակարանում գրիչը հեռեկալն է գրում.

«Ի թիւ հազար հարիւր վախտոն,
Երկու աւել ի հեռ ի նոյն,
Եկաւ մարախ բազում անհուն
Ի քաղաքին Երեւանոյն»:

Ծածկեալ եղև երես օդոյն,
Եհեղ երկնից իբրեւ դձիւն,
Թռաւ իշաւ մէջ արահերուն
Սկսաւ ուտել իբրեւ գշուն»:

Մահն եկաւ ի նոյն տարին,
Հաւասարեաց ամեն տեղոյն,
Խիստ կոտորեաց մանր ու մեծոյն,
Փա՛ռս տացուք ի Աստծոյն»:

Սովն եկաւ ի նոյն տարին,
Խանն շահի եղաւ դարին,
Սովն փարդեց դաշտ ոչ սարին,
Աստուած փրկէ եկող տարին»:

Սովն եկաւ ի նոյն տարին,
Հաց ոչ դարման յախիր տրին,
Խոտ չմնաց բնաւ ի սարին,
Էլ շտենենք էսպէս տարին»:

Անհրաժեշտ է նաև ընդգծել մեր գրիչների համեստությունը: Հիշատակարաններում դուք երբեք չեք հանդիպի, որ գրիչը շեշտ դնի իր եսի վրա և կամ, ընդհանրապես, խոսի իր արժանիքների մասին և գովի նրանք: Ընդհակառակը, նրանք միշին դարերի հատուկ ձևերով դիմում են բացահայտ ինքնանվաստացման և խնքնատուրացման: Հիշատակարաններում հաճախ կարելի է հանդի-

դրայել աշխարհի դարձվածքներին, ինչպիսին՝ «եղկեյի գրչակ», «քաղճամեղ մեղաւոր», «յոզնամեղ ծրոյս», «անիմաստ տրուպ», «ստատանուն գրիչ», «փծուն», «յոյլ եւ ծոյլ» և այլն: Տասնյակ տարի շարունակ մարդը նստել, տքնել է մի ձեռագրի վրա, մարդկային համբերութեան և նստակեցութեան ամեն տեղակ սահմաններից դուրս, տառ առ տառ, կարելի է ասել, ոչ թե գրել, այլ նկարել է և ավարտել իր մարդարտաշար ձեռագիրը և վերջում գեո «փծուն» և «ծոյլ» է անվանում իրեն:

Ձեռագրի հետ դորձ ունեցող անձնավորությունը չի կարող պատկառանքով չլցվել դեպի գրիչները, երբ ուզում է պատկերացնել այն խոշոր աշխատանքը, որ նրանք թափել են ձեռագրի վրա: Նրանք ամիսներ, երբեմն անգամ տարիներ են նստել մի ձեռագրի վրա, աչքի լույս թափել և մեծ համբերութեամբ ու խնամքով գրել են այն:

1248 թվին գրված մի ձեռագրի հիշատակարանից երևում է, որ գրիչը նորմալ պայմաններում, 32 օրվա ընթացքում, աշխատելով ամբողջ օրը, գրել է ընդամենը 93 թերթ, միջին հաշվով՝ օրական երեք թերթ (տես ՀՍՍՌ Մատեն., № 1340): Մեր Մատենադարանում կան այնպիսի մեծածախալ ձեռագրեր («Հայամատուրք»-ներ, «Հարանց վարք»-եր, «Ճառքնախոս»-ներ և այլն), որոնք գրվել են տասնյակ տարիների ընթացքում:

Մաթևոս գրիչն իր 1378 թվին ավարտած «Հարանց վարք»-ի հիշատակարանում հայտնում է, որ նա այդ ձեռագիրը գրել է յոթ տարվա ընթացքում. «...յոզնակի սիրով գրեցի զամս եօթն» (ՀՍՍՌ Մատեն., № 2680):

ՀՍՍՌ Մատենադ. № 4472 ձեռագրի հիշատակարանից երևում է, որ գրիչն իր ձեռագիրը գրել է հինգ տարվա ընթացքում. «Եւ գիտելի է՝ զի սն սկսաք ԶԱ. (901) թվականի հայոց, — գրում է նա, — եւ աւարտեցաք ԶԶ. (906)...»: Գրելու ժամանակի երկարացման պատճառը մասամբ պիտի բացատրել քաղաքական անբարենպաստ պայմաններով: Այդ մասին հիշատակագիրը նշում է. «...զի իշատակարանի հետ կարգի ոչ գնալոյն անմեղադիր լերուք՝ երբ սիրտն մաշխուղ լինի, աչքն լուս պակաս կու հայի»: Հիշատակագիրը վերջում դառնացած ավելացնում է. «Մարդ զմարդոյ ցաւ չգիտէ՝ կէս գիշերին ժամ կու ձենէ»:

ՀՍՍՌ Մատենադարանում կան ձեռագրեր, որոնց վրա աշխատել է ոչ թե մեկ, այլ մի քանի գրիչ: Սկսել է մեկը, բայց մա-

հասցել է և ձեռագիրը թերի մնացել. երկրորդն է ուսել, մահացել է, դարձյալ ձեռագիրը թերի է մնացել, և, վերջապես, Կրորդդին է միայն հաջողվել ավարտել ձեռագիրը: Եվ գրիչներինց ամեն մեկը թողել է իր հիշատակարանը:

Հիշատակարաններինց երևում է, որ ձեռագրերը միջին դարերում բավականին թանկ են գնահատվել: Նյութի դժվար ձեռք բերելու հանգամանքը և նրա վրա թափած մեծ աշխատանքը՝ սպիտակեցնելու և կոկեղու ալն, բնական է, որ թանկացրել են ձեռագիրը:

1668 թ. ընդօրինակություն ունեցող մի ձեռագրի հիշատակարանինց երևում է, որ ձեռագիրը վաճառվել է երկու եզան, երկու ձիու և մեկ կովի: Հիշատակարանում ասված է. «Դարձեալ յիշեցէք զգնօղ սուրբ ավետարանիս՝ զՄարգարիտն, որ ետ երկու նշ, երկու ձի, կով մի եւ էառ յիշատակ...» (Արթիկի ավետարանը):

ՀՍՍՌ Մատենադարանի № 212 (նոր ցուցակով) ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Դարձեալ յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք Մուրատ Բաշխուն եւ հօրեղբօրն, Անդրեասին, որ տուին իւրեանց հալալ վաստակոցն կով մի՝ Ե (5) փափասի արժէ, Ժ (10) շահի զրամ, Ե (5) քիլայ ցորեն՝ Ժ (10) փափասի: Տուին, ազատեցին յանարինաց եւ ի գերութեանց»:

Անհրաժեշտ է նշել, որ անցյալում մեզ մոտ ձեռագրերին շնչավորում են տվել և սրբացրել: Ձեռագրերի վրա նրանք նայել են ո՛չ որպէս անշունչ իրի, այլ կենդանի էակի վրա: Հիշատակարաններում երբեք չեն ասում՝ թե ձեռագիրը ինչան տարան կամ ձեռագիրը ինչանից ազատեցին: Ձեռագիրը, ասում են, գերի պարան, ձեռագիրը գերությունից ազատեցին: Մենք մեր Մատենադարանում ունենք ձեռագրեր, որոնք գերություն մեջ են եղել մի քանի անգամ և գերությունից ազատվել են շնորհիվ առանձին բարեարներին միջամտության և նյութական օժանդակության: Մեզ հասած շատ ձեռագրեր իր ժամանակին առանձին համայնքների, առանձին տոհմերի սեփականություն են հանդիսացել և որպէս ավանդական սրբություն փոխանցվել են սերունդից սերունդ: Մենք փաստեք ունենք, որ մեր տաճկահայ եղբայրներն առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ փախչելով կոտորածից և երբեմն չկարողանալով իրենց հետ վերցնել իրենց ամենաանհրաժեշտ ու թանկարժեք իրքը, աշխատեցին ազատել իրենց տոհմական սրբությունը—ձեռագիրը: Մի շարք

այդպիսի ձեռագրեր են գրանցված ՀՍՍՌ Մատենադարանի նոր ժողովածվում:

Հիշատակարաններում մեկ մեկ պատահում են և գրիչների կտակներ: Գրիչների այդ կտակները շատ համեստ կտակներ են, նրանք գալիք սերնդից շատ բան չեն խնդրում. նրանք խնդրում են միայն լավ պահել ձեռագրերը, չկեղտոտել և առ ու ծախսի առարկա չգարձնել:

Մարգար գրիչն իր 1701 թ. գրած հիշատակարանում խնդրում է. «...դայս աղերսեմ ի մեղապարտ գրչէս՝ լաւ ի միտ առնէք... գրոյս խնամ տանէք եւ յամենայն վնասակար իրաց պահէք զսա՝ ի հրոյ, ի ջրոյ, ի հիւթոյ, ի մոմ կաթելոյ եւ այլ ամենայն վնասու պահէք սրբութեամբ, երկու երեք լաթով պատեալ...» (ՀՍՍՌ Մատեն., № 33):

ՀՍՍՌ Մատենադարանի № 2394 ձեռագրի տաղարանի գրիչն իր ընթերցողներին հետևյալ խրատն է տալիս.

«Ո՛վ սիրելի եղբայր՝ որ ես,
Զայս քեզ խրատ տամ որ լսես.
Յորժամ զտաղըս եղանակես,
Զթուղտըն թրով չապականես:
Զկողն անողորմ յետ չի պարզես,
Հանց որ կապին վնաս գործես,
Կամ անգէտին ձեռըն դնես,
Խոզանց մարդկան կոխան շինես...
Ի սօղ պատերն վաչր չի ձգես,
Կամ երկու մարդ բռնես քաշես,
Կամ ի վերան դինի վաթես,
Կամ եղ և մոմ կաթեցնես,
Այլ յոյժ սիրով նախախնամես,
Սրբեալ ձեռօք, լաթով բռնես,
Ի հրոյ, ի ջրոյ ի դատ պահես,
Եւ ի շորային տեղի դրնես,
Զմեղապարտ գրիչըս յիշես...» (թ. 4բ—5ա):

ՀՍՍՌ Մատեն. № 5597 ձեռագրի հիշատակարանը ձեռագրից օգտվողներին զգուշացնում է ուղադիր լինել. «...յամենայն պոռոզաց զսա՝ ի ցեցոյ, եւ ի կերչաց, եւ ի հիւթոյ, եւ յամենայն վատնողաց զվայելչութիւն դորա» և խնդրում է «միանգամայն եւ

վերադարձած ժողովեամբ հոգ տարցես դմա՝ որպես իմաստուն
վաճառականն՝ պատուական մարգարտաց»:

Աստվածատուր գրիչն իր 1674 թ. ընդօրինակած ուսանավոր
հիշատակարանում հետևյալն է խնդրում.

«Ով դու մանուկ սիրող բանի,
Յինչն պատուէր քեզ այս լինի՝
Յորժամ ընթերցման պատշաճ լինի.
Խնամով բռնես եւ զգուշալի...
Ի հրո, ւ ի ջրոյ, ւ ի կաթիլքի
Ի ալլ ամենայն անմաքուր բանի»:

(ՀՍՍՌ Մատեն., № 7046, թ. 366ա):

Գրիչների պատվերներից մինն էլ, ինչպես ասացինք, այն է,
որ ձեռագիրը հետագայում առ ու ծախի առարկա չգտնա:
1442 թ. ընդօրինակած մի ձեռագրի ուսանավոր հիշատակարա-
նում կարդում ենք.

«Իշխանութիւն ոչ որ շունի
Տալ զբաւական վասն արծաթի,
Կամ վաճառել ընդ քանքարի՝
Զի է յազատ ամենայնի»:

(ՀՍՍՌ Մատեն., № 62):

Կիրակոս գրիչն անիծում է բոլոր նրանց, ովքեր կհանգզեն
ծախել, գողանալ կամ գրավ գնել ձեռագիրը. «Մի՛ որ իշխանցի
զստ ծախել կամ գողանալ կամ գրուել, եւ թէ որ յանդգնի գո-
ղանայ կամ ծախէ կամ գրաւէ՝ զպատիժն Յուդայի տոնու...»

(ՀՍՍՌ Մատեն., № 958):

Թե ինչպես են գրիչները հաշիւ իրենց պրոֆեսիայի վրա
և ինչպես են գնահատել ընդհանրապես իրենց աշխատանքը, այդ
պարզ կարելի է տեսնել 1298 թվի Բասիլ գրչի գրած մի ուսանա-
վոր հիշատակարանից:

Հիշատակարանի սկզբում Բասիլը հայտնում է, որ փող չու-
ներ ուրիշներին գրել տալու, ուստի և ինքն էր ստիպված եղել
գրել:

«Քանքար չգոյր զի վարձէի,
Մատամբ քանի՜ եւ գրէի...»:

Այնուհետեւ գրիչը տարակուսանքի մեջ է ընկնում՝ թե ձեռագ-

իւրեր: Եթէ դրանք է, ի՞նչ օգուտ ունի, երբ նրանք վերջին հաշիւով
իրեն չեն մնալու՝

«Յայտ միջոցին (այսինքն գրելու միջոցին) անձն իմ կոծի,
եւ վարանի յամենայնի՝

Թէ զինչ օգուտ ինձ յայս ջանի՝

Որ քնթեանով ինձ ոչ լինի...»:

Շարունակութեան մեջ հուսադրում է իրեն.

«Մի յոյս միայն գրոյս թողի,

Թէ եկելոց վայել լինի...»:

Վերջում նա դիմում է գալիք սերունդներին՝ և ձեռագիրը
հիշատակ թողնում նրանց «բարի վայելելու» համար:

«Թող դատուս ցանկալի՝

Զկնի եկելուդ վայել բարի» (ՀՍՍՌ՝ Մատեն., № 1418):

Շատ ժամանակներ են անցել ձեռագրերը գրելու ժամանակ-
ներից: Տպագրական տեխնիկան փոխարինելու եկավ գրիչներին
և աստիճանաբար դուրս մղեց նրանց ասպարեզից: Սակայն եկող
սերունդները գրիչների ջանքերը երբե՛ք մոռացութեան չմատնեցին:
Այժմ՝ Սովետական Հայաստանի մայրաքաղաքում՝ Երևանում,
ուր կենտրոնացած են աշխարհում մեզ հասած հայերեն ձեռագ-
րերի կեսից ավելին, գրիչների մեզ թողած ավանդները պահվում
են մեծ խնամքով և ուշադրությամբ: Ձեռագրի հիման վրա գի-
տական մի շարք հաստատություններ ուսումնասիրում են հին և
միջին դարերի պատմությունը և օգտագործում գրիչների հիշատա-
կարանները:



Ց Ա Ն Կ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱԶՐԱՆԱԴՅՈՒՐՆԵՐ

1. Էնգելս Ֆ.— Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան 1932 թ.:
2. Արեղյան Մ.— Մեսրոպ Մաշտոց և հայ գրի ու գրականության սկիզբը («Սովետական գրականություն», 1941 թ., № 1 և 2):
3. Աբրահամյան Ա.— Գառնիի նորահայտ արձանագրությունը, Երևան 1947 թ. («Էջմիածին» ամսագրում):
4. Աբրահամյան Ա.— Երուսաղեմի հունատառ-հայերեն ծածկագրի վերծանությունը (Վ. Մ. Մուրադովի անվան Երևանի Պետ. համալսարանի «Գիտական աշխատությունների» 23-րդ հատորում):
5. Աբրահամյան Ա.— Համառոտ ուրվագիծ հայկական պալեոգրաֆիայի, Երևան 1940 թ.:
6. Ագաթանգեղեայ Պատմություն Հայոց, Տիֆլիս 1909 թ.:
7. Ադոնց Ն.— Անծանոթ էջեր Մաշտոցի և նրա աշակերտների կյանքից ըստ օտար աղբյուրների («Հանդես ամսօրեայ», 1925 թ.):
8. АДОНЦ Н.— Дионисий Фракийский и армянские его толкователи, СПб 1908 г.
9. Ալիշան Դ.— Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ 1890 թ.:
10. Ակիբյան Ն. Վ.— Մաշտոց վարդապետ Հացեկացի («Հանդես ամսօրեայ», 1935 թ.):
11. Աճառյան Հ.— Հայոց գիրը, Վիեննա 1928 թ.:
12. Արիստակես Գրիշ.— Վերլուծությունը բացերևապէս բազմազան բառից և բայից յոգնախումբ շարադրութեամբ արարեալ զսա Արիստակէս գրչէ ի խնդրոյ բազ-

մայ յարձևատ գրչութեան (ՀՍՍՌ Մատեն.,
№ 3917 ձեռ.):

13. Թարխուրյան Ս.—Խորհրդային Հայաստանի նյութական
կուլտուրայի հուշարձանները, Երևան 1935 թ.:
14. БОРИСОВ А.—Надписи Артаксеса (Арташеса) царя Армении («Вест-
ник древней истории», № 2, за 1946 г.).
15. ГАДЗЯЦКИЙ С. С.—Учебное пособие для практических занятий по
палеографии, Москва. 1940 г.
16. Gardhausen V.—Griechische Paläographie, Leipzig 1913.
17. Գեվորգ Սիկապի.— Խրատ գրչութեան (ՀՍՍՌ Մա-
տեն., № 3917):
18. Դրիգոր Տաթևացի.—Լուծումն դժուարիմաց բանից ի գիրս
գրչութեան (ՀՍՍՌ Մատեն., № 3917):
19. ДОБИАШ-РОЖДЕСТВЕНСКАЯ О. А.—История письма в средние ве-
ка, М.—Л. 1936 г.
20. Զարբհանեւյան Գ.—Հայկական հին դպրութիւն (պալեո-
գրաֆիայի հետ առնչվում են առանձնապես՝ «Հայ-
կական նշանագիրք» և «Հայ գրչագիրք» գլուխները
(էջ 10—94), Վենետիկ 1897 թ.):
21. ЭММН Н. О.—Об армянском алфавите.
(Հրատարակված է Խորենացու ուսերեն Թարգմա-
նության 1858 թ. հրատարակության շորրորդ հա-
վելվածում: Նույնը Թարգմանված է ֆրանսերեն և
հրատարակված է 1865 թ. «Revue d'Orient»
թերթի մեջ: Թարգմանված է նաև հայերեն և
հրատարակված «Հայկական աշխարհ» թերթի 1870
թ. փետրվարի համարում: Ռուսերենը հրատարակ-
վել է երկրորդ անգամ, «Исследования и статьи Н. О.
Эммина» աշխատության մեջ (1896 թ., էջ 204—230):
22. Թորոմանյան Թ.—Հայկական ճարտարապետություն, Երևան
1942 թ.:
23. Ինճիճյան.— Հնախոսություն աշխարհագրական Հայաստան-
հայց աշխարհի, Վենետիկ 1835 թ.:
24. Լեվոնյան Գ.—Մի առեղծվածային քանդապատիկեր («Սովետա-
կան արվեստ», 1941 թ.):
25. Լեվոնյան Գ.—Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան
1946 թ.

26. Karamianz N.—Verzeichniss der Armen.-r. etc. Berlin 1888.
27. КАРСКИЙ Е. Ф.—Славянская кирилловская палеография, Ленинград 1928 г.
28. Կարյուն.—Վարք Մաշտոցի, Երևան 1941 թ.։
Հարությունյան Հ.—Հայոց գրերի ստեղծման պատմությունը, Երևան 1940 թ.։
29. Հարությունյան Հ.—Հայոց գիրը, Թիֆլիս 1892 թ.։
30. Հովսեփյան Գ.—Գրչության արվեստը Հին Հայոց մեջ, Էջմիածին 1913 թ.։
31. Հովսեփյան Գ.—Մանրանկարչության արվեստը Հայոց մեջ («Ճումա», 1902 թ., № 1)։
32. Հովսեփյան Գ.—Հայոց գրի գլխավոր տեսակները, «Տարազ», № 10, 1912 թ.։
34. Hubschmann N.—Über Aussprache und Unschpailung des Altarmenischen, ZDMG 1876.
33. Հարությունյան Ա.—Ներկերը և թանաքները Հին Հայկական ձեռագրերում, Երևան 1941 թ.։
35. Ղաֆադարյան Կ.—Ավանի երկկղզյան ծածկագիր արձանագրությունը, Երևան 1946 թ.։
36. Ղաֆադարյան Կ.—Հայկական գրի սկզբնական տեսակները, Երևան 1939 թ.։
37. Ղազարայ Գարպեյույ Պատմություն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տիֆլիս 1904։
38. МАНАНДЯН Я. А.—Месроп-Мантоц и борьба армянского народа за культурную самобытность, Ереван 1940 г.
39. Մանանդյան Հ.—Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան, 1944 թ.։
40. Մարկվարտ Հ.—Պատմություն հայերեն նշանագրերու, Վրենիա 1913 թ.։
41. МАРР Н. Я.—Надгробный камень из Семиречия. («Зап. Вост. отд. VIII).
42. МАРР Н. Я.—Грамматика древнеармянского языка, этимология, СПб 1903 г.
43. МАРР Н. Я.—Ани, М.—Л. 1934 г.
44. Մովսեսի Խորենացույ Պատմություն Հայոց, Տիֆլիս 1913 թ.։
45. ШАНИДЗЕ и АБУЛАДЗЕ Н.—О повораскрытом албанском алфавите, Тбилиси, 1898 г.

46. ШНИЦЛЕР.—Всёобщая иллюстрированная история письмен., СПб 1903 г.
47. ЧАЕВ Н. С. и ЧЕРЕШИН Л. В.—Русская палеография, Москва 1947 г.
48. Պալյան Տ. Վ.—Նշանագիրը Հայոց, Վիեննա 1898 թ.:
49. ПАТКАНОВ.—История агван М. Каганкатваци, СПб 1861 г.
50. Պարոնյան Ս. Վ.—Նշանագիրը Հայոց. («Երկրագործ», 1884 թ.):
51. Պլուտարքոս, Կրատոսի կյանքը (Հունարեն լեզվով):
52. Արմանձյան Գ. Վ.—Թորոս Աղբար, Ա. հատ., 1879 թ. (էջ 337—340):
53. Տաղալարյան Ն.—Ծագումն հայ տառից, Վիեննա, 1895 թ.:
54. Տաշյան Հ. Վ.—Ակնարկ մը հայ հնագրության վրա (ուսումնասիրությունն հայոց գրչության արվեստին), Վիեննա 1898 թ.:
55. Տաշյան Հ. Վ.—Յուշակ հայերեն ձևադրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, Վիեննա 1895 թ.:
56. Traube—Vorlesungen und Abhandlungen—Zur paläographie und Handschriftenkunde, B. I—III, 1909—1920.
57. Տ. Մկրտչյան Գ.—Հայկական գրության 1500-ամյակի տոթիվ, «Արարատ», 1912 թ.):
58. ОРБЕЛИ Н. А.—Багаванская надпись («Христианский Восток», т. II, стр. 138—142.
59. ОРБЕЛИ Н. А.—Шесть армянских надписей VIII—X в.в. («Христ. Вост.», т. III, в. I).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
Նախաժաշտողյան հայկական գրության առեղծվածը	12
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ	
Հայկական գրերի ստեղծումը և նրանց աստղծը	22
ԳԼՈՒԽ ԵՐԻՈՐԴ	
Այլ լեզուներով և գրությամբ գրված արձանագրությունները նայաստանում	37
ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ	
Հայկական գրության հնագույն նմուշները	43
ԳԼՈՒԽ ՀԻՆԴԵՐՈՐԴ	
Հայկական գրերի տեսակները և նրանց գործածության ժամանակը	57
ԳԼՈՒԽ ՎՆՅԵՐՈՐԳ	
Համառոտագրություններ	73
ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԳ	
Կետադրություն	80
ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԳ	
Պաղափարագրեր	87
ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ	
Մածկագրություն	99
ԳԼՈՒԽ ՏԱՍԵՐՈՐԴ	
Թվանշանների գործածությունը	113
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԱՆԵՐՈՐԴ	
Հայկական տոմար	123

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ	
ԿԱՊԿԻՆՐ	123
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ	
Մանրանկարչություն	138
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ	
Փափոխություններ և ազավաղումներ հայկական նշագրերի նախնական տեքստերում	147
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀՐԵՐԵՐՈՐԴ	
Չնոագրերի սիգնատուրայի լրացումը	153
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎՆՑԵՐՈՐԴ	
Գրության նյութը և գրեմական պիտույքներ	157
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈՒԹՐՈՐԴ	
Միջնադարյան հայ գրչությունը	165



Խմբագիր՝ Հ. ԺԱՄԿԱՉՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Յ. ՉԱԽԱԼՅԱՆ

Վ.Ն. 02686, Պատվեր № 108, Տիրած 1000,
Հանձնված է արտադրության 26/XII, 1947 թ.
Անորոշված է տպագրության 7/III 1948 թ.
Տպագրական 11 և կես մամուլ, Հեղինակային 10 մամ.,

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական Համալսարանի
տպարան, Կիրժի № 12